

See discussions, stats, and author profiles for this publication at: <https://www.researchgate.net/publication/361823441>

Հայաստանի ռազմական աշխարհագրություն

Book · July 2022

CITATIONS
0

1 author:



[Hamik Sayadyan](#)

2 PUBLICATIONS 1 CITATION

SEE PROFILE


Some of the authors of this publication are also working on these related projects:



MILITARY GEOGRAPHY OF ARMENIA [View project](#)

ՍԱՅԱԴՅԱՆ ՆԱՄԻԿ ՅԱԽՇԻԲԵԿԻ

ՆԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ



ՍԱՅԱԴՅԱՆ ՀԱՄԻԿ ՅԱԽՇԻԲԵԿԻ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՌԱԶՄԱԿԱՆ
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

(Երկրորդ, լրամշակված հրատարակություն)

ԵՐԵՎԱՆ – 2020

ՀՏԴ 355.47:91

ԳՄԴ 68+26.8

Ս 180

Հրատարակության են երաշխավորել
ՀՊՄՀ աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը,
ՀՀ ՊՆ Վ.Սարգսյանի անվան ռազմական համալսարանի գիտական խորհուրդը:

Գիտական խմբագիր՝

*Աշխ. գիյր. դոկտոր, ՀՊՄՀ Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի
ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ա. Խոյեցյան*

Գրախոսներ՝

*ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Պատմ. գիյր. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ
Արևելագիտության ինստիտուտի տնօրեն Ռ. Սաֆրաստյան
Աշխ. գիյր. թեկնածու, ՀՊՄՀ Աշխարհագրության և նրա դասավանդման
մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսորի պաշտոնակատար Յու. Մուրադյան*

Սայադյան Համիկ

Ս 180

Հայաստանի ռազմական աշխարհագրություն/ Հ. Սայադյան.- Եր.: Հեղ.
հրատ., 2020.- 315 էջ:

Գրքում հայ իրականության մեջ առաջին անգամ ռազմական աշխարհագրությունը ներկայացվում է որպես գիտության ինքնուրույն ճյուղ, աշխարհագրական գիտությունների համակարգի ենթահամակարգ, որն ուսումնասիրում է աշխարհագրական տեղեկատվության և մեթոդների օգտագործումը ռազմական խնդիրների լուծման գործում:

Առաջին անգամ տրվում է Հայաստանի ռազմաաշխարհագրական դիրքը, բնութագիրը մեզա, մեզո և միկրո մասշտաբներում: Բերվում է ռազմաաշխարհագրական մի շարք կիրառական օրինակներ:

Գիրքը նախատեսված է աշխարհագրության և ռազմագիտության մասնագիտությունների ուսանողների, կուրսանտների և ասպիրանտների համար: Կարող է օգտակար լինել քաղաքագիտությամբ, պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման ոլորտի պրակտիկ աշխատողների համար:

ՀՏԴ 355.47:91

ԳՄԴ 68+26.8

ISBN 978-9939-0-3305-1

© Սայադյան Համիկ, 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԿԱՐԵՎՈՐ ՆԵՐԴՐՈՒՄ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ	5
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	8
ԳԼՈՒԽ 1. ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՃՅՈՒՂ, ԲՈՎԱՆԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ	
1.1 Ընդհանուր ակնարկ	25
1.2 Հետազոտության մակարդակները	36
1.2.1 Մակրոմակարդակ	37
1.2.2 Մեզոմակարդակ	43
1.2.3 Միկրոմակարդակ	46
ԳԼՈՒԽ 2. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԻ ԴԵՐԸ ՀԱՅ ՌԱԶՄԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ	
2.1 Հայկական լեռնաշխարհի ռազմաաշխարհագրական բնութագիրը	62
2.2 Ռազմաաշխարհագրական հայացք հայ ռազմարվեստի պատմությանը	70
2.3 Բերդերի և ամրոցների վերականգնման բարոյահոգեբանական և սոցիալ-տնտեսական նշանակությունը	96
ԳԼՈՒԽ 3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՐՊԵՍ ՌԱԶՄԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ, ՏԵՂԸ ԵՎ ԴԵՐԸ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐՈՒՄ	
3.1 Ռազմաաշխարհագրական դիրք եզրույթը	101
3.2 Հայաստանի Հանրապետության ռազմաաշխարհագրական դիրքը	104
ԳԼՈՒԽ 4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ	
4.1 Ֆիզիկաաշխարհագրական պայմանների գլխավոր առանձնահատկությունները	114

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

4.2 Ֆիզիկաաշխարհագրական դիրքը	133
4.3 Տարածքի ձևաբանությունը և երկրաբանական առանձնահատկությունները	143
4.4 Կլիմայական և օդերևութաբանական առանձնահատկությունները	149
4.5 Զրային ռեսուրսները և տարածքի ջրագրական առանձնահատկությունները	158
4.6 Լանդշաֆտները	174
4.7 Բնական ռեսուրսները որպես ռազմաաշխարհագրական գործոն	180
4.8 Հետևություններ	192
ԳԼՈՒԽ 5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ	
5.1 Ժողովրդագրական բնութագիրը	194
5.2 Տնտեսության բնութագիրը	218
5.3 Ենթակառուցվածքային համալիր	242
5.4 Հետևություններ	254
ԳԼՈՒԽ 6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ	
6.1 Հարավկովկասյան տարածաշրջանի ռազմատնտեսական բնութագիրը	268
6.2 ՀՀ ռազմաքաղաքական և ռազմաաշխարհագրական դիրքը	287
6.3 Հետևություններ	293
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	296
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	299

ԿԱՐԵՎՈՐ ՆԵՐԴՐՈՒՄ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Ընթերցողի սեղանին է Համիկ Սայադյանի երկար տարիների քրտնաջան աշխատանքի արգասիքը՝ «Հայաստանի ռազմական աշխարհագրություն» (Երևան, 2020) մենագրությունը: Այն կարևոր ներդրում է մեզանում գիտության այդ համեմատաբար նոր ոլորտի բնագավառում, քանի որ հեղինակը, հայ իրականության մեջ առաջին անգամ, ռազմական աշխարհագրությունը ներկայացնում է որպես գիտության ինքնուրույն ճյուղ, աշխարհագրական գիտությունների համակարգի ենթահամակարգ, որն ուսումնասիրում է աշխարհագրական տեղեկատվության և մեթոդների օգտագործումը ռազմական խնդիրների լուծման գործում:

Հ. Սայադյանի հեղինակած աշխատությունը, անկասկած, ունի նաև կարևոր գիտաքաղաքական ու գիտագործնական նշանակություն, հատկապես հաշվի առնելով ներկայումս աշխարհում և մասնավորապես մեր երկրի անմիջական հարևանությամբ գտնվող Մերձավոր Արևելքում ընթացող բարդ աշխարհաքաղաքական գործընթացները: Այն հնարավորություն է տալիս նաև խորությամբ ընկալելու և ՀՀ անվտանգության շահերի շրջանակներում համապատասխան գնահատականներ տալու հարևան տարածաշրջաններում տեղի ունեցող ռազմական հակամարտությունների հիմնական միտումներին:

Մենագրությունը նորովի է ներկայացնում Հայաստանի աշխարհագրական դիրքի, բնական պայմանների, բնակչության և տնտեսության նկարագիրը՝ մեկնաբանելով այն ռազմական տեսանկյունից: Հատուկ տեղ է հատկացված ՀՀ ռազմավարչական բաժանման մեթոդոլոգիական հարցերի վերլուծությանը: Տրվում են տնտեսության տարածքային

տեղաբաշխման՝ պաշտպանական նպատակներով օգտագործման տեսական հիմքերը:

Աշխատանքում խորությամբ լուսաբանվում են նաև Հայաստանի ռազմաաշխարհագրական առանձնահատկությունները ու դրանց հնարավոր օգտագործման հարցերին վերաբերվող խնդիրները: Հեղինակը բազմակողմանի ուսումնասիրելով պաշտպանության և ինքնաբավության գործոնները և հաշվի առնելով ռազմաաշխարհագրական բնույթի հետազոտությունների միջազգային փորձը, համալիր գնահատական է տալիս ՀՀ ռազմաաշխարհագրական պայմաններին և ընդգծում է, որ այն կարևոր է արտաքին ռազմական մարտահրավերներին դիմակայելու տեսակետից: Առաջին անգամ տրվում է Հայաստանի ռազմաաշխարհագրական դիրքի բնութագիրը՝ մեզա, մեզո և միկրո մասշտաբներում: Բերվում են ռազմաաշխարհագրական միջարք կիրառական օրինակներ: Կարծում ենք, որ աշխատությունում ձևակերպված առանձին դրույթներ և եզրակացություններ կարելի է օգտագործել ՀՀ ռազմական դոկտրինում:

Օգտագործված աղբյուրների ու գիտական գրականության ցանկը հարուստ է, ինչը վկայում է հեղինակի գիտական արհեստավարժության և լայնախոհության մասին: Համոզված ենք, որ գրքում զետեղված քարտեզները, աղյուսակները և գծապատկերները կգրավեն ընթերցողի ուշադրությունը: Անտարակույս, մենագրության հաջողությանը նպաստել է նաև այն հանգամանքը, որ հեղինակը Արցախյան ազատամարտի ակտիվ մասնակից է:

Եզրակացնելով կարող ենք ընդգծել, որ Համիկ Սայադյանի հեղինակած մենագրությունն այն եզակի աշխատություններից է, որի արդյունքներն արտացոլում են Հայաստանի բնաաշխարհագրական և տնտեսական պաշտպանական ներուժը: Այն գալիս է կոտրելու արտերկրում տարիների ընթացքում ձևավորված կարծրատիպը առ այն, թե

ռազմական աշխարհագրությունը զուտ գերտերությունների գիտություն է, և ապացուցում է, որ վերջինս կարևոր նշանակություն կարող է ունենալ մեր երկրի պաշտպանողունակության հնարավորությունների ընդլայնման և ամրապնդման ուղիների հետազոտման գործում:

Ռուբեն Սաֆրաստյան

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի տնօրեն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխարհագրական տեղեկատվությունը ժամանակակից բանականների համար ներկայումս ձեռք է բերում ավելի ու ավելի շատ արդիականություն: Բոլոր երկրներում էլ պաշտպանական գերատեսչությունները հասկանում են, որ զորքերին տեղանքի նկարագրության, գեոդեզիական տվյալների, ժողովրդագրության, տնտեսական ներուժի վերաբերյալ տեղեկատվության օպերատիվ կերպով տրամադրումը կարող է վճռել հակամարտության ելքը:

XX դարի 90-ական թվականներին Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո երկրի առջև ծառայան նոր մարտահրավերներ: Դրանցից ամենակարևորները կապված էին ԽՍՀՄ փլուզումից առաջ և հետո ի հայտ եկած նոր իրողության պայմաններում ՀՀ աշխարհագրական դիրքի առանձնահատկությունների հետ, այն է՝ տրանսպորտային շրջափակում, դեպի ծով ելքի բացակայություն, թշնամաբար տրամադրված հարևաններ, վառելիքային ռեսուրսների բացակայություն, Սպիտակի ավերիչ երկրաշարժի հետևանքներ և այլն: Այս բոլորը հիմնական պատճառ հանդիսացան տնտեսական հզորությունների շեշտակի անկմանը և պետության սոցիալ-տնտեսական վիճակի աղետալի վատթարացմանը:

Հանրապետությունը ներքաշվեց Ադրբեջանի կողմից հրահրված պատերազմի մեջ և պատվով ու հաղթանակած դուրս եկավ այդ ծանր իրավիճակից, դրա համար վճարելով թանկ գին՝ հազարավոր լավագույն որդիների կորստով: Բայց դրանով նոր հակամարտությունների վտանգը դեռ լիովին չի վերացել: Ադրբեջանի քաղաքական դեկավարությունը վերջին երկու տասնամյակում օգտագործելով էներգետիկ ռեսուրսների վաճառքից ստացված գերշահույթը վերազինել է սեփական զինված ուժերը և կրկին զարկ է տվել պատերազմական հռետորաբանությանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունն իր արևելյան հարևանի հետ համեմատ, ունենալով ավելի սակավ մարդկային և տնտեսական ռեսուրսներ՝ պարտադրված է երկրի անվտանգության ապահովման տարբեր ոլորտներում օգտագործելու ասիմետրիկ գիտական մոտեցումներ, առկա ռեսուրսների պայմաններում ճիշտ ռազմավարություն որդեգրելու և զինված ուժերի ծառայողական և մարտական առաջադրանքների արդյունավետ պլանավորման համար: Այս հանգամանքից ելնելով՝ ՀՀ նախագահի կողմից 2009 թ. ՀՀ ԳԱԱ-ում ձևավորվել էր գիտնականների հատուկ խումբ՝ բանակին հուզող հարցերի քննարկման և արդյունավետ լուծումներ գտնելու նպատակով:

Ռազմական նշանակության ավտոմատացված կառավարման համակարգերի հետագա զարգացման և արդյունավետության բարձրացման, թվային տեղեկատվության ստացման և դրա մշակման ավտոմատացված համակարգերի ներդրումը բոլորովին նոր մոտեցումներ են պահանջում որոշումների ընդունման գործընթացում: Այս ուղղության հիմնական կետը՝ իրավիճակի համակողմանի գնահատումն է, որի տակ հասկացվում են ռազմական գործողությունների վրա ազդող բոլոր գործոնները: Սրանցում կարևոր դեր է հատկացվում աշխարհագրական գործոններին, որոնց իմացությունը թույլ կտա հաշվի առնել ֆիզիկական և սոցիալ-մշակութային միջավայրի դերը ռազմական գործողությունների պլանավորման և անցկացման վրա:

Վերոհիշյալը հաշվի առնելով՝ մեր կողմից փորձ է արվել, օգտագործելով պատմական և միջազգային փորձը հանրապետությունում աշխարհագրական և ռազմական գիտություններում ներդնել նոր գիտական ճյուղի՝ ՀՀ տարածքի ռազմաաշխարհագրական համալիր հետազոտությունների հիմքը, որը, մեր կարծիքով, շատ օգտակար կլինի ինչպես երկրի տնտեսության տարածքային կազմակերպմամբ զբաղվող գերատեսչությունների, տարածաշրջանի աշխարհա-

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

քաղաքական վերլուծությամբ զբաղվող կազմակերպությունների, այնպես էլ տարբեր օղակների հրամանատարական կազմի համար՝ ռազմական կենսագործունեության տարատեսակ պայմաններում պլանավորման ժամանակ արդյունավետ որոշումներ կայացնելիս:

Դեռևս XIX դարի սկզբներին, որպես աշխարհագրության առանձին ճյուղ սկիզբ առած ռազմական աշխարհագրությունը, մոտ կեսդարյա դեգերումներից հետո որոշակիացրեց իր հետազոտման շրջանակը և մեթոդները: Այդ ժամանակաշրջանը նշանավորվեց ռազմական աշխարհագրության մեջ տեղ գտած երկու հիմնական միտումների շուրջ ծավալված քննարկումներով: Առաջին խմբի ներկայացուցիչները՝ Հ.Ժոմինին¹, Պ.Յագիկովը² և մի շարք արևմտաեվրոպական մասնագետներ, հիմնական շեշտը դնում էին ֆիզիկաաշխարհագրական գործոնների վրա, իսկ երկրորդ խումբը՝ Ռուսական կայսրության ֆելդմարշալ՝ Դ. Միլյուտինի³ գլխավորությամբ, կարևոր էին համարում ուսումնասիրվող օբյեկտի վիճակագրական տվյալների վերլուծությունը: Արդյունքում ձևավորվեց և կայացավ ժամանակակից ռազմական աշխարհագրության հետազոտությունների շրջանակը, որն ըստ էության նշված երկու միտումների հավասարակշռված միջինն էր:

XX դարում Ռուսական կայսրությունում և ԽՍՀՄ-ում ռազմական աշխարհագրության զարգացումը կրում էր իմպուլսիվ բնույթ: Գիտության դերը կարևորվում էր հատկապես պատերազմական իրավիճակներում, այն է՝ 1914-1920 և 1939-1945 թթ., երբ ամենուրեք թիկունքի և ճակատի հիմնախնդիրների լուծումը աշխարհագրագետներից պահանջում էր ոչ թե տեսական հարցադրումների վերլուծու-

¹ Antoine-Henry Jomini, *The Art of War*, SP.: 1838, 411 p.

² Языков П., *Опыт теории военной географии*, -СПб, 1838, -107с.

³ Милютин Д.А., *Критическое исследование значения военной географии и военной статистики*, -СПб, 1846, -47 с.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

թյուն, այլ տարբեր իրավիճակներում ի հայտ եկող ամենօրյա խնդիրներին օպերատիվ արձագանքում: Նաև հենց այս տրամաբանությամբ էլ տարածաշրջանի և ՀՀ տարածքի ռազմաաշխարհագրական համալիր հետազոտությունները, գնահատումն ու կիրառական առաջարկությունները համարվում են խիստ արդիական:

Աշխարհագրական գործոնը մարդուն միշտ էլ ուղեկից է եղել մարդկային պատմության բոլոր ռազմական բախումների ժամանակ: Այն ռազմական գործիչները, որոնք կարողացել են ճիշտ ընկալել պատերազմների բնական միջավայրի ազդեցությունը ռազմական տարբեր մասշտաբի գործողությունների և օպերացիաների ելքի վրա, հմտորեն օգտագործել են աշխարհագրական առանձին տարրերը՝ տեղադիրքը, վիճակը, հատկությունները և այլն, հակառակորդի նկատմամբ առավելության հասնելու համար, իրենց անունը փառքով են պսակել սեփական ժողովրդի և համաշխարհային ռազմարվեստի պատմության մեջ: Տեղանքի տարրերի ուսումնասիրման կարևորությունը ռազմական հաջողությունների մեջ կարևորել են տարբեր ժամանակաշրջանների հայտնի զորահրամանատարներ և ռազմական տեսաբաններ: Որպես ակնառու օրինակներ կարելի է ներկայացնել Ք.ա. V դարի չին հռչակավոր զորավար Սուն Ցզին⁴ և XV-XVI դդ. իտալացի հայտնի մտածող և ռազմական տեսաբան Ն. Մաքիավելլին⁵, սակայն այդ բոլոր գաղափարները դասակարգված չէին մեկ ամբողջական գիտության մեջ:

Թերևս XIX դարի անմիջապես սկզբներին սկսված նապոլեոնյան պատերազմները, որոնք մեծ տարածություններ էին զբաղեցնում՝ Իսպանիայից Ռուսաստան, Լա-Մանչից մինչև Եգիպտոս, ստիպեցին ոչ միայն կարևորել

⁴ Սուն Ցզի, Ստրատեգիայի արվեստը, -Եր.: Բյուրոկրատ հրատ., 2011, -173 էջ:

⁵ Նիկոլո Մաքիավելլի, Տիրակալը, -Եր.: 2010, -200 էջ:

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

աշխարհագրական այդքան բազմազան գործոնները, այլ պահանջ զգացվեց կատարել դրանց համակարգված վերլուծություններ և նշմարեց արդեն նոր աշխարհագրական և միևնույն ժամանակ ռազմական գիտության՝ ռազմական աշխարհագրության ծնունդը: Հարկ ենք համարում նշել, որ նոր գիտության կարևորողներից էր բոլոր ժամանակների ամենատաղանդավոր զորավարներից մեկը՝ Նապոլեոն Բոնապարտը: Այստեղ չի կարելի չհիշել նրա դիպուկ խոսքը երկրի աշխարհագրական դիրքի վերաբերյալ՝ «Երկրի աշխարհագրությունը կերտում է նրա պատմությունը: Աշխարհագրությունը ճակատագիր է»⁶:

Ռուսաստանում ռազմական աշխարհագրության գիտական ճյուղի սկիզբը դրեց իր ժամանակի ճանաչված ռազմական տեսաբան, շվեյցարական (1812թ.-ից ռուսական) բանակի գեներալ Անրի Ժոմինին: Յոթ հակաֆրանսիական կռաւիցիոն պատերազմների ժամանակ ռազմական աշխարհագրագետները հավաքել էին հսկայական փաստական նյութ և Վաթեռլոից անմիջապես հետո սկսեցին բուռն բանավեճերը իրենց գիտության առարկայի և մեթոդաբանության հարցերի շուրջ:

Ժոմինիի ղեկավարությամբ Ռուսաստանում այս բանավեճին ներգրավվեց գնդապետ Պ. Յագիկովը, որը 1838թ. գրեց և հրապարակեց Ռազմական աշխարհագրության դասագիրքը՝ ռուսական գլխավոր շտաբի սկադեմիայի համար ⁷ : Ռուսաստանի ռազմական գործունեության պրակտիկան իրենից ներկայացնում էր տարբեր մարտաբեմերում համարյա մշտական արշավներ և ճակատամարտեր, որոնք միմյանցից արմատապես տարբերվում էին իրենց պայման-

⁶ Correspondance de Napoleon, lettre du 10 novembre 1804, adressee au Roi de Prusse (edition in-4, X, p.59, №8170).

http://www.persee.fr/web/revues/home/prescript/article/geo_0003-4010_1913_num_22_121_8370?Prescripts_Search_tabs1=standard& (p. 9)

⁷ Языков П., Опыт теории военной географии, -СПб, 1838, -107с.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ներով: Հենց դա էլ կանխորոշեց Պ. Յազիկովի ուսումնասիրությունների խորությունը:

Այն ժամանակ, երբ Արևմտյան Եվրոպայում (հիմնականում Գերմանիայում) ռազմական աշխարհագրության հայեցակարգերի էությունը միայն տեղանքի մարտավարական և ռազմավարական օգտագործման համար տեղեկատուների կազմումն էր, Պ. Յազիկովն առաջինը նշեց ռազմական գործողությունների և պետության ռազմական համակարգի վրա ոչ միայն տեղագրության, այլև այլ գործոնների՝ բնակչության, տնտեսության, պետական կառուցվածքի, կլիմայի և այլնի ազդեցությունը:

Յազիկովի գիրքը ռազմական աշխարհագրության, ռազմական գիտությունների համակարգում, տեղի և դերի մասին լայն բանավեճերի առիթ հանդիսացավ Ռուսաստանում: Դրա հիմնական մոտիվը դարձավ այն հարցը, թե ռազմական աշխարհագրության ուսումնասիրության առարկա են հանդիսանում միայն բնական պայմանները (ինչպես պնդում էին Գերմանացի հեղինակները), թե՞ երիտասարդ գիտության ուսումնասիրության շրջանակների մեջ պետք է ներառվեն նաև տեղեկություններ քաղաքական և տնտեսական աշխարհագրությունից, փիլիսոփայությունից և ժողովրդագրությունից, ինչպես նաև հասարակության այլ երևույթների մասին (ինչպես դա պնդում էր Յազիկովը): Բանավեճը ավարտվեց նրանով, որ ռազմական տեսաբանները միաձայն որոշեցին որ նրա առարկայի սահմանափակումը միայն ֆիզիկաաշխարհագրական գործոնների ուսումնասիրությամբ չի համապատասխանում պատերազմի իրական պահանջներին: Դրա մեջ պետք է ներառել տնտեսության, քաղաքականության, բնակչության, հասարակական այլ երևույթների ուսումնասիրությամբ զբաղվող գիտությունների շրջանակը:

1845թ-ին գնդապետ Դ.Ա. Միլյուտինը նշանակվում է գլխավոր շտաբի ակադեմիայի պրոֆեսոր և ռազմական

աշխարհագրության ամբիոնի վարիչ: Շուտով նա հրատարակում է «Ռազմական աշխարհագրության և վիճակագրության քննական հետազոտություններ» («Критические исследование значения военной географии и военной статистики») գրքույկը⁸:

Դրանում պարզ երևում է գիտության նոր ճյուղի զարգացման հիմնական ուղղությունը: Նկատի է առնվում այն հանգամանքը, որ ռազմական աշխարհագրությունն իր բնորոշմամբ չի ընդգրկում պետության ռազմական գործի և ռազմական քաղաքականության վրա ազդող աշխարհագրական գործոնի բոլոր հարցերը: Անհրաժեշտ է համարվում սկսել նոր գիտության ձևավորումը, որը Դ. Միլյուտինն անվանեց «Ռազմական վիճակագրություն»: Ներկայում այն գիտությունը, որն համապատասխանում է Դ. Միլյուտինի պահանջներին, անվանում են գեոստրատեգիա (երկրառազմավարություն): Քանի որ գեոստրատեգիան աշխարհաքաղաքականության ռազմական ոլորտի անվանումն է, ապա կարելի է համարել, որ XIX դ-ի կեսերին Դ. Միլյուտինը ստեղծեց այն, ինչն այժմ անվանում են աշխարհաքաղաքականություն՝ գեոպոլիտիկա:

Միլյուտինի կողմից մշակված հիմնական դրույթները առաջ էին անցել Ռատոցելի, Չելենի և Մաքինդերի կողմից կես դար հետո մշակված դրույթներից:

Նրա ռազմական աշխարհագրության և ռազմական վիճակագրության առարկաները կազմում էին ամբողջ ռուսական գլխավոր շտաբի ակադեմիայի ռազմաուսումնական գործընթացի քառորդ մասը: Մտցվեցին գեոդեզիայի գործնական կուրսեր և համապատասխան մասնագիտացում:

Նա հիմնեց ռուսական ռազմական աշխարհաքաղաքականության դպրոցը: «Մարդը պատերազմում է երկրի մակերևույթի վրա, օդում և գետնի տակ, այստեղից աշխարհագրական գործոնը հանդիսանում է պատերազմի

⁸ Милютин Д.А., Критическое исследование значения военной географии и военной статистики, -СПб, -1846, -248 с.

մշտական ուղեկիցը: Աշխարհագրությունից ինչպես և տարածությունից դուրս պատերազմը անհնար է պատկերացնել»: Սա Միլյուտինի աշակերտ, 1920-1922 թթ. ռուսական գլխավոր շտաբի ակադեմիայի պետ Ա. Ե. Սնեսարյովի խոսքերն են⁹:

Ըստ Սնեսարյովի՝ ռազմական աշխարհագրությունը «զբաղվում է տվյալ պատմական պահին, ռազմական տեսակետից, պետության տարածքի ուժերի և միջոցների ուսումնասիրությամբ»: Դրա հետ մեկտեղ՝ Սնեսարյովի մոտեցման յուրահատկությունը այն է, որ նա Ռազմական աշխարհագրությունը դիտում էր ոչ միայն ինչ-որ ֆիզիկական մեծությունների մասին չոր գիտելիքների ընդհանրություն (տարածքը, սահմանները, բնակչության քանակը և այլն), այլ նաև որպես շնչավորված գիտություն: «Քանի որ ժամանակակից պատերազմն», ինչպես գրում է Սնեսարյովը, «իր հաջողությունների հիմքում հանդիսանում է ժողովրդական մտքի ճկունության և ժողովրդական ոգու փորձաքար, ապա այս տեսանկյունից ժողովրդական զանգվածների ուսումնասիրումը, ինչքան էլ դժվար լինի դա, ռազմական աշխարհագետի համար դառնում է պարտադիր»¹⁰:

Պատմությունը բազմաթիվ օրինակներ է պահպանում, երբ աշխարհագրությունը գիտությունների շարքում առաջավոր դիրքեր էր զբաղեցնում, որը լուծում էր երկրի անվտանգային համակարգերի ստեղծման համար մեծ կարևորություն ունեցող հարցեր՝ Ռուսաստանի տարածաշրջանների համալիր նկարագրություններ, որոնք պարունակում էին բազմաթիվ տարաբնույթ տվյալներ՝ բնության, բնակչության, տնտեսության մասին: Դրանք ուսումնասիրու-

⁹ Снесарев А.Е., Введение в военную географию, -М.: Центриздат 2006, - 512 с.

¹⁰ Նույն տեղում

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

թյուններ էին, որ կատարվում էին աշխարհագետների ղեկավարությամբ՝ դեռևս Պետրոս Մեծի ժամանակներից¹¹:

Ճանաչված ճանապարհորդ, Ռուսական աշխարհագրական ընկերության անդամ Ն.Մ. Պրժևալսկին, Ս. Տյան-Շանսկին, Ա.Արսենևը և նրանց շատ գործընկեր աշխարհագետներ եղել են ռուսական գլխավոր շտաբի սպաներ¹² և զբաղվում էին ոչ միայն իրենց այցելած վայրերի հանրամատչելի աշխարհագրական նկարագրությամբ, այլ նաև լուրջ համալիր ռազմաաշխարհագրական վերլուծական բնութագրություններով:

1942 թ. ԽՍՀՄ ԳԱ փոխնախագահ Ա. Ե. Ֆերսմանը, «Наука и жизнь» (N 11-12) ամսագրում, «Աշխարհագրությունը և պատերազմը» հոդվածում նշել է, որ «Աշխարհագրությունը, որը համարվում էր նկարագրական գիտություն, ներկայում հիմնարար գիտությունների շարքում դարձել է համաաշխարհային հակամարտության կարևորագույն խնդիրների լուծման առաջատար ուժը»¹³: Դրա պատճառները բացատրելիս նա նշում է, որ «աշխարհագրությունը բոլորովին էլ մեզ շրջապատող աշխարհի առանձին փաստերի մասին գիտություն չէ: Աշխարհագրությունը գիտություն է՝ կապերի մասին, խորը փոխհարաբերությունների մասին, որոնք բնության մեջ գոյություն ունեն առանձին երևույթի և դրանում աշխատող մարդու միջև»¹⁴:

Հայրենական մեծ պատերազմի ժամանակ Կարմիր բանակի երկրաբանա-աշխարհագրական ապահովման հանձնաժողովի օղակներից մեկը ԽՍՀՄ ԳԱ աշխարհագրության ինստիտուտն էր: Գիտնականներն արդեն 1942թ. հուլիսից

¹¹ История военного искусства, -М.: Воениздат, 2006, с. 389-390;

¹² Марков К.К., Первые русские военные географы, -М.: изд-во Наука и жизнь, №6, 1944, с. 14-45.

¹³ Ферсман А.Е., География на службе войны, -М.: “Наука и жизнь”, 1942, N11-12, с.36-38;

¹⁴ Նույն տեղում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

սկսեցին կազմել Վոլգայից մինչև Բեռլին ապագա ճակատամարտերի տարածքների ռազմաաշխարհագրական նկարագրությունները:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին Մոսկվայի պետական համալսարանի աշխարհագրության ֆակուլտետի պրոֆեսոր Գ.Կ. Տուշինսկու հաշվարկների և հանձնարարականների հիման վրա՝ Կովկասյան ռազմաճակատում ձնահյուսերը թափվում էին գերմանական լեռնահրաձգային ստորաբաժանումների վրա: Նա նաև մասնակցում էր ռազմական ճանապարհների վրա ձնահյուսերի դեմ պայքարի կազմակերպմանը, նրա մշակած երթուղիներով սովետական զորքերը շարժվում էին առավել անվտանգ լանջերով:

Մոսկվայի համալսարանի պրոֆեսոր Կ. Կ. Մարկովը գտնվում էր Կարելական ռազմաճակատի ինժեներական զորքերի շտաբի տրամադրության տակ (1944թ. հուլիս-օգոստոս): Նա Ֆրունզեի անվան Ռազմական ակադեմիայի համար մշակեց «Ռազմական աշխարհագրության»¹⁵ դասընթաց և 1944 թ. արժանացավ ակադեմիայի պրոֆեսորի կոչմանը:

Հետպատերազմյան տարիներին ակադեմիկոս Հ.Պ. Գերասիմովը բնագիտության մեջ մտցրեց «Կոնստրուկտիվ (կառուցողական) աշխարհագրություն» տերմինը՝ դրանով ընդգծելով աշխարհագրական գիտության նշանակությունը՝ ոչ միայն ռազմական, այլ նաև ժողտնտեսական բազմաթիվ այլ խնդիրների լուծման համար: Եվ այսօր էլ ժամանակակից հարափոփոխ աշխարհի բազմաթիվ հարցեր անհնար է լուծել առանց աշխարհագրության մասնակցության¹⁶:

Արևմտյան երկրներում, մասնավորապես ԱՄՆ-ում, ռազմաաշխարհագրական հետազոտությունների հիմքերը

¹⁵ Марков К.К., Военная география, Изв. ВГО, том LXXV, вып. 3; -М.: 1943, с. 13-26;

¹⁶ Герасимов И. П. Конструктивная география, цели, методы, результаты // Изв. ВГО. -М.: 1966. Т. 98. Вып. 5. С. 389—403.

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

դրվել են դեռևս XIX դարի երկրորդ կեսին: Սակայն հարկ է նշել, որ դրանք հիմնականում վերաբերվում էին մարտաբեմերի ֆիզիկաաշխարհագրական նկարագրություններին: Արդեն XX դարի կեսերից սկսած՝ այս բնագավառի հետազոտությունները հիմնականում համապատասխանում էին առարկայի ուսումնասիրման ներկա շրջանակներին: Ամերիկյան հեղինակներից հիշատակման արժանի են՝ Ջոն Մ. Կոլինզը¹⁷, Եվգենի Զ. Պալկան, Ֆրենսիս Ա. Գալգանոն¹⁸, Հարոլդ Ա. Վինթերսը¹⁹, և այլն:

Ջոն Կոլինզի «Ռազմական աշխարհագրություն մասնագետների և լայն հասարակայնության համար» գիրքը հրատարակվել է 1998 թվականին, ԱՄՆ Ազգային Ռազմավարության Ինստիտուտի կողմից (Վաշինգտոն): Հեղինակը ԱՄՆ բանակ է մտել 1942 -ին և ծառայությունն ավարտել է 1972 -ին՝ գնդապետի կոչումով: Ծառայել է Եվրոպայում, Կորեայում և Վիետնամում: 1951թ-ին Մասաչուսեթսում, Քլարկի համալսարանում ստացել է աշխարհագրության մագիստրոսի աստիճան: Կոնգրեսի գրադարանում 24 տարի շարունակ եղել է ազգային պաշտպանության գծով առաջատար մասնագետ:

Ջոն Կոլինզը իր գիտական աշխատություններում ներկայացնում է ժամանակակից ռազմաաշխարհագրական հետազոտությունների շրջանակը՝ տեսական նյութը համեմելով ԱՄՆ ռազմարվեստի տարբեր ժամանակաշրջանների օրինակներով: Ըստ Կոլինզի՝ ժամանակակից ռազմական աշխարհագրության առջև դրված հիմնախնդիրների բնույթը պայմանավորված է ռազմաքաղաքական և ռազմական իրավիճակից՝ սկսած ռազմավարական խնդիրների

¹⁷ John M. Colins, *Militari Geography for Profesionals and the Pablic-Washington*, 1998. 568p.

¹⁸ Eugene j. Palka, Frensis A. Galgano, *The scope of Militari Geography across the spektorom pis to war*, Mc. Graw- Hill primis. costom publishing, 2005, 482 p.

¹⁹ Harold A. Winters, “Battling the elements weather and terrain in the conduct of war”, D. Johns. Hopkins Universiti press: 2001, 336 p.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

լուծման ժամանակ առաջացած խոշոր հիմնախնդիրներից մինչև առանձին մարտիկի պայքարի ժամանակ առաջացող մանրուքներից: Աշխարհագրության հիմնահարցերը ամենուրեք և միշտ ունեն կիրառական նշանակություն՝ ռազմական մարտավարությունում և ռազմավարությունում, թիկունքի և ռազմավարական ռեսուրսների կիրառական խնդիրների լուծման ժամանակ: Բուն առաջնագծում, ինչպես առանձին զորամասերի և ամբողջական բանակների շարժման ժամանակ, այնպես էլ առանձին մարտիկի յուրաքանչյուր քայլի ընթացքում ռազմական խնդիրների լուծման հաջողությունը կախված է հրամանատարության կողմից աշխարհագրական միջավայրի վերաբերյալ գիտելիքների և իմացությունների տիրապետումից²⁰:

Արևմտյան ռազմարվեստը ժամանակակից և ապագա սերունդների մարտական օպերացիաների հաջող իրականացման մեջ անգնահատելի է համարում ռազմական գործողությունների միջավայրի վերաբերյալ առժամանակյա և հավաստի աշխարհագրական տեղեկատվության ստացումը: Այն ուղղորդելու է հրամանատարական կազմին, տարբեր զորատեսակների կիրառման համար արդյունավետ որոշումներ կազմելու համար (Նկար 1):

²⁰ John M. Colins, *Militari Geography for Professionals and the Public*-Washington, 1998. 568p.

հետազոտումը պետք է դառնա ռազմական տեսաբանների գործունեության հիմնական ուղղություններից մեկը:

«Քաղաքական և ռազմական աշխարհագրություն» հատուկ դասընթացը խորհրդային դարաշրջանում դասավանդվում էր մի շարք ռազմական բուհերում, և ավստում ենք, որ այժմ Հայաստանյան ռազմակրթական միջավայրում դա բացակայում է կամ ներկայացվում է կրճատված ծավալներով: Քաղաքական և ռազմական աշխարհագրության միասնական կամ անկախ ուսումնասիրությունը ռազմաքաղաքական տեսանկյունից ընդլայնում է զինվորական մասնագետների աշխարհայացքը, մտահորիզոնը և յուրահատուկ կերպով ձևավորվում է նրա ըմբռնողությունը, դատողությունն ու մտածողությունը, այդ թվում՝ բացահայտելով միջազգային քաղաքականության սուբյեկտների՝ մեր հեռու և մոտիկ հարևանների տարբեր իրավիճակներում պահվածքի շատ թաքնված շարժառիթներ: Բնաաշխարհագրական, հասարակական և ռազմական աշխարհագրական գիտելիքների խոր իմացությունն է, որ կարող է մեր հասարակությանը, մասնավորապես՝ երիտասարդ սերնդին ցույց տալ, թե հարաբերությունների ինչ բարդ համակարգում է գտնվում Հայաստանի Հանրապետությունը և օգնել գտնելու այդ համակարգում անկախացած Հայրենիքի արժանի տեղն ու դերը:

Ռազմական աշխարհագրության գիտության զարգացման համար մեծ ներդրում ունեն նաև ռազմարվեստի համաաշխարհային մեծության հայազգի երեք զավակները՝ Յանոշ Յեցը, Զատիկ Խանզատյանը և ծովակալ Իվան (Հովհաննես) Իսակովը:

Յանոշ Յեցը, Հովհաննես Յեցյանը (Janos Czetz) ծնվել է Հունգարիայում, մարտնչել է Հունգարիայում և Գարիբալդիի բանակում, 1861թ. բնակվել է Արգենտինայում, Բուենոս Այրեսում հիմնադրել է Արգենտինայի ռազմական ակադեմիան (որի բակում կանգնեցված է նրա հուշարձանը), եղել է նրա տնօրենը (1870-74), 1885 թ-ին հրատարակել է «Արգենտինայի

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

Հանրապետության ռազմական աշխարհագրություն» ձեռնարկը, որը երկար ժամանակ հանդիսանում էր արգենտինյան բանակի բարձրագույն հրամանատարական կազմի սեղանի գիրքը²²: Այս գրքի հրատարակությամբ Հովհաննես Յեցյանը դարձավ ամբողջ Լատինական Ամերիկայում առաջին ռազմաաշխարհագրական հետազոտություն կատարած հեղինակը:

Գիտության և կրթության ականավոր գործիչ, ՀԽՍՀ ԳԱ արտասահմանյան անդամ, Հայկական աշխարհագրական ընկերության պատվավոր անդամ Զատիկ Հակոբի Խանզատյանը 1919-ից աշխատելով «Ազգերի Լիգայում», վարել է աշխարհագետ-քարտեզագրի պաշտոնը²³: 1920 թ-ին հրատարակել է 25 քարտեզից կազմված «Պատմական Հայաստանի աշխարհագրական միասնության ատլաս»-ը: 1920-32 թվականներին կազմել և հրատարակել է «Թուրքիայի տնտեսական աշխարհագրություն», «Ալժիրի պատմական աշխարհագրություն», «Պաղեստինի տնտեսական աշխարհագրություն» և այլ ատլասներ: 1930-55 թվականները եղել է Մուրատ-Ռաֆայելյան վարժարանի աշխարհիկ տնօրենը: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին մասնակցել է Ֆրանսիական Դիմադրության շարժմանը: Պատերազմից հետո ծավալել է հայրենասիրական գործունեություն, կազմել մի շարք ատլասներ, այդ թվում՝ Սովետական Հայաստանի 40 ամյակին նվիրված «Հայաստանի պատմական ատլաս»-ը (1960)²⁴:

²² Տայեան Գ. (Գրիգորյան), «Մի հերոսի հեքիաթային ճակատագրի պատմություն», -Բուենոս Այրես, 2007, -317 էջ:

²³ Վալեսյան Լ. Հ., Նազարյան Խ. Ե., Մարտիրոսյան Գ., «Աղացած միս» գործողությունը, «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ; -Եր., 5.03.2005:

²⁴ Սայադյան Համ. Յ., Ռազմական աշխարհագրությունը և այդ ոլորտի հայ գործիչները, -Եր., «ՀԲ», 2013, հմ. 3-4, էջ 87-97:

Իվան (Հովհաննես) Ստեփանի Իսակովի (Տեր-Իսահակյան)²⁵ խմբագրությամբ հրատարակված «Ծովային ատլասը» ռազմաճովային աշխարհագրության համաշխարհային մասշտաբի երկույթ է համարվում: Ինքնուրույն և ինքնատիպ աշխարհագրական աշխատանք դարձավ «Ծովային ատլասի» առաջին հատորին կից «Աշխարհագրական անունների տեղեկատուն» (1952թ)²⁶:

ԽՍՀՄ ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետությունում ռազմաաշխարհագրական հետազոտություններ իրարկե իրականացվել են, բայց դրանք բոլորն էլ պատվիրված են եղել ԽՍՀՄ ՊՆ-ի կողմից և կատարվել են «գաղտնի» դրոշմագրի տակ: Ճանաչված աշխարհագետներ Ս. Բայանը և Ռ. Մկրտչյանը նույնպես ուսումնասիրել են աշխարհագրական առանձին երկույթների ազդեցությունը ռազմական գործընթացների վրա²⁷: Մասնավորապես՝ աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ գեոմորֆոլոգիայի և քարտեզագրության ամբիոնի պատվավոր վարիչ Սողոմոն Բայանը (1917-2002), 1970-ական թվականների սկզբներին համագործակցելով Սանկտ Պետերբուրգի (Լենինգրադի) տանկային գործարանի հետ, իր ղեկավարած աշխարհագետների խմբի հետ տալիս է Արագածի մերձգագաթային շրջանում տանկերի բարձրլեռնային փորձարկումների երթուղու գեոմորֆոլոգիական հիմնավորումը: Կիրառական ռազմական աշխարհագրության այս աշխատանքն իհարկե փակ է եղել և հետազոտությունների

²⁵Исаков И.С., Избранные труды, Океанология, география и военная история, - М.: Наука, 1984, -584 с.

²⁶ նույն տեղում

²⁷ Սայադյան Համ. Յ., Ռազմական աշխարհագրության կառուցողական հնարավորությունները, ծագման ու զարգացման հարցերը, ԵՊՀ, «Աշխարհագրության գիտակառուցողական ներուժը և գործնական կիրառումը» կոնֆերանսի նյութեր, -Եր., ԵՊՀ հրատ., 2011, էջ 223-230

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

արդյունքների հաշվետվության միակ օրինակը հանձնվել է պատվիրատուին:


Կիրառական աշխարհագրության առանձին ոլորտի հետաքրքիր ուսումնասիրություն էր աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրֆեսոր Ռ. Մկրտչյանի, Դ. Ստեփանյանի և Ա. Սարգսյանի «Զինվորական սեզոնային համազգեստի կրման ժամկետների կլիմայական հիմնավորումն՝ ըստ Հայաստանի Հանրապետության բարձրադիր գոտիականության»²⁸ հոդվածը: Այս հոդվածի էությունն այն է, որ հեղինակները, կիրառելով աշխարհագրության մեթոդները և աշխարհագրական տեղեկատվությունը, ՀՀ տարբեր բարձադիր մարզերի համար ստացել են տարբեր եղանակային պայմանների համար նախատեսված զինվորական համազգեստի կրման ճշգրիտ ժամկետներ, ինչը մեծ կիրառական նշանակություն կարող է ունենալ թիկունքային մատակարարումները պլանավորող ստորաբաժանումների համար:

²⁸ Мкртчян Р.С. и др., Климатическое обоснование сроков ношения типов сезонной одежды по высотным поясам Республики Армения. Основные проблемы географии Южного Кавказа и прелегающих регионов. Материалы конференции, посвященной 70-летию географического факультета, -Ер.: из-во ЕГУ, 2005, с. 139-141.

**ԳԼՈՒԽ 1. ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՐՊԵՍ
ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՃՅՈՒՂԻ
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

1.1 Ընդհանուր ակնարկ

Աշխարհագրական գիտությունների համակարգում առանձնացվում են բնական (ֆիզիկաաշխարհագրական) և հասարակական (սոցիալ-տնտեսական) աշխարհագրական գիտություններ, ինչպես նաև կիրառական բնույթի համալիր ճյուղեր՝ բժշկական աշխարհագրություն, ռազմական աշխարհագրություն, ռեկրեացիոն աշխարհագրություն և այլն (Նկ. 2):



Նկար 2. Աշխարհագրական գիտության ճյուղային կառուցվածքի սխեման


Ռազմական աշխարհագրությունը սահմանային աշխարհագրական գիտություն է աշխարհագրության և ռազմական գիտությունների շփման, մերձեցման հատվածում: Այն աշխարհագրական միջառարկայական գիտությունների բնագավառ է, որն օգտագործվում է՝ ոչ միայն գործող բանակների այլ նաև ռազմական տեսաբանների և

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

քաղաքագետների կողմից: Այն լիարժեք ներկայացնում է ռազմական արվեստի էությունը աշխարհագրական պրիզմայով դիտարկելիս: Այսպիսով կարելի է ասել, որ ռազմական աշխարհագրությունը աշխարհագրական տեղեկատվության և աշխարհագրական մեթոդների կիրառումն է ռազմական խնդիրների լուծման գործում:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ռազմական աշխարհագրությունը սկսեց կիրառել աշխարհագրական տեղեկատվությունը և աշխարհագրական մեթոդները խաղաղ և պատերազմական ժամանակաշրջանում ռազմական խնդիրների արդյունավետ լուծելու համար: Այս խնդիրների լուծման համար ռազմական աշխարհագետները պետք է ուսումնասիրեն աշխարհագրության տարբեր բնագավառներ՝ քաղաքական աշխարհագրությունից մինչև ֆիզիկական աշխարհագրություն և գեոմորֆոլոգիա (մարտաբեմերի տեղադրության և ռազմական գործողությունների վրա նրա ունեցած ազդեցությամբ), ռազմական ներկայության մշակութային ու տնտեսական նշանակությունից մինչև ռազմական էկոլոգիա:

Տարբեր երկրներում ռազմական աշխարհագրության իրական պատկերի մասին կարծիք կազմելը շատ դժվար է, քանի որ այս ուղղությամբ ուսումնասիրությունները հիմնականում հասու չեն լայն հասարակությանը: Ռազմական աշխարհագրության հիմնական խնդիրներից մեկը՝ հավանական և իրական մարտաբեմերի ուսումնասիրությունն է: Ռազմական պլանավորման մարմինները, տարբեր իրավիճակների համար մշակում են հավանական և քիչ հավանական ռազմական գործողությունների ծրագրեր և դրանցից յուրաքանչյուրում որպես հիմնական ազդող գործոն հանդես է գալիս աշխարհագրական հիմքը:



Նկար 3. Ռազմական աշխարհագրության տեղը գիտությունների համակարգում

Ռազմական աշխարհագրությունը հանդիսանում է ռազմական գիտությունների և աշխարհագրական գիտությունների մեթոդների, տեղեկատվության լավագույնս սինթեզող ենթաճյուղը (Նկար 3): Այն ռազմական գիտությունների համակարգից հատկապես սերտ կապված է ռազմարվեստի պատմությանը, որը պատմական վերլուծությունների համար առատ նյութ է տրամադրում: Աշխարհագրական գիտությունների համակարգում առավելապես կարելի է դասել կիրառական աշխարհագրության բնագավառին:

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ - պետության կողմից միջազգային իրավունքի տարրերին համապատասխան պաշտոնապես ընդունված մեխանիզմների և ձևերի ամբողջությունն է, որն ուղղված է ապահովելու ազգային շահերի պաշտպանությունն, ինչպես ներքին, այնպես էլ արտաքին սպառնալիքներից՝ տնտեսական, քաղաքական, ռազմական, էկոլոգիական և այլ ոլորտներում:

ՌԱԶՄԱԿԱՆ ԴՈԿՏՐԻՆ – հանդիսանում է երկրի անվտանգության հայեցակարգերի բաղադրիչ մաս, պետության կողմից պաշտոնապես ընդունված տեսակետների ամբողջություն, որն ուղղված է պատերազմների և զինված ընդհարումների կանխմանը, բանակաշինությանը, երկրի պաշտպանության նախապատրաստելուն, հակառակորդի սպառնալիքների նկատմամբ հակաքայլեր ձեռնարկելուն:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԻՄՔԵՐ	ՌԱԶՄԱԿԱՆ ՀԻՄՔԵՐ	ՌԱԶՄԱՏԵՆՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐ
---------------------	--------------------	---

Նկար 4. Երկրի Ազգային անվտանգության հայեցակարգի և Ռազմական դոկտրինի մշակման տեսական հիմքերը

Ռազմական աշխարհագրությունը ժամանակակից ռազմական գիտության հետ համեմատած երիտասարդ ճյուղ է: Ռազմական աշխարհագրության կիրառական հիմնական գործառույթները կապված են աշխարհագրական տեղեկատվության, մեթոդների և տեխնոլոգիաների ռազմական հիմնախնդիրների լուծման մեջ կիրառելու հետ, ռազմական գործողությունների բոլոր դեպքերում, խաղաղ և պատերազմական ժամանակաշրջաններում (Նկար 4): Պատմության մեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

բազմաթիվ են օրինակները, երբ տեղանքի ճևաբանության, եղանակային և կլիմայական պայմանների հմուտ օգտագործումը՝ պատերազմների ժամանակ վճռել են վերջնական ելքը²⁹: Սակայն ռազմական հիմնախնդիրները, աշխարհագրության հետ կապված են անկախ այն ենթատեքստից, որում դրանք առկա են: Ցանկացած ռազմական գործողությունների անցկացումը, անկախ դրանց առջև դրված վերջնական նպատակներից, պայմանավորված է գործողությունների շրջանի բնույթից, որը ռազմական տերմինաբանության մեջ անվանվում է ռազմաօպերատիվ միջավայր:

<p>ԴՆՁԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ գիտելիքների համակարգ է՝ որովհետև ռազմական հակամարտության ընթացքում ռազմական ռազմավարության, զինված զայաքարի իրավալարման և կերտները՝ և օրինակաբարությունների, ազդեցության շրջանգավորումը կապակցվում էր ստեղծման և պատրաստման, պետականության պաշտպանության համար տարբեր տեսակի ռազմական գործողությունների կազմակերպմանը</p>			<p>ՀԱՄԱՐՄԱԿԱՆ, ԲԱՄԱՆ և ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ և ԵՐԻՒ ԿՅՈՒՄԸՐ, որոնք ուղղված են ՁՈՒ ին պատերազմի նախապատրաստման, զինված պայքարի համար միջոցներ ստեղծման և դրա ամբողջական պատրաստման ու վերանման ապահովման իրականացման (ռազմավարության և կառավարման) ունեցող գրությունների ռազմական ինտելիգենցիայի</p>			<p>ՀԱՄԱՐՄԱԿԱՆ, ԲԱՄԱՆ և ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ և ԵՐԻՒ ԿՅՈՒՄԸՐ, որոնք ուսումնասիրում են տեսակետներ, զարգացնում և հավանաբար են դիվանագիտական, իրավական և հակառակորդի դեմ պայքար իրականացնելու պաշտպանության կամ ռազմական կոնվերտի ընթացքում:</p>		
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՐԱՅԵՆՆԵՐ	ԳՐԱՄԱՐՄԱԿԱՆ ԶՆՆՈՒՄՆԵՐ և ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶՆՆՈՒՄՆԵՐ	ՄՊԱՌԱՅԻՆՈՒ ԹՅՈՒՆ և ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶՆՆՈՒՄՆԵՐ	ՀԱՄԱՐՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ և ԵՐԻՒ ԿՅՈՒՄԸՐ (ռազմաօպերատիվ և ընթացիկ)	ՌԱՄԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ և ԵՐԻՒ ԿՅՈՒՄԸՐ (նախնական և ընթացիկ)	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ և ԵՐԻՒ ԿՅՈՒՄԸՐ (նախնական և ընթացիկ)	ՀԱՄԱՐՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ և ԵՐԻՒ ԿՅՈՒՄԸՐ	ԴՆՁԱԳԻՏՈՒ ԿՅՈՒՄԸՐ և ԵՐԻՒ ԿՅՈՒՄԸՐ	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ և ԵՐԻՒ ԿՅՈՒՄԸՐ
ՌԱՄԱՐՄԱԿԱՆ ԳՐԱՅԵՆՆԵՐ և ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՐԱՅԵՆՆԵՐ	ՌԱՄԱՐՄԱԿԱՆ ԳՐԱՅԵՆՆԵՐ և ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՐԱՅԵՆՆԵՐ	ՁՈՒ ԿՅՈՒՄԸՐ և ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶՆՆՈՒՄՆԵՐ	տնտեսական պիտույթներ զինվորական	ռազմական աշխարհագրություն	ռազմական կազմի և ռազմական ընթացիկների կազմի	տնտեսական պիտույթներ և ընթացիկների կազմի	տնտեսական պիտույթներ և ընթացիկների կազմի	տնտեսական պիտույթներ և ընթացիկների կազմի
ԳՐԱՄԱՐՄԱԿԱՆ ԶՆՆՈՒՄՆԵՐ	ՀՕՊ ԶՈՒՅԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶՆՆՈՒՄՆԵՐ	ԳՐԱՄԱՐՄԱԿԱՆ ԶՆՆՈՒՄՆԵՐ և ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶՆՆՈՒՄՆԵՐ	Եզրված ռազմական իրավաբանական և իրաքաղաքական ռազմական մանկավարժություն և այլն	ռազմական աշխարհագրություն	ռազմական կազմի և ռազմական ընթացիկների կազմի	տնտեսական պիտույթներ և ընթացիկների կազմի	տնտեսական պիտույթներ և ընթացիկների կազմի	տնտեսական պիտույթներ և ընթացիկների կազմի
ՌԱՄԱՐՄԱԿԱՆ ԳՐԱՅԵՆՆԵՐ և ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶՆՆՈՒՄՆԵՐ	ԴՆՁԱՄԱՐՄԱԿԱՆ ԶՆՆՈՒՄՆԵՐ և ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶՆՆՈՒՄՆԵՐ	ՌԱՄԱՐՄԱԿԱՆ ԶՆՆՈՒՄՆԵՐ և ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶՆՆՈՒՄՆԵՐ						


Նկար 5. Երկրի ռազմական քաղաքականության մշակման գիտական հիմքերը (ՌԴ ՁՈՒ ԳԾ ակադեմիա)

²⁹ Douglas R. Caldwell, Judy Ehlen and Russell S. Harmon, Studies in Military Geography and Geology; Kluwer academic publishers, Dordrecht/Boston/London, 2007, 348p.

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

Աշխարհագրությունն իր ուրույն տեղն ունի երկրի ռազմական քաղաքականության մշակման գիտական հիմքերի շարքում (Նկար 5):

Ժամանակակից ռազմաաշխարհագրական հետազոտությունների հիմնական առարկան հանդիսանում է խաղաղ և պատերազմական ժամանակաշրջանում ցամաքային և ծովային ռազմական գործողությունների մարտաբեմերի (ՌԳՄ), առանձին ռազմավարական շրջանների, երկրների ժամանակակից ֆիզիկաաշխարհագրական, ռազմաքաղաքական, ռազմատնտեսական պայմանների, օպերատիվ սարքավորման և ռազմական գործողությունների նախապատրաստման ու անցկացման վրա դրանց ազդեցության համալիր գնահատումը (Նկար 6):



Նկար 6. Ռազմական աշխարհագրության հետազոտությունների ընդգրկած տիրույթը³⁰

Ֆիզիկա-աշխարհագրական պայմանները ուսումնասիրում են զորքերի կենտրոնացման, շարժման, տեղակայման և զորաշարժերի շրջանների վրա դրանց ազդեցության հետազոտման նպատակով, ինչպես նաև հեղեղումների,

³⁰ Eugene j. Palka, Frensis A. Galgano, The scope of Militari Geography across the spektorom pis to war, Mc. Graw- Hill primis. costom publishing, 2005, 482 p.

ավերածությունների, հրդեհների առաջացման հնարավորությունների հայտնաբերման, մարտական տեխնիկայի և զորատեսակների օգտագործման համար առավել նպաստավոր ուղղությունների և շրջանների պաշտպանության նպատակով: Տարածքի օպերատիվ կահավորման ուսումնասիրման ժամանակ (հրթիռային դիրքեր, օդանավակայաններ, ռազմածովային բազաներ, նավահանգիստներ, ամրացված շրջաններ, տարբեր արգելափակոցներ, հաղորդակցման ուղիներ, պահեստներ) ի հայտ են բերվում զինված ուժերի տարբեր զորատեսակների միավորումների բազավորման հնարավորությունները, նրանց նյութատեխնիկական ապահովման պայմանները³¹:

Ռազմաքաղաքական և ռազմադինամիկական պայմանների ուսումնասիրման առարկաներ են հանդիսանում ռազմական բլոկները և միությունները և դրանց քաղաքական ուղղվածությունը, քաղաքական լարվածության հիմնական օջախները, պետությունների արտաքին և ներքին քաղաքականությունը, քաղաքական կուսակցությունները, բնակչությունը և նրա քաղաքական-բարոյական վիճակը, զորահավաքային և աշխատանքային ռեսուրսները, առանձին երկրների և պետությունների կոալիցիայի տնտեսության վիճակը, դրանց ռազմատնտեսական ներուժը, ռազմավարական և օպերատիվ նշանակության հիմնական էներգետիկ և արդյունաբերական կենտրոնները և դրանց խոցելիությունը, արտադրության կախվածության աստիճանը ռազմավարական նյութերի ներմուծումից, զորքերի կողմից տեղական ռեսուրսների (մթերքներ, շինանյութեր և տրանսպորտային միջոցներ) օգտագործման և մարտական տեխնիկայի ու սպառազինության տեղում վերանորոգելու հնարավորությունները³²:

³¹ Военный Энциклопедический словарь, -М.: Воениздат, 1986, 864 с.

³² Նույն տեղում

Ձինված ուժերը ուսումնասիրվում են քանակի, կառուցվածքի, սպառազինության և տեխնիկական համալրվածության, բանակի համալրման սկզբունքների և անձնակազմի բարոյամարտական որակների որոշման տեսակետից:

Ռազմական աշխարհագրությունը որպես ռազմական առարկա իր մեջ ներառում է ընդհանուր հիմունքները, ռազմական երկրագրությունը և ռազմական գործողությունների մարտաբեմերը: Ծովային և օվկիանոսային մարտաբեմերը ուսումնասիրվում են ռազմածովային աշխարհագրության կողմից, որը դիտարկում է վերը նշված պայմանները ռազմածովային նավատորմի ուժերի և միջոցների կիրառման շահերից ելնելով³³:

Չնայած այն հանգամանքին, որ մինչև XIX դարի սկզբները ռազմական նպատակների համար օգտակար աշխարհագրական և վիճակագրական տվյալների հավաքագրումներ իրականացվում էին, սակայն դա իրականացվում էր առանց անհրաժեշտ համակարգման, և այդ տվյալներն ունենում էին հատվածային բնույթ:

Նապոլեոնյան պատերազմները հայտնաբերեցին, որ պատերազմի հաջող վարման համար մյուս նախապատրաստական միջոցառումների թվում անհրաժեշտ է ռազմական գործողությունների մարտաբեմի ինչպես նաև մարտնչող կողմերի բոլոր ռազմական ուժերի և միջոցների հիմնավոր ուսումնասիրում: Մամուլում հայտնվեցին աշխատություններ, որոնցում պետությունը դիտվում էր ռազմական տեսանկյունից, դրա հետ մեկտեղ Ռազմական աշխարհագրություն անունով հրապարակվեցին հետազոտություններ, որոնք նվիրված էին երկրի մակերևութի ուսումնասիրմանը ռազմական տեսանկյունից, իսկ Ռազմական վիճակագրություն անվան տակ հրատարակվում էին տարաբնույթ տեղեկություններ պետության զինված ուժերի, առավելապես

³³ Военный Энциклопедический словарь, -М.: изд-во. Оникс 21век, 2002, 1432 с.

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

թվային տվյալներ ցամաքային զորքերի և ռազմածովային նավատորմի մասին:

Իրականում անկարելի է գերազնահատել ռազմական աշխարհագրության կարևորությունը պատերազմի ժամանակ: Վստահելի աշխարհագրական տեղեկատվությունը երկար ժամանակ որոշիչ է եղել զորքերի հանդերձավորման, վարժանքների, արտասահմանում տեղաբաշխման ժամանակ՝ ողջ XX դարի ընթացքում: Համապատասխան տարածաշրջանային և ճյուղային համակարգված աշխարհագրական հետազոտությունների անցկացումը կանոնավոր կերպով ապահովում է որոշիչ տեղեկատվական բազան՝ բոլոր մակարդակներում որոշում կայացնելու գործնթացներին աջակցելու նպատակով: Ինչպես զարգացել են աշխարհագրական հետազոտությունների անցկացման մեթոդները և տեխնիկան՝ զուգահեռաբար զարգացել է նաև դրանց ռազմական նպատակներով կիրառությունը: Զարմանալի է, բայց աշխարհագետների մեծ մասի կողմից ներկայումս կիրառվող աշխարհագրական գործիքներն ունեն ռազմական ծագում: Այսպես օրինակ, ԼԱՆԴՍԱՏ-ի տված պատկերները, օդային լուսանկարահանումները, համակարգչային քարտեզագրությունը, Գլոբալ տեղորոշման համակարգը (GPS), Աշխարհագրական տեղեկատվական համակարգը (GIS), տարբեր տեսակի և մասշտաբի քարտեզների լայն ընտրանին կանոնավոր կերպով օգտագործվում են տարբեր մակարդակներում ռազմական պլաններ կազմելու և գործողություններ վարելու համար: Բավական է ասել որ արևմտյան շատ երկրների ռազմական շրջանակների ներսում ռազմական աշխարհագրությունն իմպերատիվ է պատերազմական ժամանակների ենթատեքստում, քանզի ճակատամարտերը տարվում են երկրագնդի մակերևույթի վրա, նրա մթնոլորտում, ջրոլորտում և մերձակա տիեզերքում (նրա սահմանները համընկնում են նոսֆերայի սահմաններին):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

	XV//դ.-XIX դ.-ի I կես	XIX դ.-ի II կես – XX դ.-ի սկիզբ	Երկրորդ համաշխարհային պատերազմը (1939-1945 թթ.)	Պարսից ծոցի պատերազմը (1990-1991 թթ.)	Ապագայի պատերազմը
Գիտարկում (Observation)	Շեռտիտակի օգնությամբ դիտարկում իրականացնելու և ստրինադակի միջոցով տեղեկությունը փոխանցելու ժամանակաշրջան	Գիտարկման և հեռագրամեթոդի միջոցով տեղեկության փոխանցման ժամանակաշրջան	Գիտարկման և ռադիոյի կամ յարային կապի միջոցով տեղեկության փոխանցման ժամանակաշրջան	Իրական ժամանակին մոտ	Իրական ժամանակ
Կողմնորոշում (Orientation)	Շաբաթներ	Օրեր	Ժամեր	Բույներ	Անընդհատ
Որոշում (Decision)	Ամիսներ	Շաբաթներ	Օրեր	Ժամեր	Մնախաձեռն, ակնբարձրքեն
Գործողություն (Action)	Եռամսյակ	Ամիս	Շաբաթներ	Օրեր	Ժամեր

Նկար 7. Զորքերի ղեկավարման ժամանակային չափորոշիչների պատմական փոփոխությունները³⁴

Ռազմական աշխարհագրությունը հասարակական աշխարհագրական գիտությունների շարքում առաջիններից է, որի համալիր հետազոտությունների արդյունքներն անմիջական դերակատարություն են ունենում, երկրի ազգային անվտանգության հայեցակարգի մշակման մեջ և հանդիսանում է ռազմական քաղաքականության գիտական հիմքերի առանցքային առարկաներից մեկը (նկար 4; 5):

Ռազմական աշխարհագրությունը պետք է շարունակի համաչափ քայլել տեխնոլոգիաների զարգացման, գլոբալ անկայունության, ռազմական գործոնի դերի փոփոխության հետ: Աշխարհագրական տեղեկատվությունը, սկզբունքներն ու գործիքները, որոնք ունեն նշանակալի կիրառում պատերազմական ժամանակաշրջանի հիմնախնդիրներում, ունեն հավասարազոր, եթե ոչ առավել կիրառում խաղաղարար գործողություններում և խաղաղ ժամանակաշրջանի սցենարներում (Նկար 7):

³⁴ <https://cont.ws/@bmpd/82941>

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

Ուսումնասիրած մեծածավալ գրականությունից ակնհայտ պարզ է դառնում, որ ռազմական աշխարհագրությունը եղել է գերտերությունների և կայսրությունների մենաշնորհը: Դրա հետ բնականաբար մենք համաձայն չենք և համոզված ենք, որ ռազմական աշխարհագրությունը մեծ դերակատարություն կարող է ունենալ տարածքով, բնակչությամբ և տնտեսությամբ ավելի փոքր երկրների պաշտպանունակության բարձրացման գործում, ու ինչու ոչ նաև առաջարկություններ ներկայացնի տնտեսության տարածքային և տարաբնակեցման արդյունավետ պլանավորման վերաբերյալ:

1.2 Հետազոտության մակարդակները

Ցամաքն իրենից ներկայացնում է ռազմական գործողությունների վարման հիմնական տարածքը: Ռելիեֆը, ջրային օբյեկտները, երկրաբանությունը և հողերը մշտական միջավայր են համարվում այդ գործողությունների համար: Ռազմական բարձրագույն հրամանատարները՝ ճակատամարտեր, ծովամարտեր, խոշոր օպերացիաներ, խաղաղապահ առաքելություններ, հակահարձակողական գործողություններ պլանավորելիս և ղեկավարելիս, կապված հսկայական տարածքների հետ, իրենց առջև տեսնում են մայրցամաքներ, խոշոր լեռնային համակարգեր, դաշտավայրեր, սարահարթեր և հովիտներ, ցամաքային և ջրային այլ տարածքներ: Փոքր ստորաբաժանումների հրամանատարները և առաջնային գծի զինվորները մարտի ժամանակ, ռազմաճակատային գծի մի տեղամասի պահպանության և պաշտպանության ժամանակ, ինչպես նաև մարտի ընթացքում հանդիպում են ոչ թե վերացական պատկերների, այլ կոնկրետ մանրամասների՝ ոչ մեծ բլուրներ, ձորակներ, գետերի ասիեր, առանձին ժայռեր, լանդշաֆտի տարրեր, այդ պատճառով էլ նրանց տեսակետները տեղանքի վերաբերյալ կապված ընդգրկվող տարածքների մեծությունից էականորեն տարբերվում են:

Ներկայացվող աշխատությունում մենք պահպանելու ենք աշխարհագրության շրջանակներում ընդունված հետազոտությունների երեք մակարդակների՝ մակրո (համաշխարհային), մեզո (տարածաշրջանային) և միկրո (տեղական) մակարդակ համակարգը³⁵:

Ռազմարվեստի հետ իմաստային կապն ապահովելու և ռազմական շրջաններին ավելի ընկալելի դարձնելու նպատակով մենք զուգահեռներ կտանենք ռազմարվեստի մեջ ընդունված երեք մակարդակների հետ՝ **ռազմավարություն** (տեսություն պատերազմի մասին), **օպերատիվ արվեստ** (տեսություն օպերացիայի մասին) և **մարտավարություն** (տեսություն մարտի մասին): Այս բաժանումներն անշուշտ տարածքային ընդգրկման տեսակետից լինելու են պայմանական՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ և՛ տարածքով շատ մեծ, և՛ փոքր երկրների համար նույն մոտեցումն է կիրառվում:

Այսպիսով, քննարկվող ցանկացած երկրի համար ռազմաաշխարհագրական գործոններն իրարից տարբերվում են տարածական մասշտաբներով: Այն ավելի ակնհայտ է դառնում, երբ մենք քննարկում ենք ռազմական գործողությունների պլանավորման տարբեր մակարդակներում՝ ռազմավարական, օպերատիվ և մարտավարական: Յուրաքանչյուր դեպքում կարևորություն է տրվում աշխարհագրական օբյեկտների և երևույթների տարբեր խմբերի:

1.2.1 Մակրոմակարդակ

Ռազմական աշխարհագրությունում ինչպես աշխարհագրության մյուս ճյուղերում առաջարկում ենք ուսումնասիրության ընդհանուր թեման բաժանել երեք ուսումնասիրման մակարդակների՝ մակրո (համաշխարհային կամ գլոբալ), մեզո

³⁵ Վալեսյան Ա.Լ., Վալեսյան Լ.Հ., Քաղաքական աշխարհագրություն, -Եր.: ԵՊՀ հրատ., 2005, էջ 35:

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

(տարածաշրջանային կամ ռեգիոնալ) և միկրո (տեղական կամ լոկալ):

Այս ենթադասակարգման ամենաբարձր՝ մակրոմակարդակի գլխավոր բովանդակությունն առանձին վերցրած պետությունների ու դրանց միավորումների փոխհարաբերություններն են, աշխարհի քաղաքական բաժանման փոփոխությունները և համաշխարհային ու տարածաշրջանային քաղաքական, տնտեսական ու ռազմավարական ուժերի հարաբերակցությունը:

Ռազմական գործողությունների վարման ռազմավարական մակարդակի դեպքում առնչվում ենք ինտեգրված պլանավորման և գործողությունների իրականացման ամենամեծ տարածական մասշտաբներին՝ համաշխարհային, ազգային և մարտաբեմերի մակարդակներ: Այն, ի հավելումն ռազմական գործոնների առնչվում է նաև աշխարհատարածական տեսանկյունից քաղաքական, տնտեսական, սոցիալական և հոգեբանական գործոնների հետ, ուշադրությունը կենտրոնացնելով և՛ իր, և՛ դաշնակիցների, և՛ հակառակորդի տարածքների վրա իրենց հաղորդակցության ուղիներով, ռեսուրսներով և արհեստական լանդշաֆտներով հանդերձ:

«Ռազմավարական աշխարհագրություն» եզրույթը դեռ XIX դարից հանդիպել է ռուս ռազմական աշխարհագետների աշխատություններում ³⁶ ³⁷ : Ըստ նշված հեղինակների ռազմավարական աշխարհագրությունը պետք է ռուսումնասիրի երկրի՝ որպես միասնական օբյեկտի, ռազմաաշխարհագրական առանձնահատկությունները և դրանց ազդեցությունը ռազմավարության և ռազմավարական պլանավորման վրա: Որպես կարևոր առանձնահատկություններ կարելի է նշել տարածքի աշխարհագրական դիրքը և մեծությունը, դեպի բաց ծով ելքի առկայությունը, այլ երկրների

³⁶ Языков П., Опыт теории военной географии, -СПб, 1838, 107 с.

³⁷ Милютин Д.А., Критическое исследование значения военной географии и военной статистики, -СПб, 1846, 21 с.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

նկատմամբ փոխադարձ տեղադիրքը, սահմանների կոնֆիգուրացիան, մակերևույթի գերակշիռ տարրերը և այլն:

Երկրի ընդարձակ տարածքը միշտ էլ հանդիսացել է երկրի ռազմական ներուժը հզորացնող կարևոր գործոն, որը կանխորոշում է նաև աշխարհագրական ռեսուրսների բազմազանությունը և ծավալը, որոշակիորեն ապահովում է ռազմավարական թիկունքի անվտանգությունը հակառակորդի հեռահար խոցման միջոցներից և ապահովում է ռազմավարական ծավալման անհրաժեշտ խորություն: Որպես այս չափանիշներին համապատասխանող երկրներ կարելի է ներկայացնել իրենց չափսերով առաջին տասնյակի մեջ ընդգրկված պետությունները՝ Ռուսաստանի Դաշնություն, Կանադա, Չինաստան, ԱՄՆ, Բրազիլիա, Ավստրալիա և այլն:

Ռազմավարական տեսակետից հաջորդն ըստ կարևորության հանդիսանում է երկրների տարածքի ծովային կամ ցամաքային դիրքը, որը դեռ հին ժամանակներից իր հետքն է թողնում տվյալ երկրի զինված ուժերի կառուցվածքի և ռազմարվեստի վրա:

Հզոր ծովային ուժեր և կղզային դիրք ունեցող պետությունները ոչ միայն կարողացել են պահպանել մշակութային և տնտեսական անկախությունը, այլ պատմության ընթացքում դիմակայել են բազմաթիվ հզոր հակառակորդների ներխուժման փորձերին: Ասվածի վառ ապացույց կարելի է հիշատակել Ճապոնիան, որը XIII դարում երկու անգամ՝ 1274 և 1281 թվականներին, դիմակայեց մոնղոլական զորավար Խուբլայ Խանի կողմից ձեռնարկված ներխուժման փորձերին, երկու դեպքում էլ բացի ճապոնացիների աննկուն կամքի, օգնության է հասել բնության ահեղ տարերքը՝ «Աստվածային քամու» (ճապոներեն «կամիկաձե») զոհ դարձնելով մոնղոլների նավատորմի մեծ մասը:

Երկրորդ օրինակն արդեն XIX-XX դարերից: 1806 թ-ին Եվրոպայի ամենահզոր բանակը Նապոլեոնի ղեկավարությամբ չկարողացավ պայմաններ ստեղծել Բրիտանական

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

կղզիներ ներխուժման համար³⁸: XX դարի կեսերին Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ նույն իրավիճակում հայտնվեցին գերմանաֆաշիստական ռազմաքաղաքական ղեկավարները:

Ծովի և ցամաքի խիստ տարբեր ֆիզիկաաշխարհագրական պայմանները լիովին տարբեր հիմնախնդիրներ են առաջադրում՝ ռազմական խնդիրների լուծման տեսակետից: Ծովը ինչպես ժամանակակից աշխարհի ռեսուրսատար տնտեսությունների այնպես էլ ռազմական նշանակության տեսակետից իր վրա կրում է առաջին կարգի հաղորդակցման ուղու դերը: Այստեղ տեղին է հիշել հայտնի աշխարհագետ Ռատցելի խոսքերը՝ «ծովը՝ դա ուղի է»: Ծովի նկատմամբ վերահսկողության սահմանումը դա նույնն է ինչ հսկողություն սահմանել ծովային ուղիների վրա³⁹:

Մանրամասն աշխարհագրական վերլուծության է պետք ենթարկել նաև ծովային և ցամաքային սահմանների ռազմական նշանակությունը: Ծովի և ցամաքի հատման գծերի՝ ծովափերի ֆիզիկաաշխարհագրական և գեոմորֆոլոգիական մանրամասն վերլուծությունների արդյունքները հատկապես կարևորվում են ծովից ցամաք գորքերի դեսանտավորման օպերացիաների ժամանակ:

1915 թ-ի փետրվարին Օսմանյան թուրքերի դեմ անգլիացիների ձեռնարկած «Գելիբոլուի» (Դարդանելի) օպերացիայի ձախողման հիմնական պատճառը նշվում է այն հանգամանքը, որ անգլիացիների կողմից «կրակը վարվում էր ալիքների վրա տատանվող հարթակից՝ նավերից, այն դեպքում երբ գերմանական և ավստրիական հաուբիցները կրակում էին կայուն հարթակներից՝ ցամաքից»⁴⁰:

³⁸ Մանֆրեդ Ա.Չ., Նապոլեոն Բոնապարտ, -Եր.,1975, էջ 140:

³⁹ Гросс Отто., Учение о морской войне в свете опыта мировой войны, - Ленинград, 1930, с. 133

⁴⁰ Вильсон Х., Линейные корабли в бою 1914-1918 гг., -М.: Воениздат, 1938, с.362.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ամրոցային հրետանու ծովային հրետանու նկատմամբ այս առավելության պատճառով հաճախ ծովային ամրոցները գրավվում են ցամաքից (Պորտ Արտուր (Լյուշուն), Սինգապուր, Սևաստոպոլ և այլն):

Մակրոմակարդակում ռազմական աշխարհագրության կարևոր գործոններից մեկը դա տարածքների փոխադարձ դիրքավորվածությունն է, որը նույնպես համարվում է ռազմաաշխարհագրական կարևոր հիմնախնդիրներից մեկը: Միջին և ծայրամասային դիրքը քննարկվում է դեռ վաղուց և կարևոր նշանակություն է ունեցել XX դարում տեղի ունեցած երկու համաշխարհային պատերազմների ժամանակ: Անդրծովյան երկրներից հումքով մատակարարումը, և հետևաբար հաղորդակցության ուղիների ազատության հիմնախնդիրը ներկայումս էլ ավելի է կարևորվում: Այս հիմնախնդիրների տեսակետից առավել լավ պայմաններում են այն երկրները որոնք ունեն ավագծի մեծ երկարություն՝ Ռուսաստան, ԱՄՆ, Կանադա, Մեծ Բրիտանիա, Ավստրալիա, Ինդոնեզիա, Բրազիլիա և այլն:

Կ.Կ. Մարկովը⁴¹ ռազմավարական աշխարհագրության մեծ և բարդ բաժին է համարում ռազմավարական թիկունքի աշխարհագրությունը: Այս բաժինը նույնպես կարևորվում է տարբեր մակարդակների ռազմական բախումներում նոր զենքերի և ռազմական տեխնիկայի նոր ձևերի և նմուշների կիրառմանը զուգընթաց: Ռազմավարական թիկունքի նկարագրման մեջ Մարկովը ընդգրկում է թիկունքի աշխարհագրական (բնական) ռեսուրսների և պայմանների, դրանց տարածման վերլուծությունն ու գնահատականը:

Ռազմավարական թիկունքի աշխարհագրական պայմաններ հասկացությունն իր մեջ ներառում է այն բոլոր երևույթները որոնք ուղղակի կամ անուղակի ձևով ազդում են երկրի ներուժի վրա, ինչպիսիք են՝ կլիմայի առանձնահատ-

⁴¹ Марков К.К., Военная география, Изв ВГО, том LXXV, вып. 3; 1943, с. 13-26

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

կությունները, ջրագրությունը, ռելիեֆի և հողերի ընդհանուր բնութագրերը (հողային ֆոնդը, գրունտը ճանապարհների կառուցման տեսակետից և այլն): Ռազմական աշխարհագրության ժամանակակից մասնագետը չի կարող անուշադրության մատնել այս երևույթների բնութագրերը, որոնք էական ազդեցություն են ունենում թիկունքի անխափան աշխատանքի վրա՝ օրինակ, տրանսպորտի ձմեռային պայմաններում շահագործման դժվարությունները, անձրևներից գերխոնավացած կավային գրունտներով ճանապարհները և այլն:

Թիկունքի աշխարհագրական ռեսուրսներ եզրույթն իր մեջ ներառում է այն գլխավոր բնական օբյեկտները, որոնք որպես հումք, ուղղակի կիրառություն կարող են ունենալ ռազմական արդյունաբերության տարբեր ճյուղերում: Այս խմբի կարևորագույն հումքատեսակները կոչվում են **ռազմավարական հումք**, դրանք կապված են ինչպես աշխարհագրական միջավայրից, այնպես էլ տվյալ երկրի արտադրական հնարավորություններից: Այդպիսիք կարող են լինել անտառը, կաուչուկը, բամբակը, հացահատիկը, բուրդը և այլն: Ռազմավարական հումքի միասնական ցուցակ գոյություն չունի և յուրաքանչյուր երկիր, պայմանավորված բազմաթիվ բնական և տնտեսական պայմաններով, ինքն է կազմում իր երկրի համար անհրաժեշտ ռազմավարական հումքի ցուցակը: Յու. Ռինգելը⁴² ԱՄՆ-ի համար XX դարի 30-ականներին կազմել էր ռազմավարական հումքի ցուցակ, որի մեջ մտնում էին՝ բամբակ, կաուչուկ, վուշ, փայտանյութ, հացահատիկ և խոշոր ու մանր եղջերավոր անասունները:

Ամեն դեպքում էլ նմանատիպ բնույթի ցուցակներում կարևոր տեղ են գրավում հումքի այն տեսակաները (գլխավորապես կենսաբանական ծագման), որոնք հանդիսանում են աշխարհագրական միջավայրի անմիջական

⁴² Рингел Ю., Тотальная война., Военный зарубежник, 1938, N 4

արդյունք և պետք է գրավեն ռազմական աշխարհագետների ուշադրությունը:

Հումքային ռեսուրսների գնահատման հետ կապված աշխարհագրությունը շփման եզրեր է ունենում երկրաբանության և տնտեսագիտության հետ: Հանքահումքային ռեսուրսների պաշարների որակական գնահատման, առավել ևս հանքային հումքի տեխնոլոգիայի հետ կապված հարցերն անշուշտ գտնվում են երկրաբանի և տեխնոլոգի հետաքրքրությունների տիրույթում: Սակայն հումքային ռեսուրսների աշխարհագրությունը (այդ թվում և հանքային) և դրանց տեղակայման շահեկան և ոչ շահավետ դիրքի ուսումնասիրումը հանդիսանում է աշխարհագետի հետազոտման և գնահատման օբյեկտը: Հողային, անտառային կերային պաշարների և աշխարհագրական հումքի այլ տեսակների հետազոտությունները նույնպես վերաբերվում են նշված հարցերի շրջանակին:

1.2.2 Մեզոմակարդակ

Պատմական որոշակի ժամանակաշրջանում պատերազմների ելքերն արդեն չէին վճռվում մեկ մարտի, այլ որոշվում էին մի քանի օպերացիաների արդյունքում: Ռազմական տերմինաբանության մեջ օպերացիան դա մեկ ընդհանուր մտահղացմամբ (տարածության և ժամանակի մեջ) կազմակերպված մարտերի շարքն է: Հենց այս ժամանակ էլ կարիք զգացվեց ռազմարվեստի մեջ, ռազմավարության և մարտավարության միջանկյալ ճյուղի՝ օպերատիվ արվեստի տարանջատմանը:

Օպերատիվ արվեստի կողմից աշխարհագրությանը ներկայացվող սոցիալական պատվերը դա ռազմական գործողությունների մարտաբեմերի ռազմաաշխարհագրական լուսաբանումն է, որի հիմնական նպատակն է բնական տեսակետից առավել կարևոր օպերատիվ ուղղությունների կամ նախապես տրված ուղղությունների լուսաբանումը:

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

Իհարկե ապագա մարտերի շրջանների ընտրությունը տեղի է ունենում տարբեր գործոնների ազդեցության տակ, որոնք պետք է աջակցեն օպերացիաների իրականացմանը, բնական գործոնները գալիս են լրացնելու այլ գործոնների հանրագումարը:

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ գերմանական զորքերի շտաբի պետ Լյուդենդորֆը իր «Հիշողություններ»-ում⁴³ քիչ ուշադրություն է հատկացնում մարտաբեմերի բնական պայմաններին: Սակայն, երբ անդրադառնում է պատերազմի շրջադարձային փուլին՝ գերմանական զորքերի Ֆրանսիայի ուղղությամբ 1918 թ-ի գարնան և ամառային հարվածներին, նա նշում է, որ «բնական պայմանները վճռեցին ապագա օպերացիաների ուղղությունները: Ընտրությունը կատարվեց երեք տեղամասերի միջև: Հյուսիսային ուղղությամբ հարձակումն իրականացնելու համար տեղանքը բավականին դժվարություններ էր ստեղծում: Լիլից արևմուտք գտնվող Լիսի հովտի անցանելիությունը, որը համընկնում էր հարձակման կենտրոնի հետ, մեծապես կախված էր տարվա եղանակից և տվյալ ժամանակաշրջանի եղանակային պայմաններից: Մինչև ապրիլի կեսերը չէր կարելի վստահ լինել արտաճանապարհային շարժի հնարավորության վրա:

Հարձակման միջին ուղղության համար, առաջին փուլում հողերի առանձնահատկությունները դժվարություններ չէին ներկայացնում, մինչդեռ հետագա առաջխաղացման ժամանակ, խնդիր էր առաջանում պայթյունային ձագարներով դաշտի հաղթահարման համար, որոնք մնացել էին Սոմմի ճակատամարտի ավարտից հետո: Բերդենի հարձակման ժամանակ ստիպված եղանք հաղթահարել խիստ բլրապատ տարածքը: Վերջին երկու ուղղություններում զորաշարժը

⁴³ Людендорф Э., Мои воспоминания о войне, Первая мировая война в записках германского полковника 1914-1918, -М.: из-во Центрполиграф 2007, -379 с.

կարող էր սկսվել տարվա եղանակից անկախ: Այսպիսով, փաստացի պայմաններն առավել բարեհաջող էին միջին ուղղությամբ հարձակման համար»⁴⁴:

Յագիկովը հետևյալ կերպ է բացատրում Նապոլեոնի կողմից դեպի Մոսկվա շարժման ուղու ընտրությունը ⁴⁵՝ արևմուտքից Մոսկվան պաշտպանված է Պոլեսիեյի ճահիճներով, որը հնարավոր էր շրջանցել հյուսիսից և հարավից: Նապոլեոնը ընտրեց հյուսիսային տարբերակը, որը նրան Մոսկվա բերեց ամենակարճ ուղով:

Ինչպես հայտնի է հիտլերյան բանակը 1941 թ. ամռանը դեպի արևելք շարժվում էր երկու հիմնական ուղղություններով: Այս ուղղությունները համընկնում էին Յագիկովի կողմից հիշատակված ուղղությունների հետ: Հյուսիսային ուղին՝ Պոլեսիեյի հյուսիսային եզրով, Մինսկով դեպի Մոսկվա, հարավային ուղին՝ Պոլեսիեյի հարավով, Վոլինի բարձրությամբ դեպի Ուկրաինա: Արդեն կասկած չէր մնում, որ 1943 թ. ամռանը հիտլերյան բանակի գլխավոր ուղղություններից մեկը կլինի Ռոստով-Հյուսիսային Կովկաս ուղղությունը⁴⁶:

Ներկայացված մեջբերումների հիմնական նպատակն էր, որ հնարավոր է կանխատեսել այն օպերացիոն ուղղությունները, որոնց բնական միջավայրով պայմանավորված կարող են համարվել հակամարտ կողմերի հնարավոր հարվածների հիմնական ուղղություններ: Հետևաբար հնարավոր օպերատիվ ուղղությունների վերաբերյալ ռազմաաշխարհագրական վերլուծություններն ոչ միայն հնարավոր են, այլ նաև օգտակար:

⁴⁴ Людендорф Э., Мои воспоминания о войне, Первая мировая война в записках германского полководца 1914-1918, - М.: из-во Центрполиграф 2007, -379 с.

⁴⁵ Языков П., Опыт теории военной географии, -СПб, 1838, 107с.

⁴⁶ 188. Марков К.К., Военная география, Известия Всесоюзного Географического Общества, том LXXV, вып. 3;- М.: 1943, с. 13-26

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

Այս տրամաբանությամբ արցախյան հակամարտության գոտում (և 1990-ականներին և 2016թ. ապրիլյան պատերազմի ժամանակ) Ադրբեջանի ՉՈւ կողմից Արցախի վրա հարձակման հիմնական երեք ուղղություններ է նախանշվել՝ Ադրամ-Ասկերան-Ստեփանակերտի, Մատաղիս-Դրմբոնի և Հորադիզ-Կովսականի, որտեղ տեղանքը թույլ է տալիս նաև գրահատանկային տեխնիկայի մասսայական կիրառությանը:

Տարածքով ավելի փոքր (ինչպես ՀՀ-ն) պետությունների համար մեզոմակարդակի գլխավոր օղակը երկիր-պետությունն է որպես ամբողջական միավոր, նրա հասարակական-քաղաքական կարգը, արտաքին քաղաքականությունը, կառավարման ձևը, վարչատարածքային բաժանումը, հարևանների հետ հարաբերությունները: Կարևոր տեղ են գրավում բնակչության կազմի (հատկապես ազգային և կրոնական) և սոցիալական ու քաղաքական ներքին լարվածության հետ կապված հարցերը:

1.2.3 Միկրոմակարդակ

Մարտավարական միկրոմակարդակի ռազմաաշխարհագրական գնահատումների ժամանակ մենք մտնում ենք տեղանքի կոնկրետ գնահատման ոլորտ, որոնք ռազմական աշխարհագետին ստիպում են ավելի խորն ուսումնասիրել տեղանքի տարրական հատկանիշները, քան այն պահանջվում էր ռազմավարական և օպերատիվ արվեստի ժամանակ: Հետևաբար տեղանքի մարտավարական գնահատման հիմնական մեթոդը՝ վերլուծականն է: Անհրաժեշտություն է առաջանում տեղանքի հատկությունները խմբավորել ըստ գլխավոր հատկանիշների, առանց որի առարկայի վերաբերյալ հնարավոր չէ ընդհանուր պատկերացում կազմել: Այս խմբավորումը մենք կմտցնենք տեղանքի մարտավարական հատկությունների մասին բաժնի մեջ, չնայած այն հանգամանքին, որ դրանք առնչություն կունենան նաև

տեղանքի ռազմավարական և օպերատիվ նշանակության հետ⁴⁷:

Ժամանակակից պատերազմներում տեղանքի հատկությունների կիրառումը այնքան բազմազան է, որ կախված կիրառման յուրաքանչյուր դեպքից և առաջադրանքի առանձնահատկություններից, տեղանքը կարելի է քննարկել տարբեր տեսանկյուններից:

Գործնականում առավել արդյունավետ է դառնում երբ մենք ռազմաաշխարհագրական վերլուծության ենք ենթարկում լանդշաֆտի առանձին տարրեր՝ օդային թաղանթը, ռելիեֆը, ջրագրությունը, գրունտները և բուսականությունը, քանի որ մարտական կիրառման ներկայացրած պահանջները յուրաքանչյուր տարրի համար առանձին է:

Ներկայումս լանդշաֆտի տարրեր տարրեր ռազմաաշխարհագրական գնահատման տեսակետից ուսումնասիրված են տարբեր չափերով: Համեմատաբար ավելի զարգացած են ռազմական օդերևութաբանությունն ու եղանակային կանխատեսումները:

ԽՍՀՄ տարածքում մինչև Հայրենական մեծ պատերազմը հրատարակվել էին Ն.Դ. Պարսկու ⁴⁸ «Ռազմական գործողությունների օդերևութաբանական ապահովում և կլիմայագիտություն» աշխատությունն որն այս բնագավառում հանդիսանում է որպես սկզբունքային հիմք: Ըստ Ն. Պարսկու բանակի օդերևութաբանական ապահովման հիմնական ձևը հանդիսանում է հավանական ռազմական գործողությունների տարածքի կլիմայական բնութագիրը կամ կլիմայական նկարագրությունը: Մինչև վերջին ժամանակներս նմանատիպ նկարագրությունները կառուցվում էին տվյալ վայրի կլիմայի առանձին տարրերի բազմամյա միջին արժեքների հիման

⁴⁷ Ферсман А.Е., География на службе войны, “Наука и жизнь”, 1942, N11-12, с.36-38

⁴⁸ Парский Н.Д., Метеорологическое обеспечение военных действий и климатология, -Ленинград, Гидрометкомитет СССР, 1932, с. 18-19

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

վրա: «Մեծ քանակի թվային տվյալների արդյունքում, որոնցից միևնույն է հնարավոր չէ պատկերացում կազմել հնարավոր եղանակային տիպերի բնույթի վերաբերյալ, անհնար է դառնում դրանց արդյունավետ կիրառումը: Մեր տեսակետից կլիմայական նկարագրությունները պետք է պատկերացումներ տան տվյալ տարածքում տվյալ ժամանակաշրջանում եղանակի հնարավոր տիպերի և դրանց հայտնվելու հավանականության մասին: Այդ տիպերը բնութագրող օդերևութաբանական տարրերի նշանակության, տեղաբաշխման և փոփոխությունների փոխարեն չպետք է կլիման բնութագրվի որոշ տարրերի միջին արժեքներով, որը բավականին հեռու է այդ մեծությունների իրական արժեքներից և ոչինչ չի ասում նրանց կրկնման հաճախականության վերաբերյալ և թույլ չի տալիս դատել ռազմական պայմանների վրա դրանց գումարային ներազդեցության մասին: Վերջ ի վերջո առավել իրատեսական է կլիման դիտել որպես եղանակների հանրագումար»⁴⁹:

Ամփոփելով ասվածը և հաշվի առնելով ժամանակակից ռազմարվեստի պահանջները օդերևութաբանությունից, ինչպես նաև հաշվի առնելով ժամանակակից ռազմական տեխնիկայի և սարքավորումների մարտավարա-տեխնիկական բնութագրերը, կարելի է նշել, որ բացի կլիմայական բազմամյա միջին արժեքներից անհրաժեշտ է վերլուծել նաև նվազագույն և առավելագույն ցուցանիշները տվյալ շրջանի համար ռազմաօդերևութաբանական նկարագրություններ կազմելու նպատակով:

Ինքնուրույն խնդիր է նաև մարտական գործողությունների վրա ձմռան ազդեցության ուսումնասիրումը, մասնավորապես ձնածածկի ֆիզիկական հատկությունների ուսումնասիրումը:

⁴⁹ Парский Н.Д., Метеорологическое обеспечение военных действий и климатология, -Ленинград, Гидрометкомитет СССР, 1932, с. 18-19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մարտավարական ռազմական աշխարհագրությունը ընդհանրապես և ռազմական կլիմայագիտությունը առանձնապես հենվում են ընդարձակ թվային նյութերի վրա: Ռազմական աշխարհագետը պետք է ընտրի ռազմական տեսակետից առավել կարևոր առանձին ցուցանիշներ, դրանցից յուրաքանչյուրի՝ ռազմական տեսակետից առավել կարևոր քանակական արժեքներով արտահայտված: Կազմելով ձյան շերտի հաստության քարտեզը, մենք պետք է առանձնացնենք հատկապես այն հաստությունները, որոնք ամենամեծ ազդեցությունն են ունենում տարբեր զորատեսակների գործունեության վրա: Շատ կարևոր է աշխարհագրական տարբեր երևույթների տարածքային տեղաբաշխման ռազմաաշխարհագրական քարտեզ կազմելիս, կամ ուղղակի քանակական տվյալներով նկարագրություններ կազմելիս, դրանց իզոգծերը կամ թվային տվյալները բերելիս հաշվի առնել սպառազինության և մարտական տեխնիկայի անցանելիության չափորոշիչները, կամ մարտական կանոնադրություններում և դաշտային ձեռնարկներում բերված չափորոշիչները: Օրինակ զրահատանկային զորքերի հրահանգներում նշված է, որ տանկերը ձյան շերտի 30 սմ-ից ոչ մեծ հաստության դեպքում մասնակցում են ընդհանուր գրոհին ⁵⁰ : Հետևաբար, քարտեզների վրա ձյան հաստության իզոգծերը անպայման պետք է անցկացվեն 30 սմ-ից ոչ մեծ պարբերությամբ, իսկ 30 սմ հզորության իզոգիծը պետք է առանձնացվի: Եթե իզոգծերը անցկացվի ձյան 20 և 40 սմ հզորությունների համար, որտեղ բացակայի 30 սմ-ի իզոգիծը աշխատանքը կդառնա անարդյունավետ:

Ռելիեֆի ռազմաաշխարհագրական հետազոտությունը ռազմական տեղագրությունից և քարտեզագրությունից դուրս շատ քիչ է կատարված: Անկասկած ռելիեֆն օժտված է շատ

⁵⁰ Игнатов А., Танки в общевойсковом бою, -М.:Воениздат, 1939с. 64-72.

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

կարևոր ռազմական առանձնահատկություններով: Ասվածի փաստացի հաստատումն է համարվում այն, որ ռելիեֆի մարտավարական հատկանիշներին վերաբերվող բաժինը լայնորեն իր նկարագրությունն է գտել տարբեր երկրների մարտական կանոնադրություններում և դաշտային ձեռնարկներում: «Լեռներում մարտական գործողությունների վարման ֆրանսիական ձեռնարկի» առաջին կետը ասում է՝ «Լեռներում գործող խոշոր զորամիավորման հրամանատարը, պետք է ունենա լեռներում գործելու փորձ և պատկերացումներ լեռներում մարտական գործողությունների վրա ազդող ռելիեֆի և կլիմայի ազդեցությունների վերաբերյալ»⁵¹:

Ռելիեֆը ստիպում է զորահրամանատերներին փոխել ծանրության կենտրոնը և մի զորատեսակների կիրառումից անցնել մեկ այլ զորատեսակի կիրառման՝ տանկային և մոտոհրաձգային զորատեսակների փոխարեն հրաձգային և լեռնահրաձգային զորքերի, զենքերի մի տեսակներից մի ուրիշ տեսակի զենքի, զինատեսակների կիրառման համար ստեղծում է յուրահատուկ պայմաններ, ազդում է մարտիկի ֆիզիկական վիճակի վրա, մարտավարական հնարքների և ձևերի կիրառման վրա և այլն:

Լեռնային շրջաններում իրականացվող մարտական գործողություններում մեծ նշանակություն ունեն զորաշարժերը: Զորաշարժերի հաջող կիրառումը համառ պայքարի ընթացքում կարող է բերել գերազանց արդյունքների՝ հատկապես հակառակորդի գերակշիռ ուժերի նկատմամբ: Ասվածի վառ ապացույց կարող է հանդիսանալ 481 թ-ի Ակոռիի ճակատամարտը Արարատի լանջերին երբ Վահան

⁵¹ Սայադյան Համ. Յ. Լեռնային տեղանքում մարտական գործողությունների վրա ազդող գործոնների հաշվառումը, որպես մարտական վարպետության ապահովման միջոց, «ՀԲ»,-եր., 2009, թիվ 1-2, էջ 150-158

Մամիկոնյանը գլխավորին ջախջախեց մոտ քսան անգամ թվային գերակշռություն ունեցող պարսկական զորքին⁵²:

Բավականին մեծ է գրունտների մարտավարական նշանակությունը: Ռազմական գրունտաբանությունը հատկապես կարևորվում է ճանապարհային և սակրավորական աշխատանքների իրականացման ժամանակ: Այստեղ հատկապես էական է հաշվի առնել տարբեր ֆիզիկական վիճակներում գտնվող գրունտներով երթևեկելու հնարավորությունների վերլուծությունը և երթևեկության վրա ազդող գրունտի այնպիսի հատկություններն ինչպիսիք են՝ թրջումը, չորացումը, սառցակալումը, փոշոտությունը և այլն:

Գրունտների հետ կապված հիմնախնդիրների հետազոտումը ռազմական աշխարհագետին ուղղորդում է համագործակցել ռազմական երկրաբանության խնդիրների հետազոտմամբ զբաղվող մասնագետների հետ, հատկապես շինանյութերի հիմնական տեսակների, ջրով ապահովելու, գրունտների ջրաերկրաբանական հատկանիշների և դրանց հատկությունները որպես դաշտային և երկարատև շինությունների հիմքեր կիրառելու համար⁵³:

Բուսածածկի մարտավարական հատկանիշների ուսումնասիրումը ներկայումս հնարավոր է իրականացնել համակարգված ձևով, նկատի ունենալով բուսատեսակների՝ կերային, սննդային, վառելիքային, բուժական, շինանյութային, շարժման վրա ազդեցության և քողարկիչ յուրահատկությունները⁵⁴:

⁵² Հարությունյան Հ. Ավարայրի ճակատամարտը, -Եր.,

Հայպետուսմանկիրատ, 1962, էջ 21:

⁵³ Միրիմանյան Խ.Պ. Հողագիտության հիմունքներ, -Եր., 1971, 322

էջ

⁵⁴ Սայադյան Հ.Յ., Սայադյան Հա.Յ. Հայաստանի

Հանրապետության անտառային զանգվածների պահպանումը և ընդարձակումը՝ որպես ազգային անվտանգության ապահովման կարևոր գործոն, «ՀԲ», -Եր, 2015, թիվ 4, էջ 95-105

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

Բուսատեսակների մարտավարական առանձնահատկությունների կարևորությունը բացառիկ է: Հայրենական մեծ պատերազմի ժամանակ անտառային և տափաստանային լանդշաֆտներում տեղի ունեցող մարտական գործողությունների վարման ձևերն իրարից խիստ տարբերվում էին: Սնդլենսկի, Բոյանսկի, Լենինգրադի մարզի անտառները հատկապես նշանավորվեցին պատերազմների վարման հատուկ ձևով՝ պարտիզանական պատերազմով:

Ընդհանրապես տեղանքը (լանդշաֆտ) կամ ըստ տարրերի (ռելիեֆ, կլիմա և այլն), կարելի է դիտարկել ռազմական տարբեր տեսակետներից: Վերջիններս կարող են լինել բազմաթիվ, և նմանատիպ ցանկացած դասակարգում հավանաբար արհեստական կդիտվի: Սակայն այն հիմնական տեսակետները, որոնցով տեղանքը հետաքրքրում է ռազմական աշխարհագետին կարող են համակարգվել հետևյալ կետերին՝

1. տեղանքի ազդեցությունը տեղափոխումների վրա,
2. տեղանքի ազդեցությունը թաքստոցների վրա,
3. տեղանքի ազդեցությունը տեսադաշտի և քողարկման վրա,
4. բնական ռեսուրսները:

Պայմանավորված զորքերի բավականին մեծ մեքենայացվածությամբ, սկսած Երկրորդ համաշխարհային պատերազմից հսկայական նշանակություն է ստանում երթևեկության պայմանների վրա տեղանքի ազդեցությունը: Ի տարբերություն Առաջին համաշխարհային պատերազմի գերակշիռ դիրքային մարտերի, Երկրորդ համաշխարհային պատերազմի վեց տարիների ընթացքում մշտապես պահպանվեց մեծ տարածքների վրա ընթացող զորաշարժերը: Սրա հետևանքով մեծ նշանակություն էին ստանում տեղանքի տիպերը, որոնք կարող էին խոչընդոտել կամ օժանդակել զորքերի տեղաշարժերին: Այստեղից էլ առաջ է եկել «տեղանքի անցանելիություն» հասկացությունը, որը հանդիսանում է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

տեղանքի ռազմաշխարհագրական կարևորագույն բնութագրիչներից մեկը:

«Անցանելիություն» հասկացությունը բավականին բարդ է և տարողունակ: Նրա մեջ մտնում է «բնագծեր» եզրույթը, երբ ցանկանում են նշել ցամաքային զորքերի տեղաշարժը և գրաված դիրքերը:

Տեսադաշտի վրա տեղանքի ազդեցությունը կրում է երկակի բնույթ՝ դրական և բացասական: Առաջին դեպքում մենք նկատի ենք ունենում այն պայմանները, որոնք հնարավորություն են տալիս դիտարկում անցկացնելու համար՝ դիտարկման կետի շահավետ տեղագրական դիրքը, մթնոլորտի թափանցիկությունը և այլն:

Մթնոլորտի թույլ թափանցիկությունը Գերմանիայի հիմնական ծովային մարտաբեմերի վրա հանգեցրեց նրան, որ առաջին համաշխարհային պատերազմից առաջ Գերմանիայի ռազմածովային նավատորմը սպառազինվեց համեմատաբար փոքր հեռահարության հրետանային համակարգերով:

«Տեսադաշտ» եզրույթի հակադիր կողմը համարվում է «քողարկում» հասկացությունը: Դիտարկման, հետախուզության և խոցման նոր ձևերի ու միջոցների (օդատիեզերական և այլ) կիրառման հետ մեկտեղ էլ ավելի է կարևորվում ռազմավարական և ռազմական օբյեկտների քողարկումը: Բուսածածկի առանձնահատկությունները, նրա գունային սեզոնային փոփոխությունները, ֆենոլոգիական երևույթները, գերակշիռ տարածում գտած ապարների և գրունտների գունավորումը, ռելիեֆի անհարթությունները, ձյան ծածկույթը, մառախուղը քողարկման տեսանկյունից ձեռք են բերում միանգամայն նոր որակական նշանակություն:

«Թաքստոց» հասկացությունը հաճախ դրվում է «տեսադաշտ» և «քողարկում» հասկացությունների հետ մեկ շարքում: Նշվածների միջև կարելի է անցկացնել սահմանազատում՝ թաքստոցների մեջ ներգրավելով այն բնական պայմանները, որոնք ունակ են ֆիզիկապես պաշտպանել

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

հակառակորդի կողմից ոչնչացման վտանգի տակ գտնվող օբյեկտները, նույնիսկ դրանց ապաքողարկումից հետո: Բնական թաքստոցներից ամենահուսալինները համարվում են քարանձավները, որոնք պաշտպանում են խոցման ենթակա օբյեկտներն, ինչպես ցամաքային, այնպես էլ՝ օդային հարձակումներից: Բնական թաքստոցների երկրորդ տիպը համարվում են ռելիեֆի անհարթությունները:

Ժամանակակից պատերազմներում էապես մեծացել է թաքստոցների դերը: Խոցման միջոցների հզորացման ու հեռահարության մեծացման հետ մեկտեղ ավիացիայի դերն այստեղ դառնում է վճռական, ստիպելով թաքստոցներ և պաշտպանված վայրեր որոնել նույնիսկ խորը թիկունքային օբյեկտների համար:

Չորրորդ հասկացությունը դա երկրի բնական ռեսուրսներն են, որոնց դերը ժամանակի ընթացքում շարունակ ավելանում է:

Տեղանքի առանձնահատկություններն անհրաժեշտ է ուսումնասիրել տարբեր զորատեսակների և առանձին զինատեսակների կողմից առաջադրված պահանջներին համահունչ: Օրինակ՝ տանկերը, որոնք համարվում են ժամանակակից բանակների գլխավոր հարվածային ուժը, տեղանքի համար ներկայացնում են լիովին որոշակի պայմաններ: Ֆ.Հեյգլի «Տանկեր»⁵⁵ տեղեկատուում տարբեր տիպի տանկեր բնութագրելիս, բերվում են հետևյալ բնութագրիչ-ցուցանիշները՝ տեղանքի թեքվածության աստիճանը, հորիզոնական արգելքների լայնությունը, ուղղահայաց արգելքների բարձրությունը, տանկերի կողմից հաղթահարվող գետային ծանծաղուտների խորությունը, անտառներում ծառային արգելափակոցներում ծառերի բների առավելագույն հաստությունները: Տանկերի մասնակցությամբ մարտերի պլանավորման ժամանակ ճշգրիտ տեղեկություններ են

⁵⁵ Хейгль Ф., “Танки”, -М.: 1937, ч. 1-2, с.72.

ահրաժեշտ ճանապարհների ոլորանների շրջագծի մեծության (ռելիեֆի կտրտվածություն), ձնածածկի և սառցածածկի հաստության, ջերմաստիճանային պայմանների և այլնի վերաբերյալ:

Վերը նկարագրված տարբեր մակարդակների համար աշխարհագրական գործոնների գնահատման մոտեցումները փոփոխություններ են կրում կապված պատերազմի վարման ձևերից և մեթոդներից: Եթե, օրինակ՝ պատերազմը անցկացվում է երկարատև և վարվում է հակառակորդի հյուժման նպատակով, ռազմական աշխարհագետն իր գլխավոր ուշադրությունը պետք է դարձնի պատերազմող կողմերին ռեսուրսներով ապահովվածությանը և մատակարարման ուղիների անվտանգությանը: Նշված գործոնների դերը փոքրանում է, եթե պատերազմը վարվում է կործանման ձևերով⁵⁶:

Բրիտանական ռազմական աշխարհագետները քննարկում են Բրիտանական կղզիների ռազմական ներուժի ոչնչացման երեք հիմնական հնարավոր ձևեր՝ դեսանտը, բլրկադան և օդային ռմբակոծությունները: Նման ընտրությունը բացատրվում է բրիտանական կղզիների բնական պայմաններով՝ կղզային դիրք, համեմատաբար փոքր տարածք, ոչ ինքնաբավ սեփական բնական ռեսուրսներ:

Չնայած, տարբեր իրավիճակներում, տարբեր զորատեսակների կողմից ներկայացվող պահանջների խիստ մասնագիտացմանը, ռազմական աշխարհագետը չպետք է մոռանա, որ այս պահանջների բազմազանությունն ու մարտի հիմքում ընկած տարբեր զորատեսակների փոխգործակցությունը պահանջում են բնության համալիր գնահատում և լուսաբանում, որն էլ ըստ էության հանդիսանում է աշխարհագրական մոտեցման հիմքը:

⁵⁶ Cole D.H., Imperial Military Geography, -London 1934, 394p.

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

Սրա շնորհիվ աշխարհագրության՝ որպես համալիր գիտության, դերը ռազմարվեստում բացառիկ կարևոր է⁵⁷:

Ռազմաքաղաքական առումով միկրոմակարդակում ուսումնասիրվում է առանձին պետության ներքին քաղաքական վիճակի, նրա մաս կազմող տարածքային միավորի, քաղաքական ուժերի հարաբերակցության և սոցիալ քաղաքական երևույթների հետ:

Մարդկության քաղաքական-տարածքային կառուցվածքի հիմնական՝ առավել կազմակերպված տարածքային միավորը անկախ ինքնիշխան երկիր-պետությունն է: Այն միջանկյալ դիրք է գրավում հասարակական կյանքի տարածքային կառուցվածքի միավորների ենթակարգային շղթայում: Պետություններից վեր գտնվող մակարդակները ձևավորում են պետությունների ու ժողովուրդների տարբեր բնույթի խմբավորումներից:

Աշխարհի վերպետական՝ մակրոմակարդակի միավորներից բաղկացած տարածքային կառուցվածքը ընդունված է անվանել աշխարհաքաղաքական (գեոպոլիտիկական) կամ աշխարհառազմավարական կառուցվածքը⁵⁸:

Հասարակական կյանքի տարածքային կառուցվածքի ենթակարգային շղթայի պետություն կոչվող օղակից (աստիճանից) ցած գտնվող, այսինքն միկրոմակարդակի միավորները որպես կանոն գտնվում են երկիր-պետություն սահմանների ներսում: Այստեղ է գտնվում նաև հասարակության տարածքային-քաղաքական կազմակերպման ինչպես դե ֆակտո, այնպես էլ դե յուրե տիպի ամենափոքր՝ ստորին միավորը: Այդ միավորը ընդունված է կոչել տարրական քաղաքաաշխարհագրական վայր⁵⁹:

⁵⁷ Марков К.К., Военная география, Изв. ВГО, том LXXV, вып. 3; -М.: 1943, с. 13-26

⁵⁸ Голубчик М.М., Политическая география мира, Учебное пособие, - Смоленск, изд-во СГУ, 1998, -312 с.

⁵⁹ Тихонравов Ю.В., Геополитика, -М.: 1998, -60 с.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Պատերազմի հիմնական բովանդակությունը դեռևս մնում է զինված պայքարը, որն իրենից ներկայացնում է հակամարտող կողմերի կողմից տարբեր մասշտաբի ռազմական գործողությունների վարում բոլոր ֆիզիկական միջավայրերում՝ ցամաքում, օդում, ջրում, ջրի տակ և տիեզերքում:

Պատմական փորձը վկայում է, որ ժամանակակից պատերազմի (ռազմական բախման) բնույթը որոշվում է դրանց ռազմաքաղաքական նպատակներով, այդ նպատակներին հասնելու միջոցներով, ռազմական գործողությունների մասշտաբներով, դրանց տևողությամբ, լարվածությամբ, մասնակից երկրների և ներգրավվող ուժերի քանակով:

Ըստ մասշտաբի պատերազմները և զինված բախումները ստորաբաժանվում են՝ համաշխարհայինի, տարածաշրջանայինի և տեղայինի (լոկալ), իսկ մասնակից պետությունների քանակով՝ կոալիցիոն, կոալիցիան մեկ պետության դեմ կամ մեկ պետությունը մյուսի դեմ⁶⁰:

Համաշխարհային պատերազմը՝ խոշոր կոալիցիաների, բլոկների, պետությունների միությունների, որոնցում ուղղակի կամ անուղղակի ներգրավվում են աշխարհի առաջատար երկրները և որը տարածվում է բոլոր մայրցամաքներում կամ դրանց մեծամասնությունում, օվկիանոսային և ծովային տարածքներում, օդային և տիեզերական տարածություններում⁶¹: Այդպիսի պատերազմը որպես օրենք վարվում է, մեծ վճռականության ռազմաքաղաքական նպատակներով, բարձր լարվածությամբ և մարտական գործողությունների դինամիկությամբ, խոցման սովորական կամ բոլոր միջոցների կիրառման պայմաններում: Տարբերվում է ռազմական գործողությունների մեծ թափով և ծանր ձևերով, ուղեկցվում է

⁶⁰ Военный Энциклопедический словарь, -М.: Воениздат, 1986, -864 с.

⁶¹ Гаврилов С.В., Журавлев В.В., Колесник М.И. Военная география. Военно-географическое деление геостратегического пространства, Учебное пособие, -СПб.: БАТТ, 2004. -289 с.

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

շատ մեծ ավերածություններով և մեծաքանակ կորուստներով զինված ուժերում և հակամարտող կողմերի խաղաղ բնակչության շրջանում: Այն կարող է դառնալ տեղային կամ տարածաշրջանային զինված բախումների լարվածության բարձրացման արդյունք և պահանջում է մասնակից պետությունների կողմից նյութական և մարդկային ռեսուրսների լրիվ մոբիլիզացում:

Տարածաշրջանային պատերազմը դա երկու կամ մի քանի պետությունների (պետությունների կոալիցիա) մասնակցությամբ պատերազմն է, որն ընդգրկում է որոշակի տարածաշրջան (մայրցամաքի մաս), նրանում ներգրավելով դրա սահմաններում գտնվող բոլոր պետությունները կամ դրանց մեծամասնությունը, անուղղակի կերպով (սովորաբար օգնություն ցույց տալով կամ տարածք տրամադրելով) այլ երկրների մասնակցությամբ, որը վարվում է ազգային կամ կոալիցիոն ուժերով, խոցման սովորական, ինչպես նաև ատոմային և մասսայական ոչնչացման այլ զենքերի կիրառմամբ այնպիսի տարածքում, որը սահմանափակված է մեկ տարածաշրջանով նրա հարակից օվկիանոսային և ծովային ջրային տարածքներով, օդային և տիեզերական տարածությամբ⁶²:

Տարածաշրջանային պատերազմը կարող է տեղային պատերազմի սրման (էսկալացիաի) արդյունք հանդիսանալ:

Հարկ է նշել, որ «տարածաշրջան» տերմինի տակ հասկացվում է մայրցամաքային շրջանի բաղադրիչ մասը, որը օժտված է քաղաքական-տնտեսական, վարչական և ֆիզիկա-աշխարհագրական պայմանների միասնությամբ, հարակից օվկիանոսային (ծովային) ջրային տարածքներով, ներքին ծովերով և նրանցում գտնվող կղզիներով մինչև ծովային բացառիկ գոտու արտաքին սահմանը, նրանց վրա գտնվող

⁶² Гаврилов С.В., Журавлев В.В., Колесник М.И. Военная география. Военно-географическое деление геостратегического пространства, Учебное пособие, -СПб.: ВАТТ, 2004. -289 с.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

օդային և տիեզերական տարածությամբ, որոնց սահմաններում տեղակայված է ամբողջ ռազմատնտեսական ներուժը կամ դրա էական մասը, ինչպես նաև տեղակայված են և կարող են բացազատվել մեկ կամ մի քանի երկրների զորքերի (ուժերի) մեծ խմբավորումներ:

Ժամանակակից տեղային պատերազմն իրենից ներկայացնում է քաղաքական նպատակներով և ռազմական գործողությունների վարման թափով սահմանափակ ռազմական բախում երկու կամ մի քանի երկրների միջև, որը շոշափում է միայն նրանց ազգային, քաղաքական, տարածքային, տնտեսական, էթնոկրոնական և այլ շահերը: Տեղային պատերազմի տարբերիչ հատկանիշներն են համարվում ռազմական գործողությունների սահմանափակ տարածքային թափը, նրանցում ըստ թվաքանակի աննշան զորքերի մասնակցություն և որպես կանոն սովորական սպառազինության կիրառում: Տեղային պատերազմների թվին պետք է դասել նաև ներպետական և քաղաքացիական պատերազմները: Այդպիսի պատերազմները կարող են լինել տարբեր տևողության, նրանց մասշտաբը, լարվածությունը և ինտենսիվությունը էականորեն կախված են նրանցում խոշոր տերությունների ուղղակի կամ անուղղակի մասնակցությամբ:

Անհրաժեշտ է նշել, որ զինված ուժերի առջև դրված գործառույթների փոփոխությունները նոր խնդիրներ են առաջադրում նաև ռազմական աշխարհագետներին: Անցած դարի վերջերից բացի բուն ռազմական գործողությունների նախապատրաստվելուց և իրականացնելուց, զինված ուժերը մասնակցում են նաև հակաահաբեկչական գործողություններին, խաղաղապահ առաքելություններին, տարերային աղետների հետևանքների վերացման աշխատանքներին և այլն: Նշված դեպքերից յուրաքնչուրի ժամանակ պլանավորող և ղեկավար մարմինները կարիք ունեն յուրահատուկ տեղեկատվություն գործողությունների իրականացման տարածքի և օբյեկտի վերաբերյալ (նկար 6):

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

Հակասահաբեկչական գործողությունների իրականացման համար բացի տարածաշրջանի ռազմաաշխարհագրական ընդհանուր բնութագրից, անհրաժեշտ են մանրամասն տեղեկություններ ազգային փոքրամասնությունների, ազգային կազմի, թվաքանակի, կրոնական կազմի, սովորույթների, ավանդույթների, տարածքում տեղակայված տնտեսության ռազմավարական օբյեկտների և ենթակառուցվածքների հանգուցային կետերի՝ հատկապես հեշտ խոցելիների: Բնակավայրերում գործողությունների իրականացման ժամանակ խիստ անհրաժեշտություն է զգացվում մշտապես թարմացվող կադաստրային քարտեզների, բնակչության կազմի ըստ ընտանիքների՝ գրանցվածների և փաստացի բնակվողների և այլն:

Խաղաղապահ առաքելությունների ժամանակ մեկնող զորախմբերը պետք է ապահովված լինեն տվյալ երկրի վերաբերյալ ամենաթարմ ռազմաաշխարհագրական նկարագրություններով, որում պետք է տեղ հատկացվի նաև երկրի պատմական աշխարհագրությանը: Հարկ է նշել, որ ԱՄՆ զինուժը Իրաքում, Հարավսլավիայում և Աֆղանստանում գործելու ժամանակ իր տրամադրության տակ ուներ ԱՄՆ ՊՆ «Ռազմական աշխարհագրության դեպարտամենտի» կողմից պատրաստված ձեռնարկներ, համապատասխանաբար՝ «Իրաքի ռազմական աշխարհագրություն», «Հարավսլավիայի ռազմական աշխարհագրություն» և «Աֆղանստանի ռազմական աշխարհագրություն»: Ուշագրավ է, որ յուրաքանչյուր ձեռնարկից պատրաստվում էր երկու տարբերակ՝ տարբեր մակարդակների հրամանատարների համար:

Տարերային աղետների հետևանքների վերացման ժամանակ կապված աղետի բնույթից անհրաժեշտ են կոնկրետ ուղղվածության տեղեկատվություն, երկրաշարժերի ժամանակ՝ երկրաբանական, գեոմորֆոլոգիական, իմացություններ կիրառական և ինժեներային աշխարհագրությունից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հեղեղումների հետևանքների վերացման ժամանակ տարածաշրջանի կլիմայական և եղանակային պայմաններից, գեոմորֆոլոգիայից՝ հատկապես ափային պրոցեսներից, էրոզիայից և այլն: Հրդեհների շիջման ժամանակ տարածքի ջրային օբյեկտների բնութագրերը, գրունտային և արտեզյան ավազանների ջրային պաշարները, դրանց տեղակայման խորությունները և այլն:

**ԳԼՈՒԽ 2. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԻ ԴԵՐԸ ՀԱՅ
ՌԱԶՄԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

**2.1 Հայկական լեռնաշխարհի ռազմաաշխարհագրական
բնութագիրը**

Յուրաքանչյուր ժողովրդի կողմից իր պատմության ուսումնասիրությունը լոկ հետաքրքրասիրության բավարարում չէ, այլ գիտելիքների և փորձի հսկայական շտեմարանի բացահայտում, որն օգնելու է մարդկանց արժևորել ներկան և կայուն հիմքեր ստեղծել ապագայի համար:

XX դարի սկզբի ռուս նշանավոր ռազմական տեսաբան Ն.Լ. Կալրոն դատողություններ անելով ռազմական գիտության էության և պետության անվտանգության ապահովման գործում նրա դերի մասին. նշում է «ռազմական գործում տեսությունը՝ դա խաղաղ ժամանակ, բոլոր նախորդ պատերազմների փորձի և ռազմական գործի էվոյուցիայի հետազոտումն ու որպես համակարգ ընդհանրացումն է: Տեսությունը դա անցյալի ժառանգությունն է, որը հարմարեցվում է ներկայում կիրառման համար»⁶³:

Զինված պայքարի պատմությունը վկայում է, որ դեռ հնագույն ժամանակներից պատերազմներ և առանձին ճակատամարտեր ծրագրելիս որպես կարևոր գործոն հաշվի են առնվել ռազմական գործողությունների մարտաբեմի աշխարհագրական յուրահատկությունները: Տարածքի, կլիմայի, տեղանքի և այլ աշխարհագրական առանձնահատկությունների ճիշտ գնահատումն ու խելամիտ օգտագործումը վճռորոշ նշանակություն են ունեցել և այժմ էլ ունեն ռազմական բնույթի բազմաթիվ խնդիրների լուծման ժամանակ՝

⁶³ Военная география и военная статистика: история и современность, сост. канд. ист. наук Бринюк Н.Ю., Коршунов Э.Л., д-р ист. наук Михайлов А.А., -СПб, Дмитрий Буланин, 2018, с.5.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

հնարավորություն տալով առավելություն ստանալու հակառակորդի նկատմամբ⁶⁴:

Հարկ է նշել, որ աշխարհագրական գործոնը հսկայական ազդեցություն է ունենում ժողովուրդների և պետությունների վրա, այդ ազդեցությունը հատկապես մեծանում է այն երկրներում, որտեղ առկա է բնության մեծ բազմազանություն: Եթե պետությունն անտեսում կամ թերագնահատում է աշխարհագրական գործոնների նշանակությունն, ապա այն կարող է հանգեցնել էկոլոգիական ճգնաժամի, և ընդհակառակը՝ երկրի աշխարհագրական առանձնահատկությունների և պատմական գործընթացների հետևանքով ձևավորված բնական կապերի ճիշտ ընկալումը նպաստում է տնտեսության զարգացմանը, սոցիալական հարաբերությունների կատարելագործմանը, ներքին և արտաքին քաղաքականության մեջ առաջնահերթությունների կանխորոշմանը:

Աշխարհագրական գործոնի ճիշտ հաշվառումը կայանում է նրանում, որ համարժեք գնահատական տրվի Հայաստանի պատմության և տնտեսության պլանավորման վրա նրա ունեցած ազդեցությանը: Այդ նպատակով ցանկանում ենք ներկայացնել այն տարածքը, որում ձևավորվել է հայ ժողովուրդը և որտեղ ընթացել է պայքարով լի նրա պատմությունը:

Հանրահայտ է, որ այն նյութական միջավայրը, որտեղ զարգանում է տվյալ ժողովուրդը, նրա կյանքի պատմական ընթացքը պայմանավորող գործոններից մեկն է: Գերազանցապես այդ միջավայրում են թաքնված արտադրողական այն պայմանները, որոնց առկայությամբ ձևավորվում է ժողովուրդների անհատական դիմագիծը և որոշվում նրանց

⁶⁴ Սայադյան Համ. Յ., Աշխարհագրական գործոնի դերը հայ ռազմարվեստի պատմության մեջ, -Եր.: «ՀԲ», 2011, հմ. 3, էջ 87-97:

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

անցած պատմական ճանապարհի առանձնահատկությունը: Ուստի հասկանալի է, որ տարածքային իրադրության վերլուծությունը պետք է նախորդի պատմության վերաբերյալ որևէ այլ հետազոտության⁶⁵:

Շնորհիվ լեռնային միջավայրի, տեղային բարձր հակադրությունների և փոփոխականության, մարդու գենոֆոնդում ի հայտ են գալիս առանձնահատկություններ որոնք հնարավորություն են տալիս մարդուն գոյատևել շատ լայն էկոլոգիական տիրույթում, ձևավորվում են նրա հարմարվողականությունը տարբեր բնական իրավիճակներում: Պակաս կարևոր չէ նաև, որ լեռնային տեղանքի բազմազանությունը հնարավորություն է տվել տեղի բնակիչներին ավելի լավ դիմակայել բնական արհավիրքներին, քան հարթավայրերի բնակիչներին⁶⁶:

Որպես ասվածի հաստատում, կարելի է ներկայացնել կորդվացիների նկարագրությունը հույն պատմիչ Քսենոֆոնի կողմից: Կորդվացիները Քսենոֆոնի մոտ կոչված են կարդուխներ: Հույն պատմագրի վկայության համաձայն, կորդվացիները բնակվում էին լեռներում և լինելով ռազմիկ, չէին ենթարկվում թագավորներին: Նրանք եղել են բավական զարգացած ժողովուրդ:

Աշխարհագրությունն, անկասկած, առանցքային դեր է խաղացել Հայաստանի պատմության և մշակույթի մեջ: Հանդիսանալով որպես կապող օղակ Ասիայի և Եվրոպայի միջև, ինչպես նաև առևտրի հիմնական ուղիներից մեկը, երկիրը հանդիսանում էր կռվախնձոր ժամանակի շատ գերտերությունների համար:

⁶⁵Ադոնց Նիկողայոս, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում,-Եր.: Հայաստան հրատ., 1987, էջ 11:

⁶⁶Гвоздецкий Н.А., Голубчиков Ю.Н., Горы,- М.: Мысль, 1987, с. 60.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայկական լեռնաշխարհը տեղադրված է Փոքր Ասիա թերակղզուց արևելք մինչև Կուր-Արաքսյան դաշտավայրը: Հարավում Միջագետքի հարթավայրն է՝ Հայոց (Վերին) Միջագետքը, հյուսիսում՝ Սև ծովի տեկտոնական իջվածքն ու Կովսիդայի (Կողքիս) դաշտավայրը ⁶⁷ : Լեռնաշխարհը հյուսիսային կիսագնդի միջին լայնություններում է: Նրա մոտավոր ծայրակետերն են հարավում՝ հյուս. լայն. 36°40', հյուսիսում՝ 41°30', արևմուտքում՝ արլ. երկ. 36°45', արևելքում՝ արլ. երկ. 48°30': Չնայած այն հանգամանքին, որ տարածքն ամբողջությամբ տեղադրված է մերձարևադարձային գոտում, այստեղ տիպիկ մերձարևադարձերի փոխարեն տարածված են վերընթաց գոտիները՝ անապատայինից մինչև բարձր-լեռնային ձյունային⁶⁸:

Քաղաքական առումով տարածքը ներկայումս բաժանված է Թուրքիայի, Հայաստանի Հանրապետության, Արցախի Հանրապետության, Վրաստանի, Ադրբեջանի և Իրանի միջև: Հայաստանի Հանրապետությունը զբաղեցնում է Հայկական լեռնաշխարհի տարածքի 8%-ը՝ 29,743 հազ. քառ.կմ: Լեռնաշխարհի ցածրագույն կետը Արաքսի և Քուռի միախառնման տեղում է՝ -15մ բացարձակ բարձրությամբ, բարձրագույն կետը՝ Մեծ Արարատ (Մասիս) լեռը՝ 5165մ: Լեռնաշխարհի միջին բարձրությունը ծովի մակարդակից հասնում է 1500-1800 մետրի: Նա ավելի բարձր է, քան իր հարևան Փոքրասիական բարձրավանդակը, որի միջին բարձրությունը 800-1200 մ է, և Իրանական բարձրավանդակը, որի միջին բարձրությունը 1400 մ է: Ներքին շրջաններում հարաբերական բարձրությունները հասնում են 3000-4000 մ-ի. օրինակ՝ Արարատյան դաշտում՝ 4365մ (5165մ-800մ), Սև

⁶⁷Линч Х.Ф.Б., Армения: Путевые очерки и этюды, В 2-х томах, Издание торгового дома “И.Е. Питоевь и К0”, Типография М.Мартиросянца, - Тифлисъ, 1910, т.1, 597 с.; т.2. 675с.

⁶⁸ Սայադյան Համ. Յ., Աշխարհագրական գործոնի դերը հայ ուղևորության պատմության մեջ, -Եր.: ՀԲ, 2011, թիվ 3, էջ 87-97:

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

ծովի ափից մինչև Քաջքար գագաթը՝ 3937մ, Վանա լճի
ավազանում՝ 3000մ և այլն:

Բոլոր ժամանակներում և բոլոր պատերազմներում
տեղանքը ոչ միայն խիստ կարևոր նշանակություն է ունեցել
զորքերի գործողությունների բնույթի, այլև շատ հաճախ այդ
գործողությունների հետևանքների համար: Այս առումով
Հայկական լեռնաշխարհն իր խիստ կտրտված ռելիեֆով,
լանդշաֆտների բազմազանությամբ, ուղղաձիգ բնական
գոտիականությամբ, աշխարհագրական դիրքի մեզա, մակրո,
մեզո և միկրո առանձնահատկություններով ռազմավարական
հատուկ նշանակություն է ունեցել այստեղ ընթացող ռազ-
մական գործողությունների բնույթի, իսկ հաճախ՝ նաև դրանց
ելքի վրա: Հարկ է նշել, որ Հայկական լեռնաշխարհի սահ-
մանների, բնական պայմանների, վարչատարածքային բա-
ժանման վերաբերյալ հանգամանալից ուսումնասիրություններ
են կատարել Թ. Հակոբյանը և Բ. Հարությունյանը^{69 70}:

Մեծ էր Հայկական լեռնաշխարհի ռազմավարական-
քաղաքական նշանակությունը: Այն մի բնական խոշոր
միջնաբերդ էր, որն իշխող դիրք ուներ Մերձավոր Արևելքի
նկատմամբ: Ոչ ոք չէր կարող ապահով կերպով տիրել
Միջագետքը, Պարսից ծոցը, Ասորիքը, Փոքր Ասիան՝ առանց
նախօրոք Հայկական լեռնաշխարհում ամրանալու: Արածանիի
և Արևմտյան Եփրատի հովիտներին տիրելուց հետո,
չափազանց դյուրին է նաև Միջերկրական ծովի կիլիկյան
ափերի նվաճումը: Գլխավորապես Պատմական Հայաստանի
ռազմավարական-քաղաքական նշանակությունն էր
պատճառը, որ նա գրեթե ամբողջ պատմության ընթացքում,

⁶⁹ Հակոբյան Թ.Խ, Հայաստանի պատմական աշխարհագրություն,
-Եր.:1968, էջ 79

⁷⁰ Հարությունյան Բ.Հ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման
համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, Մաս Ա (Արևմտյան և
հարավային աշխարհներ), -Եր.: 2001, 445 էջ

դարձել էր կռվախնձոր աշխարհակալ պետությունների միջև, մի հանգամանք, որը շատ խիստ բացասական ազդեցություն էր ունենում նրա քաղաքական անկախության և տնտեսության զարգացման վրա⁷¹:

Հայկական լեռնաշխարհը ներքին և արտաքին հաղորդակցության առումով բավական կղզիացած դիրք ունի: Երկրի ներսում չկային մեծ նշանակության ջրային ճանապարհներ: Այդ պատճառով էլ Հայաստանի համար առաջնակարգ նշանակություն ունեին ցամաքային ճանապարհները, իսկ դրանց ուղղությունները և հարմար լինելը պայմանավորված էր տվյալ շրջանի ռելիեֆից ու տեղական այլ պայմաններից: Հին և միջնադարյան Հայաստանի տարանցիկ գլխավոր ճանապարհները, որոնք արևելքը կապում էին արևմուտքի հետ, անցնում էին գերազանցապես Արևմտյան Տիգրիսի, Արածանիի և Արաքսի հովիտներով: Լեռնանցքներն ունեն մոտ 1200-2400 մ բացարձակ բարձրություն, այդ իսկ պատճառով էլ ձմռանը մշտապես ծածկված են խոր ձնածածկույթով և դրանց մեծագույն մասը այդ եղանակներին դառնում է անանցանելի:

Թեև Հայկական լեռնաշխարհը գտնվում է մերձարևադարձային կլիմայական գոտում, սակայն ուղղաձիգ գոտիականության պատճառով նրան հիմնականում բնորոշ են խիստ ցուրտ ձմեռներ և շոգ ամառներ: Ձմռանը տեղացած առատ ձյունը փակում էր նահանգներն ու գավառներն իրար կապող լեռնանցքները, և հաճախ մեկուսացման վիճակը տևում էր 3-5 ամիս: Հենց դա էր հիմնական պատճառներից մեկը, որ այս տարածաշրջանում պատերազմները և

⁷¹ Հակոբյան Թ.Խ, Հայաստանի պատմական աշխարհագրություն, - Եր.:1968, էջ 79

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

ճակատամարտերը տեղի էին ունենում գերազանցապես գարնան երկրորդ կեսից մինչև աշնան առաջին կեսը⁷²:

Հարձակվող հակառակորդի համար լեռները բարդացնում կամ ընդհանրապես բացառում են այնպիսի հարձակողական խմբավորման ստեղծումը, որը գործի առավել նպատակահարմար մեկ ուղղությամբ, այլ ստիպում են գործել համեմատաբար սակավաթիվ ուժերով և իրարից անջատ ուղղություններով: Երթարշավների ժամանակ մի քանի տասնյակ հազար ռազմիկ ունեցող բանակը կարող էր ճանապարհներով ձգվել մինչև մի քանի տասնյակ կիլոմետրեր: Լեռնային տեղանքն ընդհանուր առմամբ խոչընդոտում է տեղանքում մարտակարգի տարրերի ստեղծմանը և տեղակայմանը, նվազեցնում է հարձակման տեմպը, սահմանափակում զորքերի տեղաշարժի հնարավորությունը, նվազեցնում ցամաքային զորքերի, ինչպես նաև ավիացիայի կրակային միջոցների արդյունավետությունը, դժվարացնում կապի միջոցների և նյութատեխնիկական ապահովման օղակների աշխատանքը, ավելացնում է ինժեներական միջոցառումների անցկացման ժամանակը: Հարձակումները կատարվում են առավելապես գոյություն ունեցող ճանապարհների և հովիտների երկայնքով, լեռնաշղթաների լանջերով⁷³:

Հայկական լեռնաշխարհում առկա բնական հարստություններն, ինչպիսիք են օբսիդիանի, երկաթի պաշարները, հաճախ որոշիչ են եղել նաև սպառազինության պատրաստման գործում: Օրինակ, նետ ու աղեղը զենքերի

⁷² Бальян С.П. Структурная геоморфология Армянского нагорья и окаймляющий областей,- Ер.: 1969, 389с.

⁷³ Սայադյան Համ. Յ. Լեռնային տեղանքում մարտական գործողությունների վրա ազդող գործոնների հաշվառումը, որպես մարտական վարպետության ապահովման միջոց, -Եր.: ՀԲ, 2009, թիվ 1-2, էջ 150-158

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

հնագույն տեսակներից են, օգտագործվել են թշնամուն հեռու տարածության վրա հարվածելու համար և մեծ դեր են խաղացել Հայկական բարձրավանդակում տեղի ունեցած բոլոր ճակատամարտերում:

Խոր հնադարում դրանց ծայրերը պատրաստվել են օբսիդիան քարից, երբեմն՝ ոսկորից, իսկ հետագայում՝ բրոնզից և երկաթից: Հայկական լեռնաշխարհում հայտնաբերվել են սառը կոփման առարկաներ դեռևս 4-5 հազարամյա (Ք.ա.) շերտերում :

Հայ ռազմարվեստի յուրահատուկ կողմերից մեկն էլ եղել է Հայկական լեռնաշխարհի կենդանական աշխարհի ներկայացուցիչներին ռազմական նպատակներով օգտագործելը:

Հայ և տարածաշրջանային ռազմարվեստի վրա իր խորը հետքն է թողել նաև այն կարևոր հանգամանքը, որ հենց Հայաստանն է համարվում ձիաբուծության հնագույն հայրենիքներից մեկը, ինչի խոսույն ապացույցներն են համարվում ՀՀ Արագածոտնի մարզի «Վերին Նավեր»-ի դամբարանադաշտից պատմաբան Հ. Սիմոնյանի խմբի կողմից հայտնաբերված գտածոները, որոնք հանգամանալի հետազոտվել են Եվրոպայի և ԱՄՆ-ի հետազոտական կենտրոններում: Այս գտածոները ապացուցեցին, որ աշխարհում առաջիններից մեկը հենց Հայկական լեռնաշխարհում է ձին օգտագործվել ռազմական նպատակներով, ինչը ռազմարվեստի առաջին խոշոր նորամուծություններից մեկն էր համարվում:

Հին ժամանակներից ի վեր մեղուները Հայաստանում տալիս էին ոչ միայն մեղր, մեղրամոմ ու ակնամոմ և այլն, այլ նաև որպես զենք են կիրառվել: Ամրոցներում առկա էին մեղվանոցներ, որտեղ պահվում էին հատկապես «չար» դեղին մեղուներ: Հակառակորդի հարձակման ժամանակ ճյուղերից հյուսված մեղվափեթակները պարսպից զցում էին թշնամիների վրա: Չդիմանալով կատաղած մեղուների հարձակմանը՝

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

Նրանք նահանջում էին: Նետող հայ զինվորները մեղուների խայթոցից պաշտպանվելու համար մարմինը հատուկ յուղով էին պատում:

Իմանալով հայկական մեղվի այդ առանձահատկությունների մասին՝ արաբները, պարսիկները և մոնղոլները Հայաստան արշավանքների ժամանակ գողանում էին հայկական մեղուներով փեթակները:

Հայաստանում լայն տարածում էր ստացել նաև ռազմաբժշկական գործը, որը «գտնվում էր Կենտրոնական Ասիայի երկրների մակարդակի վրա»: Այդ գործի տարածմանը նպաստել է Հայաստանում տարբեր տեսակի բուժիչ ծաղիկների և օգտակար հանածոների առկայությունը, որոնցից դեղեր են պատրաստել: Հանքային բազմաթիվ աղբյուրները նույնպես նպաստել են հիվանդների բուժմանը: Արարատյան աշխարհի դեղաբույսերի բուժիչ հատկությունների մասին Ղազար Փարպեցին հաղորդում է, որ այնտեղ գտել են տարբեր բույսերի արմատներ, որոնք բանիմաց բժիշկների արվեստի ու գիտելիքների շնորհիվ գործադրվել են որպես հիվանդություններն արագ բուժող սպեղանիներ և վերականգնել են հիվանդների առողջությունը :

2.2 Ռազմաաշխարհագրական հայացք հայ ռազմարվեստի պատմությանը

Հայ ռազմարվեստն ունի հազարամյակների պատմություն և զարգացման հաջորդական ընթացք: Ահա թե ինչու ռազմարվեստի գլխավոր բաղադրիչներից մեկի՝ աշխարհագրական գործոնի դերի ուսումնասիրությունն սկսում ենք հնագույն ժամանակներից:

Պատմիչների տեղեկություններից երևում է, որ, ինչպես հեռավոր անցյալում, այնպես էլ միջին դարերում հայ

զորավարները կարևորել են ճակատամարտերի տեղանքի ճիշտ ընտրությունը, ինչը նպաստել է մարտի հաջողությանը:

Ռազմաաշխարհագրական դիրքի օգտագործման հնագույն օրինակ է Հայկի և Բելի ճակատամարտի նկարագրությունը Մովսես Խորենացու «Հայոց Պատմություն» աշխատության մեջ. «Եվ ամբողջ ասպարեզներ դեպի առաջ անցնելով՝ հասնում են (խոսքը Հայկի ջոկատի մասին է, – Հ. Ս.) բարձրագույն լեռների միջև մի դաշտաձև տեղ: Եվ ջրերի հոսանքի աջ կողմում բարձրավանդակի վրա ամուր դիրք գրավելով, գլուխները վեր բարձրացնելով տեսնում են Բելի բազմաթիվ ամբոխի անկարգ հրոսակը, ... իսկ ինքը, Բելը, մեծ ամբոխով հանդարտ կանգնած էր ջրի ձախ կողմում մի բլրակի վրա՝ իբրև դիտանցում»⁷⁴ :

Մեկ այլ օրինակ նկարագրված է Դարեհ I-ի Բեհիստունի ժայռի (Քերմանշահի մոտ) արձանագրության այն հատվածում, որում ներկայացված են Աքեմենյան տիրակալի դեմ հայերի ապստամբությունը և նրանց կողմից պաշտպանական նպատակներով լեռնային ռելիեֆի հմուտ օգտագործումը. «Այս ճակատամարտում ապստամբները հմտորեն օգտագործել են Քյավանդաղ լեռների հարավային լանջերը՝ ակներևաբար իրենց ձեռքում պահելով իշխող բարձունքները, իսկ դա ոչ միայն հեշտացրել է դիմադրությունը, այլև պարտության մատնել պարսից զորքերին»⁷⁵:

Ուիյամայի երրորդ ճակատամարտում ապստամբած հայերը գրավել են ժամանակակից Իլիջա լեռնաշղթայի՝ Ամիդից (Դիարբեքիր) հյուսիս գտնվող լեռների հարավային զառիվայրի իշխող բարձունքները: Այստեղ պարսից զորքը կրել է ծանր պարտություն՝ համարյա ութ ամիս չկարողանալով

⁷⁴ Խորենացի Մ., Պատմություն Հայոց, -Եր.: ԵՊՀ հրատ., 1981, -428

էջ:

⁷⁵ Մանանդյան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, -Եր.: 1945, էջ 48

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

վերականգնել իր մարտունակությունն ու կատարել Դարեհի հրամանը: Ուստի ստիպված են եղել դիմել նրա օգնությանը: Դարեհը պատասխանել է. «Սպասել ինձ Արմենիայում»: Սակայն ապստամբած արմենների ճնշման տակ Դադարշիշն իր պարսից զորքով փախել է Հայաստանից դեպի Ասորեստան և ապաստան գտել Իզալա լեռան վրա⁷⁶:

Հայաստանը, Ք.ճ. VII դարում, կորցնելով անկախությունը, հայտնվում է քրիստոնեական և մահմեդական աշխարհների միջև: Լեռնաշխարհ մուտք գործելու համար ամենուրեք պետք է եղել կտրել անցնել ծայրամասային լեռները, որոնց բարձրությունը 2500-4000 մետր է: Դրա համար կային մի քանի հարմար հովիտներ ու լեռնանցքներ, որոնցից էլ մշտապես օգտվել են Հայաստանի թշնամիները: Տեղանքի այս առանձնահատկության հաշվառմամբ դեռ Արտաշեսյան հարստության ժամանակաշրջանի սկզբներին, ըստ որոշ պատմաբանների՝ Արտաշես 1-ի օրոք, Մեծ Հայքի չորս ծայրագավառներում ստեղծվել էին այդ մուտքերը պաշտպանող ռազմավարչական միավորներ՝ բղեշխություններ: Արտաշեսյան Հայաստանը բաժանված էր երկու խոշոր մասերի՝ արտաքին և ներքին աշխարհների: Արտաքին աշխարհի նահանգները կոչվում էին բղեշխություններ, որոնք կիսանկախ էին և ավատառվական կախում ունեին հայ թագավորներից: Դրանք հայտնի էին նաև որպես «կողմնակալություն» կամ «սահմանակալություն»⁷⁷:

⁷⁶ Մանանդյան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, -Եր.: 1945, էջ 48

⁷⁷ Հարությունյան Բ.Հ., Մեծ Հայքի վարչաքաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, Մաս Ա (Արևմտյան և հարավային աշխարհներ), -Եր.: 2001, 445 էջ:

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

գերրորդն՝ յԱրուաստան կողմանէն, գշորրորդն՝ ի Մասքթաց կողմանէն...»⁷⁸:

Առաջին բոլեշխությունն Աղծնիքն էր, որի բոլեշխը՝ «Իշխանն Աղծնեաց» կրում էր «Բոլեշխն մեծ» տիտղոսը, քանի որ Աղծնիքը շնորհիվ իր աշխարհագրական դիրքի ուներ հույժ կարևոր ռազմավարական նշանակություն: Այն բնական պատնեշ էր Միջնաշխարհի և Հայկական Տավրոսի լեռնանցքների համար: Աղծնիքում էր գտնվում կարևոր ռազմավարական նշանակություն ունեցող «Ձորապահակ դուռ» լեռնանցքը: Հիմնական ռազմական ուժը մարտական աշխարհագրոն էր, որը կազմված էր Սասունի լեռնականներից: Աղծնիքի բոլեշխի նստավայրը Արզան քաղաքն էր⁷⁹:

Երկրորդ բոլեշխությունը Կորդուքն էր: Այն պահպանում էր Հայաստանի թիկունքը Պարսկաստանի մաս կազմող Ադիաբենեի կողմից: Կորդուքի բոլեշխության կենտրոնն էր Փինիկ բերդաքաղաքը՝ Տիգրիս գետի ափին: Այստեղ հայտնի էր նաև Տմորիք գավառի Ալկի հզոր բերդը, որից արևելք գտնվում էր Միջնաշխարհը պահպանող Կրերեաց լեռնանցքը:

Երրորդ բոլեշխությունը Նոր Շիրականի բոլեշխությունն էր, որը պաշտպանում էր Հայաստանի մատույցներն Ատրպատականի կողմից՝ Արասխ, կամ Երասխ, սահմանային գետով, որը հարավ-արևմուտքից թափվում է Կապուտան (Ուրմիա) լիճը: Արասխ գետի ափին էր գտնվում ռազմավարական կարևորություն ունեցող Ջարասպ (այժմ Կելիշին) լեռնանցքը, իսկ մի փոքր հարավ գտնվում էր Ջինթա ամրոցը: Ջարասպի լեռնանցքով էր անցնում Հյուսիսային Միջագետքից դեպի Կասպից ծովի ափեր տանող ճանա-

⁷⁸ Մովսես Խորենացի, Հայոց Պատմություն: Թարգմանություն, ներածություն և ծանոթագրություններ ակադեմիկոս Ստ. Մալխասյանի, -Եր.: 1961, էջ 101:

⁷⁹ նույն տեղում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

պարիզ: Նոր Շիրականի քաղաքական կենտրոնը Ջարեհական գավառն էր՝ համանուն քաղաքով, իսկ ռազմական կենտրոնը գտնվում էր Մահկերտ տուն գավառում՝ Մահկերտ կենտրոնով (ներկայիս Ռևանդուզի շրջանում)⁸⁰:



Քարտեզ 2. Հայկական լեռնաշխարհի բերդերն ու ամրոցները⁸¹

Չորրորդ բղեշխությունը Գուգարքն էր՝ Մեծ Հայքի հյուսիսարևելքում, որը Հյուսիսային Կովկասի վաչկատուն ցեղերի և լեռնականների ներխուժումներից պաշտպանում էր պետության հյուսիսային սահմանները: Գուգարք նահանգը տարածվում էր Ճորոխ գետից մինչև Կուր գետը: Գուգարաց

⁸⁰ Մովսես Խորենացի, Հայոց Պատմություն: Թարգմանություն, ներածություն և ծանոթագրություններ ակադեմիկոս Ստ. Մալխասյանի, -Եր.: 1961, էջ 101:

⁸¹ Հարությունյանի Բ.Հ., «Հայաստանի պատմության ատլաս», -Եր.: 2004, էջ 104

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

բղեշխի նստավայրը Գաջենքն էր՝ Գաջենագետի (Մաշա֊վերա) և Յուրտագետի միախառնման վայրում: Նա գահով երկրորդն էր՝ Աղծնիքի բղեշխից հետո: Գուգարքի ռազմավարական կարևոր լեռնանցք էր համարվում Թռեղքի «Վիմադուրք» լեռնանցքը:

Պատմականորեն հայոց գործը լավ է պատրաստվել հատկապես պաշտպանական մարտերին, դրա համար կառուցվել են բերդեր, ստեղծվել ամրություններ, հարմարեցվել է լեռնային տեղանքը⁸²: Պետական նշանակություն ունեցող բոլոր բերդերը, ամրությունները կառուցվել են գլխավորապես հաղորդակցության հիմնական ուղիների վրա (Քարտեզ 2): Նման կառույցներ են ստեղծվել նաև Հայաստանի սահմանային գոտիներում՝ օտարերկրյա զորքերի ներխուժումներին դիմակայելու նպատակով: Ամրոցներ կառուցելիս հայերն աշխատել են ստեղծել այնպիսի պայմաններ, որ հնարավոր լինի հետևել թշնամու գորքի տեղաշարժին և ազդանշան տալ նրանց հայտնվելու կամ ձեռնարկվող գործողությունների մասին:

Օրինակ՝ մայրաքաղաք Երվանդաշատի բերդը գտնվում էր այն վայրում, որտեղ Ախուրյան գետը թափվում է Արաքսի մեջ: Այդ մայրաքաղաքի մասին Մովսես Խորենացին գրում է. «Երվանդը բլուրը պարսպում է, իսկ պարսպից ներս շատ տեղերում քարերը կտրել տալով իջեցնում է մինչև բլուրի հատակը, գետի մակարդակին հավասար, այնպես որ գետից ջրերը հոսեն այդ փորված տեղը, խմելու ջուր մատակարարելով»⁸³:

⁸² Սարգսյան Ս., Հայ ռազմական արվեստի պատմություն, -Եր.: 1969, էջ 19:

⁸³ Մովսես Խորենացի, Հայոց Պատմություն: Թարգմանություն, ներածություն և ծանոթագրություններ ակադեմիկոս Ստ. Մալխասյանի, -Եր.: 1961, 408 էջ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հին Հայաստանի մայրաքաղաքներից էր Արտաշատը, որի կառուցման վայրը նույնպես թելադրված էր աշխարհագրությամբ. այն կառուցված է թերակղզու նման վայրում: Նրա շուրջը, չհաշված պարանոցը, գետի առջևով ձգվում է պարիսպը: Պարանոցը շրջապատված է խրավանդներով ու թամբերով: Փոսը լցված էր լինում ջրով, որը ծառայում էր որպես հարձակվող թշնամուց ջրային պատնեշ:

Մեծ Հայքի Արշակունյաց թագավորությունը հանդիսացել է Առաջավոր Ասիայի երրորդ հզոր պետությունը՝ Հռոմեական կայսրությունից ու Սասանյան Պարսկաստանից հետո: Անշուշտ, Հայոց թագավորությունը ռազմական ներուժի առումով զիջում էր նրանց, սակայն նշված կայսրություններից հաջողությունը նրա կողմն էր, ում դաշնակցում էր Մեծ Հայքը:

Մեծ Հայքի թագավորության բանակն Արշակունյաց շրջանում կազմել է 120 հազար մարդ: Մեզ է հասել մի շատ արժեքավոր փաստաթուղթ, որն ուսումնասիրողների կողմից պայմանականորեն ստացել է «Զօրանամակ» կամ «Գահնամակ» անվանումը:

Ըստ «Գահնամակ»-ի Հայոց Բանակը կազմված էր արքունական զորագնդերից և նախարարական զորաջոկատներից: Բ. Հարությունյանը կատարելով այս պատմական փաստաթղթի մանրամասն վերլուծություն ⁸⁴, գալիս է եզրահանգման, որ Արքունական 40 հազար մարտիկ ունեցող ուժերը բաժանված են եղել մեկ բյուրից (տաս հազար) բաղկացած չորս զորաբանակից, որոնք առաջնորդվել են բղեշխների կողմից: Հայոց բանակի արքունական զորաբանակներից չորս հազար մարտիկներ զինակալել են Վիրքի և այսպես կոչված Աղվանից թագավորությունները:

⁸⁴ Հարությունյան Բ.Հ., Մեծ Հայքի Արշակունյաց թագավորության բանակն ըստ «Զօրանամակի», «Վեմ» համահայկական հանդես, դ (ժ) տարի, 2012 թ. թիվ 1(37), հունվար-մարտ, էջ 23-43

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

Հայաստանի պաշտպանական արվեստի պատմության մեջ կարևոր դեր է կատարել Գառնի բերդը, որի վերականգնումը Տրդատ 1-ինն ավարտել է Ք.Տ.72 թվականին: Գառնին եղել է Հայաստանի անմատչելի բերդերից մեկը: Այն կառուցված է ծովի մակարդակից ավելի քան 1400 մետր բարձրության վրա՝ Գեղամա լեռների զառիվայրում: Բերդի հարավային կողմում՝ Ազատ գետի կիրճում, վեր են խոյանում հսկայական ուղղաձիգ ժայռեր, որոնց բարձրությունը տեղ-տեղ հասնում է 150 մետրի: Հյուսիսային պարսպի երկարությամբ (170 մետր) կառուցվել են աշտարակներ՝ միմյանցից 10-12 մետր հեռավորությամբ: Աշտարակների այդպիսի խտությունը բացատրվում է երկու հանգամանքով: Առաջին. հյուսիսային կողմում չկան կիրճեր և ուղղաձիգ ժայռեր, իսկ դա հակառակորդին հնարավորություն էր տալիս բերդի վրա գրոհելու հենց այդ կողմից, և երկրորդ. Գառնի բերդը չի դասվել սովորական բերդերի շարքը, այլ եղել է «արքայական ամրոց», ուստի նրա պաշտպանությունը պետք է ապահովված լիներ ավելի ուժեղ պատվարներով: Հարավարևելյան և հարավային կողմերից բերդը ոչ մի պաշտպանական կառույց չի ունեցել, որովհետև ուղղաձիգ վեր բարձրացող հսկայական ժայռերը բնական արգելքների դեր են կատարել՝ ապահովելով թշնամու համար անմատչելիությունը⁸⁵ (նկար 7):

Վերը նշված ճարտարապետական տարրերի նմանակներ կան նաև Հայաստանի այլ բերդերում, օրինակ, Ամբերդում (նկար 8), Կաքավաբերդում, Բաղաբերդում:

Այդպիսով՝ ամբողջ Հայաստանի տարածքում բնական և արհեստական արգելքների համատեղմամբ ամրապնդվում էր երկրի պաշտպանունակությունը:

⁸⁵ Аракелян В.Н., Гарни, т. 1, -Ер.: 1951, с. 3



Նկար 7. Գաննի բերդը

Լինելով փոքրաթիվ՝ հայոց զորքը վարպետորեն հարմարվել է տեղանքին և, հմտորեն օգտագործելով մարտական զենքը, ոչ միայն մղել է պաշտպանական մարտեր, այլև անցել հակահարձակման:



Նկար 8. Ամբերդ

Դեռ Երվանդյանների օրոք զորավարներն ստեղծել են առաջապահ ջոկատներ, առանձնացրել են թևերն ու թիկունքը պահպանող ջոկատներ: Մարտական գործողությունների թատերաբեմը և դրան համապատասխան մարտավարությունն ընտրելուց հետո զորքն ամրացրել ու հարմարեցրել է տեղանքը՝ փորել խրամատներ կամ օգտագործել փոսերը, ժայռերը, մեծ ապառաժները, ծառերը և այլն: Գիշերային պայմաններում կամ մառախլապատ ցերեկով երթի ժամանակ զորքը շարժվել է լուռ, տեղեկությունները հաղորդվել են շշուկով, հեծելապարեկները շարժվել են մեկը մյուսից փոքր հեռավորության վրա, որպեսզի հեշտացնեն նոր տեղեկությունների հաղորդումը⁸⁶:

Ավարայրի ճակատամարտի վայրի ընտրությունը կատարելիս Վարդան Մամիկոնյանը նույնպես հաշվի էր առել

⁸⁶ Սարգսյան Ս., Հայ ռազմական արվեստի պատմություն, -Եր.: 1969, էջ 19:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

տեղանքի պայմանները, որպեսզի կարողանա չեզոքացնել պարսիկների հիմնական հարվածային միավորը՝ փղերի գունդը: «Հայերը ճակատամարտի վայրն ընտրելով Տղմուտ գետի ճահճոտ ափերը, որպեսզի հարձակվող պարսկական փղերի գունդը խրվեր տիղմում, անգործության մատնվեր»⁸⁷, սակայն հետագայում Վարդան Մամիկոնյանը վերջապահ գնդով օգնության հասնելով ձախ թևին, մխրճվում է պարսկական բանակի մեջ, մոտենում փղերի գնդին, որն ազատ գործելու հնարավորություն ուներ և շրջապատում է սպարապետին:

Հետագայում հայկական բանակի հրամանատարները հաշվի առնելով գլխավոր հրամանատարի և մի շարք աչքի ընկնող զորավարների մահը, բաց դաշտում պարսիկների ու մարտական փղերի հետ մենամարտելու դժվարությունները սպասվող օգնության ուշանալը, ուշ երեկոյան զորքը դուրս են բերում կռվի դաշտից: Մշակվում է պայքարելու այլ եղանակ: Անհրաժեշտ էր բանակը քաշել երկրի խորքը, ամրանալ անառիկ վայրերում, բերդերում, ամրոցներում և շարունակել ազատագրական պայքարը, ստիպել պարսկական բանակին մասերի բաժանվել ու զբաղվել առանձին բերդերի, ամրոցների պաշարման ու գրավման դժվար գործով: Այդպես էլ արվում է: Դրանով հայ հրամանատարությունն աշխատում է հյուժել պարսկական մեծ բանակը Հայաստանի լեռներում, կիրճերում, ամրոցների ու բերդերի պարիսպների տակ:

Որպես լեռնային տեղանքի լավագույն կիրառման ևս մեկ օրինակ կարելի է նշել 481 թ. Ակոռիի ճակատամարտը, որը տեղի է ունեցել հայ ապստամբական ուժերի և պարսից զորքի միջև՝ Մասիսի լանջին գտնվող Ակոռի գյուղի մոտ: Արևելյան Հայաստանի պարսիկ մարզպան Ատրվշնասպը 481 թ. աշնանը 7000 հոգանոց խառնիճաղանջ բանակով Ատրպա-

⁸⁷ Հարությունյան Հ., Ավարայրի ճակատամարտը, -Եր.: հայպետուսմանկիրատ, 1962, էջ 21:

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

տականից շարժվել է ապստամբների դեմ: 400 հոգուց կազմված հայկական մի ջոկատ՝ Վասակ Մամիկոնյանի, Բաբկեն Սյունու և այլ իշխանների գլխավորությամբ, Դվինից շտապել է դեպի Արաքս՝ Նախիջևանի մոտ թշնամու գետանցին խանգարելու նպատակով: Սակայն մինչև հայերի տեղ հասնելը պարսից զորքն անցել է գետը և ամրացել Կովակ գյուղում: Հայերը, հետախուզելով թշնամու դիրքերը, որոշել են հեռանալ դաշտավայրից ու ճակատամարտ տալ լեռնային տեղանքում: Հայկական ջոկատը դիրքավորվել է Ակոռի գյուղի մոտ, որտեղ իր թիկունքը լեռան կողմից ապահով էր, ապա հանկարծակի հարձակվել է իրեն հետապնդող պարսիկների վրա: Չդիմանալով գրոհին՝ պարսիկները խուճապահար փախուստի են դիմել՝ կրելով մեծ կորուստներ: Ըստ Ղազար Փարպեցու, Ակոռիի ճակատամարտում սպանվեցին մարզպան Ատրվշնասպն ու «այլ արք ավագ և զբազում պարսիկք»: Ժողովուրդը ցնծությամբ ընդունեց հաղթանակի լուրը: Մինչ այդ տատանվող հայ նախարարներից շատերն իրենց զորամասերով միացան ապստամբներին: Հայերը հնարավորություն ստացան 481-482 թթ. ձմռանը նախապատրաստել բանակը՝ սպասվող հարձակումներից պաշտպանվելու համար⁸⁸:

Ութերորդ դարի հեղինակ Ղևոնդն իր «Պատմություն Հայոց» աշխատության մեջ պատմում է հայերի և իսմայելացիների (արաբների) միջև Վարդանակերտ գյուղի մոտ մղված ճակատամարտի մասին և հաղորդում, որ իսմայելացիք, պարտություն կրելով, խուսափեցին սրից, նետվեցին Արաքս գետը, որը սառած էր: Սառույցը ջարդվեց և շատերը խեղդվեցին: Ազատվեցին միայն 300 մարդ, որոնք գերվեցին և նույնպես պետք է սրի քաշվեին, բայց իշխանուհի

⁸⁸ Հարությունյան Հ., Ավարայրի ճակատամարտը, -Եր.: հայպետուսմանկիրատ, 1962, էջ 21:

Շուշանը թույլ չտվեց այդ և կապելով վիրավոր գերիների վերքերը, բուժեց նրանց:

Հայաստանում XVII-XIX դարերին ծավալված ազգային ազատագրական պայքարի վառ էջերից մեկն էլ հանդիսանում է 1724 թ-ի Երևանի հերոսական պաշտպանությունը օսմանյան բանակից, որը չնայած քաղաքի հանձնմանը ապացուցեց պաշտպանների արիությունը, քաջությունն ու հնարամտությունը:

1724 թ-ին Աբդուլլահ փաշան օսմանյան բանակը մոտեցրեց Երևանին Զանգու գետի ձորի կողմից: Երևանի բերդի պարսկական կայազորի պետ Միհրալի խանը բերդ էր տարել քաղաքի մեծամեծերին, իսկ մնացած բնակչությանը թողել էր անպաշտպան: Բայց դրսի բնակիչները, և գլխավորապես հայերը, գլուխ չկորցրին և իրենք կազմակերպեցին ուժեղ ինքնապաշտպանություն, թշնամուն դիմադրելու համար: Եվ դիմադրությունը շատ ուժեղ էր: Հայ նորակազմ զինվորականությունը վաթսուն օր պաշտպանեց անպարիսպ քաղաքը, լոկ օգտագործելով տեղագրական պայմանները՝ Զանգուի խորը ձորը, այգիների ու ծառատունկերի խտությունը գետի և քաղաքի միջև, որ դժվարացնում էր պաշարողների հարձակումը: Մնացածը կատարում էր դիմադրողների անձնուրաց քաջությունը: Աբդուլլահ փաշան, տեսնելով իր բանակի թուլությունը, որ առաջանում էր ընդհարումների ժամանակ տված ծանր կորուստներից, զանազան տեղերից օժանդակ զորաբաժիններ էր քաշում դեպի իրեն⁸⁹: Օժանդակ զորաբաժինների թվում էր երեք հազար եգիպտացիներ, հանդուգն և անզուսպ զինվորներ, որոնք տեղ հասնելուն պես, նույնիսկ չլսելով Աբդուլլահ փաշայի կարգադրությունը սկսեցին գրոհել Ձորագեղի՝ այսինքն թույլ պաշտպանված կողմից: Շեշտակի և

⁸⁹ Լեո, երկերի ժողովածու, հ.3, -Եր.: Հայաստան հրատ., 1973, էջ 153:

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

ուժեղ հարձակումը շփոթություն առաջացրեց Ձորագեղը պաշտպանող հայ գնդի մեջ. նա սկսեց արագ քաշվել մինչև Ջրաղացների (Աղորեաց) թաղը: Բայց այստեղ փախչողներին օգնության հասան երեք հարյուր լավ զինված բոշաներ: Կռիվը վերանորոգվեց և բոշաների քաջությունը կատարյալ հաղթանակ բերեց պաշարողական գծի այս կողմի զորքին: Եգիպտացիները ետ մղվեցին մեծ կորուստներով: Օսմանյան զորքի կորուստներն ըստ Աբրահամ Երևանցու այդ օրը կազմեց վեց հազար հոգի, իսկ հայկական կողմինը հազար երեք հարյուր հոգի⁹⁰:

Հայ-բոշայական հակահարվածն այսքան ուժեղ էր այն պատճառով, որ պաշտպանվողները բարձր դիրք էին գրաված, մինչդեռ օսմանցիները արշավում էին ցածրից դեպի բարձր:

Սյունիքի սրածայր գագաթներով և նեղ կիրճերով հարուստ ռելիեֆի մարտերի մեջ հմուտ կիրառման բազմաթիվ օրինակների ենք հանդիպում տասնութերորդ դարի սկզբներին այստեղ ծավալված ազգային-ազատագրական պայքարի ժամանակ:

Դավիթ բեկը 1722-ին մտավ Սյունիք: Հայտնվելով երկրի մեջ իբրև ապստամբական առաջնորդ՝ նա արդեն չափածկշռած ուներ հանգամանքները, միջոցները: Ամենից հիմնականը, այն, որ գործի հոգին էր կազմում՝ պատերազմելու եղանակն էր: Մի լավ կազմակերպված ժողովրդական պարտիզանական պատերազմ՝ այս էր ամենազիխավորը. պատերազմ՝ մանր խմբերով, Իսրայել Օրիի փայփայած եղանակով, այսինքն հանկարծակի վրա տալով, մրրիկի պես հարձակվելով. այս դեպքում հարձակվողը թեթև է, դյուրաշարժ է և սարսափ է ազդում: Մի հանգամանք, որ մեծ հաղթությունների չափ զորավոր է, մանավանդ ասիացի

⁹⁰ Աբրահամ Երևանցի, «Պատմություն պատերազմացն 1721-1736 թթ.», -Եր.: Արմֆանի հրատ., 1938, էջ. 16-17:

ժողովրդի մեջ: Տեղական անջատ զորաբաժիններով գործ առաջ տանելու համակարգը կարող էր կատարյալ հաջողություն ունենալ միայն այն դեպքում, երբ այդ անջատ ուժերը միացնող, մի ընդհանուր ծրագրի ենթարկող հեղինակավոր ձեռք լիներ: Դավիթ բեկը հենց այդպիսին էր⁹¹:

Հ. Ղուկաս Ստեփանյան Սեբաստացու, Վենետիկում հրատարակված «Ընտիր պատմություն Դավիթ բեգին և պատերազմացն հայոց Խափանու, որք եղեն ընդդեմ թուրքաց ի մերում ժամանակի»-ում նկարագրում է Դավիթ բեկի կողմից 1724 թ-ին Որոտնա մեծ և անառիկ բերդի գրավումը, նշելով, որ գուցե նա դժվարության հանդիպեր եթե բնական մի պատահար չգար նրան օգնելու: «Եւ ի տօնի ծաղկեզարդին, որ օր չորրորդ էր պաշարման բերդին, եղև անձրև սաստիկ յոյժ (ով սքանչելեացս), և ի սաստկութենէ անձրևին մի կողմն պարսպին ինքնին անկավ: Սոքա իբրև զայն տեսնին, ձայն ետուն, խորախոյս բարձեալ իվերայ յարձակեցան, և մտեալ ի ներքս հարին կտտորեցին զամենայն այլազգիս, և առին զբերդն»⁹²:

⁹¹ Լեո, Երկերի ժողովածու, հ.3, -Եր.: Հայաստան հրատ., 1973, էջ 153:

⁹² Աբրահամ Երևանցի, «Պատմություն պատերազմացն 1721-1736 թթ.», -Եր.: Արմֆանի հրատ., 1938, էջ. 16-17:



Նկար 9. Արաքսի կիրճը Ագարակի մոտ

Արաքսի նեղ կիրճի ֆիզիկաաշխարհագրական առանձնահատկությունների վարպետորեն օգտագործման օրինակ է հանդիսանում 1727 թվականի Մեղրիի ազատագրումը օսմանյան զորքից: «Մխիթարն ու Տեր Ավետիսը, այլևս ավելորդ համարելով, որ իրենց հավաքած մարդիկ գան հասնեն իրենց, հանում են սրերը և իրենց հետ եղած սակավավորների հետ հարձակվում են բերդի մեջ եղածների վրա և փաշային փախցնում են փոքր թաղը: Այստեղ լուր է գալիս, թե դարանամուտ մեղրեցիներն էլ մտան բերդ: Այն ժամանակ նրանք թողնում են բերդը և շտապում կտրել օսմանյան զորքի միակ ճանապարհը, որն անցնում էր Արաքսի կիրճով, ուր Մեղրիի քարավազներն են, ուր Արաքսի վրա

Մեղրիի կողմից ցցվում են ժայռերը և այդ ժայռերով էլ անցնում է երկար ու դժվար ճանապարհը, որ թուրքերեն լեզվով կոչվում է Ուզուն-բենդ (երկար անցք) (Նկար 9): Օսմանյան զորքերը մտնում են այդ անցքը, բայց ընկնում են թակարդի մեջ: Առջևից ճանապարհը կտրել էին Մխիթարն ու Տեր Ավետիսը, հետևից՝ մեղրեցիները, այնպես որ՝ նրանք ոչ առաջ կարող էին գնալ, ոչ էլ ետ դառնալ: Թուրքերն ստիպված եղան իջնել Արաքսի վրա և անցնել նրա մյուս կողմը: Բայց այդ շարժման միջոցին հայերը նրանցից շատերին կոտորեցին թե գենքով և թե գետի մեջ խեղդելով: Մեղրիում հայերը մեծ ավար վերցրին: ... Մեղրիի գրավումը երկրորդ խոշոր հաղթանակն էր, որ գալիս էր ամրապնդելու Դավիթ բեկի գործունեության երկրորդ շրջանի ուժն ու հեղինակությունը» :

1780 թվականի Հովհանես Լազարյանի մի գրավոր հիշատակագրի մեջ, որը ներկայացրել է Սուվորովին, ուշագրավ բացատրում է, թե ինչպես պիտի ազատագրվի անկախ Հայաստանը: ... «Բնությունից ամուր տեղերը բավական լավ միջոց կարող են դառնալ ինքնապաշտպանության համար, հողի հատկությունը և կլիման, առանց որևէ պակասության, կարող են տալ բոլոր հարկավոր մթերքները, նույնիսկ սեփական վառող, երկաթ ու արծիճ էլ կարող են ստանալ»⁹³:

Արցախի վերաբերյալ ռազմաաշխարհագրական դիրքի գեղեցիկ համակողմանի վերլուծական նկարագրության ենք հանդիպում Լեոի մոտ՝ «Այսպիսի դասավորություն ստացած Ղարաբաղը տեղագրական, լեռնագրական և բնական տեսակետներով մի աշխարհագրական ամբողջություն է կազմում, որ ամբողջական կերպարանք է տալիս և այդ երկրի կյանքին: Այնպես որ Ղարաբաղը, չնայած որ բաժանված է մի շարք մանր, տեղայնական տարբերություններով խիստ

⁹³ Լեո, երկերի ժողովածու, հ.3, -Եր.: Հայաստան հրատ., 1973, էջ 153:

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

որոշվող լեռնագավառների, սակայն, ընդհանուր առմամբ, ներկայացնում է մի խիստ բնորոշ, խիստ ընդգծված ամբողջություն՝ տնտեսական, ազգագրական, մասնավորապես նույնիսկ և լեզվական տեսակետից: Եթե այժմ քննության առնենք այն հարցը, թե ինչ առնչություն ունի Ղարաբաղն իրեն շրջապատող երկրների հետ, մենք կտեսնենք հետևյալը: Հյուսիս-արևելքից և արևելքից Ղարաբաղը ներկայացնում է մի հսկայական միջնաբերդ, որի ճակատը դարձրած է Կուր-արաքսյան և Մերձ-կասպյան անհուն տափաստաններին, բնությունից կոչում ստացած լինելով պաշտպանել Հայկական բարձրավանդակն այս տափաստանների կողմից առաջացող շարժումների դեմ: Այդ հսկայական բերդի ամբողջ նշանակությունը հասկանալու համար պետք է նկատի առնել, որ նա փակում է ազգերի տեղափոխման այն մեծամեծ ճանապարհները, որոնք Կասպից ծովի հյուսիսային և հարավային ափերով Կենտրոնական Ասիայից բերում են Կուր-արաքսյան արգավանդ տափաստանները: Պատմությունը մեզ շատ փաստերով ցույց է տալիս, որ նվաճող ազգերի ահավոր հորձանքները գալիս ընդհարվում էին Ղարաբաղի լեռնաստանին, փշրվում էին ու ետ դառնում: Միայն գետահովիտներից մի քանիսը, որոնք անցք են բաց անում լեռնաստանից դեպի տափաստանները, թույլ տվին պատռել Ղարաբաղի պաշտպանողական գիծը, բայց հայ ժողովուրդը մինչև այսօր էլ պահպանել է այդ գծի ընդհանուր տարածությունը, գրաված պահելով այն լեռնային բարձրությունները, որոնք առաջավոր պահակներ են Ղարաբաղի սահմանների վրա: Այսպիսով, առանց Ղարաբաղի լեռնաստանի անհնարին է երևակայել Հայաստանի սրտի՝ այն է՝ Արարատյան երկրի պաշտպանությունը հյուսիսային և արևելյան տափաստաններից: Ղարաբաղն անմիջական շարունակությունն է այն հզոր պաշտպանողական պատվարի, որ ներկայացնում է Գուգարքը (այժմյան՝ Լոռին և հարակից գավառները): Եվ այս է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

պատճառը, որ հայկական պետության հիմնադիրներ հանդիսացած Արտաշեսն ու Տիգրանը Գուգարքի հետ միասին Հայաստանի սահմանների մեջ են մտցրել և Ուտիքն, Արցախն ու Սյունիքը⁹⁴:

Անկասկած Սարդարապատի հերոսամարտի հաջողության հիմնական գրավականը դա վերջնական կործանումից փրկվելու հայ ժողովրդի միասնական կամքն էր ու հերոսական ոգին: Սակայն մենք կուզեինք անդրադառնալ մեկ ուրիշ տարրի՝ մարտադաշտի տեղանքին, որը նույնպես հմտորեն օգտագործվեց հայ զորահրամանատարների կողմից: Հարկ է նշել, որ տեղանքը թե՛ մարտավարական, և թե՛ ռազմավարական տեսակետից բարենպաստ էր հայ զորքի համար և խիստ անբարենպաստ էր թուրք զորքի համար, մանավանդ նրա նահանջի պահին:

Հայ զորքն իր թիկունքում հենվում էր հայկական գյուղերի վրա, որոնք իրենց ամբողջ ունեցածը տրամադրել էին հայ ռազմիկներին:

Հակառակ սրան, Սարդարապատից դեպի Ալեքսանդրապոլ տանող տարածությունն այն ժամանակ անապատային և կիսանապտային, միանգամայն անմարդաբնակ «ղըռ» էր՝ շուրջ 50-60 կմ երկարությամբ և մոտ 20-25 կմ լայնությամբ, որտեղ երկաթուղային կայարաններից ու հարակից մի երկու շենքից բացի, որոնք ընկած էին իրարից առնվազն 10-15 կիլոմետր հեռավորության վրա, մի տնակ անգամ չկար ցրտից կամ տապից պատսպարվելու համար, մի աղբյուր անգամ չկար, որ մի կաթիլ ջուր խմեին, առվակ անգամ չէր անցնում, որ լվացվեին ու թարմանային, մի ծառ անգամ չկար, որ նրա ստվերին նստեին ու զովանային: Հեղեղատներ կային, որոնք անձրևի ժամանակ դառնում էին ահավոր, բայց անմիջապես

⁹⁴ Լեո, երկերի ժողովածու, հ.3, -Եր.: Հայաստան հրատ., 1973, էջ 153:

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

ցամաքում չորանում էին: Թեև մայիսը նոր էր վերջանում, բայց օրերը շատ տաք էին, թուրքական հենակետ ղըռերը՝ չոր ու ցամաք: Կարաբուրունից (այժմ Բաղրամյանի տարածաշրջանի Քարակերտ գյուղ) դեպի Արաքս կայարանն ընկած տարածությունն աստիճանական վայրէջք է. եթե հարձակվողի համար դա նպաստավոր տեղանք է, որովհետև հակառակորդը գտնվում է ներքևում և տեսանելի է ինչպես ավիդ մեջ, ապա նահանջողի համար դա խիստ աննպաստ է, որովհետև վերընթաց ճանապարհին նա շարունակ գտնվում է Սարդարապատում տեղակայված հրետանու տեսադաշտում: Հայկական հրետանու դիպուկ կրակը պարտիզանական գնդերի խոյահար գրոհները, 5-րդ գնդի մեթոդիկ առաջխաղացումը և գնդացրային հնձիչ կրակը, թե՛ ճակատից, թե՛ կողքից, և թե՛ թիկունքից հարվածող հեծյալ խմբերն ու աշխարհագրայինները Արաքս կայարանից դեպի Կարաբուրուն տանող ղըռերը մեծ գերեզմանոց դարձրին «Գեղիբոլու» (Դարդանեյ) դիվիզիայի համար, որ թուրքերի ամենամարտական զորամասն էր: Մայիսի 22-26-ի կռիվների ժամանակ թշնամին այդտեղ թողեց 3500 դիակ⁹⁵:

Սարդարապատի ճակատամարտի ուշագրավ նկարագրության ենք հանդիպում այդ ճակատամարտի անմիջական մասնակից Երվանդ Կյուրեղյանի «Իմ հուշերի ճանապարհով» գրքում: Մասնավորապես Դանիել բեկ Փիրումյանը տեսնելով Տիգրան Բաղդասարյանի հրամանատարությամբ մարտնչող Վանի գնդի հերոսությունը և կարևորելով Թալինի բարձունքների կողմից թուրքական բանակի ձախ թևի վրա հարձակումը, այդ կողմ է ուղարկում բաշգառնեցի Մակեդոնին նրան միացնելով մեկ հարյուրյակ Վանի գնդից: «Մենք գիշերով ճանապարհ ելանք, հասանք Յարդալու և Կըրմըզլու գյուղերը: Օվանեսը Մակեդոնին

⁹⁵ Թուրշյան Հ.Գ., Սարդարապատի հերոսամարտը, -Եր.: Հայաստան հրատ., 1969, էջ 149-151:

ճանապարհը ցույց տվեց, որ ջրաղացների կողքով կմտնի Թալին:

Իջանք ցած և հասանք Թալին՝ ջրաղացների պատերին. ամբողջ ուժով «ուռա» կանչեցինք, մտանք գյուղ, թուրքերը շվարած էին: Շատերը գիշերանոցներով այս ու այն կողմ կփախնեին: Էլ որտեղ կթողնենք փախնեն: Թուրքերի հիվանդանոցները Թալինում էին, մաքրեցինք: Թուրքերը երկու կրակի մեջ մնացին: Կեսը փախան դեպի Ալեքսանդրապոլ, իսկ կեսը դեպի Թուրքի Թալին և Սարդարի անառիկ բերդը (Դաշտադեմի բերդ): Լույսը բացվեց, մենք Թուրքի Թալինը գրավեցինք: Մեզ օգնության հասան մի վաշտ զինվորներ և երկու ծանր գնդացիք. սկսեցինք կրակ թափել բերդի վրա: Արևը դեռ չմտած մենք հասանք բերդի պարիսպներին: Սարդարապատի կողմից մերոնք կսեղմեին, թշնամին կփախնի»⁹⁶:

1919 թվականի դեկտեմբերին, առաջին հանրապետության ժամամանակաշրջանում, երբ թուրքական զորքերն Անտանտայի «դաշնակիցների» ճշման ներքո թողել էին Կարսի նահանգը, սակայն Ալեքսանդրապոլից Կարս ճանապարհի մի հատված անցնում էր թրքաբնակ Զարիշադ և Արգինա գյուղերով և նրանց կողմից վերահսկվում էր Արգինայի երկաթուղային ու խճուղային կամուրջները, խոչնդոտ ստեղծելով հայերի տեղաշարժի համար: Եվ ահա ձմեռային խիստ պայմանների զուգորդությամբ հայկական 4-րդ գունդը Սիրունյանի գրահապատ գնացքի օժանդակությամբ կարճ ժամանակում վերացնում է այստեղ տեղակայված թուրքական ուժերին և երկու քաղաքների միջև կապը դարձնում մշտական ու անվտանգ:

⁹⁶ Կյուրեղյան Ե., Իմ հուշերի ճանապարհով, «Արարատ» ռազմավարագիտական կենտրոն, -Եր.: 2009, էջ 214-215:

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

Ահա թե ինչ է ասում այս մարտի մասին առաջին հանրապետության զինվորական կոմիսար Հախվերդյանը՝ «Զօրքն ու բոլորը ներշնչուած են յանդգնությամբ, բայց իրօք, դեռ յաղթել կարենալուց շատ հեռու ենք. յաղթության որոշ բաժինը, պարտական ենք ձյունին և պանիկային (խուճապին)...»⁹⁷:

Հայկական լեռնաշխարհի ռեյիեֆի, գեոմորֆոլոգիական և երկրաբանական կառուցվածքի բարդ պայմանները, ինչպես նաև ապարների բազմազանությունը պայմանավորել են լեռնաշխարհում բազմատեսակ քարանձավների լայն տարածմանը: Հայկական լեռնաշխարհի քարանձավներն ըստ ծագման կարելի է դասել երկու տիպերի՝ հրաբխային և կարստային:

Դարեր շարունակ հայ ժողովուրդը որպես պաշտպանական, ամրաշինական կառույցներ օգտագործել է նաև բնական քարանձավները, այդ թվում՝ հարմար տեղանքում կառուցել ժայռափոր բնակավայրեր: Ասվածի վառ ապացույցներից են Զանգեզուրի մի շարք բնակավայրեր՝ հին Գորիսը, Խնձորեսկը, Տեղը և այլն: Գորիս քաղաքից 8 կմ արևելք, ծովի մակարդակից 1580 մ բարձրության վրա ժայռերի ու կիրճերի մեջ է գտնվում հինավուրց Խնձորեսկը: Արտաքին աշխարհից կտրված այս ժայռոտ վայրում մարդիկ դարեր շարունակ ապրել են բնության հետ «դաշինք» կնքած, որը նրանց պաշտպանում էր և թշնամիներից և բնական արհավիրքներից: Հին Խնձորեսկը տարածված է լեռնահովտի երկու լանջերին: Այս լանջերին որպես բնակարաններ օգտագործվել են բնական քարանձավները, այնուհետև փորելով դրանք հարմարեցրել են իրենց պահանջներին: Տներից շատերը գտնվում են 20-30 մետր բարձրությունների վրա, ընդ որում, ավելի ցածր գտնվող

⁹⁷ Ռուբեն, «Հայ յեղափոխականի մը յիշատակները», Է հատոր, - Թեհրան, 1982, էջ 249:

տան տանիքը վերին հարկի համար ծառայել է որպես հատակ: Քարանձավային բնակարանների թիվը հաշվվում է հարյուրներով՝ 1913 թ. Խնձորեսկում կար 1800 տուն, 7 դպրոց: Խնձորեսկի հովտի ստորին մասում գտնվող բազալտե սալաքարի տակ հանգչում է ազգային-ազատագրական պայքարի հերոս Մխիթար Սպարապետի աճյունը: 1958 թվականին, երբ գյուղը տեղափոխվում էր արևելյան մասում գտնվող սարահարթ, հարյուրամյակներով մարդկանց գիտակցության մեջ այնքան էր կարծրացած ինքնապաշտպանական բնագղը, որ նրանք դժվարությամբ էին թողնում քարանձավները, որպեսզի տեղափոխվեն ժամանակակից հարմարություններով առանձնատներ⁹⁸:

Տեղանքի գերազանց իմացության, դրա առանձնահատկություններն ի նպաստ ռազմական գործողությունների հաջողված կիրառության բազմաթիվ փայլուն օրինակներ են տվել XIX դարի վերջի և XX դարի սկզբների Արևմտյան Հայաստանում ազգային ազատագրական պայքարի նվիրյալները, որոնք հերոսաբար դիմակայել են թվապես մի քանի անգամ գերազանցող կանոնավոր զորքին:

Հաշվի առնելով հայ ժողովրդի պատմական փորձը, ճակատագիրը, Հայաստանի բարդ աշխարհագրական դիրքը և հարևան երկրների մշտական տարածքային նկրտումները՝ արդեն XX դարի սկզբներին հայ ժողովրդի ականավոր զավակներից մեկը՝ Նժդեհը, կարևորել է ռազմարվեստին, ռազմական գիտելիքներին տիրապետելու անհրաժեշտությունը, այդ թվում՝ աշխարհագրական առանձնահատկությունները: Ահա թե ինչպես է նա դիմում Կապան-Տաթևի ճակատի զինվորներին. «Յոթ բարձունք ունի այս ճակատը,

⁹⁸ Բայան Ս. Պ., Վանյան Ռ.Ա., «Հայկական լեռնաշխարհի քարանձավների ծագումը, ձևաբանությունը և նրանց համալիր ուսումնասիրության ու օգտագործման հեռանկարները», անձավագիտական ուսումնասիրությունների գիտական ղեկավարի զեկույցը Հայկական աշխարհագրական ընկերությունում, 1982:

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

հպարտ բարձունքներ, որոնց տիրելու մեջ, որոնց վրա է մեր փրկությունը: Ով տիրեց այդ լեռներին, նա է տերը Զանգեզուրի»⁹⁹:

Հատկապես ուշագրավ է Նժդեհի կողմից կիրառված «գրոհող ժայռեր» կոչվող մարտավարական հնարը, որի շնորհիվ նա, օգտագործելով ռելիեֆի առանձնահատկությունները, առավելության էր հասնում հակառակորդի գերակշիռ ուժերի նկատմամբ: Կանխատեսելով հակառակորդի գրոհի ուղղությունները՝ Նժդեհը հրամայում էր իր և թշնամու միջև գտնվող բարձունքներում՝ ժայռերի տակ, մեծ քանակությամբ պայթուցիկ տեղադրել: Հակառակորդի գրոհը դեռ չսկսված՝ դրանք պայթեցվում էին՝ առաջ բերելով, Նժդեհի խոսքով, «քարե կարկուտ» և ծխի ու փոշու ամպերով պատելով ձորերը: Դա հնարավորություն էր տալիս կանխելու հակառակորդի կազմակերպած գրոհը՝ խուճապ տարածելով նրա շարքերում: Ստանալով հոգեբանական առավելություն՝ Նժդեհի զինակիցները դիմում էին գրոհի և պարտության մատնում անակնկալի եկած թշնամուն:

Հայաստանի Հանրապետության նման փոքր տարածք ունեցող պետությունների համար նման մոդելով տարածքային պաշտպանության համակարգի ստեղծումն ունի ավելի մեծ կարևորություն, քանի որ նրանք չունեն ռազմաճակատի բավարար խորություն և ռազմավարական թիկունք: Այս խնդրի լուծման տարբերակներից մեկը ներկայացված է գեներալ-մայոր Հ. Քոթանջյանի «Պետության տարածքային պաշտպանության կազմակերպման հարցի շուրջ՝ Իսրայելի օրինակով» հոդվածում: Հոդվածի հիմնական էությունն այն է, որ տարածքային պաշտպանությունը նպատակահարմար է կազմակերպել հավանական հակառակորդի հնարավոր հարձակման գլխավոր ուղղություններում

⁹⁹ Աթոյան Վ. Կ. Նժդեհի՝ մարտի վարման տեսության արդիականությունը, «ՀԲ», 2010, թիվ 2

ռազմականացված բնակավայրերի (կիբուցների) ստեղծմամբ: Ռազմականացված բնակավայրեր ստեղծվում են տարածքային գոտիական սկզբունքով՝ հակառակորդի հարձակման դեպքում տարածքային պաշտպանությունն ապահովելու նպատակով: Դրանք ունենում են մարտաբեմի անկախ ներքին օպերատիվ սարքավորում, զորահավաքային ռեսուրսներ, մարտը վարելու միջոցներ, կարող են կազմակերպված ձևով հակահարված հասցնել հակառակորդին՝ հիմնական ուժերին հնարավորություն տալով ռազմական գործողությունների վայր հասնելու, վերադասավորվելու, ապա համատեղ գործողություններ վարելու¹⁰⁰:

XX դարի վերջին այդ հերոսների սերունդները տվյալ հմտություններն ու գիտելիքները կիրառեցին Արցախի անկախությունը պաշտպանելիս: Արցախյան գոյամարտում նույնպես հայկական ջոկատների հրամանատարներն իրենց զորավարական տաղանդի շնորհիվ կարողացան ուժերի ու միջոցների սակավությունը համակշռել տեղանքի և պայմանների հմուտ օգտագործմամբ, ինչի բազմաթիվ փայլուն օրինակներից բավական է նշել Շուշիի (1992 թ. մայիս) և Քարվաճառի (1993-1994 թթ.) օպերացիաները:

Ներկայումս Արցախում հայկական հենակետերն ադրբեջանական դիրքերի նկատմամբ հիմնականում գերիշխում են՝ ունենալով ավելի մեծ հարաբերական բարձրություն, ինչը նույնպես վկայում է, որ հայկական ռազմարվեստը բարձր մակարդակի է: Դա է այն հիմնական պատճառներից մեկը, որ մեր արևելյան հարևանը խուսափում է ռազմական գործողությունների վերսկսումից: Այդ մասին բազմիցս նշել են նաև օտարերկրյա տարբեր զինվորականներ ու քաղաքագետներ: Այսպես. 2010 թ. դեկտեմբերի 1-ին

¹⁰⁰ Քոթանջյան Հ.Ս. Պետության տարածքային պաշտպանության կազմակերպման հարցի շուրջ՝ Իսրայելի օրինակով, «ՀԲ», թիվ 3, 2009, էջ 17

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

Ադրբեջանում ԱՄՆ-ի նախկին արտակարգ և լիազոր դեսպան Ռոս Վիլսոնը ԱՄՆ-ի Զորքթաունի համալսարանում ելույթի ժամանակ հայտարարել է. «Լեռնային Ղարաբաղի հակամարտությունն ուժային ճանապարհով լուծելու Ադրբեջանի ցանկացած փորձ ... լրջորեն կհարվածի Ադրբեջանի տարածաշրջանային շահերին: ... Ընդհանրապես չեմ կարծում, թե ռազմական գործողությունները հաջողություն կունենան: Ադրբեջանը չափազանց բարդ աշխարհագրություն ունի՝ հայերը բարձրադիր գոտում են: Ռազմական բյուջեի ավելացումը դեռ խնդրի լուծում չէ»:

Այսպիսով՝ աշխարհագրական գործոնների ճիշտ հաշվառմամբ ձեռք բերված հաղթանակները շատ ուսանելի են: Դրանք այսօր էլ չեն կորցրել իրենց կիրառական նշանակությունը և կարող են նպաստել մարտական գործողությունների իրականացման արդյունավետության մեծացմանը:

2.3 Բերդերի և ամրոցների վերականգնման բարոյահոգեբանական և սոցիալ-տնտեսական նշանակությունը

Երկրի տարածքում հզոր և կանգուն ամրոցները միշտ խորհրդանշել են ինքնիշխանությունը և իր քաղաքացիների անվտանգությունը: Ամրոցների ավերված վիճակը բնակչության ենթագիտակցության մեջ ասոցացվում է պարտության հետ՝ թշնամին ավիրել է ամրոցը:

Իհարկե ներկայումս մարտարվեստի, սպառազինության և ռազմական տեխնիկայի զարգացման արդի փուլում ամրոցները և բերդերը հիմնականում կորցրել են իրենց ռազմական նշանակությունը: Սակայն զուտ բարոյահոգեբանական տեսակետից կարծում եմ կանգուն պաշտպանական կառույցները տվյալ երկրի ժողովրդին հիշեցնում են իր փառավոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

և հերոսական անցյալը: Յուրաքանչյուր ամրոց սերունդների հիշողության մեջ տպավորվում է իր կառուցած և պաշտպանած իշխանական տոհմերով ու զորավարներով հիշարժան ճակատամարտերով, ինչպես նաև մեծանուն գրողների կողմից դրանց նվիրած պատմավեպերով:

Սեփական երկրի տարածքում ավիրված ամրոցների առկայությունը ասոցացվում է պարտված ճակատամարտի հետ, իսկ կանգունները՝ անպարտելի հերոսական անցյալի:

Արդի աշխարհի երկրների մեծ մասը ի նշան իր նախնիների հերոսական անցյալի փառաբանման վկայության, ի նշան տվյալ երկրի ժամանակակից բանակի իր արմատներին հավատարմության և երախտիքի, մեծամասամբ վերակառուցում են հատկապես այն պատմական բերդերն ու ամրոցներն, որոնք ուրույն դեր են խաղացել ազգապաշտպանության գործում: Վերականգնված բերդերը նոր սերունդների գիտակցության մեջ ամրապնդվում է ազգի անպարտելիության, խիզախության և հայրենասիրության զգացմունքները: Նայելով կանգուն ամրոցին, համոզմունք է առաջանում որ նրա պաշտպանները հաղթել են՝ այլապես այն ավիրված կլիներ հակառակորդի կողմից:

Վերը նշված հանգամանքները հաշվի առնելով կարծում եմ մեր երկրի ներկա սերունդների բարոյական պարտքն է վերականգնել և կանգուն պահել մեր նախնիների ջանքերով հայրենիքի պաշտպանության և ապահովության համար կառուցված և պատմական տարբեր անցուդարձերի ինչպես նաև երկրաշարժերի պատճառով ավերակ դարձած ամրոցները:

Այսպիսով, բացի նշված զուտ բարոյահոգեբանական նշանակությունից վերականգնված բերդերը կարող են

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

տնտեսական, սոցիալական, մշակույթային բազում հիմնախնդիրներ լուծել: Մասնավորապես վերականգնված ամրոցներում և բերդերում զբոսաշրջության որոշ ենթակառուցվածքներ ստեղծելով դրանք կարող են ներառվել **ռազմահայրենասիրական զբոսաշրջության** հիմնական հիմնական երթուղիների մեջ: Դրանցում կարող են նկարահանվել ֆիլմեր, տեսաերիզներ, բեմադրվել օպերաներ, ներկայացումներ և այլն:

Կարևոր է նշել նաև, որ արդյունավետ սոցիալական ծրագրի իրականացում կլինեն ամրոցների վերականգնման աշխատանքներին և այնուհետև զբոսաշրջային այլ նպատակներով օգտագործելու համար ներգրավել տվյալ տարածաշրջանի ազատամարտի վետերաններին: հնարավորության դեպքում արդեն վերանորոգված ամրոցներին կից կարելի է ստեղծել երիտասարդ երկրապահների կամ սկաուտների կայազորային ճամբարներ, ստեղծել հին արիեստների ուսուցման կենտրոններ՝ մասնավորապես դարբնության, կաշեգործության, կավագործության, զինագործության և այլն: Նման կենտրոններում պատրաստված հնաոճ արտադրանքը կարող է վաճառվել հուշանվերների վաճառքի տաղավարներում:

ՀՀ տարբեր մարզերում և Արցախում գտնվող ամրոցների վերահսկողությունը կարող են դրվել մոտակայքում տեղակայված զորամասերի վրա՝ հնարավորության դեպքում տեղակայել ներսում (օր. ՀՀ-ում ՌԴ 102-րդ ռազմաբազայանը տեղակայված է Ալեքսանդրապոլի բերդի տարածքում): Տավուշի մարզի Բերդավան գյուղի միջնադարյան կանգուն բերդը գտնվում է սահմանամերձ հատվածում և նրա վերահսկողությունը առավել հարմար կլինի իրականացնել տվյալ տարածքի պահպանությունը իրականացնող զորամասի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

կողմից՝ ի հարկե ՀՀ պատմական հուշարձանների պահպանության կոմիտեի հետ համագործակցությամբ:

Տպավորիչ ու ազդեցիկ կլինի նաև վերականգնված ամրոցներում կազմակերպել ներակոչիկների երդման արարողություններ, մարտական հերթապահության մեկնող ստորաբաժանումների հրահանգավորում, բանակային խաղերի անցկացում և այլ միջոցառումներ: Բերդերի վերականգնման աշխատանքներն անշուշտ պետք է իրականացվի ՀՀ ԳԱ Հայաստանի պատմության Հնեաբանության ինստիտուտների մասնագետների հսկողությամբ: Պեղումների ընթացքում հայտնաբերված հնագիտական նմուշները հետազայում կարող են համալրել նաև գործվող և ստեղծվելիք թանգարանների ցուցասրահների նմուշների ցանկը: Կարելի է նաև վերականգնված ամրոցներից մեկում կազմակերպել տվյալ ժամանակաշրջանի հայ ռազմարվեստի պատմության թանգարան:

Վերականգնման աշխատանքներին օգտակար կլինի ներգրավել նաև ՀՀ ռազմաուսումնական հաստատությունների կուրսանտներին, այդ միջոցառումը կարելի է ներկայացնել սիմվոլիկ որպես նրանց առաջին ներդրումը՝ «առաջին քարը հայրենիքի պաշտպանության գործում»:

Հայ ռազմարվեստի պատմության մասնագետների մասնակցությունը նախաձեռնությանը կհարստացնի և կամրապնդի նրանց գիտելիքները և ունակությունները այդ ոլորտում:

Ինժեներական ծառայության ինչպես նաև հայ ճարտարապետության պատմության մասնագետների համար այս աշխատանքներին մասնակցությունը հնարավորություն կտա խորամուխ լինել տարբեր դարաշրջանների ամրոցաշինության և դրանց կից հողորդակցության և ապահովման

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

համակարգերի կառուցման նրբություններին և գաղտնիքներին, որոնց որոշ մասը կարելի կլինի օգտագործել նաև ժամանակակից տարբեր նշանակության շինությունների նախագծման և կառուցման մեջ:

Ամրոցների վերականգնման աշխատանքներին հասարակության լայն շերտերի ներգրավումը հայոց ռազմի փառքը խորհրդանշող կառույցների վերականգնման աշխատանքներին, ազգային զարթոնքի պայմաններում, լրացուցիչ ազդակ կարող է հանդիսանալ «Ազգ բանակ հայեցակարգի» իրականացման ճանապարհին:

Նշված աշխատանքների համար ֆինանսական միջոցների աղբյուրները կարող են լինել ամենատարբեր՝ հանգանակությունների, միջազգային հիմնադրամների դրամաշնորհների, սոցիալական ծրագրերի իրականացման, բիզնես նախագծերի իրականացում և այլն: Օրինակ պեղումների անցկացման համար կարելի է համագործակցել տարբեր երկրների համալսարանների հետ և ֆինանսավորվել այդ երկրներից:

Նշված վերականգնողական աշխատանքներն իրենցից ներկայացնում են ժամանակատար միջոցառումներ և այս տեսակետից նույնպես միանգամից մեծ ֆինանսական միջոցների ներդրման կարիք չի լինի, իսկ շինարարական աշխատանքների տարբեր փուլերում արդեն կարելի կլինի որոշակի շահեր ստանալ զբոսաշրջությունից:

Վերոնշված համալիր միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ կլինի նաև մի քանի գերատեսչությունների համագործակցություն՝ Պաշտպանության, Կրթության և Բնապահպանության նախարարությունների:

**ԳԼՈՒԽ 3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՐՊԵՍ
ՌԱԶՄԱԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ, ՏԵՂԸ ԵՎ ԴԵՐԸ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐՈՒՄ**

3.1 Ռազմաաշխարհագրական դիրք եզրույթը

Աշխարհագրական դիրք եզրույթը, բնութագրվում է այս կամ այն աշխարհագրական օբյեկտի դիրքը մյուս օբյեկտների հետ համեմատած և լայնորեն կիրառվում է բնական և հասարակական աշխարհագրության մեջ: Այս եզրույթն ունի մի քանի տարատեսակներ՝ մաթեմատիկաաշխարհագրական դիրք (ՄԱԴ), ֆիզիկաաշխարհագրական դիրք (ՖԱԴ), տնտեսաաշխարհագրական դիրք (ՏԱԴ), տրանսպորտաաշխարհագրական դիրք, քաղաքաաշխարհագրական դիրք (ՔԱԴ), ռազմաաշխարհագրական դիրք և այլն: Քաղաքական աշխարհագրության գիտելիքների համակարգում հանդես եկող ՔԱԴ-ի և ռազմաաշխարհագրական դիրքի միջև հստակ տարանջատում անցկացնել հնարավոր չէ: Այստեղ տեղին է հիշել 19-րդ դարի գերմանացի ռազմական տեսաբան Կ. Կլաուզևիցի խոսքերը՝ «Պատերազմը դա քաղաքականության շարունակությունն է այլ մեթոդներով»¹⁰¹: Այսպես այս կամ այն տարածաշրջանի կամ երկրի դիրքը կարևորագույն տնտեսական և ռազմաքաղաքական կենտրոնների, համաշխարհային տրանսպորտային և առևտրական ուղիների, համագործակցող կամ հակադրվող երկրների խմբավորումների համեմատությամբ կարող է նշանակություն ունենալ ոչ միայն տնտեսական, այլ նաև քաղաքական և ռազմական աշխարհագրության համար: Ռազմաաշխարհագրական դիրքը, դա նաև տվյալ երկրի դիրքն է գործող ու հավանական ռազմական գործողությունների մարտաբեմերի և ռազմավարական առանցքների նկատմամբ:

¹⁰¹ Клаузевиц К. О войне, -М.: Эксмо, 2007, -532 с.

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

Հաղորդակցության ուղիների անվտանգությունը և նորմալ գործունեությունը, ինչպես նաև շահավետ քաղաքաաշխարհագրական դիրքը վերջին հաշվով կախված են տվյալ տարածաշրջանում ռազմաքաղաքական ընթացիկ իրավիճակից: Որպես տնտեսական և քաղաքական աշխարհագրական շահավետ դիրք ունեցող պետությունների օրինակ կարելի է բերել Սինգապուրը, Բահամները և այլն: Ոչ այնքան շահավետ աշխարհագրական դիրքի հիմնական ցուցանիշներից մեկը դեպի բաց ծով ելք չունենալն է՝ ինչպիսին հանդիսանում է նաև Հայաստանը:

Ինչ վերաբերվում է երկրի քաղաքա - աշխարհագրական դիրք եզրույթին, ապա ըստ Մ.Մ. Գոլուբչիկի¹⁰² դա օբյեկտի (երկիր, նրա մասերը, երկրների խմբեր) դիրքն է՝ համեմատած այլ երկրների և դրանց խմբավորումների որպես քաղաքական օբյեկտների: Երկրի քաղաքաաշխարհագրական դիրքը լայն իմաստով՝ դա քաղաքական պայմանների համալիր է, որն արտահայտվում է հարակից երկրների հետ քաղաքական փոխհարաբերությունների համակարգում: Այս համակարգը փոփոխական է, նրա վրա ազդում են գործընթացներ և երևույթներ, որոնք ընթանում են ինչպես շրջակա միջավայրում, այնպես էլ քննարկվող օբյեկտում:

Ինչպես աշխարհագրության մյուս ճյուղերում, այնպես էլ ռազմական աշխարհագրության մեջ ընդունված է տարբերակել մակրո-, մեզո- և միկրո- ռազմաաշխարհագրական դիրք:

Երկրի **մակրո ռազմաաշխարհագրական դիրքը**՝ դա նրանց դիրքն է գլոբալ ռազմաքաղաքական փոխհարաբերություններում: Այն առաջին հերթին գնահատում են կապված երկրի կամ տարածաշրջանի դիրքի հիմնական ռազմաքաղաքական և ռազմական խմբավորումների,

¹⁰² Голубчик М.М., Политическая география мира, Учебное пособие, - Смоленск, изд-во СГУ, 1998, -312 с.

միջազգային լարվածության և ռազմական բախումների օջախների, ինչպես նաև բռնապետական և ժողովրդավարական քաղաքական ռեժիմներով երկրների հետ համեմատած և այլն: Մակրո ռազմաաշխարհագրական դիրքը դա պատմաաշխարհագրական կատեգորիա է, որը փոփոխվում է ժամանակի և տարածության մեջ: Այս պնդման ապացուցման համար կարելի է համեմատել իրավիճակն աշխարհում Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմներից առաջ և հետո, «Սառը պատերազմից» առաջ և նրա ավարտից հետո:

ՀՀ համար մակրո մակարդակը դա Հարավկովկասյան, տարածաշրջանային հզոր հարևանների գործոնը հաշվի առնելով՝ Առաջավորասիական տարածաշրջանն է, իսկ եթե հաշվի առնենք նաև այն կաևոր հանգամանքը, որ տարածաշրջանի ռազմաքաղաքական իրադարձությունների ընթացքի վրա անմիջական ազդեցություն ունեն ԱՄՆ-ն, ԵՄ-ը, ՌԴ-ն, Չինաստանը, կարելի է փաստել որ այս մակարդակում սահմանների ընդգրկումը շատ ավելի մեծ է՝ նույնիսկ դուրս է գալիս Եվրասիա մայրցամաքի սահմաններից:

Մեզո ռազմաաշխարհագրական դիրքը՝ դա սովորաբար երկրի դիրքն է իր տարածաշրջանում՝ հատկապես տարածաշրջանային ռազմական միությունների և ազդեցություն ունեցող տերությունների նկատմամբ: Դրա գնահատման ժամանակ հատուկ դեր է խաղում անմիջական հարևանության բնույթը, որն էլ իր հերթին ամենից առաջ որոշվում է ռազմաքաղաքական հարաբերություններով: Ասվածը հաստատելու համար բավական է ներկայացնել միջպետական հարաբերությունները նշված ժամանակաշրջանում ԽՍՀՄ-ի և ԱՄՆ-ի, Ֆրանսիայի և Գերմանիայի, Ճապոնիայի և Ռուսական կայսրության, Հնդկաստանի և Պակիստանի, Իսրայելի և հարևան արաբական երկրների, Իրանի և Իրաքի միջև և այլն:

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

Հայաստանի Հանրապետության մեզոռ ռազմաաշխարհագրական դիրքը, դա դիրքն է Հարավկովկասյան տարածաշրջանում հարևան երկրների հետ՝ Վրաստան, Ադրբեջան, Իրան, Թուրքիա, ինչպես նաև հեռավորությունը մայրուղային տրանսպորտային ուղիներից: Ներկա ժամանակաշրջանում հարևան երկրներից Թուրքիան համարվում է ՀՀ հիմնական հակառակորդը, իսկ Ադրբեջանը գլխավոր հակառակորդը: Թուրքիայի հետ առկա է փակ սահման, իսկ Ադրբեջանի հետ սահմանը վեր է ածվել ռազմական շփման գծի:

Երկրի **միկրո ռազմաաշխարհագրական դիրք** ասելով սովորաբար հասկացվում է շահեկանությունը կամ ոչ շահեկանությունը (ինչպես քաղաքական այնպես էլ ռազմավարական և ռազմաքաղաքական տեսակետից), նրա սահմանի առանձին հաստատվածների տեղադիրքը, սահմանամերձ տարածքների հարևան երկրների տարածքների հետ շփման, միացման բնույթը:

Միկրո ռազմաաշխարհագրական դիրքը Հայաստանի համար դա երկրի ներսում տարբեր ֆիզիկաաշխարհագրական և վարչական միավորների փոխադարձ դիրքն է: Դրանց ռելիեֆի և լանդշաֆտների բնույթը, բնակչության կազմը և տարաբնակեցման համակարգը, տնտեսության տարածքային տեղաբաշխումը և հաղորդակցության ուղիների առկայությունը:

3.2 Հայաստանի Հանրապետության ռազմաաշխարհագրական դիրքը


ԽՍՀՄ փլուզումից հետո Հայաստանի Հանրապետության նոր աշխարհաքաղաքական դիրքի վերլուծությունը ցույց է տալիս, որ առավելությունների կորուստը հիմնականում տեղի են ունեցել մեզոռ և միկրո մակարդակներում:

Հարավային Կովկասը կռվախնձոր է եղել դեռ հին դարերից: Ներկայումս այստեղ աշխարհաքաղաքական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ազդեցություն հաստատելու առումով բախվում են ինչպես՝ համաշխարհային գերտերությունների՝ ԱՄՆ-ի, Ռուսաստանի, ԵՄ-ի, ՉԺՀ-ի, այնպես էլ տարածաշրջանային գերտերությունների՝ Թուրքիայի և Իրանի շահերը:

Մեզա մակարդակում ՀՀ ռազմաաշխարհագրական դիրքի առանձնահատկությունները պայմանավորված են այս տարածաշրջանում քաղաքական և ռազմատնտեսական առումով ամենահզոր երեք երկրների շահերի բախումով:



Նկար 10. Աշխարհի մակերևույթի ըստ ԱՄՆ Հրամանատարությունների պատասխանատվության գոտիների բաժանման քարտեզ¹⁰³

ԱՄՆ-ն որպես ներկայումս առաջին գերտերություն Հարավկովկասյան տարածքը համարում է իր կենսական շահերի տարածք: Աշխարհի ամբողջ տարածքը ԱՄՆ կողմից

¹⁰³ <https://www.defense.gov/>

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

բաժանված է «Հրամանատարությունների պատասխանատվության գոտիների» (Նկար 10): Այդ բաժանման մեջ ՀՀ տարածքը, ինչպես նաև նախկին խորհրդային բոլոր երկրները, գտնվում է ԱՄՆ Եվրոպական Հրամանատարության պատասխանատվության գոտում: Հարավում՝ Իրանի Իսլամական Հանրապետության տարածքն արդեն գտնվում է ԱՄՆ Կենտրոնական Հրամանատարության պատասխանատվության գոտում:



Նկար 11. 2010 թ դեկտեմբերի 1-ի ՌԴ ՋՈւ ռազմավարչական բաժանումը¹⁰⁴

ՌԴ-ի տարածքը 2010 թ-ի դեկտեմբերի 1-ից բաժանված է «Օպերատիվ ռազմավարական հրամանատարությունների» (Նկար 11): Հարավկովկասյան տարածաշրջանին անմիջապես սահմանակից է «Հարավային Օպերատիվ Ռազմավարական հրամանատարությունը»: Այս հրամանատարության

¹⁰⁴ <http://stat.mil.ru/index.htm>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ենթակայության տակ է գտնվում ՀՀ-ում տեղակայված ՌԴ 102-րդ ռազմակայանը:

Վերջին տասնամյակում Եվրասիական մայրցամաքի տնտեսական ապագան կանխորոշող երկու կարևոր նախագծեր առաջ քաշվեցին Չինաստանի քաղաքական ղեկավարության կողմից:

2013 թ-ի սեպտեմբերին ՉԺՀ նախագահ Սի Չինփինը առաջ քաշեց «Մետաքսի ճանապարհի տնտեսական գոտու» և «XXI դարի ծովային մետաքսի ճանապարհի» գլոբալ ծրագրերը (Նկար 12): Այս ծրագիրն իրագործումը ընդգրկում է ընդարձակ տարածություններ և բազմաթիվ երկրներ: Նշված ծրագիրը ըստ հեղինակների խնդիր ունի եվրասիական տարածաշրջանի երկրների միջև ամրապնդել փոխվստահությունը, իրականացնել կապիտալի, ռեսուրսների, աշխատուժի և գաղափարների ազատ տեղաշարժը և փոխադարձ կապը: Այս ծրագրի շրջանակներում Հայաստանի հնարավոր գլխավոր դերը կարող էր լինել Վրաստանից Իրան՝ հյուսիս-հարավ միջանցքի կապող օղակը, որը կարող է կապել Սև ծովը Պարսից ծոցի հետ: Այս նախագիծը գրավիչ է և Չինաստանի և Իրանի համար, քանի որ այն կարող է այլընտրանք լինել հիմնականում թուրքալեզու երկրներով անցնող արևելք-արևմուտք միջանցքին:

ՉԺՀ-ի կողմից տարածաշրջանի երկրների ընդգրկմամբ մյուս կարևոր նախաձեռնությունը 2014 թ-ի 21 այլ երկրների հետ փոխհամաձայնության հուշագրի ստորագրմամբ «Ենթակառուցվածքային ներդրումների Ասիական բանկ»-ի ստեղծումն էր: Մեկ տարի անց արդեն ֆինանսական աշխարհի մասնագետներն այս նախագիծը համարեցին «Միջազգային արժույթային հիմնադրամի» փոխարինող կառույց, որին արդեն իսկ անդամակցել են բոլոր մայրցամաքներից 60-ից ավելի երկրներ:

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ



Նկար 12. Մետաքսի ճանապարհի տնտեսական գոտին¹⁰⁵

XXI դարի սկզբներին Ադրբեջանի, Վրաստանի և Թուրքիայի հետ մի շարք եռակողմ բանակցությունների ընթացքում սկսեց ձևավորվել համատեղ տնտեսական և ռազմավարական շահերի վրա հիմնված արևելք-արևմուտք առանցքը, որի հիմքը հետագայում կազմեցին երեք երկրները միացնող բարելավված ավտոճանապարհները, Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղը և Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղը, ինչպես նաև վերջերս շահագործման հանձնված Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղին: Այս նախագծերն իհարկե առաջին հերթին հանդիսանում են քաղաքական նախագծեր և ուղղված են Հայաստանի Հանրապետության տնտեսական մեկուսացմանը:

Առկա քաղաքաաշխարհագրական իրավիճակը հիմնականում պայմանավորված է XX դարի 20-ական թվականներին Անդրկովկասի խորհրդայնացումից հետո տարածաշրջանի կամայական վարչատարածքային բաժանումով: Այսպես, տարածաշրջանի շուրջ 188.000 քառ. կմ տարածքը

¹⁰⁵ <https://www.armgeo.am/silk-road>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

կամայականորեն բաժանվեց խորհրդային երեք հանրապետությունների միջև:

Հայաստանին անցավ նշված տարածքի շուրջ 16%-ը, Վրաստանին՝ 37,5%-ը, իսկ Ադրբեջանին՝ 46,5%-ը:

Հետաքրքիր կլինի իմանալ, որ այդ ժամանակ հայերը կազմում էին Անդրկովկասի ընդհանուր բնակչության 26,6%-ը, վրացիները՝ 24,5 %-ը, իսկ Անդրկովկասի թաթարները՝ 22,1%-ը (մնացածը՝ եզդի, քուրդ, լեզգի, ռուս, հույն, թաթ, արխազ, օս և այլն):

Այսօր այդ նույն տարածքում ժողովրդագրական պատկերը հետևյալն է՝ 2014 թ. հունվարին Հարավկովկասյան երեք հանրապետությունների բնակչության ընդհանուր թիվը կազմել է շուրջ 16 միլիոն (ոչ պաշտոնական տվյալներ)¹⁰⁶:

- Հայեր՝ շուրջ 14%
- Վրացիներ՝ շուրջ 16%
- Ադրբեջանցիներ՝ շուրջ 60%
- Այլք՝ շուրջ 10%

Ուսումնասիրելով տարածաշրջանի աշխարհաքաղաքական, տնտեսական և ռազմական պատմությունը և այն պրոյեկտելով տեղագրական հիմքին, գալիս ենք եզրահանգման, որ ամբողջ պատմության ընթացքում որոշակի գոտիներ և ուղիներ միշտ ունեցել են վճռորոշ դերակատարություն և այդ դերակատարությունը պահպանել են մինչև մեր օրերը: Մեր ժամանակներում այդ գոտիների կարևորությունը մեծանում է դրանցով անցնող հաղորդակցության ուղիների, հարուստ բնական ռեսուրսների, ռազմավարական օբյեկտների առկայության, վարչական և ֆինանսական դերի շնորհիվ: Վերոնշյալը հաշվի առնելով, առաջարկում ենք հատուկ կարևորության տարածաշրջանային նշանակության գոտիները հայտանշելու համար ներմուծել «ռազմավարական նշանակության առանցքներ», իսկ

¹⁰⁶ <https://operativ.am/?p=107091/>

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

ներպետական նշանակության գոտիները՝ «օպերատիվ նշանակության առանցքներ» եզրույթները: Նշվածներից առաջինը կօգտագործվի ներկայացնելու գոտու համատարածաշրջանային նշանակությունը, իսկ երկրորդը միջշրջանային նշանակությունը: Իհարկե մեր այս բաժանման առաջին փորձը չենք հավակնում անթերի համարել: Մենք այն կօգտագործենք ընդհանուր պատկերը նկարագրելու նպատակով:

Բացի պատմական զարգացումներից, նաև տարածաշրջանի երկրաբանությունը և մեգառեյլիեֆի տարրերի տեղակայումը պայմանավորել են Հարավային Կովկասում ռազմավարական նշանակության առանցքների ժամանակակից պատկերը, որի հիմքը կազմում է Սև և Կասպից ծովերը միացնող տրանսպորտային ուղիները:

Ըստ ամերիկյան կառավարության 2010թ-ի տվյալների¹⁰⁷ 16-ից մինչև 49 տարեկան զինծառայության պիտանի տարիքային հատվածում գրանցված ներուժը մեր տարածաշրջանի երկրների համար հետևյալն է՝

- Հայաստան - 805.847
- Վրաստան – 1.080.840
- Ադրբեջան – 2.354. 840
- Իրան – 23.619.215
- Թուրքիա - 21.079.077
- Ռուսաստան – 22. 597. 728

Հարավկովկասյան տարածաշրջանում ռազմաաշխարհագրական համալիր ուսումնասիրման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ԽՍՀՄ փլուզումից հետո տարածաշրջանում ձևավորվեցին նոր իրողություններ: Խորհրդային տնտեսության տարածքային պլանավորման ժամանակ մեծապես հաշվի էր առնվում նաև գլխավոր հակառակորդի՝ ի դեմս ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիայի արևմուտքում գտնվելը, իսկ արդեն 1990-ականների

¹⁰⁷ <https://operativ.am/?p=107091/>

սկզբներից յուրաքանչյուր պետության համար փոխվեցին հակառակորդները, որն էլ իր հերթին բերեց հաղորդակցման ուղիների և տնտեսական կապերի կաթվածահար վիճակի: Անհրաժեշտություն առաջացավ նոր իրականության պայմաններում տնտեսության և հաղորդակցման ուղիների նոր ռազմավարական պլանի մշակման համար՝ որն էլ հենց հանդիսանում է տարածաշրջանի ռազմաաշխարհագրական հետազոտությունների ռազմավարական մակարդակի ուսումնասիրման առարկան:

Ամփոփելով նշենք, որ նոր սերնդի պատերազմներում բնական ռեսուրսների՝ առաջին հերթին վառելիքաէներգետիկ ռեսուրսների, տրանսպորտի, տնտեսության ռազմավարական ճյուղերի տարածքային կազմակերպումը, ժամանակակից համալիր աշխարհագրական հետազոտությունները ուղղակի դարձնում է պահանջված՝ ռազմավարական որոշումներ կայացնելիս, իսկ Հարավային Կովկասի դեպքում դրանք վճռորոշ են:

Դեռևս անցած դարում երկրների, տարածաշրջանների, ռազմական գործողությունների մարտաբեմերի հետազոտման շատ սկզբունքներ արդիական են նաև մեր օրերում: Դեռ ավելին, դրանց կարևորությունը աճում է, քանի որ ժամանակակից քաղաքական և ռազմական հակամարտությունները, որպես կանոն թելադրվում են տարբեր գործոնների բարդ համակարգով¹⁰⁸:

Հայաստանի հանրապետության ներսում՝ միկրո ռազմաաշխարհագրական մակարդակի ռազմավարական բաժանումներ իրականացնելիս անհրաժեշտ կլինի հատկապես ուշադրություն դարձնել գլխավոր և հիմնական հակառակորդների սահմանամերձ տարածքներին: Այսպես, ՀՀ –ում ընդունված վարչական բաժանումները հաշվի

¹⁰⁸ Военная география и военная статистика: история и современность, сост. канд. ист. наук Бринюк Н.Ю., Коршунов Э.Л., д-р ист. наук Михайлов А.А., СПб, Дмитрий Буланин, 2018, с. 4.

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

առնելով՝ Թուրքիայի ուղղությամբ հնարավոր ձևավորվող ռազմավարական ուղղության մեջ կարող են մտնել Արարատի, Արմավիրի, Արագածոտնի և Շիրակի մարզերը՝ պայմանական անվանենք **Արևմտյան ռազմավարական ուղղություն**: Այս դեպքում որպես թիկունքային շրջաններ կարող են հանդես գալ Երևանը, Գեղարքունիքի մարզի Մարտունու և Գավառի տարածաշրջանները, Կոտայքի և Լոռվա մարզերը: Այստեղ իհարկե գոյություն ունեցող ենթակառուցվածքները չեն բավարարում հնարավոր ճակատի երկայնքով և ճակատից դեպի թիկունք հաղորդակցությունների անխափան ապահովմանը: Օրինակ շատ կարևոր է ունենալ Արարատի մարզը Գեղարքունիքի մարզին կապող գոնե մեկ բարձրակարգ ավտոճանապարհ: Այս դեպքում Արագած լեռան և Գեղամա լեռնաշղթայի արևմտահայաց լանջերը կարող են օգտագործվել հակաօդային պաշտպանության և ռադիոտեխնիկական զորքերի տեղակայման համար:

Ադրբեջանի ուղղությամբ ռազմա-վարչական բաժանման դեպքում այն կբաժանվի երկու հատվածի՝ բուն Ադրբեջանի տարածքի հետ սահմանը և Նախիջևանի ինքնավար հանրապետության հետ սահմանը:

Բուն Ադրբեջանի Հանրապետության հետ սահմանում ռազմավարչական շրջանը իր մեջ կներառի Տավուշի մարզը և Գեղարքունիքի մարզի Ճամբարակի ու Վարդենիսի տարածաշրջանները՝ պայմանական անվանենք **Արևելյան ռազմավարական ուղղություն**: Այստեղ որպես թիկունքային շրջան կարող է հանդես գալ Լոռվա մարզը և Գեղարքունիքի մարզի Սևանի, Գավառի և Մարտունու տարածաշրջանները: Այստեղ իհարկե կարևորվում է Սևանա լճի արևելյան և արևմտյան ափերը կապող ջրային տրանսպորտի հարցը, որը կարող է խաղաղ ժամանակաշրջանում օգտագործվել զբոսաշրջիկների սպասարկման նպատակով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Նախիջևանի ինքնավար հանրապետության ուղղությամբ ռազմա-վարչական շրջանն իր մեջ կներառի Սյունիքի, Վայոց Ձորի մարզերը և Արարատի մարզի Արարատի տարածաշրջանները՝ այն պայմանական անվանենք **Հարավային ռազմավարական ուղղություն**: Այստեղ տեսնում ենք, որ շատ է կարևորվում Արարատի տարածաշրջանը, քանի որ այն ընդգրկվում է և՛ Արևմտյան ուղղության և՛ Հարավայինի մեջ: Հաշվի առնելով հարավային ուղղությամբ թիկունքային ռազմավարական խորության բացակայությունը, ապա նշված տարածաշրջանների արևելյան հատվածները կարող են ծառայել որպես թիկունքային շրջաններ: Անհրաժեշտ ենթակառուցվածքային առաջնահերթ խնդիրներից կարելի է նշել Վարդենիսի տարածաշրջանից դեպի Ջերմուկ ապա դեպի Սիսիան քաղաքներ նոր ճանապարհի կառուցումը:

Վերը նշված ռազմավարչական բաժանումները զուտ տեսական են: Ուղակի մեր կողմից նշվել է ռազմաաշխարհագետի առջև նման խնդիրների առաջադրման դեպքում հնարավոր մոտեցումները:

Վերջին տասնամյակում ըստ հորիզոնի կողմերի և հնարավոր ռազմական գործողությունների մարտաբեմերի ռազմավարչական բաժանումներ իրականացվել են Ռուսաստանի Դաշնությունում 2010թ-ին և Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում 2016 թ-ին:

Այստեղ կարևոր ենք համարում նշել, որ ոչ միշտ է, որ երկրի վարչատարածքային բաժանումները կարող են համընկնել ռազմավարչական բաժանման սահմաններին:

**ԳԼՈՒԽ 4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ
ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ**

4.1 Ֆիզիկաաշխարհագրական պայմանների գլխավոր առանձնահատկությունները

Հայաստանի Հանրապետությունը տիպիկ լեռնային երկիր է, որի մակերևույթը իրենից ներկայացնում է ծալքավոր, ծալքաբեկորավոր լեռների և հրաբխային լեռնավահանների, ալյուվիալ հարթավայրերի և բարձրլեռնային լավային սարավանդների, նեղ գետային հովիտների և լճային գոգավորությունների զուգորդում, որտեղ տարածքի բացարձակ միջին բարձրությունը կազմում է 1800 մ¹⁰⁹:

Մակերևույթի նման բարդությունը և մասնատվածության բարձր արժեքները այդքան փոքր մակերեսի վրա պայմանավորում են հանրապետության բնական պայմանների՝ կլիմայի, ջրագրության, հողերի, բուսական և կենդանական աշխարհի՝ խիստ բազմազանություն: Հանրապետության տարածքի 76%-ից ավելին գտնվում է ծովի մակարդակից բարձր՝ 1000-2500 մ նիշերում և շնորհիվ բարձր դիրքի ու բարդ ռելիեֆի, պայմանավորում է լանդշաֆտների բարձունքային գոտիականությունը: ՀՀ տարածքի լանդշաֆտային գոտիականության կարևորագույն առանձնահատկություններից են՝ կենսաբազմազանության ներգոտիական հարստությունը և հյուսիսից հարավ գոտիների

¹⁰⁹ Բաղդասարյան, Ա.Բ. Հայկական ՍՍՀ ֆիզիկական աշխարհագրություն, -եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1971.-471էջ

սահմանների բարձրացումը, որը հետևանք է կլիմայական պայմանների արիդացման^{110 111 112}:

ՀՀ տարածքում դիտվում են վերընթաց գոտիականության կառուցվածքի երկու տարբերակ Փոքրկովկասյան մեզոֆիլ, որը բնորոշ է Փոքր Կովկասի լեռնային համակարգի արտաքին լանջերի համար, և կենտրոնական քսերոֆիլ, որը բնորոշ է Միջինարաքսյան լեռների և միջլեռնային գոգավորության լեռնահամակարգերի համար: ՀՀ տարածքում առանձնանում են հետևյալ բարձունքային լանդշաֆտային գոտիները՝ անապատային-կիսաանապատային, չոր տափաստանային, տափաստանային, անտառային, մերձալպյան և ալպյան^{113 114 115}.

Ռելիեֆի ձևաչափական հատկանիշները՝ բարձրաչափություն, հորիզոնական և խորքային մասնատվածություն, մակերևույթի թեքություններ և կողմնադրություններ կարևոր նշանակություն ունեն յուրաքանչյուր վայրի տարբեր մակար-

¹¹⁰ Խոյեցյան Ա.Վ. և Մկրտչյան Ռ.Ս., Անապատացման պատճառահետևանքային կապերը և տարածաժամանակային գնահատման սկզբունքները Հայաստանի Հանրապետությունում. - Եր.: ԵՊՀ հրատ., 2006. - 250 էջ:

¹¹¹ Պողոսյան Դ.Ա. և Խոյեցյան Ա.Վ., Հայկական լեռնաշխարհի (ու հարակից տարածքների) լանդշաֆտները և ֆիզիկաաշխարհագրական շրջանները, -Եր.: ԵՊՀ հրատ., 2008, - 232 էջ:

¹¹² Халатов В.Ю., Ландшафты Армянского нагорья (структура, классификация, картографирование), - М.:, Едиториал УРСС, 2003, 160с.

¹¹³ Պողոսյան Դ.Ա. և Խոյեցյան Ա.Վ., Հայկական լեռնաշխարհի (ու հարակից տարածքների) լանդշաֆտները և ֆիզիկաաշխարհագրական շրջանները, -Եր.: ԵՊՀ հրատ., 2008, - 232 էջ

¹¹⁴ Бойнагрян В.Р. Экзогенные процессы рельефообразования в Армении // Матер. XXVIII Пленума Геоморфол. Комиссии РАН. Новосибирск, 2004, с.43-44.

¹¹⁵ Халатов В.Ю., Ландшафты Армянского нагорья (структура, классификация, картографирование), -М.: Едиториал УРСС, 2003, 160с.

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

դակների ռազմական պլանավորումների գործընթացներում¹¹⁶: Ջորջերի գործողությունների վրա ազդող լեռների յուրահատկությունները բնութագրվում են այնպիսի ցուցանիշներով, ինչպիսիք են բացարձակ բարձրությունը և կլիման, ռելիեֆի բնույթը և բուսական ծածկույթը: Բացարձակ բարձրությունը կարևոր պայման է, որը որոշում է կլիմայի առանձնահատկությունները: Այսպես, բարձրության յուրաքանչյուր 100 մ աճի դեպքում օդի միջին ջերմաստիճանը նվազում է $0,5^{\circ}$ - $0,6^{\circ}$ C (խոնավ և չոր ադիաբաթ օրենքով), մթնոլորտային ճնշումը իջնում է 8-10 մմ սնդիկի սյան, օդի խտությունը պակասում է 1/2 %-ով, իսկ կայուն ձնածածկի տևողությունը ավելանում է 8-10 օրով :

Ռազմական տեխնիկայի վրա բավական ազդեցություն է ունենում մթնոլորտի նոսրացումը: Դա հանգեցնում է տանկերի և ավտոմեքենաների շարժիչների հզորության անկման (մոտավորապես 8-10 % յուրաքանչյուր 1000 մ վերելքին) և ջրի եռման ջերմաստիճանի իջեցման (3° - 4° C յուրաքանչյուր 1000մ-ին): Մթնոլորտային ճնշման և ջերմաստիճանների նվազումը լեռներում առաջին հերթին ազդում է մարտական և տրանսպորտային մեքենաների շարժիչների վրա, ինչը էականորեն պակասեցնում է դրանց հզորությունը և շարժման արագությունը, միաժամանակ մեծացնելով վառելիքի ծախսը¹¹⁷:

ա. Բարձրաչափական

ՀՀ մակերևույթի բարձրաչափական գլխավոր առանձնահատկությունն այն է, որ նրա տարածքը գրեթե ամբողջությամբ

¹¹⁶ Супуренко Ю.П., Эти удивительные горы, -М.: Просвещение, 1987, - 160 с.

¹¹⁷ Սայադյան Համ. Յ., Լեռնային տեղանքում մարտական գործողությունների վրա ազդող գործոնների հաշվառումը, որպես մարտական վարպետության ապահովման միջոց, ՀԲ, -Եր.: 2009, թիվ 1-2, էջ 150-158

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ընկած է ծովի մակարդակի նկատմամբ 400 մ-ից բարձր, իսկ ավելի քան 40 %-ը՝ 2000 մ-ից բարձր:

ՀՀ տարածքում առանձնացնում են երեք լեռնագրական գոտի՝ բարձրլեռնային, միջին բարձրության և ցածրլեռնային¹¹⁸:

Բարձրլեռնային գոտին (2500-2800 մ-ից բարձր) կազմում է հանրապետության տարածքի մոտ 17%-ը, բնորոշ է ինտենսիվ մասնատվածությամբ՝ ծալքաբեկորավոր լեռնաշղթաներում և բարձրադիր սարավանդների ու կոնաձև լեռների առկայությամբ՝ հրաբխային լեռնավահաններում¹¹⁹: Այստեղ տիրապետում են սառնամանիքային հողմնահարումը, նիվացիան և սոլիֆյուկցիան: Լավ պահպանվել են չորրորդական սառցապատման հետքերը:

Հայ աղբբեջանական հակամարտության շփման գծում բարձրլեռնային գոտին ՀՀ և Արցախի տարածքներում ներառում է Մոավի և Ջանգեզուրի լեռնաշղթաները (Քարտեզ 3), որոնց գագաթային մասերով էլ հենց անցնում է առաջնագիծը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված երկու լեռնաշղթաներն էլ տարածվում են սահմանի երկայնքով, իսկ հակամարտ կողմերի հենակետերը տեղակայված են գագաթային մասերում և ունեն համարյա հավասար բարձրություններ, այս հատվածներում հակառակորդի կողմից հրադադարի ռեժիմի խախտումների քանակը շատ սակավ է:

Միջին բարձրության լեռնային գոտին (1500 մ-ից մինչև 2500-2800 մ) զբաղեցնում է հանրապետության տարածքի 55 %-ը¹²⁰ և բնութագրվում ռելիեֆի խորը մասնատմամբ, հատկապես ծալքաբեկորավոր լեռնաշղթաներում: Հրաբխային ռելիեֆի տարածման շրջաններում հանդիպում են լավային և

¹¹⁸ Բայան Ս.Պ., Հայկական ՍՍՀ գեոմորֆոլոգիան, -Երևան.: 1986,- 239 էջ:

¹¹⁹ Բաղդասարյան, Ա.Բ. Հայկական ՍՍՀ ֆիզիկական աշխարհագրություն, -Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1971.-471էջ

¹²⁰ Նույն տեղում

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

տուֆային սարավանդները: Այս գոտում գերակշռում է գետային էրոզիան և ջերմային հողմահարումը:


Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի կազմի մեջ մտնող Նախիջևանի հինքնավար Հանրապետության սահմանին միջին բարձրության լեռներ են Վայքի լեռնաշղթան և Ուրծի լեռնաշղթայի հարավարևելյան ճյուղավորումները: Հայաստանի և բուն Ադրբեջանի սահմանային գոտում միջին բարձրության լեռներն են՝ Խնձորուտի, Միափորի, Սևանի և Արևելյան Սևանի լեռնաշղթաները:

Կարծում եմ լեռնային երկրների՝ հատկապես հակամարտություններով տարածաշրջանների, սահմանների դելիմիտացիայի և դեմարկացիայի իրականացման ժամանակ, գերիշխող գազաթների հարևանների միջև հավասար բաշխումը, հավասար դիրքային պայմաններ է ապահովում երկուսի համար էլ և կարող է նպաստել հարևանների հետագա առավելապես խաղաղ համագոյակցությանը: Հակառակ դեպքում մի կողմի կրակոցները կարող են համարժեք պատասխան ստանալ հակառակ կողմից:

Այստեղ կարծում եմ անհրաժեշտ է նշել նաև, որ Հայաստանի և Ադրբեջանի միջև նախկին խորհրդային սահմանը կարծես հարևանների կողմից չի ընդունվում որպես պարտադիր պայման, իսկ դա նշանակում է, որ հայկական ուժերի կողմից նոր հենակետերի վայրի ընտրության հարցում այդ սահմանի առկայությունը երբեք չպետք է խոչընդոտ հանդիսանա:

Ցածրլեռնային գոտին (մինչև 1500 մ) կազմում է տարածքի 23 %-ը, այն աչքի է ընկնում ձորակախանդակային խիստ մասնատմամբ (Աղյուսակ 1): Գոտում լայն տարածում ունեն նաև հարթ տարածությունները, որտեղ տիրապետող է տեղատարվող նյութի կուտակումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ



Քարտեզ 3. Հայաստանի հանրապետության ճալքավոր լեռնաշղթաների գծային կառուցվածքը

«Տարածքի բաշխումն ըստ բարձրաչափական գոտիների»¹²¹

Բարձրաչափական գոտիները (բարձրությունը մ)	Բարձրաչափական գոտիների մակերեսը	
	Հզ.քկմ	%
375-500	0.02	0.1
500-800	0.53	1.8
800-1000	2.37	8.0
1000-1500	5.43	18.3
1500-2000	9.30	31.3
2000-2500	7.29	24.5
2500-3000	3.80	12.6
3000-3500	0.97	3.3
3500-ից բարձր	0.03	0.1

բ. Հորիզոնական և խորքային մասնատվածություն

Ցանկացած տեղանքի ռելիեֆի հորիզոնական և խորքային մասնատվածության քարտեզագրումը աշխարհագետին հնարավորություն է տալիս դատելու գծային-էրոզիոն պրոցեսների դինամիկայի մասին, թե ինչպիսին է տվյալ տարածքի ռելիեֆի ձևակառուցվածքային բնույթը:

Ռազմաաշխարհագրական տեսակետից ռելիեֆի այս բնորոշիչները հաճախ պատճառ են դառնում տեղային մարտաբեմերի մասնատմանը՝ կոմունիկացիոն սարքավորման տեսակետից: Այն նաև կարող է թելադրել ռազմական գործողությունների բնույթը և նրա ց ուղղությունները:

¹²¹ Բաղդասարյան, Ա.Բ. Հայկական ՍՍՀ ֆիզիկական աշխարհագրություն, -Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1971.-471էջ

Մակերևույթի հորիզոնական մասնատվածության տեղաբաշխումը ՀՀ տարածքում¹²²

Մակերևույթի հորիզոնական մասնատվածությունը (կմ/քկմ)	տարածքը (քկմ)	%
0.1-ից փոքր	1957.05	6.57
0.1-0.2	1067.09	3.58
0.2-0.4	2953.69	9.91
0.4-0.6	6369.68	21.38
0.6-0.8	5316.82	17.84
0.8-1.0	5378.18	18.05
1.0-1.2	3912.70	13.13
1.2-1.4	1248.91	4.19
1.4-1.6	1182.56	3.97
1.6-ից բարձր	411.31	1.38

Ռազմաաշխարհագրական տեսակետից որոշակի տարածքի հորիզոնական և խորքային մասնատվածության քարտեզագրումը հնարավորություն է տալիս գնահատելու հնարավոր ռազմական գործողությունների ժամանակ զրահատանկային տեխնիկայի կիրառման հնարավորությունները, իսկ հակառակորդի հնարավոր հարձակումների գնահատման ժամանակ հնարավոր տանկավտանգ ուղղությունները:

¹²² Зограбян Л.Н., Орография Армянского нагорья, -Ер.: 1979, 119 с.

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

Հայաստանի Հանրապետության 29.743 հազար քլմ տարածքի վրա գետային ցանցի միջին խտությունը կազմում է 0.44 կմ/քլմ, Կուրի ավազանում՝ 0.63 կմ/քլմ, Արաքսի ավազանում՝ 0.38 կմ/քլմ: Առավել մասնատված են ծալքաբեկորային լեռները և թույլ մասնատված՝ հրաբխային լեռնավահաններն ու սարավանդները: ՀՀ ցամաքային տարածքի շուրջ 80 %-ում հորիզոնական մասնատման ցուցանիշը գերազանցում է 0.4 կմ/քլմ, իսկ 23 %-ում՝ ավելի է 1 կմ/քլմ-ից (աղյուսակ 2): Հորիզոնական մասնատվածության քարտեզի վերլուծությունը ցույց է տալիս, որ մասնատվածության միևնույն ցուցանիշները կարող են հանդիպել հանրապետության տարբեր հատվածներում և տարբեր բարձրություններում:

Հանրապետության տարածքի մի մասը՝ գլխավորապես Արարատյան և Շիրակի դաշտերը, խորը մասնատված չեն: Եղած գետերը տարանցիկ են և դաշտերի մեջ խորացել են 1-2 մետրով: Պետք է նշել, որ հրաբխային ծածկույթները ունենալով թույլ մասնատում, ունեն կիրճեր: Այդպիսին են Ախուրյանի, Քասախի, Հրազդանի, Ազատի, Որոտանի, Արփայի կիրճերը, որտեղ հունի խորությունը լավային դարավանդի եզրից կազմում է 200-700 մ: ՀՀ տարածքի շուրջ 2/3-ում ուղղաձիգ մասնատվածության խորությունը գերազանցում է 100մ-ը, և միայն տարածքի 1/3-ում է, որ այդ ցուցանիշը հաշվվում է տասնյակ մետրերով (աղյուսակ 3): Հորիզոնական և խորքային մասնատվածության արժեքների նման արտահայտությունը պայմանավորված է տարածքի երկրաբանական կառուցվածքով, ձևաբանությամբ և այլ երևույթներով:

գ. Մակերևույթի թեքություններ և կողմնադրություններ

Լեռնային երկրներում ռազմական գործողությունների և օպերացիաներ պլանավորման և իրականացման վրա կարևոր ազդեցություն են ունենում նաև մակերևույթների

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

թեքությունները և կողմնադրությունները¹²³: Մակերևույթների թեքությունները հիմնականում պայմանավորում են մեխանիզացված զորամասերի և ստորաբաժանումների կիրառման հնարավորությունները, իսկ տեղանքի կողմնադրությունների արդյունավետ կիրառմամբ կարելի է ռազմական ենթակառուցվածքները և կապուղիները տեղակայել համեմատաբար անվտանգ վայրերում՝ հակառակողի կրակային միջոցներից պաշտպանված հակադարձ լանջերում:

Աղյուսակ 3.

Մակերևույթի խորքային մասնատվածության տեղաբաշխումը ՀՀ տարածքում¹²⁴

Մակերևույթի խորքային մասնատվածությունը (մ)	Տարածքը (քկմ)	%
0,5-ից փոքր	2451.26	8.23
0.5-50	3314.52	11.12
50-100	5734.06	19.24
100-200	8761.20	29.40
200-300	6111.93	20.51
300-400	2767.48	9.29
400-ից բարձր	657.56	2.21

Հայաստանի Հանրապետությունում մինչև 6 աստիճան թեքություն ունեցող վայրերը կազմում են ամբողջ հանրապետության ցամաքային տարածքի շուրջ 35%-ը: Սա էլ այն

¹²³ Саядян А.Я., Геоморфологические процессы, влияющие на военное планирование в горной местности Южного Кавказа, -М.: VI Щукинские чтения, МГУ, 2010, с. 212-213;

¹²⁴ Зограбян Л.Н., Орография Армянского нагорья, -Ер.: 1979, -119 с.

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

տարածքն է, որը համեմատաբար նպաստավոր է հողագործության և առհասարակ արտադրողական ուժերի տեղաբաշխման ու զարգացման համար:

Բավականին ընդարձակ տարածություններ են զբաղեցնում 6–16 աստիճան թեքություն ունեցող հողատարածքները: Դրանք մոտավորապես հավասար են մինչև 6 աստիճան թեքություն ունեցող տարածքներին և կարևոր տեղ ու դեր ունեն հանրապետության արտադրողական ուժերի տարածքային կազմակերպման համակարգում: Չնայած, ընդհանուր առմամբ, 6–16 աստիճան թեքություն ունեցող վայրերը բարենպաստ են գյուղատնտեսական աշխատանքների և առհասարակ արտադրության զարգացման համար, սակայն ռելիեֆային տեսակետից մեծ թեքությունների պատճառով այս վայրերում արտադրողական ուժերի տեղաբաշխումն ու զարգացումը պահանջում են լրացուցիչ, համալիր հսկայական միջոցառումներ և ծախսեր, որոնք անկասկած բացասաբար են անդրադառնում աշխատանքի արդյունավետության վրա:

Ռելիեֆային պայմանների տեսակետից անբարենպաստ են հանրապետության տարածքի այն մասերը, որոնք ունեն 16–30 աստիճան թեքություններ: Հարավահայաց մեծ թեքությունները առանձին դեպքերում հնարավոր է օգտագործել այգեգործության ու պտղաբուծության համար՝ կիրառելով արհեստական, մեծ աշխատանք պահանջող մեթոդներ: Այսպիսի թեքություններ ունեցող վայրերը զգալի դեր ունեն նաև որպես արոտավայրեր ու խոտհարքեր: Այստեղ լրացուցիչ մեծ ծախսերի հետ են կապված նաև շինարարական և տրանսպորտային աշխատանքները: Հանրապետության տարածքի (առանց Սևանա լճի տարածքի) շուրջ 5%-ն ունի 30 աստիճանից ավելի թեքություն, այսինքն՝ խիստ թեք է, որի նշանակությունը արտադրողական ուժերի տեղաբաշխման, ինչպես նաև ավտոգրահատանկային տեխնիկայի կիրառման համար ծայրահեղ սահմանափակ է: Կլիմայական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

համեմատաբար բարենպաստ պայմաններ ունեցող այդպիսի վայրերում, (հարավահայաց լանջերին) դարավանդային մեթոդով թերևս հնարավոր է պտղաբուծության զարգացումը (այն էլ մինչև 40 աստիճան թեքություն ունեցող վայրերում միայն): Իսկ ընդհանրապես հանրապետության այդպիսի մեծ թեքություն ունեցող վայրերը, հիմնականում պիտանի են մանր եղջերավոր անասունների համար, որպես արոտավայրեր: Իսկ եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ այդ վայրերի տարածքի զգալի մասը լերկ ժայռեր են, ապա հասկանալի պետք է լինի, որ այստեղ արոտավայրերը նույնպես շատ սահմանափակ են: Այսպիսով՝ ելնելով ռելիեֆային առանձնահատկություններից, ինչպես տեսանք, հանրապետության բնակչության տեղաբաշխման տարածքային պայմանները շատ սահմանափակ ու բարդ են, դրանց օգտագործումը պետք է դրվի խիստ նպատակային դիրքերի վրա՝ անպայման հաշվի առնելով երկրի անվտանգության տեսակետից նպատակահարմարությունը:

Լեռնային տեղանքին բնորոշ են փլուզումները, սողանքները, ձնահյուսերը, որոնք ակտիվանում են գարնանը, ռազմական գործողությունների ժամանակ նաև հզոր պայթյունների դեպքում: Այս երևույթները մեծապես խափանում կամ խոչնդոտում են ամրաշինական և ճանապարհաշինական աշխատանքները: Սրանք լանջային երևույթներ են, որոնք լայն տարածում ունեն բարձր լեռների մերձգագաթային մասերում, որտեղ լեռնային ապարների ինտենսիվ սառնամանիքային հողմահարման արդյունքում նրանց ներքին կապը խախտվում է և ամենատարբեր չափսի ժայռաքեկորներ անջատվում են հիմնական զանգվածից:

Լեռնալանջերի անցունակության վրա ազդող կարևոր ցուցանիշ է հողագրունտների խոնավությունը: Այդուհանդերձ ներկայացվում է թրթուրավոր և անվավոր մեքենաների անցունակությունն ամուր չոր գրունտի պայմաններում:

Լեռնալանջերի անցունակությունը ամուր չոր գրունտի պայմաններում¹²⁵


Լանջերի թեքությունը, աստիճան	Լանջերի անցունակությունը	
	թրթուրավոր մեքենաների համար	անվավոր մեքենաների համար
մինչև 5	հեշտ է հաղթահարվում	հաղթահարվում է
5-10	հաղթահարվում է	հաղթահարվում է դժվարություններով
10-20	հաղթահարվում է դժվարություններով	հաղթահարվում է մեծ դժվարություններով և միայն ցածր արագություններով
20-30	հաղթահարվում է մեծ դժվարություններով և միայն ցածր արագություններով	գործնականում անհաղթահարելի է
30-ից ավել	գործնականում անհաղթահարելի է	

Ծանուցում: Գրունտի 50% խոնավության դեպքում (սովորական պայմաններում գրունտներն ունենում են 20% խոնավություն) հաղթահարվող թեքությունները պակասում են երկու անգամ:

Որպես աշխարհագրական տեղեկատվության ռազմական նպատակներով կիրառման օրինակ, մեր կողմից ԵՏՀ մեթոդով կազմվել է Հայաստանի Հանրապետության հյուսիսարևելյան հատվածի թեքությունների և կողմնադրությունների քարտեզները:

¹²⁵ Говорухин А.М., Куприн А.М., Гамезо М.В., Справочник по военной топографии, -М.: МО СССР, 1973, -264 с.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ




Քարտեզ 4. ԵՏՀ (GIS) միջոցով կազմված ՀՀ հյուսիսարևելյան սահմանագոտու տանկանցանելի (0-20°) ուղղությունները:

Թեքությունների և կողմնադրությունների քարտեզների կազմման համար հիմք է հանդիսացել 30 մետրանոց թվային բարձրունքային մոդելը՝ ԹԲՄ: Օգտագործվել է ԵՏՀ-ի Arc Toolbox գործիքակազմի Special analyst tools փաթեթի slope և aspect գործիքները: Երկրատեղեկատվական համակարգում (ԵՏՀ) ներմուծվել է 30 մետրանոց բարձրունքային թվային մոդելը՝ ԹԲՄ-ն, որի հիմքի վրա օգտագործվելով Special analyst tools փաթեթի slope գործիքը, կազմվել է ՀՀ հյուսիսարևելյան հատվածի կողմնադրությունների քարտեզը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

արագությունը, որոնք ոտքով անցնում են մինչև 10^0 թերթության երթուղով, կազմում է 4-5 կմ/ժ, մինչև 20^0 - 2,3-3 կմ/ժ և մինչև 30^0 -1,5-2 կմ/ժ: Լեռնային ճանապարհներին ավտոտրանսպորտի արագությունը լանջերի 10 - 15^0 թերթության դեպքում կազմում է մոտ 8-12 կմ/ժ, իսկ 15 - 20^0 թերթության դեպքում 5-8 կմ/ժ:

Լեռնային երկրների ռելիեֆի ամենաբնորոշ և առավել տարածված տարրը լեռնալանջերն են, որոնք տարբերվում են ինչպես իրենց ձևով (ուղիղ, աստիճանաձև, գոգավոր, ուռուցիկ, քարափային), այնպես էլ թերթության ու մասնատվածության աստիճաններով և կողմնադրությամբ¹²⁶:



Նկար 13. Լանջերի ձևաբանական դասակարգումն ըստ Ի. Ս. Շչուկինի¹²⁷

Ռուս ճանաչված գեոմորֆոլոգ Ի. Ս. Շչուկինը լեռնալանջերն ըստ ձևի բաժանում է չորս խմբի՝ ա) ուղիղ լանջեր, բ) գոգավոր (ներսընկած) լանջեր, գ) ուռուցիկ լանջեր դ) աստիճանաձև լանջեր (նկար 13):

¹²⁶ Зограбян Л.Н., Орография Армянского нагорья, -Ер.: 1979, -119 с.

¹²⁷ Щукин И.С., Общая геоморфология, -М.: из-во Моск. ун-та, 1964, т. 2, -149 с.

Գիշերը



Ցերեկը



Նկար 14. Արաքսի հովիտը Ագարակ ավանի մոտ՝ նույն տեղանքի լուսանկարը գիշերը և ցերեկը, գիշերը լեռնագագաթին տեղակայված օբյեկտները հեշտ պրոյեկտվում են երկնքի ֆոնի վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մարտական գործողությունների պլանավորման ժամանակ նշված լեռնալանջերից յուրաքանչյուրին պետք է առանձին մոտեցում ցուցաբերել, հատկապես մարտական կատարն ընտրելիս՝ ա) և բ) լեռնալանջերի ձևերի դեպքում մարտական կատարը ընտրվում է տեղագրական կատարին ավելի մոտ, որտեղից ավելի լավ տեսարան է բացվում լանջն ի վար, իսկ զորքերը և մարտական տեխնիկան հակառակորդի կողմից չեն պրոյեկտվում երկնքի ֆոնի վրա (Նկար 14): Գ) և դ) ձևի լանջերում մարտական կատարը ավելի է հեռացվում տեղագրական կատարից, այն տեղափոխվում է լանջն ի վար այնքան՝ որպեսզի մարտական դիրքեր զբաղեցրած անձնակազմի համար հնարավորություն ստեղծվի մինչև լանջի ստորոտը հսկողության տակ պահել:

Տեղանքի թեքությունը ռելիեֆը բնութագրող կարևոր թվային ցուցանիշներից մեկն է: Ստացված թեքությունների քարտեզների վերլուծությունը ցույց է տալիս, որ ռելիեֆի տարբեր ձևերի համար բնորոշ թեքություններ են հանդիսանում՝ մինչև 3° –ը՝ միջլեռնային գոգավորության հատակներում, 3-7°-ը՝ սարավանդներում, 7-15° –ը՝ լեռնավահաններում, 15°-ից ավելի՝ ծալքաբեկորային լեռնաշղթաներում (Աղյուսակ 5):

Լանջերի կողմնադրությունների աղյուսակում հիմնականում տրված են մեզոդիրքադրությունները, որոնք հանրապետության տարածքում արտահայտվում են հետևյալ կերպ՝ լուսավոր կամ տաք լանջերը (հարավային, հարավարևելյան, հարավարևմտյան), որտեղ ինտենսիվ զարգանում են էրոզիոն պրոցեսները, կազմում են հանրապետության տարածքի 32.1%, ստվերոտ կամ ցուրտ լանջերը՝ (հյուսիսային, հյուսիսարևմտյան հյուսիսարևելյան) տարածքի 30.7%-ը, իսկ միջանկյալ (արևելյան, արևմտյան) կամ բարեխառն կլիմայով աչքի ընկնող լանջերը՝ տարածքի 14.7%-ը (Աղյուսակ 6):

Ռազմական տեսակետից Հայաստանի և Ադրբեջանի բուն տարածքի հետ սահմանային շրջաններում առավել անվտանգ

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

են համարվում՝ արևմտյան, հարավարևմտյան և հյուսիսարևմտյան լեռնալանջերը (Քարտեզ 5): Նախիջևանի հետ սահմանամերձ շջաններում՝ հյուսիսային, արևելյան և հարավարևելյան լանջերը:

Աղյուսակ 5.

Մակերևույթի թեքությունների տեղաբաշխումը ՀՀ տարածքում¹²⁸

Մակերևույթի թեքությունները (աստիճաններով)	Տարածքը (կմ ²)	%
0-3	4950	17,3
3-5	3248	11,4
5-10	6636	23,3
10-15	4819	16,9
15-20	3290	11,6
20-30	4081	14,3
30 և ավելի	1465	5,2

Ռելիեֆի ձևաչափական առանձնահատկությունների վերլուծությունը հնարավորություն է տալիս բացահայտելու նաև նրա բնույթը և ձևավորումը, հատկապես ձևաբանական տարրերին վերաբերող հարցերում:

2016 թ. ապրիլյան պատերազմի ժամանակ ադրբեջանական ուժերը կենտրոնացվել էին երկու հիմնական ուղղություններում, որտեղ տարածքն ընդհանուր առմամբ հարթավայրային էր և տանկային ուժերով հիմնական հարվածների համար բարենպաստ: Դրանից առաջինը

¹²⁸ ՀՀ Ազգային ատլաս, Լ.Հ.Վալեսյանի խմբ. հատոր Ա, -Եր.:2007, էջ 43:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մարտակերտ-Ակնա ուղղությունն էր, իսկ երկրորդը մերձարաքսյան հովիտն էր¹²⁹:

Աղյուսակ 6.

Լանջերի կողմնադրությունները ըստ զբաղեցրած մակերեսների¹³⁰

Կողմնադրությունը	Մակերեսը (քկմ)	%	Կողմնադրությունը	Մակերեսը (քկմ)	%
Հյուսիսային	2975.0	10.5	Հյուսիսարևելյան	3455.8	12.2
Հարավային	3297.6	11.6	Հյուսիսարևմտյան	2280.5	8.0
Արևելյան	1734.3	6.1	Հարավարևելյան	2827.9	10.0
Արևմտյան	2454.5	8.6	Հարավարևմտյան	2980.6	10.5

4.2 Ֆիզիկաաշխարհագրական դիրքը

Ցամաքի տարածքի դիրքը, չափսերը և ձևը ամբողջ պատմության ընթացքում, սկսած Հին քարեդարից մինչև մեր օրերը, էականորեն ազդում են տվյալ երկրի ինչպես ամբողջ տնտեսության, այնպես էլ զինված ուժերի հնարավորությունների, սահմանափակումների և խոցելիության վրա¹³¹ : Հատկապես կարևորվում էր պետությունների դեպի բաց ծով ելքի առկայությունը:

Ցանկացած երկրի ընդհանուր ֆիզիկաաշխարհագրական բնութագրումը սկսվում է կոորդինատային

¹²⁹ Հովհաննիսյան Ա.Կ., Ապրիլյան պատերազմի ռազմավարական վերլուծություն, Որոշ նկատառումներ «Ազգ-Բանակ» համակարգում ՀՀ պաշտպանության կատարելագործման լույսով, ՀԲ, -Եր.: 2017, թիվ 1-2, էջ 34-47

¹³⁰ Բաղդասարյան, Ա.Բ. Հայկական ՍՍՀ ֆիզիկական աշխարհագրություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., -Եր.: 1971.-471էջ

¹³¹ Paul Buckholts, Political Geography, -New York, Ronald Press:1966; 93 p.

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

համակարգում այդ երկրի դիրքի նկարագրմամբ՝ նրա ըստ հորիզոնի հիմնական կողմերի ծայրակետերի նշմամբ:

Հայաստանի Հանրապետության տարածքը կազմում է 29,743 հազար քառակուսի կիլոմետր, այն գտնվում է հյուսիսային լայնության 38° 50' - 41° 18' և արևելյան երկայնության 43° 27' - 46° 37' միջև: Հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք նա ձգվում է 360կմ, իսկ ամենալայն մասում՝ արևմուտքից-արևելք 200 կմ: Հայաստանի Հանրապետությունն ուղիղ գծով Կասպից ծովից հեռու է 175 կմ, Սև ծովից՝ 145 կմ, Միջերկրական ծովից 750 կմ, իսկ Պարսից ծոցից մոտ 970 կմ¹³²:

Հայաստանի Հանրապետության ներկայիս տարածքը գտնվում է Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան հատվածում, զբաղեցնում է Կուր-Արաքսյան լեռնային միջագետքի մեծ մասը, որը տարածված է Կովկասյան պարանոցի հարավում:

Պետական սահմանը համարվում է շատ կարևոր գործոն ռազմական աշխարհագրության մեջ: Ինչքան էլ հեշտ հաղթահարելի լինի այն զորքերի անցման համար՝ պատերազմական ժամանակ, և ինչքան էլ այն խախտվի այս կամ այն առիթով խաղաղ ժամանակ, միևնույն է դրա նշանակությունը մնում է հսկայական: Սահմանը հանդիսանում է տվյալ պետության տնտեսական, պետական իրավակարգի, մարդկային փոխհարաբերությունների ձևերի և այլ ինքնիշխան պետության յուրահատուկ առանձնահատկությունների տարանջատման գիծ: Կատարելով մի շարք ռուս ռազմաաշխարհագետների ¹³³ ¹³⁴ «սահման» աշխարհագրական տարրի վերաբերյալ հետազոտությունների արդյունքների վերլուծություն, հանգել ենք սահմանների որոշ

¹³²Зограбян Л.Н., Орография Армянского нагорья, -Ер.: 1979, -119 с.

¹³³ Языков П., Опыт теории военной географии, -СПб, 1838, -107с.

¹³⁴ Снесарев А.Е., Введение в военную географию, -М.: Центриздат 2006, -512 с.

հատկանիշների ուսումնասիրության և գնահատման առավել կարևոր դերակատարությանը: Դրանք են՝

1. սահմանի բնույթը կամ տիպը;
2. սահմանի երկարությունը;
3. սահմանի կոնֆիգուրացիան;
4. սահմանի հեռավորությունն երկրի քաղաքական և տնտեսական կենտրոններից;
5. մերձսահմանային գոտու տեղանքի բնույթը:

Իհարկե սահմանների ստորաբաժանման առաջին կետը պետք է հանդիսանար ցամաքային և ծովային (ջրային) սահմանների առանձնացումը, սակայն ելնելով մեր թեմայում քննարկվող տարածաշրջանի առանձնահատկություններից, այստեղ մենք երկրորդ տիպին չենք անդրադառնա:

Սահմանի բնույթը նկարագրելիս առաջին հերթին հաշվի է առնվում այդ սահմանով սահմանակից հարևան պետության կարևորությամբ, միջազգային և տարածաշրջանային մակարդակներում նրա «կշռով», տնտեսության հզորությամբ, ռազմական բլոկներում մասնակցությամբ, միջպետական հարաբերությունների մակարդակը և այլն: Սահմանի կարևորությունը որոշվում է տվյալ պատմական ժամանակաշրջանում ռազմաքաղաքական իրավիճակի բազմակողմանի գնահատմամբ, միջպետական հարաբերությունների պատմական և ներկա վիճակով, միջազգային բեռնափոխադրումների և էներգակիրների տարանցման ուղիներից հեռու կամ մոտ գտնվելով¹³⁵:

Սահմանի երկարությունն ունի իր և՛ դրական և՛ բացասական կողմերը: Եթե երկար սահմանով սահմանակցում է տնտեսապես հզոր և ռազմավարական հարաբերություններ հաստատած հարևանի հետ, ապա այս դեպքում դա դիտվում է որպես դրական կողմ, իսկ եթե սահմանակից երկրի հետ հարաբերությունները լարված են

¹³⁵ Снесарев А.Е., Введение в военную географию, -М.: Центриздат, 2006,- 512 с.

կամ սառեցված հակամարտության պայմաններում են, ապա այս դեպքում դիտվում է որպես բացասական հանգամանք: Պաշտպանական դիրքերի և ամրաշինությունների կառուցումը, մեծ թվով զինված ուժերի ներգրավումը այդ սահմանների պաշտպանության համար՝ պետությունից պահանջելու են նյութական և ֆինանսական վիթխարի ներդրումներ: Երկար սահմանը նաև ենթադրում է ավելի շատ խոցելի տեղերի առկայություն, դա հնարավորություն է տալիս գործողությունների մեծ մասշտաբ և ստեղծագործ մոտեցում, սակայն այս հնարավորությունները տրվում են նաև հակառակորդին:

Սահմանի կոնֆիգուրացիայի կարևորությունը նշանավորվում է ներսընկած և դուրսընկած անկյուններով, ուռուցիկ և ներսընկած աղեղներով և այլն¹³⁶: Հատկապես կարևորվում է սահմանային այն ձևը, որը ընդհանուր առմամբ, կամ սահմանի մի որոշակի հատվածում հնարավորություն է տալիս, կամ խանգարում է հակառակորդի նկատմամբ ռազմավարական թևանցման և հետագայում լրիվ շրջափակման օպերացիաներ իրականացնելու համար:

Այժմ քննարկենք պետական **սահմանի հեռավորության աստիճանը երկրի քաղաքական և տնտեսական կենտրոններից և դրա ռազմավարական նշանակությունը**: Այս սկզբունքը շատ է կարևորվում հատկապես պաշտպանվող կողմի համար և ինչքան կենսական կարևորության կենտրոնները հեռու լինեն սահմանից, այնքան ավելի հեշտ կլինի կազմակերպել ըստ խորության պաշտպանական բնագծերի տեղակայումը: Հաշվի առնելով սահմաններից համաչափ հեռացվածությունը, ինչպես նաև 1918-1920 թթ. Հայաստանի առաջին հանրապետության ժամանակ մղված ռազմական գործողությունները մեր կողմից կազմվել է ՀՀ ռազմաաշխարհագրական կենտրոնական շրջանի մոտավոր պատկերը

¹³⁶ Языков П., Опыт теории военной географии, -СПб, 1838, -107с

(Քարտեզ 6): Հարձակվող կողմի համար զորքերի բազմակողմանի մատակարարումներն ապահովելու առումով կենսական կենտրոնների մոտիկությունը կարող է դառնալ նույնիսկ վճռորոշ գործոն:

Բոլշևիկյան իշխանությունների կողմից 1921 թ-ի Կարսի պայմանագրով Իգդիրի և Կարսի մարզը քենալական Թուրքիային զիջելով Հայաստանի մայրաքաղաք Երևանը հայտնվեց Թուրքիայի հետ պետական սահմանից ուղիղ գծով ընդամենը քսան կիլոմետր հեռավորության վրա և դադարեց լինել երկրի երկրաչափական կենտրոնում: Սա անշուշտ համարվում է բացասական ռազմաաշխարհագրական գործոն:

Կենտրոնը համարվում է տարածության կարևոր կետ: Ինչ-որ չափով տարածությունը կազմակերպվում է կենտրոնի միջոցով, քանի որ այն որոշում է իրենից հավասարապես հեռացված տարածության սահմանները և նրա հիերարխիկ կառուցվածքը: Աշխարհագրությունում կենտրոնականությունը ունի մի քանի նշանակություն՝ երկրաչափական, ժողովրդագրական, տնտեսական, տրանսպորտային, քաղաքական և կրոնական:¹³⁷

Երկրաչափական կենտրոնը դա տարածքի ֆիզիկական կենտրոնն է, որը որոշվում են երկու մեթոդով.

ա. միջնագծերի կենտրոնի միջոցով՝ երկրի ամենահյուսիսային ու ամենահարավային, ամենաարևելյան ու ամենաարևմտյան կետերի միջին միջօրեականի և միջին զուգահեռականի հատման կետն է:

բ. տվյալ տարածքի մակերևույթի ծանրության կենտրոնը, որը հաշվարկվում է տարածքի բոլոր կետերի դիրքի միջին թվաբանականի միջոցով:

Հայաստանի Հանրապետության աշխարհագրական ծայրակետերի միջին թվաբանականը հաշվարկելով ստանում ենք՝ միջին միջօրեականը, որը հանդիսանում է արևելյան

¹³⁷ Окунев И.Ю. Политическая география, -М.: изд-во. Аспект Пресс, 2019.- с. 355.

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

երկայնության 45°02'24" միջօրեականը, իսկ միջին զուգահեռականը՝ հյուսիսային լայնության 40°04'20" զուգահեռականը:

Քարտեզի վրա անցկացնելով միջին միջօրեականը և միջին զուգահեռականը դրանց հատման կետով ստանում ենք Հայաստանի Հանրապետության աշխարհագրական կենտրոնը: Այն գտնվում է Գեղամա լեռների հյուսիս արևմուտքում՝ 3000մ բարձրության ջրբաժանային հատվածում, Վեդի և Ազատ գետերի ակունքներում:

Նախկինում փորձեր կատարվել է նաև ՀՀ ծանրության կենտրոնի որոշման ուղղությամբ: Հաշվի առնելով այդ ուսումնասիրությունների արդյունքները, ինչպես նաև ՀՀ տնտեսական, տրանսպորտային, ժողովրդագրական, ռազմաքաղաքական տարածքային տեղաբաշխման ներկա վիճակը՝ ապա որպես ՀՀ իրական աշխարհագրական կենտրոն կարելի է համարել երկրաչափական կենտրոնից 36 կմ հյուսիս-արևմուտքում գտնվող Հրազդան քաղաքի կենտրոնական մասը:


Երկրի աշխարհագրական կենտրոնի որոշումը և մակնշումը կարող է ունենալ քաղաքական, տնտեսական (հատկապես զբոսաշրջային), ռազմական և այլ նշանակություններ:

Որպես ասվածի հիմնավորում կարելի է ներկայացնել XIX դարի սկզբի Նապոլեոնի արագ հաղթարշավը արևմտյան Եվրոպայում և այդ ռազմավարության սնանկությունը Ռուսաստանի նկատմամբ, գլխավորապես այն պատճառով, որ կենսական կենտրոնները գտնվում էին սահմաններից մեծ խորության վրա:

Կարևոր նշանակություն ունի **մերձսահմանային գոտու տեղանքի բնույթի մանրակրկիտ հետազոտությունը և գնահատումը**, նրա աշխարհագրական տարրերի՝ լեռներ, ջրային օբյեկտներ, անապատներ, անտառներ, ճահիճների, ռազմական գործողությունների պլանավորման ժամանակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

արդյունավետության և ոչ արդյունավետության տեսակետից¹³⁸: Վերլուծությունը պետք է վեր հանի տեղանքի ուժեղ և թույլ տեղամասերը, իսկ ռազմահինժեներական ծառայությունն ուսումնասիրի դրանց ամրացման աշխատանքների բնույթն ու ծավալը:



Քարտեզ 6. ՀՀ ռազմաաշխարհագրական կենտրոնական շրջանի մոտավոր պատկերը:

Լեռնային երկրների համար կարևոր է լեռնաշղթաների ուղղվածությունը սահմանագծի հետ համեմատած: Հաճախ սահմանային դիրքերի տեղակայման փոխլրացումը և համաչափությունը սահմանակից երկրների միջև կարող է խաղաղ գոյակցման երաշխիք հանդիսանալ:

¹³⁸ Снесарев А.Е., Введение в военную географию, -М.: Центриздат 2006, -512 с.

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

ՀՀ սահմանների ընդհանուր երկարությունը կազմում է մոտ 1262 կմ: Հյուսիսից ՀՀ-ն սահմանակցում է Վրաստանի Հանրապետությանը 165 կմ, արևելքից և հարավ արևմուտքից Ադրբեջանի Հանրապետությանը և նրա կազմի մեջ մտնող Նախիջևանի Ինքնավար Հանրապետությանը 787 կմ (նախկինում 912 կմ), Արցախի Հանրապետության հետ մոտ 290 կմ, հարավից Իրանի Իսլամական Հանրապետությանը 42 կմ, արևմուտքից Թուրքիայի Հանրապետությանը 268 կմ:

Արևմուտքում Թուրքիայի հետ պետական սահմանը հյուսիսում անցնում է Եղնախաղի լեռնավահանի ջրբաժանով, դեպի հարավ այն անցնում է Ախուրյան և Արաքս գետերով ձգվելով մինչև Նախիջևանի Ինքնավար Հանրապետության հետ սահմանը: Նախիջևանի հետ սահմանը (շփման գիծը) սկսվում է Արաքս գետից, այնուհետև Ուրծի լեռնաշղթայի հարավային մասով հասնում Արփա գետի հովիտ, այնուհետև Վայքի և Զանգեզուրի լեռնաշղթաներով տարածվում հարավ մինչև Արաքս գետը: Հարավում Արաքս գետը 42 կմ սահման է հանդիսանում ՀՀ և ԻԻՀ միջև (Նկար 14): 1994 թ. հրադադարից հետո ստեղծված նոր իրավիճակի պայմաններում ՀՀ-ն հարավ-արևելքում սահմանակցում է Արցախի Հանրապետության հետ: Սահմանը հյուսիսում սկսվում է Արևելյան Սևանի լեռնաշղթայի, այնուհետև Սյունիքի բարձրավանդակի ջրբաժանային մասով, Բարգուշատի և Մեղրու լեռնաշղթաների արևելյան ստորոտներով, հարավում հասնելով Արաքսի հովիտ:

Նախկին խորհրդային Ադրբեջանի կազմի մեջ մտնող Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի մեծ կտրտվածություն ունեցող սահմանների ընդհանուր երկարությունը մինչև Արցախյան ազատագրական պայքարի սկիզբը կազմում էր մոտ 360 կմ:


1994 թ. մայիսի 12-ի հրադադարի համաձայնագրից հետո Արցախի Հանրապետության սահմանների ընդհանուր երկարությունը կազմում է 448 կմ, որից Ադրբեջանի հետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

շփման գիծը 230 կմ է, Իրանի Իսլամական Հանրապետության հետ՝ 98 կմ (Արաքս գետով), ՀՀ հետ՝ 290 կմ է:

Այսպիսով 1988թ-ի հետ համեմատած 1994թ-ին Արցախի շփման գիծը Ադրբեջանի հետ կրճատվեց 130 կմ-ով (Քարտեզ 7): Կատարենք զուտ տեսական հաշվարկ: Հաշվի առնելով այն փաստը որ մարտական կանոնադրությամբ գումարտակը պահպանում է 3-5 կմ ճակատային գիծ, ապա այս դեպքում, Արցախի հանրապետության սահմանների բարելավումով մոտ 26 գումարտակ ազատվում է խնդիրների կատարումից:

Ադրբեջանի Հանրապետության հետ ՀՀ սահմանագիծը բավականին բարդ զիգզագներ է կատարում՝ անցնելով բազմաթիվ լեռնաշղթաներով ու հովիտներով: Հյուսիսում այն սկսվում է Պապաքարի լեռնաշղթայի արևելյան լանջերով, Աղստևի հովտով, Հախումի, Տավուշի և Խնձորուտի լեռնաշղթաների արևելյան ստորոտներով, Միափորի, Սևանի և Արևելյան Սևանի լեռնաշղթաների ջրբաժանային մասով մինչև Հինալ լեռ:



Քարտեզ 7. ԼՂԻՄ և Արցախի սահմանները 1988 և 1994թթ

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

Կատարելով Հայաստանի և Ադրբեջանի սահմանագծի պատմական քարտեզների ուսումնասիրություն, հայտնաբերել ենք նաև, որ այն մի քանի հատվածներում տարբերվում է նախնական սահմանագատումից (1921թ.)՝ օրինակ նախկինում Վարդենիսի շրջանին պատկանած Ալ լճերի շրջանը 1935-ական թվականներից հետո քարտեզներում նշվում է որպես Ադրբեջանի տարածք, Արծվաշենը նախկինում միացված է եղել Ճամբարակի շրջանին և այլն: Այս փոփոխությունների վերաբերյալ չհաջողվեց պաշտոնական որևէ տեղեկատվություն հայտնաբերել:

Հայաստանի Հանրապետությունը տիպիկ լեռնային երկիր է, ծովի մակարդակից 1830 մ միջին բարձրությամբ: Ամենացածր կետը՝ 375 մ, գտնվում է Դեբեդ գետի ստորին հոսանքի շրջանում՝ Դեբեդավան գյուղից 3 կմ հյուսիս արևելք, իսկ ամենաբարձր կետը՝ Արագածի գագաթն է 4090 մ: ՀՀ բնական պայմաններում որոշակիորեն արտահայտված են Հայկական լեռնաշխարհի ֆիզիկաաշխարհագրական ընդհանուր առանձնահատկությունները:

Հայկական լեռնաշխարհի առանձնացումն իբրև ֆիզիկաաշխարհագրական ինքնուրույն մարզ¹³⁹ պայմանավորված է մակերևույթի երիտասարդ տեկտոնական ու հրաբխային ձևերի բարդ զուգակցություններով, ինչպես նաև կլիմայական պայմանների ու հողաբուսական ծածկույթի առանձնահատկություններով: Հայկական լեռնաշխարհը հանդիսանում է Ալպ-Հիմալայան գեոսինկլինալային, երիտասարդ լեռնային գոտու մի օղակ:

¹³⁹ Ефремов Ю.В., Передне-Азиатские нагорья (Малоазиатское, Армянское, Иранское) // Арманд Д.Л. и др., «Зарубежная Азия», физическая география, уч. пособие для вузов. – М.: Учпедгиз, 1956, -608 с.

4.3 Տարածքի ձևաբանությունը և երկրաբանական առանձնահատկությունները

Տարածքի երկրաբանական կառուցվածքը ռազմական գործողությունների ժամանակ մեծ կարևորություն է ձեռք բերում հատկապես ինժեներասակրավորական և ճանապարհաշինական աշխատանքների իրականացման ժամանակ: Բացի լանջերի թեքություններից, տարածքի անցունակությունը պայմանավորվում է գրունտների կազմությունից և դրանց ֆիզիկական վիճակից: Գրունտները հիմնականում կազմված են լինում խճից, ավազից և կավից, որոնք տարբերվում են մասնիկների տարբեր մեծություններով՝ որոնք էլ հենց բնորոշում են նրանց ֆիզիկական հատկությունները:

Հայաստանի Հանրապետության ժամանակակից խիստ մասնատված լեռնային ռելիեֆն անցել է զարգացման երկարատև ուղի: Նրա կազմում, ինչպես արդեն նշվել է, մասնակցում են տարբեր հասակի նստվածքային, նստվածքահրաբխածին, հրաբխային զանազան աստիճանի դիսլոկացված, խայտաբղետ լիթոլոգապետրոգրաֆիական կազմ ունեցող ապարների բազմաթիվ շերտախմբեր, որոնք ամփոփված են զարգացման տարբեր առանձնահատկություններով բնութագրվող կառուցվածքաձևաբանական (մորֆոստրուկտուրային) տարրերում:

Հայաստանի Հանրապետության տարածքի մորֆոլոգիական խոշոր տարրերի ձևավորման գործում արտակարգ մեծ դեր է խաղացել ալպիական գետտեկտոնական փուլը, որում առանձնացվում են երեք ենթափուլ՝ վաղալպիական, միջինալպիական և ուշալպիական դարաշրջաններ¹⁴⁰:

¹⁴⁰ Բալյան Ս.Պ., Հայկական ՍՍՀ գեոմորֆոլոգիան, -Եր.: 1986, էջ 9:

Տեղանքի երկրաբանությունը թելադրում է ՀՀ ՁՈւ-ի առաջնագծի ինժեներական կահավորման՝ խրամատներ, կրակակետեր, հակատանկային խրամներ և այլն, աշխատանքների բնույթը: Այսպես, օրինակ, եթե Երասխավան-Սևակավան հատվածում գրունտներն իրենցից ներկայացնում են խճաքարային, ապա Ոսկեպար-Կոթի հատվածում հիմնականում կրաքարային և կավային գրունտներ են:

Հանրապետության մակերևույթը ռելիեֆի բազմազան և տարասեռ ձևերի մի բարդ միակցություն է: Սակայն այդ ձևերը տարածված են ոչ թե անկանոն, պատահական ձևով, այլ ձևաձագումնաբանական ու ձևաբանական տեսակետից որոշակի օրինաչափությամբ և միավորված են որոշակի միավորների մեջ: Հայկական լեռնաշխարհի ռելիեֆի ձևաձագումնաբանական և ձևաբանական տիպերի ուսումնասիրմամբ և դասակարգմամբ զբաղվել են բազմաթիվ հետազոտողներ^{141 142 143}: Խ.Նազարյանի առաջարկած ՀՀ ռելիեֆի ձևաձագումնաբանական տիպերի դասակարգման համալիրային սխեման քառաստիճան է, որոնցից առաջին երկուսը վերաբերում են ռելիեֆի ծագումնաբանական, իսկ մյուս երկուսը՝ ձևաբանական միավորներին: Ռելիեֆի ծագումնաբանական տիպերի այդ խմբերն են¹⁴⁴.

1. Կառուցվածքային էրոզիոն-տեղատարումային ռելիեֆ, տեկտոնական տարրերի ուղղակի արտահայտվածությամբ,

¹⁴¹ Бальян С.П., Структурная геоморфология Армянского нагорья и окаймляющий областей, Ер.: 1969, -389с.

¹⁴² Бойнагрян В.Р. Геоморфология Армянского нагорья, -Ер.: Изд-во ЕГУ, 2016, -650 с.

¹⁴³ Նազարյան Խ.Ե. Լեռնային ռելիեֆը որպես

ֆիզիկաաշխարհագրական առաջնակարգ գործոն (ՀՀ տարածքի օրինակով): -Եր.: «Ձանգակ-97», 2006, -96 էջ:

¹⁴⁴ Նազարյան Խ.Ե. Լեռնային ռելիեֆը որպես

ֆիզիկաաշխարհագրական առաջնակարգ գործոն (ՀՀ տարածքի օրինակով): -Եր.: «Ձանգակ-97», 2006, -96 էջ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

որոնք զգալիորեն ենթարկվել են հողմահարման և տեղատարման: Նմանատիպ ռելիեֆը բնորոշ է Ուրծի, Վայքի, Ծաղկունյաց, Բազումի, Գուգարաց, Սևանի լեռնաշղթաների մեծ մասին, Փամբակի լեռնաշղթայի արևմուտքին և այլն:

2. Տեկտոնահրաբխային և հրաբխաէրոզիոն ռելիեֆ: ՀՀ տարածքի ողջ առանցքային գոտում հիմքի տեկտոնական բարձրացումներն ու ծալքավոր կառույցների զգալի մասը ծածկվել են հրաբխային հզոր հաստույթով և վերածվել տեկտոնահրաբխային լեռնավահանների, հրաբխային առանձին լեռնազանգվածների ու լավային սարավանդների: Վերջիններս արտաձին ուժերի ներգործությամբ ժամանակի ընթացքում տեղ-տեղ ձեռք են բերել հրաբխաէրոզիոն բնույթ: Նմանատիպ ռելիեֆը բնորոշ է Ջավախքի, Եղնախաղի, Արագածի, Գեղամա, Վարդենիսի լեռնավահաններին, Սյունիքի բարձրավանդակին, Արայի, Շարայի, Արմաղանի լեռնազանգվածներին, ինչպես նաև լեռնավահանների շուրջն ու նրանց միջև գտնվող՝ Աշոցքի, Լոռու, Թալինի, Շամիրամի, Կոտայքի, Գորիսի, Եռաբլրի և այլ սարավանդներին:

Հրաբխային գործունեության արդյունքում առաջացած ապարները՝ պեմզա, պեռլիտ, օբսիդիան, բազալտ և այլն, լայնորեն օգտագործում են ոչ միայն շինարարության, այլ տարբեր մշակումների հետևանքով ստացվում են նոր հատկանիշներով նյութեր, որոնք խիստ պահանջարկ ունեն նաև ռազմական արդյունաբերության մեջ: Մասնավորապես պեռլիտի հատուկ ջերմային մշակումից ստացվող նյութը կիրառվում է ծանր դասի զրահաբաճկոնների արտադրության մեջ, որը երեք անգամ ավելի կայուն է, քան մինչ այդ կիրառվող ճենապակին: Բազալտի հատուկ մշակումից ստացվում է հրակայուն թելեր, որոնք նույնպես ունեն կիրառման լայն ոլորտներ:

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

3. Մշակված էրոզիոն-տեղատարումային ռելիեֆ: Կառուցվածքային էրոզիոն-տեղատարումային, ինչպես նաև տեկտոնահրաբխային և հրաբխաէրոզիոն ռելիեֆի տիպերի ու ձևերի կազմում մասնակցում են տարբեր հասակի նստվածքային, նստվածքահրաբխածին, հրաբխային ապարներ, որոնք տարբեր բնակլիմայական պայմաններում ենթարկվել են տարբեր աստիճանի հողմնահարման և տեղատարման՝ առաջացնելով մշակված էրոզիոն-տեղատարումային ռելիեֆ: Այս խմբի ռելիեֆի տիպերը բնորոշ են Շիրակի, Արեգունու, Արևելյան Սևանի, Խուստուփ-Կատարի, Վիրահայոց, Մժկատարի լեռներին, Միափորի, Բազումի, Փամբակի լեռնաշղթաների մի շարք բազուկներին և այլն:

4. Կուտակումային ռելիեֆ: Լեռներից, բարձրադիր սարավանդներից հողմնահարված փխրաբեկոր գոյացությունները տեղատարվել ու կուտակվել են միջլեռնային գոգավորություններում, առաջացնելով հարթավայրեր՝ կուտակումային ռելիեֆ: Այս տեսակետից հայտնի են Արարատյան, Շիրակի, Ապարանի, Վերին Փամբակի, Տաշիրի և այլ դաշտերը¹⁴⁵:

Գրունտների ֆիզիկական վիճակը և նրանցում քարերի առկայությունը ազդում է տարբեր զինատեսակների և նրանց տեղափոխման միջոցների կիրառման տեխնիկական բնութագրերի վրա: Օրինակ՝ քարային ապարներն ու խճաքարային տարածքները մեծացնում են արկերի և ականների խոցման գոտին՝ իրենց բեկորներով մեծացնելով խոցման խտությունը:

Ավազային գրունտներն ընդհակառակը պակասեցնում են հրետանային միջոցների խոցման հնարավորությունը:

¹⁴⁵ Նազարյան Խ.Ե. Լեռնային ռելիեֆը որպես ֆիզիկաաշխարհագրական առաջնակարգ գործոն (ՀՀ տարածքի օրինակով): -Եր.: «Ձանգակ-97», 2006, -96 էջ:

Արձակված արկերը մեծ կինետիկ էներգիայով խրվում են փափուկ գրունտի մեջ, այնուհետև տեղի է ունենում պայթյունը, որի ժամանակ բեկորների մեծ մասը մարվում է գրունտի կողմից, իսկ պայթյունի մնացած բեկորները ծագարածև ուղղվում են երկինք, քիչ վնաս հասցնելով մոտակայքում տեղակայված զինծառայողներին:

Հրամանատարների կողմից վաղորոք առաջնագծի այնպիսի կահավորումը, երբ դիրքերի դիմաց լինեն փափուկ գրունտներ, որոշակիորեն կապահովի անձնակազմը բեկորային խոցումից:

Ռելիեֆի ծագումնաբանական խմբերը մշտապես ենթակա են ներքին ու արտաքին պրոցեսների ներգործությանը: Այդ ներգործությունն իրենց վրա կրում են տարբեր ապարաշերտերից բաղկացած տարահասակ կառույցները, որոնց տեսակն ու կազմը որոշակի դեր են խաղում ռելիեֆի ձևերի և տիպերի, հետևաբար նաև էկոլոգագեոմորֆոլոգիական իրադրության ձևավորման գործում:

ՀՀ տարածքի մակերևույթի տեղատարման ոլորտում, ձևաբանական տեսակետից, առանձնացնում են ռելիեֆի բարձր լեռնային (2500-2800 մ վեր և ընդգրկում ՀՀ տարածքի 1/6-ը), միջին բարձրության լեռների (1500-ից 2500-2800 մ բարձրությունները և գրավում ՀՀ տարածքի կեսը) ու ցածր լեռների գոտիներ (մինչև 1500 մ բարձրությունները և զբաղեցնում ՀՀ տարածքի մոտ 20 %-ը), իսկ կուտակումային պրոցեսների տիրապետման ոլորտում՝ միջլեռնային հարթավայրեր¹⁴⁶:

Ինժեներական ծառայություններն, որոնց պարտականությունների մեջ է մտնում նաև ճանապարհների և թիկունքային ենթակառուցվածքի կահավորումը խիստ կարիք են զգում մոտակայքում խճաքարային պաշարների հայտնաբերման:

¹⁴⁶Բալյան Ս.Պ., Հայկական ՍՍՀ գեոմորֆոլոգիան, -Եր.: 1986, -239 էջ:

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ


Որով հնարավոր կլինի և ճանապարհների և պահեստային տարածքների խճապատումը:

Գրունտների ֆիզիկաքիմիական հատկանիշների, խոնավացման պայմանների, շերտերի դասավորության ուսումնասիրությունը հնարավորություն կտա՝ ինչպես բարելավելու և արդյունավետ դարձնելու ինժեներասակրավորական աշխատանքները, այնպես էլ կարող է հավաստի տվյալներ տրամադրել ռազմական սարքավորումներ նախագծող և արտադրող ձեռնարկություններին:


Բարձրլեռնային շրջաններում ամռանը խմելու ջրով ապահովումը նույնպես կարևոր խնդիրներից է, քանի որ աղբյուրները մնում են ավելի ցածր նիշերի վրա: Այս խնդրի լուծման տարբերակներից մեկը մեր կողմից առաջարկվող կոնդենսացիոն աղբյուրի կառուցումն է, որը հիմնված է օդում եղած խոնավության խտացման երևույթի վրա (նկար 15):

Այս առումով առաջարկում ենք բարձրլեռնային տեղամասերի թամբոցային հատվածներում, որտեղ առկա են մշտական փչող լեռնահովտային քամիները, կառուցել կոնդենսացիոն աղբյուրներ, որոնք ջուր կմատակարարեն հենակետերին:

Ստորև ներկայացնում ենք պարզագույն կոնդենսացիոն աղբյուրի սխեման:



ա) ընդհանուր տեսքը



բ) կտրվածքը

Նկար 15. Կոնդենսացիոն աղբյուրի սխեման¹⁴⁷:

1. մշտական փչող քամի,
2. խճաքարային լիցք,
3. ջրամերժ շերտ,
4. դույլ կոնդենսացիոն ջուրը հավաքելու համար,
5. բաց գույնի սալիկներ խճաքարի տաքացումը կանխելու համար:

4.4 Կլիմայական և օդերևութաբանական առանձնահատկությունները

Ռազմական տեխնիկայի և սարքավորումների շահագործման և սպասարկման համար շատ կարևոր գործոն է ռազմական գործողությունների մարտաբեմերի օդի առավելագույն և նվազագույն ջերմաստիճանների, բացարձակ և հարաբերական խոնավությունների, տեղումների քանակների և տվյալ տարածքի կլիման բնութագրող այլ ցուցանիշների իմացությունը¹⁴⁸: Սարքավորումների և տեխնիկայի

¹⁴⁷ Սայադյան Համ. Յ. Գեղամա և Վարդենիսի հրաբխային բարձրավանդակներում ընթացող կոնդենսացիոն պրոցեսները, ջրաքանակների հաշվարկը և օգտագործման հնարավորությունները, Ագրոգիտություն ամսագիր, թիվ 7 1999, - Եր.: Ագրոպրես, 1999, էջ 681-688:

¹⁴⁸ Աբրահամյան Մ. Ա., Լեռնային պայմաններում տեղային պատերազմների վարման եղանակները (Աֆղանական և Չեչենական պատերազմների օրինակով), ՀԲ, 1999. 4 (22), էջ 10-18

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

շահագործման հետ կապված մեծ խնդիրներ են առաջանում արդեն - 23⁰ C ջերմաստիճանում և նրա ամեն աստիճան իջնելիս խնդիրները բարդանում են՝

- քուլկային նյութերը դառնում են ավելի պինդ,
- մետաղները կորցնում են ամրությունը,
- ռետինատեխնիկական պարագաները կորցնում են իրենց էլաստիկությունը,
- պլաստմասսայից և կերամիկայից պատրաստված առարկաները դառնում են պակաս ճկուն,
- կուտակային մարտկոցների արդյունավետությունը կտրուկ ընկնում է,
- վառելիքը կրում է որոշակի որակական փոփոխություններ,
- ապակին ճաքում է կտրուկ տաքացումից,
- բաց մեկուսիչները կորցնում են իրենց հատկությունը,
- մեծանում է ստատիկ էլեկտրականությունը,
- չափիչ սարքերի և էլեկտրոնիկայի աշխատանքում խաթարումներ են առաջանում¹⁴⁹:

Հայկական լեռնաշխարհը կլիմայական հակադրությունների երկիր է, անգամ ամենափոքր տարածությունների վրա նկատվում են կլիմայի զգալի տարբերություններ: Այսպես, օրինակ՝ Արարատյան տոթակեզ դաշտը Մասիսի հավերժական ձյունով և սառցադաշտերով ծածկված գագաթից միայն 40-50 կմ է անջատում: Հարթավայրերում նման հակադրությունները հնարավոր են միայն հազարավոր կիլոմետրերի վրա: Հայաստանի Հանրապետությունը զբաղեցնելով Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան մի փոքր մասը, բարդ լեռնային ռելիեֆի պատճառով նույնպես աչքի է ընկնում կլիմայի բազմազանությամբ:

Չնայած այն հանգամանքին, որ Հայաստանի Հանրապետությունն ունի մերձարևադարձային զոնային հատուկ,

¹⁴⁹ Колинз Дж. М., Военная география для профессионалов и не профессионалов, -М.: Научная книга, 2005, -568 с.

արևոտ, չոր ցամաքային կլիմա, որը սակայն, բարդ լեռնային ռելիեֆի պայմաններում զգալիորեն փոփոխվում է: Չնայած ընդհանուր չորությանն ու ցամաքայնությանը, այնուամենայնիվ, ռելիեֆի բարենպաստ պայմանների դեպքում, Փոքր Կովկասի լեռնաշղթաների հողմահայաց լանջերին և Արաքսի գոգավորության այն մասերում, ուր թափանցում են խոնավ օդային զանգվածները, խոնավության հաշվեկշիռը նպաստել է անտառային բուսականության զարգացման համար¹⁵⁰:

«Վ տարածքը գտնվում է մերձարևադարձային գոտուն հատուկ արևմտյան օդային հոսանքների ազդեցության տակ: Տարվա տաք կեսին մերձարևադարձային օդային զանգվածները տարածվում են դեպի հյուսիս, որի հետևանքով փոքրանում է ջերմաստիճանային տարբերությունները բարձր և ցածր լայնությունների միջև և թուլանում օդային զանգվածների շրջանառությունը միջօրեականի ուղղությամբ:

Ամռանը «Վ տարածքը գտնվում է Մերձավոր արևելքում գոյացող ցածր ճնշման դաշտում, որը սկսվում է ձևավորվել ապրիլին և ցայտուն արտահայտվում է հուլիս ամսին:

Ցածր ճնշման այդ շրջանի ձևավորման հետ միասին մթնոլորտի շրջանառությունը թուլանում է: Ջարգանում են տեղական պրոցեսները՝ կոնվեկցիան, լեռնահովտային քամիները և այլն: Ուժեղանում են հարավային և հարավարևելյան հոսանքները մինչև մթնոլորտի 3-4 կմ բարձրություններում և միայն 5 կմ-ից սկսած, գերակշռող են հանդիսանում արևմտյան հոսանքները¹⁵¹:

Իմանալով Հայկական լեռնաշխարհում լեռնահովտային քամիների ուղղություններն ու արագությունները, կարելի է կանխատեսել ամառվա ընթացքում շփման գծում հրդեհների տարածման ուղղությունը և արագությունը: Լեռնահովտային քամիներն առավոտյան փչում են հովիտներից դեպի լեռներ,

¹⁵⁰ Багдасарян А.Б., Климат Армянской ССР, -Ер.: 1958, -140с.

¹⁵¹ Багдасарян А.Б., Карта вертикальных климатических зон Армянской ССР//ДАН АрмССР, -Ер.: 1956, 22,4, с. 165-169.

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

իսկ երեկոյան լեռներից դեպի հովիտներ, այս հանգամանքը հաշվի առնելով հնարավոր կլինի որոշ չափով վերահսկել շփման գծում արձակած կրակոցներից հաճախակի դարձած հրդեհների տարածումը:

Քամիների արագության և ուղղության վերաբերյալ ճշգրիտ տվյալները անհրաժեշտ են հատկապես դիպուկահարների և հրետանավորների համար որպեսզի մեծ հեռավորություններում ճիշտ հաշվարկվի թիրախների խոցման համար արվող նշանոցային ուղղումները:

Տարվա ցուրտ կեսին մթնոլորտային շրջանառությունը հիմնականում պայմանավորված է մեկ կողմից Հյուսիսային Ատլանտիկայում զարգացող ցիկլոնների գործունեությամբ, մյուս կողմից՝ բարձր ճնշման այն մարզով, որը գոյանում է Կենտրոնական Ասիայում: Ավելի փոքր ճնշումային համակարգերից կարևոր նշանակություն են ստանում Միջերկրական և Սև ծովերի շրջաններում գոյացող ցիկլոնները:

Ռազմական ավիացիայի թռիչքների օդերևութաբանական առաջնային կարևորության տարրերից է ամպերի ստորին սահմանների բարձրությունների որոշումը ¹⁵² : Դրանց վերաբերյալ բավարար հավաստի կանխատեսումներ անելու համար անհրաժեշտ է թռիչքների իրականացման շրջաններում կամ թռիչքուղիներում, տեղական ֆիզիկաաշխարհագրական պայմանների հաշվառմամբ մանրակրկիտ կերպով ուսումնասիրել ընդհանուր օդերևութաբանական իրավիճակը, ճնշման դաշտերի, օդային զանգվածների և մթնոլորտային ճակատների տեսակները, դրանց շարժման ուղղությունները, արագությունները, զարգացումները, գործնականում դիտվող եղանակային պայմանները, գետնամերձ շերտում և ազատ մթնոլորտում քամիների ուղղություններն ու արագությունները: Ցածր ամպամածությունը ավիացիայի

¹⁵² Боготкин О.Г., Информационно-справочная книга авиационного метеоролога, Книга 1, -СПб, 2010, с. 110;

համար այն գլխավոր օդերևութաբանական տարրերից է, որի միջոցով որոշվում է թռիչքի բարդության աստիճանը¹⁵³:

Ռազմաաշխարհագրական տեսակետից՝ հատկապես ավիացիայի և անօդաչու թռչող սարքերի գործունեության համար կարևոր կլիմայական ցուցանիշ է նաև անարև օրերի թիվը, որը ամպամածության հետ կապված երևույթ է: Առավելագույն թվով անարև օրեր (9 – 12 օր) լինում են ձմռան ամիսներին, երբ ամպամածությունն ամենուրեք մեծ է, նվազագույնը՝ հուլիս – օգոստոսին, երբ շատ տեղեղում երկու ամիս անընդհատ անարև օրեր չեն լինում: ՀՀ-ում տարվա կտրվածքով ամենաշատ անարև օրերի քանակը գրանցված է Իջևանում (64 օր), նվազագույնը՝ Սևանա թերակղզում (19 օր):

Հայաստանի տարածքը տիպիկ լեռնային երկիր է և նման բարդ ռելիեֆային պայմանները չափազանց մեծ ազդեցություն ունեն տարածքում եղանակակլիմայական պայմանների ձևավորման, բարիկական համակարգերի ու մթնոլորտային ճակատների տրանսֆորմացիաների վրա: Վերջիններս էլ իրենց հերթին ազդեցություն են ունենում այստեղ, հատկապես ցածր բարձրությունների վրա իրականացվող ավիացիայի թռիչքների կազմակերպման և անվտանգության ապահովման վրա: Համաձայն ավիացիոն փաստաթղթերի՝ ցածր թռիչքներ են համարվում գետնի մակերևույթից 100-ից մինչև 1000 մ բարձրությունների վրա իրականացվող թռիչքները¹⁵⁴: Այս թռիչքների վրա անմիջականորեն ազդեցություն ունեն երկրամերձ շերտում դիտվող եղանակակլիմայական պայմանները, որոնք առավել բարդանում են լեռնային պայմաններում: Այս բարձրությունների վրա հիմնականում

¹⁵³ Եփրեմյան Մ.Վ., Մելքոնյան Հ.Ա., Ցածր ամպամածության կանխատեսումը եղանակագիտական-վիճակագրական մեթոդով («Էրեբունի» օդանավակայանի օրինակով), ՀՔ, 2014. թիվ 3-4, էջ 203-209:

¹⁵⁴ Руководство по авиационной метеорологии, Международная организация гражданской авиации-ICAO, Изд. 11, 2010, -174 с.

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

իրականացվում են ՀՀ ռազմական ավիացիայի և քաղաքացիական ավիացիայի առանձին թռիչքներ:

Համաձայն ավիացիայում ընդունված չափորոշիչների, կախված օդերևութաբանական պայմաններից, առանձնացվում են թռիչքների բարդության աստիճանի որոշման հետևյալ դասակարգումները¹⁵⁵.

1. «ոչ թռիչքային եղանակներ», դրանք այն եղանակային պայմաններն են, երբ օդանավակայանի շրջանում, առանձին թռիչքային շրջանում կամ ըստ թռիչքուղու, դիտվում են ավիացիայի համար վտանգավոր մեկ կամ մի քանի երևույթներ, որոնց դեպքում անվտանգ թռիչքի իրականացումն անհնար է,

2. «բարդ օդերևութաբանական պայմաններ», դրանք եղանակային այն պայմաններն են, երբ թռիչքները սահմանափակվում կամ առանձին դեպքերում դադարեցվում են: Եղանակային նման պայմանները վերաբերում են հիմնականում ամպամածության ստորին մակերևույթների բարձրություններին, հորիզոնական սահմանափակ տեսանելիությանը և առանձին դեպքերում նաև ուժեղ քամիներին,

3. «եղանակի նվազագույն» պայմաններ, դրանք եղանակային այն պայմաններն են երբ ցածր ամպամածության և հորիզոնական սահմանափակ տեսանելիության արժեքները գտնվում են տվյալ թռիչքի համար նվազագույն սահմանային թույլատրելի տիրույթում, որոնց դեպքում դեռևս կարող են

¹⁵⁵ Եփրեմյան Մ., Լեռնային ռելիեֆի և օդերևութաբանական պայմանների ազդեցության գնահատումը ցածր բարձրություններում իրականացվող թռիչքների վրա (ՀՀ օրինակով), ԵՊՀ ՈւԳԸ գիտական հոդվածների ժողովածու, 2015թ. տարեկան գիտական նստաշրջանի նյութեր, 1.1(11), -եր.: ԵՊՀ հրատ., 2016. էջ 76-80:

իրականացվել օդերևութաբանական առումով անվտանգ թռիչքներ,

4. «պարզ օդերևութաբանական պայմաններ», դրանք եղանակային այն պայմաններն են, որոնց դեպքում չեն դիտվում ավիացիայի համար օդերևութաբանական վտանգավոր երևույթներ, չկան կույտասանձրևային և մինչև 1500 մ բարձրությամբ ամպեր, հորիզոնական տեսանելիությունը սահմանված նվազագույնից ավելի է և այլն¹⁵⁶:

Հայաստանում ավիացիոն եղանակակիրմայական պայմանները գարուն–ամառ ժամանակահատվածում հատկապես անկայուն ու բարդ են պայմանավորված ներզանգվածային բնույթի ամպամածությամբ, կայծակ-ամպրոպով, տուրբուլենտ (մրրկային) բնույթի քամիներով, պողթևումներով, հորդառատ տեղումներով, հաճախ նաև կարկուտով, հետկեսօրյա ժամերին դիտվող լեռնահովտային քամիներով և այլն, իսկ աշուն-ձմեռ ժամանակահատվածն էլ աչքի է ընկնում ցածր ամպամածության, մառախուղների, հորիզոնական սահմանափակ տեսանելիության, սառցակալման երևույթներով: Այսինքն՝ այստեղ ամբողջ տարին դիտվում են օդերևութաբանական իրավիճակներ, որոնք թռիչքների համար ստեղծում են տարբեր բարդության եղանակային պայմաններ¹⁵⁷:

ՀՀ ՊՆ իրավասու մարմինների կողմից իրականացված «2016 թ. ապրիլյան պատերազմի պատճառների վերլուծական» - ում նշվում է, որ ադրբեջանական կողմի պատերազմի սկսման ժամկետի ընտրման դրդապատճառներից մեկն էլ

¹⁵⁶Եփրեմյան Մ., Լեռնային ռելիեֆի և օդերևութաբանական պայմանների ազդեցության գնահատումը ցածր բարձրություններում իրականացվող թռիչքների վրա (ՀՀ օրինակով), ԵՊՀ ՈւԳԸ գիտական հոդվածների ժողովածու, 2015թ. տարեկան գիտական նստաշրջանի նյութեր, 1.1(11), -Եր.: ԵՊՀ հրատ., 2016. էջ 76-80 :

¹⁵⁷ նույն տեղում :

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

եղել է եղանակային պայմանները: Մասնավորապես ապրիլի սկզբին եղանակները Արցախում և Ադրբեջանում չոր էին, գետնի ամրությունը զրահատեխնիկայի կիրառման համար բավարար էր: Ձյուն կար միայն լեռնային հատվածներում, իսկ հատկապես Սոթք-Քարվաճառում մարտական գործողությունների համար կարող էին լինել եղանակով պայմանավորված բարդություններ: Այս, ինչպես նաև Սոթք-Քարվաճառում ադրբեջանական ստորաբաժանումների դիվերսիաների հետևանքով հակամարտող երկու կողմերի համար էլ հնարավոր խոչընդոտների պատճառով այս տարածքը դուրս մնաց Ադրբեջանի ԶՈւ-ի հարձակման հիմնական ուղղություններից¹⁵⁸:

ՀՀ-ում կլիմայական եղանակները հիմնականում համընկնում են տարվա եղանակներին: Ճառագայթային հաշվեկշիռը ձմռանը բացասական է, որի հետևանքով տեղումների զգալի մասը կազմում է ձյունը, առաջացնելով բավական հզոր ձյունածածկույթ:

Տեղումների տարեկան միջին քանակը 600-700 մմ է և տարվա ընթացքում բաշխվում է համեմատաբար հավասարաչափ, միայն ամռանը բույսերի վեգետացիան լրացուցիչ որոշ խոնավության կարիք է զգում:

Տարվա եղանակների փոփոխման ժամկետների հստակ իմացությունը սպառազինության և տեխնիկայի շահագործման պատասխանատուներին անհրաժեշտ է դրանց ձմեռային և ամառային ժամանակաշրջանների շահագործման նախապատրաստելու համար: Այն անհրաժեշտ է նաև անձնակազմի ձմեռային և ամառային համազգեստի անցնելու ժամկետները՝ ըստ կայագրորների, ճշգրտելու համար:

¹⁵⁸ Հովհաննիսյան Ա.Կ., Ապրիլյան պատերազմի ռազմավարական վերլուծություն, Որոշ նկատառումներ «Ազգ-Քանակ» համակարգում ՀՀ պաշտպանության կատարելագործման լույսով, «ՀԲ», -եր.: 2017, թիվ. 1-2, էջ 34-47

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ինչպես հայտնի է՝ տարածքի ռելիեֆի և կլիմայի միջև գոյություն ունի բարդ փոխհարաբերություն: Այսպես, ըստ բարձրության աճում է տեղումների քանակը (տարեկան տեղումների քանակը Երասխում՝ 205 մմ, Արագած բ/լ՝ 1065 մմ), նվազում ջերմաստիճանը (տարեկան միջին ջերմաստիճանը Մեղրիում՝ 14°C, Արագած բ/լ՝ -2.7°C), փոխվում արեգակնային ճառագայթման ինտենսիվությունը (հունիսին ուղղահայաց մակերևույթին Երևանում հասնում է 1.4 կալ/սմ², Արագածի գագաթամերձ մասում՝ 1.64 կալ/սմ²) և այլն: Ռելիեֆի մասնատման խորությունը որոշում է ջերմաստիճանների բաշխումն ըստ բարձրության որոշակի ինտերվալներով, և համապատասխանաբար ազդում գետնամերձ օդի և հողագրունտի ջերմաստիճանների օրական և սեզոնային անկանոնությունների տարածական բաշխման վրա:

Ռազմական տեխնիկայի և սարքավորումների անխափան շահագործման համար հատկապես կարևորվում են ՀՀ տարածքում բացարձակ առավելագույն և բացարձակ նվազագույն ջերմաստիճանները և դրանց գրանցման վայրերը¹⁵⁹: Այս ցուցանիշները համադրելով տվյալ սարքավորման շահագործման ջերմաստիճանային սահմանափակումների հետ կարող ենք եզրակացություն կազմել դրանց արդյունավետության վերաբերյալ: Բազմամյա օդերևութաբանական հետազոտությունների արդյունքների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ՀՀ-ում առավելագույն ջերմաստիճանը գրանցվել է 42⁰ սովերում Երևան, Երասխ, Մեղրի, իսկ օդի տարեկան նվազագույն ջերմաստիճանը գրանցված է Շիրակի մարզի Պաղակն կայանում - 46⁰ (Աշոցքի սարահարթ): Այսպիսով հանրապետությունում առավելագույն և նվազագույն ջերմաստիճանների միջև եղած տարբերությունը կազմում է 88⁰, ինչն իր վիթխարի ազդեցությունն է թողնում, և ջերմային

¹⁵⁹ Mountain Operations, FM 90-6. Department of the Army, Washington, DC, 30 June 1980. p.3-1 to 3-37.

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

Էրոզիայի ինտենսիվության վրա և այդ պայմաններում շահագործվող տեխնիկայի ու սարքավորումների վրա:

Մթնոլորտային տեղումները հանդիսանում են կլիմայի հիմնական տարրերից մեկը, որոնք ձևավորում են ջրի մակերևութային և ստորգետնյա հոսքերը: Վերջիններս էլ իրենց հերթին պայմանավորում են էրոզիոն-տեղատարումային գործընթացները:

Հանրապետության տարածքում տեղումների տարածական բաշխման վրա հատկապես մեծ ազդեցություն են թողնում ներթափանցող օդային զանգվածների նկատմամբ լեռնաշղթաների դիրքը, միջլեռնային գոգավորությունների բացվածությունը, լեռնալանջերի կողմնադրությունները և այլն: Այսպես հանրապետության հյուսիսարևելյան և հարավարևելյան շրջաններում եզրային լեռնաշղթաները Կասպից ծովից եկող խոնավ օդային զանգվածների նկատմամբ տարածվում են գրեթե ուղղահայաց, որի արդյունքում առատ տեղումներ են առաջանում լեռների հողմակողմ լանջերին, իսկ դեպի հանրապետության խորքը թափանցում են խոնավագուրկ օդային զանգվածները:

4.5 Ջրային ռեսուրսները և տարածքի ջրագրական առանձնահատկությունները

Հայաստանի Հանրապետության ջրային ռեսուրսները ձևավորվում են հանրապետության տարածքում և հարուստ չէ ներքին ջրավազաններով: Միակ նշանակալի ջրավազանը Սևանա լիճն է, որը, սակայն, խոնավության մատակարարման մեջ աննշան դեր ունի: Սևանի մակերևույթից գոլորշացող խոնավության մեծ մասը արևմտյան օդային հոսանքների միջոցով տարվում է հանրապետության սահմաններից դուրս:

Հանրապետության գետերի հոսքն ու ջրաբանական պրոցեսներն ունեն մի քանի օրինաչափություններ, որոնք պայմանավորված են կլիմայով և տարածքի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

մասնատվածությամբ: Գետերի սնման հիմնական աղբյուրներն են հանդիսանում ձնահալոցքային, անձրևային և ստորերկրյա ջրերը, ի տարբերություն մյուս լեռնային երկրների, որտեղ գետերի սնման մեջ մեծ դեր ունեն նաև սառցադաշտերը: Հանրապետության լեռները հարավային դիրքի և ցամաքային կլիմայի պատճառով չեն հասնում կլիմայական ձյան գծին՝ 4200 մ բարձրությունը: Իսկ լեռնագրական ձյան գծի սահմանը հանրապետության տարածքում անցնում է 3500-3700 մ և ավելի բարձրություններով: Այդ բարձրություններից վեր ձյունը մշտական պահպանվում է Արագածի լեռնազանգվածի և Զանգեզուրի լեռնաշղթայի վրա ձնաբծերի տեսքով, իսկ երկու փոքր սառցադաշտեր կան միայն Արագած լեռնազանգվածի վրա:

Հանրապետության տարածքի գետերի սնման ռեժիմն արտահայտված է տարեկան մակարդակների մեծ տատանումներով՝ վարարումներով և սակավաջուր սեզոններով: Վարարումները տեղի են ունենում առավելապես գարնանը (ապրիլ - հունիս), երկրորդ թույլ արտահայտված հզորացումը՝ սեպտեմբեր – հոկտեմբերին: Նվազագույն մակարդակները լինում են ամռանը և ծմռանը: Գետերի մակարդակների բարձրացումը, ինչպես արդեն նշվեց վերևում, կապված է անձրևների և ձնհալքի հետ: Գարնանային վարարումների ժամանակ գետերով անցնում է տարեկան հոսքի մոտ 50 – 70 %-ը¹⁶⁰:

Արաքսի գարնանային վարարումը 1918 թ. մայիսին հայ զորքի համար բախտորոշ Սարդարապատի ճակատամարտին, բնության օգնությունն էր հայերին: Վարարած Արաքսն անգործության էր մատնել թուրքական 5-րդ դիվիզիան Արաքսի մյուս ափին՝ Սուրմալույում¹⁶¹:

¹⁶⁰ Մնացականյան Բ.Պ., Հայաստանի ջրային հաշվեկշիռը, Եր.: 2005, -184 էջ:

¹⁶¹ Թուրշյան Հ.Գ., Սարդարապատի հերոսամարտը, Եր.: «Հայաստան» հրատ., 1969, էջ 149-151

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

ՀՀ գետերը պատկանում են Արաքս և Կուր գետերի ավազաններին, որոնք էլ իրենց հերթին թափվում են Կասպից ծովի անհոսք ավազան: Արաքսի ավազանն ընդգրկում է ՀՀ տարածքի 76 %-ը:

ՀՀ-ում գետերի և գետակների ընդհանուր քանակը 1900 – ից ավել է, սակայն դրանց ճնշող մեծամասնությունը փոքր է և ունի մինչև 10 կմ երկարություն: Այդ գետերի թիվը 1500 – ից ավել է: Համեմատաբար մեծ գետերի (10 կմ-ից ավելի երկարությամբ) թիվը հասնում է 203 – ի, որոնց ընդհանուր երկարությունը կազմում է ավելի քան 5000 կիլոմետր¹⁶²:

Լճերը: Հանրապետության տարածքում մեծությամբ և ժողովրդատնտեսական օգտագործման տեսակետից նշանակալից Սևանա և Արփի լճերից բացի կան նաև անհամեմատ փոքր, միայն տեղական նշանակություն ունեցող լճեր:

Սևանա լիճը Կովկասի ամենամեծ լիճն է, միաժամանակ բարձր լեռնային քացրահամ մեծ լճերից մեկն աշխարհում: Լճի ջրի հայելու մակերեսը կազմում է 1279,46 կմ², որը լճի ջրհավաք ավազանի մակերեսի հետ միասին կազմում է հանրապետության տարածքի մոտ 16%-ը: Լճի հայելու բարձրությունը ծովի մակարդակից հավասար է 1900,60 մ, ջրի ծավալը 38.31 մլրդ մ³, լճի առավելագույն խորությունը՝ 83 մ, միջին խորությունը՝ 41.3 մ: Լիճն ունի երկարաձգված տեսք: Նրա երկարությունը մեծ առանցքով Ձկնագետ գետի գետաբերանից (հյուսիս-արևմուտքում) մինչև Ծովակ գյուղը (հարավ-արևելքում) կազմում է 74 կմ, միջին լայնությունը 19.2 կմ, ամենամեծ լայնությունը առանցքի նկատմամբ 32 կմ: Նշված առանցքի երկարությամբ 31-րդ կմ-ում ստորջրյա շեմքով և երկկողմանի՝ Արտանիշի և Նորատուսի թերակղզիներով լիճը բաժանվում է երկու անհավասար

¹⁶² Չիլինգարյան Լ.Ա., Մնացականյան Բ.Պ., Աղաբաբյան Կ.Ա., Թոքմաջյան Հ.Վ. Հայաստանի գետերի ու լճերի ջրագրությունը, - Եր.: 2001, -92 էջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

մասերի, ստանալով համապատասխան անուններ՝ Փոքր Սևան և Մեծ Սևան¹⁶³:

Լիճը գտնվում է մի ընդարձակ գոգավորության մեջ, որը շրջապատված է մոտ 400 կմ ձգվածություն ունեցող լեռնաշղթաներով, որոնց գագաթներից ամենաբարձրը՝ Աժդահակը, լճի մակարդակից բարձր է 1680 մ-ով: Ջրհավաք ավազանի մակերեսը ընդամենը 2.5 անգամ է մեծ լճի մակերեսից:

Ջրհավաք ավազանից լիճ են թափվում 29 գետ և գետակներ (այդ թվում երկու մեծ աղբյուրներ գետի տեսքով), որոնց միջին տարեկան հոսքը կազմում է 26.8 մ³/վրկ: Այդ հոսքի մեծ մասը կազմում է գարնանային վարարումների հոսքը:

Արփի լիճ-ջրամբարը - Գտնվում է Աշոցքի գոգավորության արևմտյան մասում ծովի մակարդակից 2020 մ բարձրության վրա: Լճի գոգավորությունն ունի տեկտոնական ծագում: 1951 թվականից լիճը վերածվել է լիճ-ջրամբարի: Այժմ լիճ - ջրամբարի ամենամեծ խորությունը մոտավորապես 8.0 մ է, ծավալը՝ 105 մլն.մ³, հայելու մակերեսը՝ 22.5 կմ², լճի ջրհավաք ավազանի մակերեսը կազմում է 220 կմ²: Լիճ-ջրամբարի ներհոսքը կանոնավորվում և սնում է Ախուրյան գետը, որը օգտագործվում է ինչպես Շիրակի հարթավայրի, այնպես էլ Ախուրյան գետի միջին հոսանքին հարող շրջանների հողերը ոռոգելու նպատակով¹⁶⁴:

Փոքր լճեր: ՀՀ ջրաբանական ցանցի կարևոր տարրերից են նաև բազմաթիվ լեռնային լճերը, որոնց ծագումն ու ջրաբանական առանձնահատկությունները խիստ տարբեր

¹⁶³ Չիլինգարյան Լ.Ա., Մնացականյան Բ.Պ., Աղաբաբյան Կ.Ա., Թոքմաջյան Հ.Վ. Հայաստանի գետերի ու լճերի ջրագրությունը, - Եր.: 2001, -92 էջ

¹⁶⁴ Չիլինգարյան Լ.Ա., Մնացականյան Բ.Պ., Աղաբաբյան Կ.Ա., Թոքմաջյան Հ.Վ. Հայաստանի գետերի ու լճերի ջրագրությունը, - Եր.: 2001, -92 էջ:

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

են, պայմանավորված ռելիեֆի բարդ կառուցվածքով և երկրաբանական ու ջրաերկրաբանական պայմաններով: Մեծ տարածում ունեն չորրորդական սառցադաշտային և հրաբխային ծագման լճերը:

Հանրապետության տարածքում կան 100-ից ավել փոքր լճեր, որոնց մի մասը տարվա չոր սեզոնին պարբերաբար չորանում են: Փոքր լճերը հիմնականում գտնվում են ծովի մակարդակից 1500 մ-ից ավելի բարձրությունների վրա: Սրանք աննշան չափերի են, միջինը 0.5 - 2.0 կմ², շատերը 0.003-0.005 կմ² մակերես ունեցող լճեր են՝ Ակնա, Մեծամորի, Քարի, Սև և այլն:

Ջրամբարներ: Հայաստանի Հանրապետությունում առկա ջրամբարները հիմնականում կառուցվել են խորհրդային ժամանակաշրջանում, թեպետ փոքր ջրամբարներ եղել են և հնում: Ջրամբարների կառուցման հիմնական նպատակը գետային հոսքի սեզոնային կամ տարեկան վերաբաշխումն է¹⁶⁵:

Հայաստանի Հանրապետությունում գործող ջրամբարները հիմնականում ծառայում են ոռոգման նպատակների համար: Ջրամբարներն ունեն նաև էներգետիկական, ջրամատակարարման, ռելիեաօցիոն, ձկնաբուծական, բնապահպանական նշանակություն: Թվարկած համալիր նշանակության ջրամբարների մի մասը դիմագրավում են նաև սելավներին:

Հայաստանի Հանրապետության գետերի հոսքը կարգավորելու նպատակով կառուցվել է 79 ջրամբար 1067,5 մլն խմ ընդհանուր և 975,7 մլն խմ օգտակար ծավալով (մինչև

¹⁶⁵ Չիլինգարյան Լ.Ա., Մնացականյան Բ.Պ., Աղաբաբյան Կ.Ա., Թոքմաջյան Հ.Վ. Հայաստանի գետերի ու լճերի ջրագրությունը, - Եր.: 2001, -92 էջ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1986-ը) : Դրանցից 27-ի գումարային ծավալը կազմում է ավելի քան 1050 մլն խմ, որից 890 մլն խմ, ոռոգման համար¹⁶⁶:

ՀՀ ամենամեծ ջրամբարը Ախուրյանի ջրամբարն է, ունի 525 մլն. խմ ծավալ, իսկ Արագածի հարավարևմտյան փեշերին կառուցված հեղեղային ջրերից սնվող լճակներից շատերը (Թալիշի, Թալինի, Կաքավաձորի, Բազմաբերդի, Կաթնաղբյուրի) ունեն ընդամենը 10 հազարից մինչև 50 հազար խմ ծավալ¹⁶⁷:

Որտան գետի վրա կառուցված Սպանդարյանի ջրամբարը, որն ունի 257 մլն. խմ ծավալ, մեծությամբ երկրորդն է, բայց հոսքի կանոնավորման տեսակետից յուրահատուկ է: Այն կարող է կատարել հոսքի բազմամյա կարգավորում, քանի որ նրա օգտակար ծավալը մոտ է ջրամբարի հատվածում գետի միջին հոսքի մեծությանը: Մնացած ջրամբարներն ունեն հոսքի տարեկան կամ սեզոնային վերաբաշխմանը համապատասխանող ծավալներ¹⁶⁸:

Թուրքիան՝ իրացնելով դեռ անցած դարի հիսունականներին հաստատված ջրամբարների կառուցման իր ազգային ծրագիրը, Հայաստանի հետ սահմանի երկայնքով մեկ՝ Ախուրյան և Արաքս գետերի վրա ջրամբարներ է կառուցում: Երկու ջրամբարների՝ Շիրիմքուի (1.9 միլիոն խմ) և Բայբուրդի (52 միլիոն խմ) շինարարությունն արդեն ավարտված է¹⁶⁹: Գրեթե ավարտված է Կարսի ջրամբարի շինարարությունը, որի տարողությունը 332 միլիոն խմ է: Եվս մեկի՝ Կարաքուրդի

¹⁶⁶ Չիլինգարյան Լ.Ա., Մնացականյան Բ.Պ., Աղաբաբյան Կ.Ա., Թոքմաջյան Հ.Վ. Հայաստանի գետերի ու լճերի ջրագրությունը, - Եր.: 2001, -92 էջ:

¹⁶⁷ Մնացականյան Բ.Պ., Հայաստանի ջրային հաշվեկշիռը, -Եր.: 2005, -184 էջ:

¹⁶⁸ Չիլինգարյան Լ.Ա., Մնացականյան Բ.Պ., Աղաբաբյան Կ.Ա., Թոքմաջյան Հ.Վ. Հայաստանի գետերի ու լճերի ջրագրությունը, - Եր.: 2001, -92 էջ

¹⁶⁹ <http://en.dsi.gov.tr/>

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

ջրամբարի շինարարությունը ընթացքի մեջ է: Կարսի նահանգում կառուցվող Կարաքուրդի ջրամբարը ունենալու է մոտ 45 մետր խորություն և 1 միլիարդ խմ ջրի տարողություն¹⁷⁰:

Կարաքուրդի ջրամբարը ՀՀ սահմանամերձ շրջաններում կառուցվող ջրամբարներից ամենամեծն է, որտեղ նախատեսվում է կառուցել նաև ջրաէլեկտրակայան: Այն գտնվում է սահմանից ընդամենը 1200 մետր հեռավորության վրա: Այդ 4 ջրամբարների տարողունակությունը միասին վերցրած կազմելու է մոտ 1 միլիարդ 400 միլիոն խմ ջուր (Հայաստանի բոլոր 79 ջրամբարներում միասին վերցրած կուտակվում է մոտ 1 միլիարդ խմ): Սա այն դեպքում, երբ Արաքս գետի ջրային պաշարը տարեկան միջին կտրվածքով կազմում է 2 միլիարդ 500 միլիոն խմ: Այսինքն, ստացվում է, որ Արաքս գետի ջրային պաշարների կեսից ավելին թուրքերը յուրացնելու են: Սա իհարկե լուրջ սպառնալիք է Հայաստանի ազգային անվտանգությանը, քանի որ մեր երկրի հիմնական գյուղատնտեսական շրջան համարվող Արարատյան դաշտին ջրի սղության պատճառով կարող է անապատացում սպառնալ: Մոտավոր հաշվարկներով, հայկական կողմը կարող է զրկվել ներկայումս այդ գետից ստացվող ջրի պաշարների առնվազն կեսից: Ընդ որում, թուրքական կողմում ջրամբարների կառուցումը կարող է սակավաջուր կամ նույնիսկ ջրազուրկ դարձնել ներկայումս գործող ջրամբարները: Այսպես, օրինակ՝ 1981 թվականին կառուցված Ախուրյանի ջրամբարը, որի մոտ 525 միլիոն խորանարդ մետր ջրային պաշարները Հայաստանն ու Թուրքիան 50/50 հարաբերակցությամբ օգտագործում են, կարող է սակավաջուր դառնալ: Բանն այն է, որ Կարսի նահանգում կառուցվող Կարաքուրդի ջրամբարը գտնվում է Ախուրյանի ջրամբարից վերև, և ջրերն այնտեղ ուղղվելու դեպքում կտրուկ կնվազի Ախուրյանի ջրամբարում կուտակվող ջրի քանակը,

¹⁷⁰ <https://mgm.gov.tr/eng/marine-acronyms.aspx>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

որը ներկայումս օգտագործվում է Արարատյան դաշտի, Արմավիրի մարզի ու Արագածոտնի նախալեռնային շրջանների ոռոգման համար: Ընդ որում, առանց այդ էլ քիչ կուտակված ջուրը դեռ պետք է կիսվի երկու հավասար մասի:

Այսպիսով, ջրամբարների կառուցմամբ Թուրքիան Արարատյան դաշտի ջրային պաշարների մի մասն առնելու է իր փաստացի վերահսկողության տակ եւ դա դարձնելու է քաղաքական գործոն՝ եթե իհարկե հայկական կողմը ձեռնամուխ չլինի համարժեք ջրամբարաշինական աշխատանքների իրականացմանը: Արարատյան դաշտի ջրային պաշարների վրա վերահսկողություն սահմանելով՝ Թուրքիան այդ հանգամանքը կարող է օգտագործել Հայաստանի վրա ճնշում գործադրելու նպատակով: Նման հոռետեսական կանխատեսում անելու հիմք է տալիս Սիրիայի և Իրաքի օրինակը: Եփրատ և Տիգրիս գետերի վրա թվով 17 ջրամբարներ կառուցելով՝ Անկարան արաբական այդ երկու երկրներին պարբերաբար շանտաժի է ենթարկում՝ սպառնալով թողնել առանց ջրի: Դեռ ավելին XX դարի 70-ական թթ Թուրքիան մեկ անգամ թունավորեց Եփրատի ջրերը, որը պատճառ դարձավ բրնձի և բամբակենու ցանքատարածությունների ոչնչացմանը Սիրիայում և Իրաքում: Այդ գետերով ջուր թողնելու դեպքում էլ Թուրքիան դա ներկայացնում է որպես բարի կամքի ու գթասրտության դրսևորում:

Այստեղ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել մի կարևոր հանգամանքի վրա ևս՝ կառուցելով մեծածավալ ջրամբարներ Թուրքիան ցանկացած ժամանակ կարող է հորդառատ Արաքս գետը դարձնել ծանծաղ: Այս դեպքում գետը կորցնելու է նաև ռազմական տեխնիկայի ընթացքը խոչընդոտող արգելքի հատկությունը: Եթե նախկինում գետանցը պետք է իրականացվեր կամուրջներով կամ տեխնիկական միջոցների կիրառմամբ, ապա այս դեպքում հնարավոր գետանցման վայրերը անհամեմատ ավելի շատ կլինեն:

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

Ջրամբարներն իրենց կենսական հսկայական կարևորության համար համարվում են ռազմավարական օբյեկտներ: ՀՀ բոլոր խոշոր ջրամբարները վերցված են պետական հսկողության տակ:

Ջրաբանական կարևոր նշանակություն ունեն նաև ստորերկրյա ջրերը, որոնցով հարուստ է Հայաստանի Հանրապետությունը: Այդ թվում հատկապես կարևորվում են արտեզյան ավազանները, որոնց տեղադրությունը մեծապես կապված է տարածքի երկրաբանական կառուցվածքով: Այստեղ իհարկե անհրաժեշտ է նշել նաև վերջին երկու տասնամյակներին ՀՀ արտեզյան ավազանի ջրերի անխնա օգտագործումը՝ հատկապես մասնավոր ձկնալին տնտեսությունների կողմից:

Ջրային օբյեկտները՝ գետեր, լճեր, ջրամբարներ, ջրանցքներ, վարարումների տակ գտնվող տարածքներ, իրենցից ներկայացնում են բնական խոչնդոտներ և բնութագրվում են լայնությամբ, խորությամբ, հոսանքի արագությամբ, ափերի թեքությամբ, հովտի լայնությամբ, հովտի և հատակի գրունտի կազմությամբ, սառցակալմամբ, ջրատեխնիկական կառույցների առկայությամբ և նրանց քանդման դեպքում ողողման հնարավորությամբ, անցումների առկայությամբ և դրանց վիճակով:

Ռազմական տեսաբանների կողմից ջրային օբյեկտները (խոչընդոտները) դիտվում են պաշտպանության կազմակերպման շահավետ բնագծեր:

Արդեն գոյություն ունեցող ջրագրական ցանցի վերաբերյալ զինվորական տարբեր մակարդակի շտաբները հավաքում են անհրաժեշտ տվյալներ հարձակման ժամանակ դրանց հնարավորինս կարճ ժամկետներում հաղթահարելու համար, իսկ պաշտպանվող կողմը ցանկանում է հնարավորինս արդյունավետ օգտագործել դրանց տեղադրությունը և

Ֆիզիկական հատկանիշներն էլ ավելի հուսալի պաշտպանական բնագծեր կառուցելու նպատակով¹⁷¹:

Երբ երկիրը պլանավորում է իր տնտեսության օբյեկտների, այդ թվում ջրային օբյեկտների տարածքային տեղաբաշխումը, հնարավոր տնտեսական օգուտներ ստանալու նպատակով, անհրաժեշտ է, հաշվի առնել երկրի ռազմական անվտանգության հայեցակարգի դրույթները, ինչպես նաև երկրի Ռազմական դոկտրինը: Տնտեսական օբյեկտների տեղաբաշխումը ծառայեցնել ևս մի նպատակի՝ այն է երկրի պաշտպանունակության ամրապնդմանը:

Հայաստանի Հանրապետությունում ջրային ռեսուրսների կառավարումը իրականացվում է համաձայն Ջրի ազգային ծրագրի մասին ՀՀ օրենքի և ՀՀ ջրային օրենսգրքի¹⁷²: Այս հիմնարար փաստաթղթերի պահանջների համաձայն հանրապետության ջրային ռեսուրսները բաժանվում են **ազգային, ռազմավարական և օգտագործելի ջրային պաշարների**:

Ազգային ջրային պաշարներ համարվում են՝ բնական լճերի ծավալի 1/3 մասը, ձնաբեր և ֆիռնային դաշտերը, ինչպես նաև ստորերկրյա ջրերի խորքային հոսքը: Սևանա լիճը 1896 մետր մակարդակից ցած՝ ջրի ծավալը համարվում ազգային պաշար:

Ռազմավարական ջրային պաշարներ հանդիսանում են՝ բնական լճերի ծավալի 30 %-ը, ջրամբարների մեռյալ ծավալի 2/3 մասը և հաստատված կարգով ստորերկրյա ջրերի շահագործվող պաշարները:

Օգտագործելի ջրային ռեսուրսներ հանդիսանում են գետային հոսքի օգտագործելի մասը, ստորերկրյա ջրերի շահագործվող պաշարները՝ այդ թվում աղբյուրների միջին տարեկան հոսքը:

¹⁷¹ Говорухин А.М., Куприн А.М., Гамезо М.В., Справочник по военной топографии,- М.: МО СССР, 1973, -264 с.

¹⁷² <http://www.irtek.am/views/act.aspx?aid=150170>

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

ՀՀ տարածքը, ընդհանուր առմամբ համարվում է աշխարհի ակտիվ սողանքային շրջաններից մեկը, սակայն սողանքային գործունեության տեսակետից կան ներշրջանային խիստ տարբերություններ:

Ակտիվ սողանքային երևույթներով աչքի են ընկնում համեմատաբար խոնավ կլիմա ունեցող շրջանները, սակայն առանձին սողանքներ և սողանքային խմբեր հանդիպում են գրեթե հանրապետության ամբողջ տարածքում: Հայաստանի Հանրապետությունում սողանքներով զբաղեցված են՝ 34679 հա տարածք, որոնցից առավել վտանգավորները տարածված են. Վայոց Ձորի (11816 հա), Արարատի (8334 հա) և Տավուշի (5459 հա) մարզերում¹⁷³:

Ըստ «Հայհողշիննախագիծ» ինստիտուտի տվյալների, Հայաստանում գրանցված են 2223 սողանքներ ¹⁷⁴ : Սողանքների ուսումնասիրման նորագույն մեթոդների կիրառմամբ, ինչպես նաև մանրամասն դաշտային հետազոտությունների արդյունքում, հաշվի առնելով նաև ոչ մեծ սողանքները, հաշվվում է մոտ 3500 սողանք¹⁷⁵:

ՀՀ տարածքի տնտեսական յուրացման պայմաններն այնպիսին են, որ ռազմավարական նշանակություն ունեցող տնտեսական օբյեկտները, բնակավայրերը, հաղորդակցության ուղիները և այլ ենթակառուցվածքներ գտնվում են գետահովիտներում, որտեղ էլ հիմնականում զարգացած են սողանքները: Այս տեսակետից կարելի է նշել, որ գոյություն

¹⁷³ Бойнагрян В.Р., Степанян В.Э., Хачатрян Д.А., Ядоян Р.Б., Аракелян Д.Г., Гюрджян Ю.Г., Оползни Армении, -Ер.: Асохик, 2009, -308с.

¹⁷⁴ Арзуманян В., Агаларян Э., Степанян В., Дургарян К., Комплексные исследования проблемы защиты территорий Республики Армения от опасных геологических процессов в связи с активизацией геодинамической обстановки // Сб. науч. Трудов конф., посвящ. 90-летию академика А.Г. Назарова. - Гюмри, изд-во НАН РА, 1998, с. 211-215.

¹⁷⁵ Бойнагрян В.Р., Степанян В.Э., Хачатрян Д.А., Ядоян Р.Б., Аракелян Д.Г., Гюрджян Ю.Г., Оползни Армении, -Ер.: Асохик, 2009, -308с.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ունեցող և կանխատեսվող սողանքներն այս կամ այն չափով առնչվում են մարդու տնտեսական գործունեության հետ, դրանով իսկ կարևորելով սողանքների ուսումնասիրությունը, դրանց ժամանակին հայտնաբերումը և պայքարի արդյունավետ միջոցների մշակումը:

Հայաստանի Հանրապետությունում սողանքները տարեկան պատճառում են մոտ 30 մլն ԱՄՆ դոլարի վնաս¹⁷⁶: Բնական է որ իրավասու կազմակերպությունների և մասնագետների առջև խնդիր է դրվում առաջին հերթին ավերիչ սողանքներից պաշտպանել բնակավայրերը, հաղորդակցման ուղիները, ենթակառուցվածքները, կամ գոնե նվազեցնել պատճառվող վնասը:

Սողանքներից պաշտպանվելու առավել գործուն միջոցառումը հանդիսանում է դրանց կանխագուշակումը: Այս կապակցությամբ ինժեներային երկրաբանների, գրունտների մեխանիկայի և շինարարական տեխնիկայի մասնագետների կողմից մշակվել են համալիր կանխարգելիչ միջոցառումներ: Երբ սողանքն սկսվել է, կանխարգելիչ միջոցառումների անցկացումն արդեն ուշ է: Սողանքներից խուսափելու համար չպետք է թույլատրել՝

- 1) սողանքի վերին մասի գերծանրաբեռնումը;
- 2) հիմքի կտրում, լվացում (գետի կողմից, ջրամբարի կողմից, ինժեներաշինարարական աշխատանքներով);
- 3) զառիթափ լանջերի գերխոնավացում:

Հայտնի է որ ջուրը հանդիսանում է սողանքի առաջացման գլխավոր պայմաններից մեկը, որն ունենում է երկակի ազդեցություն՝ նախ խոնավացնելով գրունտներն ավելացնում է ծանրաբեռնվածությունը լանջերի վրա և


¹⁷⁶ Агаларян Э.М., Караханян А.С., Степанян В.Э., Аэрокосмический метод-составляющая прогнозной оценки опасности влияния разломной тектоники при контроле состояния сооружений в сейсмических районах // Сб. науч. трудов Академии гражданской защиты, -Новогорск, изд-во МЧС России, 2000, Вып. 12, 170-176 с.

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

երկրորդ՝ փոխելով ջրամերժ շերտի ֆիզիկական հատկությունները նպաստում է հողագրունտի սահքի դյուրացմանը:

Այդ պատճառով էլ կանխարգելող միջոցառումների առաջին փուլը պետք է հանդիսանա սողանքավտանգ լանջերից մակերևույթային և գրունտային ջրերի հեռացումը, որը հիմնականում կատարվում է ստորգետնյա դրենաժի միջոցով¹⁷⁷:

Վերջին ժամանակներս ջրերի ավանդական աղբյուրների՝ քահրիզների ուսումնասիրությունը հանգեցրեց այն գաղափարին, որ որպես սողանքավտանգ լանջերի գրունտային ջրերի հեռացման դրենաժային համակարգ կարող է ծառայել քահրեզների համակարգը¹⁷⁸:



Նկար 16. Քահրիզի սխեմատիկ պատկերը. 1 - ջրատար շերտ, 2 - ավազ, 3 - կավ, 4 - ջրիավաք հորատանցք, 5 - ուղղահայաց հորատանցքներ, 6 - ջրատեղափոխման հորատանցք, 7 - ջրահեռացման առվակ¹⁷⁹:

¹⁷⁷ Воскресенский С.С. Динамическая геоморфология. Формирование склонов. – М.: изд-во МГУ, 1971.- 228 с.

¹⁷⁸ Палиенко З.Т., Поисковая и инженерная геоморфология. -Киев, 1978. -196 с.

¹⁷⁹Սայադյան Համ. Յ., Ջրի ավանդական աղբյուրների՝ քահրեզների կառուցումը և կաթիլային ոռոգումը որպես սողանքների կանխարգելման միջոց, Ագրոգիտություն ամսագիր, թիվ 9-10. 2011, Եր.: Ագրոպրես, էջ 474-478

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Քահրեզը ստորգետնյա պարզագույն ջրատեխնիկական կառույց է գրունտային ջրերի հավաքման և երկրի մակերևույթ դուրսբերման համար (Նկար 16):

Այն իրենից ներկայացնում է ստորգետնյա ջրանցք (կավե հորիզոնական հորատանցք) որը միացնում է ջրատար շերտը օգտագործման շրջանի հետ: Հորատանցքերի լայնությունը հասնում է 0,5—0,6 մետրի, իսկ բարձրությունը 1,5 - 2 մետրի, ուղղահայաց հորատանցքների խորությունը հաճախ կազմում է 50-100 մետր:

Հարկ է նշել, որ քահրիզները մեծ տարածում ունեն Իրանում, Կենտրոնական Ասիայում, Աֆղանստանում և այլ վայրերում: Աֆղանստանում վարվող տարբեր պատերազմների ընթացքում, քահրիզները տեղացիների կողմից օգտագործվել են որպես ռմբապաստարան և քողարկված տեղաշարժման միջոց:

Ընդունված է համարել, որ քահրիզների կառուցումը սկսվել է Պարսկաստանում 2000 տարի առաջ և այնտեղից տարածվել հարևան պետություններում: Հայտնի է, որ երբ 1220 թ-ին Չինգիզ խանը երկար ժամանակ պաշարել էր միջնադարյան Շախրիսլամ քաղաքը, նրան զեկուցել էին, որ քաղաքում չկա խմելու ջուր և այն պետք է արդեն հանձնված լիներ, սակայն դեռ դիմադրում է: Պարզվեց որ քաղաքում օգտագործում են քահրիզների ջուրը: Իհարկե գտնվեց դավաճան, որը ցույց տվեց քահրիզների տեղը, Չինգիզ խանը ավերեց դրանք և քաղաքը շուտով հանձնվեց:

Վերջին ժամանակներս միջազգային տարբեր կազմակերպությունների կողմից Հայաստանում, Ադրբեջանում և Կենտրոնաասիական մի շարք երկրներում ծրագրեր են իրականացվում ջրի ավանդական աղբյուրների՝ քահրիզների վերականգնման ուղղությամբ:

Աֆղանստանում գտնվող հազարավոր քահրիզներն իսկական պատուհաս են դարձել այնտեղ հակաահաբեկչական գործունեություն ծավալող կոալիցիոն ուժերի

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

համար, քանի որ թալիբները դրանք օգտագործում են որպես թաքստոցներ և աննկատ տեղաշարժման գետնուղիներ:

Առաջարկում ենք՝ օգտագործելով կիրառական գեոմորֆոլոգիայի, ջրաերկրաբանության և այլ գիտությունների նորագույն ուսումնասիրությունները, ինչպես նաև ստորգետնյա դրենաժային համակարգերի կառուցման տեխնոլոգիական նորությունները, խոշոր սողանքային բլոկների սահքը կանխարգելելու համար կառուցել քահրիզներ: Դրանց ջրհավաք հորատանցքերը պետք է փորվեն կավային ջրամերժ շերտի երկայնքով, այնպես որ հորատանցքի հատակը համապատասխանի ջրամերժ շերտի մակերևույթի հետ, իսկ եթե կան թաղված հովիտներ ուրեմն դրանց երկայնքով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ըստ անցկացված հետազոտությունների Հայաստանում սողանքային երևույթների 90 % -ը հանդիպում են 1500-2000 մ բարձրություններում¹⁸⁰, ապա քահրիզների կառուցումով մեծ մասամբ լուծվում է նաև այդ բարձրություններում ինքնահոս խմելու և ոռոգման ջրի սակավության հիմնախնդիրը:

Քահրիզների առավելությունը սովորական դրենաժային համակարգի նկատմամբ այն է, որ քահրիզների ջուրը կարելի է օգտագործել ոչ միայն ոռոգման այլ նաև խմելու նպատակով: Բացի դրանից քահրիզի կառույցը փլվածքների դեպքում հնարավոր է վերականգնել:

Սողանքային մարմնի վրա լրացուցիչ ծանրաբեռնվածություն չառաջացնելու նպատակով առաջարկում ենք նաև, ոռոգման ենթակա սողանքավտանգ տարածքներում ոռոգումն իրականացնել կաթիլային եղանակով:

Իհարկե մեր առաջարկած մեթոդն արդյունավետ կլինի այն դեպքում երբ այն լինի համալիր միջոցառումների բաղկացուցիչ մաս: Այդ բաղկացուցիչներից մեկն էլ կարող էր

¹⁸⁰ Բայլան Ս.Պ. Հայկական ՍՍՀ գեոմորֆոլոգիան,-Եր.: 1986, -239 էջ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

լինել կաթիլային ոռոգման համակարգերի ստեղծումը, որը միանգամից մի քանի հիմնախնդիր կլուծեր:

Սողանքավտանգ տարածքների կաթիլային ոռոգումը մեզ հնարավորություն կստեղծի, առանց գրունտների վրա լրացուցիչ ծանրաբեռնվածություն առաջացնելու աճեցնել համապատասխան ծառային բուսականություն, որն իր արմատային համակարգով լրացուցիչ սողանքականխարգելիչ գործառույթ կկատարի:

Այս առաջարկությունը ներդաշնակ է նաև ՀՀ Պարենային անվտանգության քաղաքականության հետ, այն է ջրի խնայողության քաղաքականություն:

Ջրօգտագործման այսօրվա արդյունավետությունը խիստ ցածր է՝ 25-30 %: Միայն կաթիլային ոռոգման կիրառման շնորհիվ մինչև 70 %-ով կարող է կրճատվել ջրի ծախսը, միաժամանակ բերքատվությունը կարող է աճել 30-90 %-ով¹⁸¹:

ՀՀ Մեղրու տարածաշրջանում 2006 թ-ին Իրանի Իսլամական Հանրապետության մասնագիտական աջակցության և Շվեյցարիայի ֆինանսական աջակցությամբ իրականացվել է քահրիզների վերականգնման ծրագիր: Մեր հանրապետությունում հնագույն քահրիզներ հանդիպում են ոչ միայն Սյունիքում, այլ նաև Շիրակում, Վայոց Ձորում, ինչպես նաև Արցախի Հանրապետությունում:

Ամփոփելով, կարող ենք նշել, որ առաջարկվող միջոցառումները կարող են լրացնել արդեն գոյություն ունեցող հակասողանքային միջոցառումների շարքը:

Այն գրունտային ջրերը, որոնք սողանքառաջացման պատճառ էին հանդիսանում և պատուհաս էին տնտեսության համար այժմ կարող են բարձադիր տարածքներում ջրամատակարարման խնդիր լուծել:

¹⁸¹ Հայկազյան Վ., Հայաստանի պարենային անվտանգության հիմնախնդիրները, «21-րդ ԴԱՐ», թիվ 4 (18), -Եր.: 2007. էջ 60-83:

4.6 Լանդշաֆտները

ՀՀ-ում, ինչպես նաև այլ լեռնային շրջաններում, ճառագայթային էներգիայի հաշվեկշիռը փոխվում է ըստ բարձրության՝ առաջացնելով բնական գոտիների վերընթաց հերթափոխ:

Հայկական լեռնաշխարհում ըստ բարձրության բնության փոփոխությունների վերաբերյալ նշել է դեռևս պատմահայր Մովսես Խորենացին «Հայոց պատմություն» գրքում: Նոր ժամանակներում Արարատ լեռան բուսաճածկույթի գոտիական հերթափոխի մասին առաջին անգամ նշել է ֆրանսիացի բուսաբան Տուռնեֆորը XVIII դարում:

Հայաստանի Հանրապետությունում առանձնացվել է ուղղաձիգ գոտիականության երկու հիմնական տիպ¹⁸².


1. Լեռների արտաքին հողմահայաց լանջերի (Փոքր Կովկասի արևելյան լանջերը): Այստեղ առկա է բնական գոտիների նորմալ հերթափոխը, որը համընկնում է հորիզոնական գոտիականությանը:

2. Փակ գոգավորությունների (Միջինարաքսյան, Վայք և Սևանի): Այս տիպում լանդշաֆտների վերընթաց հերթափոխը հաճախ խախտվում է, հանդիպում են շրջադասության և ազոնալ երևույթներ:

ՀՀ-ում հանդիպում են վերընթաց լանդշաֆտային գոտիների հետևյալ տիպերը՝ անապատակիսաանապատային, կիսաանապատային, չոր լեռնատափաստանային, լեռնատափաստանային, լեռնաանտառային, մերձալպյան և ալպյան, ձյունամերձ (նիվալ) լանդշաֆտներ (Քարտեզ 8):

Ստորև ներկայացնում ենք նշված լանդշաֆտների ձևավորման և զարգացման ընդհանուր օրինաչափությունները:

¹⁸² Գաբրիելյան Հ.Կ., Լանդշաֆտների գեոքիմիա, Երևանի պետական համալսարան, -Եր.: «Միտք» հրատ., 1968, -188 էջ:



Քարտեզ 8. ՀՀ վերընթաց լանդշաֆտային գոտիները¹⁸³

Անապատային լանդշաֆտները ձևավորվում են Միջինարաքյան գոգավորության մինչև՝ 900 մ բարձրությունների վրա: Դրանք ՀՀ սահմաններում ամբողջական գոտի չեն առաջացնում և տարածվում են առանձին տեղամասերով, սակայն սրանց բնական պայմաններն այնքան ակնառու են, իսկ բնապատկերն այնքան նման է անապատին, որ հնարավոր չի առանձին չնկարագրել:

¹⁸³ ՀՀ Ազգային ատլաս, Լ.Հ.Վալեյանի խմբ. հատոր Ա, -Եր.: 2007. -232 էջ:

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

Անապատային լանդշաֆտի կղզյակները մեծ մասամբ երիտասարդ գոյացումներ են, որոնք ձևավորվել են Արաքսի և Նրա վտակների՝ Քասախի, Հրազդանի գետաբերուկների վրա, չորրորդականի սկզբում¹⁸⁴:

Անապատային լանդշաֆտները ՀՀ-ում ազոնալ երևույթներ են և նրանց ձևավորման հիմնական պատճառ է հանդիսանում, գոգավոր ռելիեֆը, որը պայմանավորել է չոր ցամաքային կլիմայի առաջացումն այդ բարձրության վրա: Հարավային Կովկասում ուրիշ տեղ այլևս այս բարձրության վրա չկան անապատային լանդշաֆտներ:

Կիսաանապատային լանդշաֆտներն Արաքսի միջին հովտի գոգավորության նախալեռնային մասում են մինչև 1300 մ բարձրությունները, իսկ որոշ հատվածներում՝ մինչև 1400 մ բարձրություններն ընդարձակ գոտի են կազմում: ՀՀ-ում տիրապետող են քարային կիսաանապատները: Ռելիեֆի առանձնահատկություններով պայմանավորված կիսաանապատային լանդշաֆտի առանձին տեղամասեր հանդիպում են նաև Արփա գետի հովտում և Մեղրու տարածաշրջանում: Կիսաանապատների ռելիեֆը բլրապատ, ալիքաձև է, կազմված հրաբխային և թույլ հողմահարված նստվածքային ապարներից:

Կիսաանապատային լանդշաֆտներն աղքատ են բուսածածկով, հիմնականում գերակշռում է հոտավետ օշինդրը և այլ չորասեր բույսեր: Գարնանային անձրևների ժամանակ կիսաանապատը ծածկվում է կարճակյաց (էֆեմեր) բույսերով¹⁸⁵:

Լեռնատափաստանային լանդշաֆտները ՀՀ-ում գերակշռող լանդշաֆտային տիպերն են՝ որոնք հանրապետության խոնավ մասերում (Փոքր Կովկասի

¹⁸⁴ Բաղդասարյան, Ա.Բ. Հայկական ՍՍՀ ֆիզիկական աշխարհագրություն, -Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1971.-471 էջ

¹⁸⁵ Исаченко А.Г., Введение в экологическую географию, СПб.: 2003, - 192 с.

շղթաների արևելյան հողմահայաց լանջերին) հասնում են մինչև 900 մ-ի, իսկ Լոռիում և Արաքսի միջին հովտի գոգավորությունում՝ 2300-2400, տեղ-տեղ նույնիսկ 2600 մ բարձրության:

Չոր լեռնատափաստանային լանդշաֆտները տարածված են հյուսիսարևելյան շրջաններում և Ջանգեզուրում մինչև 900 մ, իսկ Արաքսի միջին գոգավորության ցամաքային կլիմայի պայմաններում՝ մինչև 1700-1800 մ բարձրություններում: Այս լանդշաֆտային ենթագոտին ձևավորվում է չափավոր տաք կլիմայի պայմաններում, նախորդ ենթատիպի համեմատությամբ ցամաքայնությունն ավելի զգալի է, տաք, չոր, արևոտ, ամռանը հաջորդում են համեմատաբար ցուրտ ձմեռները հաստատուն ձնածածկույթով: Գարնանը տափաստանը ծածկվում է հացազգի խոտաբույսերով, որոնք ամռանը չորանում են: Այստեղ նույնպես տիրապետող են բույսերի չորասեր տիպերը:

Լեռնատափաստանային լանդշաֆտները մեր հանրապետությունում գրավում են ամենաընդարձակ տարածքները: Այս լանդշաֆտները տարածված են հյուսիս-արևմտյան շրջանում, Արագածի և Գեղամա լեռնավահանների լանջերին, Սևանի ավազանում¹⁸⁶ և Ջանգեզուրում:

Լանդշաֆտային այս տիպը հիմնականում ձևավորվում է հրաբխային սարավանդների և զանգվածների մեղմաթեք լանջերին ու գոգահովիտների հատակին: Հանրապետության հարավային շրջաններում տափաստանային լանդշաֆտի բնորոշ տարրերն ընդարձակ քարակուտակումներ են, որոնք ֆիզիկական հողմահարման հետևանք են: Բուսածածկույթը ներկայանում է տիպիկ տափաստանային տեսակներով, իսկ

¹⁸⁶ Սայադյան Հ.Յ, Սայադյան Հա.Յ. Լանդշաֆտային պլանավորման մեթոդական ուղեցույց Հարավային Կովկասի երկրների օրինակով, Անդրսահմանային միացյալ քարտուղարություն, -Երևան-Թբիլիսի, «Ունիվերսալ» հրատ., 2009. -150 էջ:

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

աղազերծված սևահողերի վրա՝ մարգագետնային բուսականությամբ: Այս գոտում՝ առատ սննդի շնորհիվ, կենդանական աշխարհը նույնպես հարուստ է:

Տափաստանային գոտին հնուց ի վեր համարվում է ամենայուրացված գոտին բնակեցման և տնտեսական գործունեության համար:

Լեռնաանտառային լանդշաֆտներ: Պաշտոնական տվյալներով ՀՀ անտառային ֆոնդը կազմում է 459900 հա, որից անտառածածկ է 334100 հեկտարը կամ ՀՀ ընդհանուր տարածքի 11,2%-ը: Երկրագնդի մասշտաբով յուրաքանչյուր 1 բնակչին ընկնում է 0,67 հա միակցված անտառատարածք, այն դեպքում երբ ՀՀ այդ ցուցանիշը կազմում է 0,1 հա: ՀՀ անտառներն ունեն անհավասարաչափ տեղաբաշխում և ավանդաբար առանձնացվում են հյուսիսարևելյան (Երկրի անտառների 62%-ը), հարավարևելյան (36%-ը) և կենտրոնական (2 %-ը) անտառազանգվածներ:

ՀՀ ներկայիս անտառածածկն աչքի է ընկնում որակական ցածր հատկանիշներով, նոսր է, արտադրողականությունը ցածր է և, առանց մարդու միջամտության չի կարող «ինքնուրույն» վերականգնվել: Մինչդեռ անտառային էկոհամակարգերը, ինչպես ցույց են տալիս բազմաթիվ համաշխարհային և տեղական օրինակներ, բացի զուտ տնտեսական և էկոլոգիական նշանակությունից ունեն նաև շատ որոշակի ռազմական նշանակություն: Մասնավորապես ունի քողարկիչ և պաշտպանող հատկություններ: Անտառապատ տարածքները հնարավորություն են տալիս սահմանափակ ուժերով պաշտպանվել հակառակորդի թվային գերակշիռություն ունեցող զորքից:

Տավուշի մարզի սահմանային անտառները հաճախ պատճառ են դառնում տեղաբնակ քաղաքացիական անձանց մոլորվելուն և շփոթմամբ Ադրբեջանի հետ շփման գծի հատման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ալպյան գոտու բնական առանձնահատկությունները ձևավորվում են ցուրտ լեռնային կլիմայի ազդեցությամբ: Ձմեռն այստեղ տևում է 5-6 ամիս և ծյունառատ է: Ձյան շերտի հզորությունը տեղ տեղ կազմում է 2 մետրից ավելի: Ձմեռվա միջին ջերմաստիճանը -10° է: Հաճախակի են ձնաբքերը և մառախուղերը: Ամառը կարճատև է: Վեգետացիոն ժամանակաշրջանը 2-3 ամիս է և վերջանում է սեպտեմբերին:

Ալպյան լանդշաֆտները ՀՀ հյուսիսային մասում սկսվում են 1900-2000 մ, իսկ հարավային շրջաններում՝ միայն 2300 մ բարձրությունից: Սրանք հատուկ են Արագածի ու Գեղամա լեռնավահանների, ինչպես նաև Զանգեզուրի և այլ լեռնաշղթաների բարձր լեռնային գոտուն, որտեղ բավական արտահայտված են սառցադաշտային ռելիեֆի ձևերը: Ալպյան լանդշաֆտները, ըստ էության, ձևավորվել են երրորդականի վերջում, առավելագույն զարգացման հասնելով սառցադաշտային ժամանակաշրջանում:

Ձյունամերձ (նիվալ) լանդշաֆտներ: Հանրապետության առանձին՝ ամենաբարձր լեռնագագաթների վրա (Արագած, Կապուտջուղ և այլն) ալպիական գոտուց վեր ձևավորվում են ձյունամերձ լանդշաֆտները, մերկ ժայռերի հավերժական ձյան և սառույցների բծերով:

Կլիմայի ցամաքայնության պատճառով Հայկական լեռնաշխարհում հավերժական ձյան սահմանը գտնվում է 4200 մ բարձրության վրա և հավերժական ձյան ու սառույցի գոտին ձևավորվում է միայն Մեծ Արարատի գագաթային մասում:

Ձյունամերձ լանդշաֆտների գոտում ամբողջապես տիրապետող է ֆիզիկական հողմահարությունը, նիվացիան, սոլիֆյուլցիան, ինչպես նաև բեկորատված նյութի կուտակումն ու մանրացումը: Հողմահարման նյութերը դանդաղ տեղաշարժվում են գառիթափի լանջն ի վար:

Մարտական գործողությունների պլանավորման ժամանակ յուրաքանչյուր լանդշաֆտային տիպ պահանջում է յուրահատուկ մոտեցում՝ հանդերձանքի, սպառազինության,

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

սարքավորումների և այլ միջոցների ընտրության հարցում: Լանդշաֆտային գոտիները առանձնանում են նաև առողջապահական և համաճարակաբանական իրավիճակի առանձնահատուկ հիմնախնդիրներով: Այսպես, օրինակ, եթե Արաքսի հովտում ամռանը կապված բարձր ջերմաստիճանային ֆոնի, խմելու ջրերի կասկածելի որակի և այլ պատճառներով հաճախակի են ստամոքս-աղիքային տրակտի հետ կապված խնդիրները, ապա Չանգեզուրի և Մոսվի լեռնաշղթաների բարձր լեռնային հատվածներում տարվա վեց ամիսը պահպանվում է վերջույթների ցրտահարության վտանգը:

4.7 Բնական ռեսուրսները որպես ռազմաաշխարհագրական գործոն

Ժամանակակից քաղաքակրթության զարգացման հիմքում ընկած է էներգիայի արտադրության հնարավորության համար մղվող պայքարը: Այս փաստի արտացոլումը հանդիսանում է այն, որ աշխարհի զարգացած երկրների ներքին համախառն արտադրանքը ուղիղ համեմատական է այդ երկրների կողմից արտադրվող էլեկտրաէներգիայի քանակին¹⁸⁷:

Պետության ներսում ռեսուրսների անբավարարություն առաջանում է այն ժամանակ, երբ ռեսուրսների նկատմամբ պահանջարկը գերազանցում է առկա քանակին: Առաջացող խնդիրները հատկապես ծանր են լինում, երբ ռեսուրսների անբավարարությունն առաջանում է պետության համար կենսական ժամանակաշրջանում: Իհարկե ռեսուրսների պակասորդը լրացվում է այլ երկրներից ներմուծումով, սակայն շատ կարևոր է երկրի ներսում արտակարգ իրավիճակների

¹⁸⁷ Ավագյան Ա.Ռ. Հայաստանի Հանրապետության ընդերքի ռեսուրսների աշխարհագրական գնահատականը, -Եր.: 2000, -176 էջ:

համար ունենալ դրանց ռազմավարական անձեռնմխելի պաշարներ:

Անցյալ դարի 90-ականների սկզբին ԽՍՀՄ փլուզումից հետո, տեղի ունեցած աշխարհաքաղաքական, ռազմավարական, տնտեսական փոփոխություններից հետո ՀՀ-ում ձևավորվեց նոր տնտեսական իրողություն: Հայաստանը կանգնեց միայն սեփական գիտական և բնական ռեսուրսների վրա հիմնված տնտեսության կազմակերպման հրամայականի առաջ¹⁸⁸:

ՀՀ հանքարդյունաբերության ոլորտն ազգային տնտեսության մեջ ունի առանցքային մասնաբաժին: Հայաստանից արտահանվող ապրանքների առնվազն կեսը բաժին է ընկնում հանքային խտանյութերին և մետաղներին, որոնք երկրից արտահանվող արտադրանքների ցուցակում առավել կարևոր տեղ են զբաղեցնում: Այս մասին նշված է ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության պաշտոնական կայքէջի հրապարակման մեջ¹⁸⁹:

Ներկայումս, պինդ օգտակար հանածոների հաստատված պաշարներով, հաշվառված է ավելի քան 670 հանքավայր, այդ թվում՝ 30 մետաղական: Նշված հանքավայրերից շահագործվում են շուրջ 400-ը՝ այդ թվում՝ 22 մետաղական¹⁹⁰:

Հայաստանի Հանրապետության ընդերքը հարուստ է հետևյալ մետաղական օգտակար հանածոների տեսակներով՝ երկաթաքար, պղնձի հանքաքար, մոլիբդեն, կապար, ցինկ, ոսկի, արծաթ, ծարիր, նեֆելինային սիենիտների, ինչպես նաև նրանցում պարփակված հազվագյուտ ու ցրված մետաղներով:

¹⁸⁸ Ավագյան Ա.Ռ. Հայաստանի Հանրապետության ընդերքի ռեսուրսների աշխարհագրական գնահատականը, -Եր.: 2000, -176 էջ:

¹⁸⁹ Նույն տեղում

¹⁹⁰ Ավագյան Ա.Ռ. Հայաստանի Հանրապետության ընդերքի ռեսուրսների աշխարհագրական գնահատականը, -Եր.: 2000, -176 էջ:

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

Մետաղական օգտակար հանածոների թվում առկա են 7 պղնձամոլիբդենային, 4 պղնձի, 14 ոսկու և ոսկի-բազմամետաղային, 2 բազմամետաղային, 2 երկաթաքարային և 1 նեֆելինային սիենիտների հանքավայր:

Պետական հաշվեկշռում գրանցված հանքավայրերի հանքաքարերում, բացի հիմնական մետաղներից, բացահայտված է հազվադեպ և ցրված տարրերի առկայություն՝ ռենիում, սելեն, թելուր, կադմիում, ինդիում, հելիում, թալիում, բիսմութ և այլն:

Ներկայումս Հայաստանի լեռնամետալուրգիական համալիրի համար վերջնական արտադրանք են հանդիսանում հիմնականում խտանյութերը (պղնձի, մոլիբդենի, ցինկի, որոշ դեպքերում՝ ոսկու և արծաթի բարձր պարունակությամբ, մոտ հեռանկարում՝ նաեւ կապարի խտանյութեր), ինչը թույլ չի տալիս ամբողջովին օգտագործել հանքավայրի տնտեսական ներուժը:

Հանրապետության տարածքում առկա են օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման ընթացքում առաջացող թափոնների կուտակման 15 պոչամբարներ, որոնց ծավալներն անցնում են մի քանի մլն. խմ-ից և զբաղեցնում են մոտ 700 հա ընդհանուր մակերես: Ներկայումս պոչամբարներում կուտակված օգտակար հանածոների արդյունահանման եւ վերամշակման արդյունքում առաջացած արտադրական թափոնները չեն օգտագործվում, չնայած դրանք պարունակում են մեծ քանակությամբ բազմամետաղներ:

Ինչպես նշեցինք Հայաստանը հարուստ է պղնձի, մոլիբդենի, ոսկու, արծաթի, կապարի, ցինկի, վոլֆրամի, բիսմութի և հարակից այլ մետաղների, ինչպես նաև՝ ոսկու բազմամետաղային, կապար-ցինկային (մետաղի 1.1% և 2.8% պարունակությամբ) հեռանկարային հանքավայրերով, ընդ որում, դրանցում հետազոտված պաշարները ոչ միայն բավարարում են տեղական պահանջարկը, այլ նաև զգալի չափով արտահանվում են: Այնպիսի ռեսուրսներ, ինչպիսիք են

պղինձը, մոլիբդենը, կապարը, ցինկը և դրանց հարակից տարրերը՝ ռենիումը, սելենը, գալիումը, գերմանիումը, տանտալը, կադմիումը, մագնեզիումը, ինդիումը, տիտանը, ցիրկոնիումը և այլն կարող են բավարարել Հայաստանի նման մի քանի տասնյակ երկրների պահանջները: Խնդիրը կայանում է նրանում, որ Հայաստանում բացակայում են այս ռեսուրսների հիմքով գործող պատրաստի արտադրատեսակների արտադրությունները, չեն կորզվում հանքաքարում պարունակվող հազվագյուտ տարրերը, որոնք համաշխարհային շուկայում հաճախ ավելի մեծ պահանջարկ ունեն և ավելի թանկ արժեն, քան գունավոր մետաղները¹⁹¹: Մինչդեռ Հայաստանում արտադրվող գունավոր մետաղները բավական լավ հումք են ռազմարդյունաբերության, այն սպասարկող և հարակից արտադրությունների համար: Օրինակ, մոլիբդենը օգտագործվում է պողպատի արտադրությունում՝ որպես ջերմադիմացկուն և կոռոզիադիմացկուն համաձուլվածքների բաղադրամաս: Դրանով իսկ այն լայն կիրառություն ունի միջուկային էներգիայի արտադրությունում՝ նոր ռեակտորների համար ավելի ամուր խողովակների արտադրության մեջ: Մոլիբդենի համաձուլվածքներն օգտագործվում են նաև աերոտիեզերական և նավաշինական արդյունաբերությունում: Ինչ վերաբերում է ռազմարդյունաբերությունում ամենաշատ կիրառություն ունեցող այլումինին, ապա, հանրապետության տարբեր մասերում հայտնաբերվել են այլումինի հումքի՝ նեֆելինային սիենիտների հարուստ հանքավայրեր: Խոշորագույնը Փամբակի լեռնաշղթայում Թեժ սարի հանքավայրն է: Երկրում արտադրվում և արտահանվում է («Ռուսալվրմենալ» ընկերության կողմից) զգալի ծավալներով այլումինե արտադրանք՝ փայլաթիթեղ, և ըստ անհրաժեշ-

¹⁹¹ Հարությունյան Գ.Է., Ռազմարդյունաբերություն.

գերակայություններ, հնարավորություններ, հեռանկարներ: -Եր.: Լիմուշ հրատ., 2018, էջ 137:

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

տության, կարելի է հաջողությամբ նախաձեռնել նաև այլ տեսականու արտադրություն (հաշվի առնելով Ռուսալի արտադրանքի տեսականու բազմազանությունը¹⁹²):

Ժամանակակից սպառազինությունների արտադրության համար ներկայումս լայն կիրառություն ունեն նաև հազվագյուտ մետաղական տարրերը¹⁹³՝ ռենիումը (հրակայուն համաձուլվածքներում և ծածկույթներում), տիտանը (անփոխարինելի են ինքնաթիռաշինության, հրթիռաշինության և նավաշինության մեջ), սելենը (օպտիկական և ազդանշանային սարքերում), կադմիումը (միջուկային ռեակտորներում), մագնեզիումը (ինքնաթիռաշինությունում, որպես ամենաթեթև կառուցանյութ) և այլն:

Ոչ մետաղական հանածոների պաշարների հարստությամբ ու բազմազանությամբ Հայաստանի Հանրապետությունը տարածաշրջանում առաջատար տեղ է գրավում: Հանրապետության փոքր տարածքում հանդիպում են աշխարհում հայտնի համարյա բոլոր տեսակի հանքանյութերի ապարները: Հատուկ արժեք ու նշանակություն ունեն հրաբխային պրոցեսների արդյունքում առաջացած լեռնային ապարները, որոնցից են թեթև ապարները՝ տուֆերը, պեռլիտները, պեմզաները, ցեոլիտները, հրաբխային խարամները և այլն: Տարատեսակ բազալտների, գրանիտների, նեֆելինային սիենիտների, մարմարների պաշարների ծավալները հսկայական են:

Հրաբխային ծագման քարանձավների մեծ մասը օգտագործվել են նախնադարյան մարդու կողմից: Դրանցից շատերի մեջ հանդիպում ենք քարե դարի կուլտուրական հզոր շերտեր՝ քարե գործիքներ, կենդանիների ոսկորներ: Այս առումով մեծ հետաքրքրություն են ներկայացնում Հրազդանի,

¹⁹² <https://rusal.ru/about/9/>

¹⁹³ Дегтерева Е.А., Редкоземельные металлы в производственных цыпочках военнопромышленного комплекса США. Вооружение и экономика, 2012, №3 (19), с. 85-91.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Քասախի, Ախուրյանի, Ազատի, Արփայի և Որոտանի կիրճերում գտնվող անձավները: Որոշ քարանձավներում մարդը շարունակել է ապրել միջնադարում և նորագույն ժամանակներում: Հիշարժան են Արևմտյան Հայաստանի՝ Կեսարիայի, Բյուրակնի, Բասենի, Արդահանի, Օլթիի, Անիի, Մաղաքբերդի վերամշակված անձավները: Վերջիններս ստորերկրյա անցուղիների և ներքին կառույցների խոշոր և բարդ համալիրներ են:

ՀՀ տարածքում հայտնի են Գեղարդի, Ողջաբերդի, Գորիսի և այլ անձավային համալիրները: Որոշ կառույցների՝ եկեղեցիներ, բերդեր, մենաստաններ, կացարաններ, երկարակեցությունն ապահովելու նպատակով ընտրվել են ավելի ամրակուռ, մանրահատիկ հոժ շերտեր, այսպես կոչված իգնիմբրիտային կազմի մանրահատիկ տուֆաբրեկչիաներ: Սրանց մեջ հայ վարպետները կառուցել են բազմահարկ աշխարհիկ, վանական և ռազմական կառույցներ, զարդարված որմնաքանդակային զարմանահրաշ աշխատանքներով (Անի, Գեղարդ, Սեբաստիա, Կոնիա և այլն): Կառույցներն իրար հետ կապող ստորերկրյա անցուղիները ճշգրտորեն հարմարեցված են թույլ դիմադրություն ունեցող շերտերին կամ խզումնային գծերին: Անցումներից մի քանիսը հասնում են մինչև խորը գետահունները, որտեղից ջուր են տարել պաշարված բերդերի և ամրոցների բնակիչները (Թմբկաբերդ)¹⁹⁴:

Փքվող լեռնային ապարների աշխարհում ամենաորակյալ և ամենամեծ (պեռլիտներ, օբսիդիաններ և այլն) պաշարները գտնվում են Հայաստանում: Հայաստանում գտնվող Արագած-

¹⁹⁴ Բայլան Ս. Պ., Վանյան Ռ.Ա. «Հայկական լեռնաշխարհի քարանձավների ծագումը, ձևաբանությունը և նրանց համալիր ուսումնասիրության ու օգտագործման հեռանկարները», անձավագիտական ուսումնասիրությունների գիտական ղեկավարի զեկույցը Հայկական աշխարհագրական ընկերությունում, 1982.

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

պեռլիտի հաստատագրված պաշարները կազմում են 150 մլն խմ, իսկ կանխատեսվող պաշարների ընդհանուր քանակը հասնում է մինչև 3 մլրդ խմ-ի: Հայաստանի ամբողջ տարածքով քարտեզագրված են 100-ից ավելի բազալտի, անդեզիտի հանքավայրեր, որոնցից մի քանիսը եզակի են իրենց բաղադրությամբ: Նշանակությամբ և որակական ցուցանիշներով անգնահատելի են Հայաստանի տարածքում գործող քվարցիտների, կարբոնատների, ցեոլիտների, հրաբխային խարամների և պեմզաների, հրակայուն և բենթոնիտային կավերի, դիատոմիտների, գիպսի հանքավայրերի մեծ պաշարները:

Անցյալ դարի 90-ականներին, ՀՀ անկախության հռչակումից հետո էներգետիկ հիմնախնդիրները լուծելու մեջ մեծ դեր խաղացին ԽՍՀՄ տարիներին հիմնադրված անտառային ֆոնդերը, որոնց վերականգնումը մինչև հիմա դեռ լիովին չի իրականացվել:

Մինչդեռ անտառապատ տարածքների ռազմավարական նշանակությունը շատ կարևոր է գոնե հետևյալ նկատառումներով՝

- Էներգետիկ ճգնաժամի ժամանակ որպես վառելիքի օգտագործումը՝ օրինակը ՀՀ-ում և ԼՂՀ-ում 1990-ականների սկզբներին,

- քողարկիչ հատկությունը հատկապես հակառակորդի օդային հետախուզության միջոցներից,

- պտուղների, հատապտուղների, սունկի, խոտաբույսերի և այլ բնական սննդամթերքի հայթայթման աղբյուր,

- անհրաժեշտ վայրերում տնկված բազմահարկ և բազմաշերտ անտառաշերտերը կարող են փակել հակառակորդի տեսադաշտը և ապահովել ՀՀ սահմանամերձ որոշ բնակավայրերի (օրինակ Տավուշի մարզում) և խաղաղ բնակչության անվտանգությունը,

- միջդաշտային անտառաշերտերը բացի գյուղատնտեսական նշանակությունից կարող են նաև

արգելք հանդիսանալ հակառակորդի գրահատեխնիկայի շարժման հնարավոր ուղղությունների վրա՝ խոչընդոտելով կամ դժվարացնելով նրանց տեղաշարժը,

• հնարավորություն է տալիս համեմատաբար փոքր խմբերով պայքարել հակառակորդի գերակշիռ ուժերի դեմ:

Անտառը սովորաբար «գրավում է» կռվի դաշտում գործող զորքերին: «Անտառում մարտի ժամանակ հրամանատարը կարող է հեշտորեն կորցնել վերահսկողությունը ենթակա զորքերի վրա... Սահմանափակ տեսադաշտը, կարճ հեռավորությունների վրա մարտ վարելու լարվածությունը և աղմուկի ուժեղացումը, կարող են հասցնել այնպիսի իրավիճակի, որ հնարավոր չլինի տարբերել սեփական զորքը հակառակորդի զորքից»¹⁹⁵:

Անտառում մարտի վարումը առավել բարդերից է: Երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբին Արևելյան Լեհաստանի, Բելառուսի և Ռուսաստանի համատարած անտառածածկ գոտին և հսկայական ճահճապատ տարածքները, ճանապարհների գրեթե լրիվ բացակայության պայմաններում, էականորեն դժվարացնում էին գերմանական զորքերի գործողությունները: Զորքերի ոչ բավարար պատրաստվածությունն այդ պայմաններում գործելու համար, բացատրվում է խաղաղ ժամանակ անտառապատ տեղանքներում հազվադեպ անցկացված զորավարժություններով, որն էլ իրեն հերթին բացատրվում էր անտառատնկարկների պահպանության անհրաժեշտությամբ: Պատերազմից առաջ, անտառային և անտառաճահճային տեղանքներում նախատեսվող գործողությունները դասվում էին հատուկ պայմաններում ռազմական գործողություններ իրականացնելու կատեգորիային:

¹⁹⁵ Кохенгаузен Ф., Вождение войск, Тактический справочник для командира общевойсковой соединения и его помощников, -М.: Воениздат, 1937, -368 с.

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

Խիտ բուսականությունը մինչև նվազագույնի է հասցնում դիտարկման և կրակի վարման հեռավորությունը: Տեղանքում կողմնորոշումը խիստ դժվար է: Միևնույն ժամանակ լայն հնարավորություններ են բացվում թշնամու հետապնդման, թաքստոցների և դարանների պատրաստման համար: Այս ամենը հատուկ պահանջներ է առաջադրում սպառազինման, սարքավորումների և զինվորների մարտավարական նախապատրաստման վրա: Օրինակ՝ բարեխառն գոտու անտառային տեղանքում մարտի արդյունավետ վարման համար անհրաժեշտ է վերադասավորել դասակը: Կախված առաջադրանքից և տեղանքից, որտեղ ընթանում են ռազմական գործողությունները՝ ստորաբաժանումների կազմը և սպառազինությունը կարող է փոխվել: Բայց, քանի որ խմբի համար հիմնական վտանգը ներկայացնում է դարանը, ապա դասակի կառուցվածքն այնպիսին պետք է լինի, որպեսզի ապահովի առավելագույն դիմադրություն և կորուստները հասցնի նվազագույնի¹⁹⁶:

Անտառում տանկերը լայնորեն կիրառվում էին գլխավոր հարվածի ուղղությամբ հարձակվելու ժամանակ, հատկապես ճանապարհների, արահետների երկայնքով և նոսր անտառների միջով: Գործելով ռազմական զորաշարերի կազմում, դրանք հարձակվում էին անմիջապես հետևակի ետևից՝ ապահովելով նրա առաջխաղացումը, իսկ արահետներում ու բացատներում իրականացնում էին հրետանու խնդիրները՝ պայքար մղելով հակառակորդի տանկերի դեմ:

Անտառային տեղանքում մարտի վարման հմտությունների վերաբերյալ կան նաև բազմաթիվ պատմական հիշատակություններ: Բերենք դրանցից մեկը՝ Հռոմեական Դոմիցիան Ավգուստ կայսերը հրամայեց անտառում 120 մղոն

¹⁹⁶ Ռուֆուս Բ.Կ. «Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը», -Եր.: Հայաստան հրատ., 1987. էջ 417-418:

երկարությամբ արահետ բացել լեզվոնների տեղաշարժի համար, որով նա «մերկացրեց» նաև գերմական ցեղերի թաքստոցները և բնակատեղիները, որտեղից նրանք անսպասելի հարձակումներ էին գործում:

Հարկ է նշել, որ ռազմավարական առավելություններ ձեռք բերելու նպատակով նույն մարտավարությունը կիրառեց ԱՄՆ-ն մոտ 2000 տարի հետո՝ Վիետնամական պատերազմում: 1961 թ. օգոստոսին ԱՄՆ-ի նախագահ Քենեդին թույլատրեց քիմիկատների կիրառումը Հարավային Վիետնամում բուսականության վերացման համար: Քիմիկատների կիրառման հիմնական նպատակն էր ջունգլիների ծառային բուսականության ոչնչացումը, որը կհեշտացներ հյուսիսվիետնամական ստորաբաժանումների և պարտիզանական ջոկատների հայտնաբերումը: Վիետնամի դեմ այս էկոլոգիական պատերազմը տևեց մինչև 1971 թ-ը: Այս ընթացքում ԱՄՆ-ը Հարավային Վիետնամի տարածքում անտառների ոչնչացման նպատակով ինքնաթիռների և ուղղաթիռների միջոցով փոշիացրեց 72 մլն լիտր դեֆոլիանտներ «Agent Orange», այդ թվում 44 մլն լիտրը դիոքսին պարունակող, որի պատճառով նույնիսկ պատերազմի ավարտից հետո տարբեր հիվանդություններով մահացան մի քանի տասնյակ հազար մարդ¹⁹⁷: Արդյունքում ընդհանուր առմամբ ոչնչացվեց մոտ 1,6 մլն հա տարբեր տեսակի անտառներ: Ներկայումս էլ, 50 տարի անց, և՛ բնական համալիրները, և՛ մարդիկ շարունակում են իրենց վրա կրել այդ բնապահպանական աղետի հետևանքները:

Անտառապատ շրջանները ռազմական իմաստով երբեք չեզոք չեն լինում. դրանք «օժանդակում են» լավ նախապատրաստված զորքերին և «պատժում» այն հրամանատարներին, որոնք հաշվի չեն առնում կամ չեն հասկանում այդ միջավայրի հետևյալ առանձնահատկությունները.

¹⁹⁷ Фронтин С. Ю., Военные хитрости (Стратегемы), -СПб.: «Алтейя», «Античная библиотека», 1996, с. 11.

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

- առավելություն ունեն փոքր ստորաբաժանումները,
- տեղաշարժն անտառապատ տեղանքներում միշտ դժվար է,
 - հեծելագորը և մեքենայացված գումարտակները միշտ ավելի դանդաղ են շարժվում, քան հետևակը,
 - բնական հարթակները դեսանտայինների «իջեցումը», «նստեցումը», կազմակերպելու համար, ինչպես նաև պոտենցիալ թռիչքուղիները և վայրէջքուղիները ծայրահեղ քիչ են և հազվադեպ,
 - կրակի վարման համար տեսանելիությունը և կրակի սեկտորը շատ սահմանափակ են,
 - տեղանքում կողմնորոշումը պահանջում է հատուկ տեխնոլոգիաներ,
 - առկա են լուրջ խոչընդոտներ տանկերի, հրետանու, այլ ծանր զինատեսակների ինչպես նաև ավիացիոն անմիջական աջակցության համար,
 - հրամանատարությունը, կառավարումը, կապը և թիկունքային ապահովումը առավելապես բարդ են,
 - դեսանտային-դիվերսիոն զորամիավորները և պաշտպանվող ուժերն ունեն բնորոշ առավելություններ,
 - քանակական և տեխնիկական գերազանցությունը գնահատվում է ավելի քիչ, քան հարմարվողականությունը¹⁹⁸:

Անտառային զանգվածների պահպանումն ու ընդարձակումը որպես ՀՀ Ազգային անվտանգության ամրապնդման կարևոր գործոն է: Անտառածածկի ընդարձակմանն ու կառավարման բարելավմանն էականորեն կարող են նպաստել ՀՀ կառավարության 2004 թ. ընդունած «ՀՀ անտառի ազգային քաղաքականությունը և ռազմավարությունը», ՀՀ անտառային նոր օրենսդրությունը (2005թ.), ՀՀ

¹⁹⁸ Хозин Г., Необъявленная война природе, вокруг света, № 10 (2625), 1977.- 32 с.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

անտառային ազգային ծրագիրը (2005թ.)¹⁹⁹ և ՀՀ կառավարության 2004 թ. ընդունված «Ապօրինի անտառահատումների հետ կապված խնդիրների լուծմանն աջակցող միջոցառումների գործողությունների ծրագիր» թիվ 38 արձանագրային որոշումը²⁰⁰:

Պրոֆ. Պ.Խուրշուդյանի կարծիքով ՀՀ օպտիմալ անտառապատվածությունը պետք է կազմի տարածքի 20.1 %-ը, որին կարելի է հասնել ընդլայնելով գոյություն ունեցող անտառածածկ տարածքները շուրջ 266.5 հազար հեկտարով²⁰¹ : Այս պարագայում միայն ՀՀ անտառազանգվածները, բացի տնտեսական և բնապահպանական գործառույթներից ձեռք կբերեն նաև լուրջ ռազմական նշանակություն և կնպաստեն ազգային անվտանգության մակարդակի բարձրացմանը:

Այս կարևորագույն փաստաթղթերն ամրապնդում են ՀՀ կառավարության վերաբերմունքն անտառների արդյունավետ պահպանության, կայուն օգտագործման և վերարտադրության նկատմամբ:

2007թ-ին ընդունված ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարության ՀՀ ազգային անվտանգության հիմնական

¹⁹⁹ Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգիրքը, -Եր.: 2005, <http://www.parliament.am>

²⁰⁰ Սայադյան Հ.Յ., Սայադյան Հ.Յ. Հայաստանի Հանրապետության անտառային զանգվածների պահպանումը և ընդարձակումը՝ որպես ազգային անվտանգության ապահովման կարևոր գործոն, ՀԲ, -Եր.: 2015, թիվ 4, էջ 95-105:

²⁰¹ Խուրշուդյան Պ.Ա., Ջերմաստիճանը 2-30 բարձրանալու և տեղումները 10% նվազելու դեպքում միջավայրի խոցելիության մեղմման ստրատեգիան անտառածածկ տարածքների ընդարձակման միջոցով (էջ 308-321), Հայաստան. կլիմայի փոփոխության հիմնահարցերը /հոդվածների ժողովածու, խմբագիր՝ Ա.Հ. Գաբրիելյան. -Եր.: 1999. -373 էջ:

արժեքների մեջ անկախության ոլորտում արժեքների մեջ մտնում են նաև հետևյալ կետը՝

- բնական պաշարների պահպանումն ու արդյունավետ օգտագործումը, բնապահպանական իրավիճակի համակարգված բարելավումը: Ներքին սպառնալիքները ենթաբաժնում անդրադարձ է կատարվել բնապահպանական խնդիրներին՝

- Բնապահպանական խնդիրները և բնական պաշարների անարդյունավետ կառավարումը. Հայաստանի Հանրապետությունը կարևորում է լեռնահանքային արդյունաբերության, բնական, հատկապես՝ անտառային և ջրային պաշարների օգտագործման արդյունավետության բարձրացումը: Բնապահպանական անվտանգության տեսակետից առանձնահատուկ նշանակություն ունեն Սևանա լճի պահպանումն ու դրա պաշարների գրազետ օգտագործումը:

4.8 Հետևություններ

ՀՀ աշխարհագրական դիրքի ոչ բարենպաստ լինելն առաջին հերթին պայմանավորվում է դեպի բաց ծով ելքի բացակայությամբ, ինչը նախ խնդիրներ է ստեղծում ազատ բեռնափոխադրումների համար և որոշակիորեն ավելացնում է ՀՀ միջազգային բեռնափոխադրումների գները:

Ամենատեղաբար սահմանագիծ ունեցող երկու հարևանների հետ՝ Ադրբեջան և Թուրքիա, առկա են փակ սահմաններ և տրանսպորտային շրջափակում: Ադրբեջանի հետ սահմանը փաստացի ռազմաճակատի գիծ է հանդիսանում:

Ոչ բարեկամ երկրների հետ երկար սահմանները խնդիրներ է հարուցում նաև դրանց պահպանության և պաշտպանության իրականացման համար: Խնդրի մասամբ լուծում է դարձել Թուրքիայի և Իրանի հետ ՀՀ սահմանի պահպանության՝ ՌԴ սահմանապահ զորքերի հետ համատեղ իրականացումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ քաղաքական և տնտեսական հիմնական կենտրոնները՝ այդ թվում մայրաքաղաք Երևանը գտնվում են Թուրքիայի հետ մերձսահմանային գոտում, ինչը նույնպես խնդիր է երկրի պաշտպանողունակության ամրապնդման համար:

Աշխարհագրական դիրքի դրական հատկանիշ կարելի է համարել Ադրբեջանի նկատմամբ առավել բարձր՝ գերիշխող դիրքի առկայությունը: Այն նաև հնարավորություն է տալիս ՀՀ-ին վերահսկել տարածաշրջանի բազմաթիվ խոշոր գետերի հոսքերի ձևավորման շրջանները: Հայաստանի կողմից գրագետ ջրային քաղաքականություն վարելու դեպքում այն կարելի է դարձնել ոչ պակաս գործոն քան Ադրբեջանի նավթագազային պաշարները:

Անտառային ազգային ծրագրի ընդհանուր դրույթներում նշվում է, որ ՀՀ անտառները լեռնային են, ունեն ընդգծված հողապաշտպան, ջրապաշտպան և կլիմայակարգավորիչ նշանակություն, ինչպես նաև սոցիալ-տնտեսական, գիտական բարձր արժեք և հարուստ կենսաբազմազանություն: Հանրապետության անտառների մոտ 70 %-ը ներկայումս կազմալուծված ու ծերացած է, իսկ անտառազանգվածները հիմնականում գտնվում են կտրտված ռելիեֆի և դժվար հասանելի վայրերում՝ բնակավայրերից և ճանապարհներից որոշ հեռավորության վրա: Եթե այս ամենին ավելացվի նաև ՀՀ անհավասարաչափ անտառապատվածության հանգամանքը, ապա պարզ կդառնա երկրի անտառների սահմանափակ ռազմական նշանակությունը: Հասկանալի է, որ անտառների ռազմական նշանակությունը և ազգային անվտանգությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է իրականացնել անտառային ազգային ծրագրից և օրենսգրքից բխող պահանջները՝ հատկապես անտառների գիտականորեն հիմնավորված կառավարման, դրանց տարածքների ընդարձակման և պահպանման առումով:

**ԳԼՈՒԽ 5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ
ՌԱԶՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄԸ ԵՎ
ԳՆԱՀԱՏՈՒՄԸ**

5.1 Ժողովրդագրական բնութագիրը

Մարդկության պատմության բոլոր պատերազմները գործնականում իրականացվել են բնակեցված և աշխարհագրական տեսակետից մոլորակի հասանելի վայրերում, իսկ բնակավայրերը հանդիսացել են որպես ակտիվ ռազմական գործողությունների մարտաբեմեր: Բավականին հաճախ օպերացիաների հաջող արդյունքների վրա իրենց մեծ ազդեցությունն են ունեցել տնտեսաաշխարհագրական գործոնի ռազմավարական և օպերատիվ-ռազմավարական մակարդակներում ոչ բավարար ուսումնասիրությունները: Ցանկացած պետության տնտեսության հիմքը կազմում են քաղաքային և գյուղական բնակավայրերը և դրանք իրար միացնող հաղորդակցության ուղիները:

Բազմաթիվ անվանի զորավարներ են կարևորել մարդկային գործոնի դերը ռազմական հաջողությունների հասնելու համար: Հիշատակենք դրանցից մեկին՝ Չինական Ժողովրդական Հանրապետության հիմնադիր Մաո Ցզե Դունին: Նա մասնավորապես նշել է՝ «Գոյություն ունի «զենքի ամենազորության» տեսություն... Այդ զենքը ներկայումս էլ է համարվում կարևոր գործոն պատերազմում, սակայն այս գործոնը վճռորոշ չէ, քանի որ առաջին տեղում միշտ եղել է մարդը և ոչ թե առարկան: Տարբեր կողմերի միջև հակամարտությունը իր մեջ ներառում է ոչ միայն ռազմական և քաղաքական ուժերի պայքար, այլ նաև մարդկային ներուժի և նրա բարոյական վիճակի պայքար»²⁰²:

²⁰² Selected Works of Mao Tse-Tunga, (London: Lawrence and Wishart, 1954-1956); Ralph L. Powell, "Maoist military Doctrine", Asian Survey (April 1968), p. 240-243

Չինացի մեկ ուրիշ ռազմական տեսաբան Սուն Յզին, որն ապրել է Ք.ա. V դարում, նույնպես հատուկ կարևորություն է տալիս մարդկային գործոնին՝ «Եթե գիտես հակառակորդիդ, ուրեմն գիտես ինքդ քեզ, և հարյուրավոր մարտերում վտանգի մեջ չես լինի: Եթե դու չգիտես ոչ հակառակորդին և ոչ էլ քեզ, ապա հիշիր, որ յուրաքանչյուր անգամ դու ենթարկվելու ես վտանգների»²⁰³:

Բնակչությունը ռազմական աշխարհագրության ուսումնասիրման հիմնական օբյեկտներից մեկն է, հետևաբար՝ նրա ռասայական-էթնիկ կառուցվածքը, լեզուները, կրոնը, սովորույթները, թվաքանակի, վերարտադրության, տեղաբաշխման, ազգային ու սեռատարիքային կազմի, աշխատանքային ռեսուրսների տարբեր կողմերին վերաբերող հարցերի ուսումնասիրությունը, քննարկումը, ձեռք է բերում մեծ կարևորություն: Մոբիլիզացիոն ռեսուրսների պլանավորման ժամանակ հատկապես կարևորվում են ժողովրդագրական այնպիսի տվյալներ, ինչպիսիք են՝ սեռատարիքային կազմը, ծնելիության մակարդակը, կյանքի միջին տևողությունը, ամուսնացածների քանակը և այլն:

Պետությունների գերբնակեցվածությունը, անվտանգության ապահովման և կենսաապահովման տեսակետից կարող է ունենալ նաև բացասական կողմեր: Ինչպես օրինակ նոր կենսական տարածքների գրավման համար Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ Գերմանիան հարձակվեց ԽՍՀՄ-ի վրա: Համանման խնդիրների լուծման պատրվակով Ճապոնիան 1930-ականներին զավթել էր Մանջուրիան, Չինաստանի արևելքը և հարավարևելյան Ասիայի կղզիների մեծ մասը:

Հայերը պատկանում են եվրոպոիդ ռասայի արմենոիդ մարդաբանական տիպին և որպես էթնիկական կազմավորում

²⁰³ Лю Чжинчунь, Трактат Сунь-Цзы о военном искусстве. –Пекин, 2009, с. 254

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

առաջացել են հնդեվրոպական ընդհանրական լեզվաընտանիքի տրոհման հետևանքով:

Ինչպես ցույց են տալիս պատմական աղբյուրները, հույն և օտարազգի այլ հեղինակներ իրենց աշխատություններում, Հայաստանը հնագույն ժամանակներից սկսած ներկայացնում են որպես միալեզու՝ հայ ժողովրդի երկիր:

Հնագույն ժամանակներից սկսած՝ Հայկական լեռնաշխարհի բնակչության բացարձակ գերակշռող մասը միշտ եղել են հայերը: Նրանց թիվն առավել մեծ է եղել Արարատյան դաշտում, Վասպուրականում, Տուրուբերանում, Սյունիքում, Արցախում:

Քանի որ բնակչության թվաքանակի վերաբերյալ ճշգրիտ տվյալներ ստացվում են միայն մարդահամարներով, իսկ այդպիսիք բնականաբար չէին անցկացվում հնում, Արևելյան Հայաստանում աշխատանքային նպատակների համար բնակիչների ցուցակագրությունները կատարվել են 1829–1832 թթ., հետևաբար Հայաստանի հնագույն ժամանակաշրջանի բնակչության վերաբերյալ ստույգ տվյալներ չկան:

«Հիմք ընդունելով զորքի քանակը, հարկերի տվյալները (զլխաքանակը և զանազան այլ անուղղակի հիշատակություններ)՝ կարելի է եզրակացնել, որ հին Հայաստանում հայ բնակչության թիվը չի անցել 5–6 միլիոնից: Հավանական պետք է համարել, որ բուն Հայաստանի բնակչության թիվը 5–6 մլն–ի է հասել XII դարում, մոնղոլների ավերիչ արշավանքների նախօրյակին»²⁰⁴:


Գտնվելով Եվրոպան Ասիայի հետ կապող հին ճանապարհների խաչմերուկում և հանդիսանալով իսլամ դավանող և քրիստոնյա աշխարհների սահմանային պետություն, Հայաստանը բազմիցս ենթարկվել է արևելքից դեպի արևմուտք, հարավից դեպի հյուսիս արշավող

²⁰⁴ Հակոբյան Թ.Խ, Հայաստանի պատմական աշխարհագրություն, -Եր.: 1968. էջ 79:


բարբարոս ցեղերի հարձակումներին, եղել է Պարսկաստանի ու Հռոմի, Պարսկաստանի ու Բյուզանդիայի, այնուհետև Պարսկաստանի ու Թուրքիայի միջև մղած երկարատև պայքարի կռվախնձոր, ապա իր գոյության ամբողջ ժամանակաշրջանում հայ ժողովրդի կյանքում տեղի են ունեցել քանակական խիստ փոփոխություններ:

Հայաստանի բնակչության թվաքանակի, ազգային կազմի, տեղաբաշխման մեջ խոշոր տեղաշարժեր են կատարվել Արևելյան Հայաստանը Ռուսաստանի հետ միավորվելուց (1828 թ.) հետո: Դա տեղի էր ունենում Թուրքիայի տիրապետության տակ գտնվող Արևմտյան Հայաստանից, ինչպես նաև Պարսկաստանից մեծ թվով հայեր Արևելյան Հայաստան տեղափոխվելու հետևանքով: Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միավորվելուց հետո, Ռուսաստանից այստեղ են տեղափոխվել մեծ թվով ռուս զինվորականներ, սպայական կազմ, իրենց ընտանիքներով, ինչպես նաև զգալի թվով ռուսազգի վարչական աշխատողներ: Բացի դրանից, Հայաստանի տարբեր վայրերում բնակեցվում են Ռուսաստանից արքայազմի աղանդավորներ: Ըստ որում, ցարական կառավարությունը հատուկ նպատակներով նրանց բնակեցնում է տրանսպորտային ու ռազմական մեծ կարևորություն ունեցող լեռնանցքներում (Քարտեզ 9): Այդպես են ձևավորվել Սեմյոնովկան և Ելենովկան (այժմ Սևան) Սևանի լեռնանցքում, Միխայլովկան (այժմյան Ճամբարակ), Ֆիլիե-տովոն, Գոլովինոն, Պապանինոն (այժմ Դիլիջանի կազմում), Վորոնցովկան (այժմ Տաշիր): Այսպիսով՝ պարսիկների հեռանալուց հետո Արևելյան Հայաստանի բնակչության ազգային կազմը փոխվել է ի հաշիվ այստեղ տեղափոխված ռուս աղանդավորների:

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ



XIX դարի կեսերին ՄՈՒՎԿԱՆՆԵՐԻ ՏԱՐԱՔՆԱԿԵՑՈՒՄԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ



ՊԼԵՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Ֆիզիոտոլի մոլանանդով բնակեցված բնակավայրեր
- պետական սահման
- պատմամարզային սահման
- կրկարտոլի
- գետ
- լիճ
- լեռ
- լեռնամերձ

Շտաբի քաղաքը - 2019
Մասշտաբը 1: 750 000

Քարտեզ 9. Մոլականների տարաբնակեցումը Արևելյան Հայաստանում XIX դարի կեսերին

1831 թ. Արևելյան Հայաստանի բնակչությունը եղել է 161,7 հազ. մարդ, 1897 թ. համառուսական առաջին մարդահամարով այն կազմել է արդեն 797.9 հազ, իսկ 1913 թ. ավելի քան 1 մլն 31 հազար մարդ²⁰⁵:

Այսպիսով, 1831–1913 թթ. Արևելյան Հայաստանի բնակչությունն աճել է ավելի քան վեց անգամ: Բնակչության աճը պայմանավորված էր նրանով, որ Ռուսաստանի տիրապետության տակ Արևելյան Հայաստանն ավելի երկար ժամանակ ապրեց: Իսկ 1914–1920 թթ. Առաջին համաշխարհային պատերազմի քողի տակ թուրքական բարբարոս

²⁰⁵ Ավագյան Գ.Ե. Հայկական ՍՍՀ բնակչությունը, -Եր.: ԵՊՀ հրատ.,1975. -156 էջ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

իշխանությունները կազմակերպեցին հայերի Մեծ եղեռնը: Այս իրադարձությունները, մեծ բացասական ազդեցություն թողեցին Արևելյան Հայաստանի բնակչության վրա: Արևելյան Հայաստանի բնակչության մի զգալի մաս էլ զոհ դարձավ Առաջին համաշխարհային և Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո սկսված քաղաքացիական պատերազմներին: 1920 թ. նոյեմբերին Խորհրդային Հայաստանի բնակչությունը կազմել է ընդամենը 720 հազ. մարդ:

Հայաստանի բնակչության թվաքանակը նորից համեմատաբար արագ աճել է 1920–ական թվականներին: Սակայն Խորհրդային իշխանության տարիներին էլ հանրապետության բնակչության աճի վրա զգալի բացասական ազդեցություն են թողել ստալինյան բռնապետության վարած հակահայկական քաղաքականությունը, որի հետևանքով մեծ թվով հայեր աքսորվել են Սիբիր, զգալի թվով կալանավորվել, հալածվել ու գնդակահարվել են բանտերում, ինչպես նաև Երկրորդ համաշխարհային պատերազմը, որի ժամանակ ընդհանուր առմամբ զոհվել են ԽՍՀՄ-ի ավելի քան 300 հազ. հայեր:

Հայ ժողովուրդը միշտ բնութագրվել է բարձր աճով: Հանրապետության բնակչության աճը զգալիորեն բարձրացել է Խորհրդային իշխանության տարիներին, երբ առողջապահության զարգացման շնորհիվ մահացությունը խիստ կրճատվել է: Արդեն 1960–ական թվականներին հանրապետության բնակչության բնական աճը յուրաքանչյուր 1000 բնակչի հաշվով հասել էր 30–33 մարդու: Ցավոք, հետագայում բնական աճը անկում է ապրել՝ 1990 թ. կազմելով 16,3, իսկ 2002 թ.՝ 2,1 մարդ, հազար մարդու հաշվով (Աղյուսակ 7): 1990–ական թվականներից աճի այդպիսի կտրուկ անկումը

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

բացատրվում է հանրապետությունում ստեղծված տնտեսական, սոցիալական ծանրագույն պայմաններով²⁰⁶:

Մինչույն ժամանակ խորհրդային իշխանության տարիներին հանրապետությունում բնակչության թվաքանակի վրա բնական բարձր աճից բացի, զգալի դեր է խաղացել մեխանիկական աճը: Այդ տարիներին Ադրբեջանի, Վրաստանի, միջինասիական հանրապետությունների, Ռուսաստանի հայաբնակ վայրերից, ինչպես նաև արտասահմանյան երկրներից Հայաստան են ներգաղթել մեծ թվով հայեր: Միայն արտասահմանյան երկրներից մինչև 1980-ական թվականները Հայաստան են վերադարձել 240-250 հազ. հայեր²⁰⁷:

2014թ-ին Սիրիայի Արաբական Հանրապետությունում քաղաքացիական պատերազմի պատճառով տեղի հայ համայնքից մոտ քսան հազար բնակիչներ ներգաղթեցին Հայաստանի Հանրապետություն, որոնց մի մասն այնուհետև արտագաղթեցին հիմնականում եվրոպական երկրներ և ԱՄՆ:

²⁰⁶ Մելքումյան Ս.Ա. Հայաստանի հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսական և սոցիալական աշխարհագրություն, Եր.: Զանգակ-97, 2014. -250 էջ:

²⁰⁷ Պոտոսյան Ա.Հ. ՀՀ գյուղական տարաբնակեցում (ձևավորումը, շարժընթացը, վիճակը) // -Եր.: 2001. -233 էջ:

Հայաստանի բնակչության թվաքանակի շարժը ՀՀ ներկայիս տարածքում (Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2018)

Տարին	Բնակչության	
1831	161,7	
1897	797,9	մարդահամար
1913	1031,0	մարդահամար
1926	881,3	մարդահամար
1939	1282,3	մարդահամար
1959	1763,0	մարդահամար
1970	2491,9	մարդահամար
1979	3030,7	մարդահամար
1989	3448,6	մարդահամար
2001	3213,0	մարդահամար
2011	3018,9	մարդահամար
2018	2972,7	

Այստեղ հարկ է նշել նաև, որ տարբեր ժամանակներում ՀՀ բնակչության ներգաղթը նպաստել է երկրում գիտության, կրթության մշակույթի կտրուկ զարգացմանը և որպես դրան նպաստող գործոն էր հանդիսանում տարբեր երկրներից ներգաղթողների կողմից իրենց հետ, նոր գիտելիքների և մշակույթի ներմուծումը:

Պատմական աղբյուրները ցույց են տալիս, որ տարբեր պատճառներով, հայերը Հայաստանից դուրս բնակություն են հաստատել, հայկական համայնքներ են ստեղծել դեռևս Ք.ա. I դարից սկսած:

Տարբեր երկրներում ազգային համայնքների գոյությունը բացի զուտ ժողովրդագրական տեսակետից ներկա պայմաններում ձեռք է բերում նաև քաղաքական, ռազմաքաղաքական և սոցիալ-տնտեսական նշանակություն:

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

Սկսած XX դարի 90-ական թվականների սկզբից նորանկախ Հայաստանի Հանրապետությունը մշտապես զգացել է սփյուռքահայության և՛ ֆինանսական, և՛ բարոյական, և՛ քաղաքական աջակցությունը:

Հայկական սփյուռքի ռազմաքաղաքական նշանակությունն արժևորվել է դեռ Խորհրդային Միության ժամանակներում: Այստեղ կարծում են բավական է հիշել իրանահայության դերը հակահիտլերյան կռաւիցիայի երեք երկրների ղեկավարների մասնակցությամբ Թեհրանի կոնֆերանսի կազմակերպման և անվտանգության ապահովման գործում, որն արժանացել է Խորհրդային իշխանությունների ամենաբարձր գնահատականին:

Ներկայումս միջազգային վերլուծական կենտրոնների կողմից ԱՄՆ-ում հայկական լոբին իր հզորությամբ համարվում է երկրորդը՝ հրեական լոբբիստական կազմակերպություններից հետո:

Սփյուռքի հետ տարվող աշխատանքների ճիշտ մշակված ռազմավարությունն այն կարող է դարձնել Հայաստանի Հանրապետության անվտանգային համակարգի կարևոր հիմնաքարերից մեկը:

Արտասահմանյան հայկական առավել հնագույն համայնքները ձևավորվել են Պարսկաստանի, Բյուզանդիայի տիրապետություններում, Հյուսիսային Աֆրիկայում: Ռուսաստանում ապրող հայերի թիվը գնահատվում է ավելի քան 2,5 մլն: Միայն Մոսկվա քաղաքում հայ համայնքի թիվը կազմում է ավելի քան 500 հազ., իսկ Կրասնոդարի երկրամասում այն հասնում է 1 մլն-ի:

1979 թ. մարդահամարի տվյալներով՝ Վրաստանում ապրող հայերի թվաքանակը կազմել է 448 հազ., իսկ 1989 թ. մարդահամարի տվյալներով՝ 437,2 հազ: Այսօր Վրաստանում բնակվում է 250.000 (ոչ պաշտոնական տվյալներով 400.000) հայ, որոնք բնակվում են հիմնականում Սամցխե-Ջավախ-

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

քում, Թբիլիսիում, Քվեմո Քարթլիում, Բաթումում, Քորուլեթում, Սուրամում, Գորիում և այլ վայրերում:

Հայկական համայնքը ԱՄՆ-ում սկսել է ձևավորվել 1870-ական թվականներից, այժմ այն գնահատվում է ավելի քան 1,5 մլն մարդ:

Ֆրանսիայում ապրող հայերի թիվը գնահատվում է ավելի քան 500 հազ. մարդ: Առավել մեծաթիվ է նաև Իրանի հայկական համայնքը: Մինչև իրանական հեղափոխությունը, այս երկրում ապրում էր ավելի քան 208 հազ. հայ, 1986 թ. տվյալներով այն իջել և կազմել է 180 հազ. մարդ: Այժմ այն գնահատվում է 200 հազ. (2012 թ.): Հայեր Իրանի հյուսիս-արևմուտքում որպես՝ բնիկ տար ապրում են անհիշելի ժամանակներից, իսկ երկրի մյուս շրջաններում՝ Ք.Ճ. II դարից:

Լիբանանում և Սիրիայում հայկական հոծ համայնքի առկայությունն էր հիմնական պատճառն այդ երկրներում ՀՀ ՁՈւ խաղաղապահ և մարդասիրական գործունեություն իրականացնող զորախմբեր տեղակայելու որոշումների կայացման համար (2018 թ.):

Չնայած XIX դարի վերջին և XX դարի սկզբին Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած հրեշավոր ցեղասպանությանը, ներկայումս մեծ թվով հայեր շարունակում են ապրել Թուրքիայում, այդ թվում նաև Արևմտյան Հայաստանում: Պաշտոնական տվյալներով՝ այժմ Թուրքիայում ապրող հայերի թվաքանակը հասնում է շուրջ 70 հազարի, ոչ պաշտոնական տվյալներով՝ ավելի քան 1 մլն, որոնց գերակշիռ մեծամասնությունը մահմեդականացված է:

Վերջին տվյալներով՝ աշխարհում հայերի թիվը գնահատվում է ավելի քան 10,0 մլն, որից մոտ 3 մլն ապրում է Հայաստանի Հանրապետությունում, մյուս մեծ մասը՝ աշխարհի ավելի քան 60 երկրներում:

Սփյուռքում հայապահպանության խնդիրը կարևորվում է ՀՀ կողմից: Կազմակերպված և բնակության երկրում արդյունավետ կերպով ներգրավված սփյուռքի առկայությունը

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

հատկապես կարևորվում է ՀՀ միջազգային ներգրավվածության մակարդակի բարձրացման տեսակետից:

Պետության անվտանգության գնահատման տեսակետից կարևոր նշանակություն է տրվում բնակչության տարածքային տեղաբաշխմանը: Ինչքան բնակչությունը հավասարաչափ է տեղաբաշխված ամբողջ պետության տարածքում, ինչքան խոշոր և միջին բնակավայրերը տեղակայված են սահմանից հեռու և իրարից որոշակի հեռավորության վրա, այնքան ավելի հեշտ է կազմակերպել դրանց պաշտպանությունը: Բնակչության խոցելի տարածքային տեղաբաշխման օրինակներ կարելի է նշել Եգիպտոսը, Ավստրալիան, Մերձավոր Արևելքի շատ երկրներ, իսկ առավել անվտանգ տարաբնակեցման օրինակներ՝ Գերմանիան, Ֆրանսիան և շատ այլ եվրոպական երկրներ:

Հայաստանի Հանրապետության լեռնային երկիր հանդիսանալն իր ազդեցությունն է թողել հայ ժողովրդի պատմական-քաղաքական, սոցիալ-տնտեսական առանձնահատկությունների ձևավորման վրա:

ՀՀ տարածքի ծովի մակերևույթից մինչև 1000 մ բարձրության համեմատաբար նպաստավոր պայմաններ ունեցող վայրերում տեղաբաշխված են ՀՀ ամբողջ բնակչության կեսից ավելին (մոտ 55 %-ը): Առավել խիտ է բնակեցված Արարատյան դաշտը: ՀՀ բնակչության միջին խտությունը մեկ քառակուսի կիլոմետրի վրա 2018 թ. տվյալներով կազմում է շուրջ 100 մարդ (1989 թ. մարդահամարի տվյալներով եղել է 127 մարդ): Արարատյան դաշտում, որն արդյունաբերության, գյուղատնտեսության, տրանսպորտի զարգացման տեսակետից Հայաստանի Հանրապետության առավել նպաստավոր պայմաններ ունեցող տարածքն է, բնակչության խտությունն ավելի քան 3,5 անգամ գերազանցում է հանրապետության միջին ցուցանիշը: Այստեղ բնակչության խտությունը 1 կմ² վրա անցնում է 450 մարդուց (Աղյուսակ 8):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության 1995թ–ին իրականացված վարչական նոր բաժանմամբ հանրապետության տարածքը բաժանվել է 10 մարզի, իսկ Երևան քաղաքը առանձին վարչական միավոր է համայնքի կարգավիճակով:

Այսպիսով՝ ինչպես ամբողջ աշխարհի երկրներում, այնպես էլ Հայաստանում բնական, պատմաքաղաքական, սոցիալ–տնտեսական պայմանների հետևանքով բնակչությունն անհավասարաչափ է տեղաբաշխված:

Աղյուսակ 8.

ՀՀ մարզերի տարածքները, բնակչության թիվն ու խտությունը 01.01. 2018թ. տվյալներով (Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2018 էջ 11)

Մարզերը	Տարածքը քվմ	Բնակչության թիվը (հազ. մարդ)	Բնակչության խտությունը (մարդ/քվմ)
Արագածոտն	2756	127,1	46
Արարատ	2090	257,8	123
Արմավիր	1242	264,6	213
Գեղարքունիք	5349*	229,7	43
Լոռի	3799	217,4	57
Կոտայք	2086	251,6	121
Շիրակ	2680	235,4	88
Սյունիք	4506	138,4	31
Վայոց Ձոր	2308	49,6	21
Տավուշ	2704	123,5	46
ք.Երևան	223	1077,6	4832
Ընդամենը	29743	2972,7	100

*) Ներառյալ Սևանա լիճը:

Մինչ խորհրդայնացումը 1920 թ. Հայաստանի տարածքում եղել է 4 քաղաք՝ Երևան, Գյումրի (Ալեքսանդրապոլ), Նոր Բայազետ և Գորիս (Կյորեա) և շուրջ 15 գյուղաքաղաքներ:

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

1920–ական թվականներից հետո Հայաստանում արդյունաբերության մի շարք ճյուղերի արագ աճի, սպասարկման ոլորտի, տրանսպորտային ցանցի ընդլայնման, գիտության, մշակույթի, առողջապահության զարգացման շնորհիվ մեծ զարգացում են ապրել հին քաղաքները, ձևավորվել են և ստեղծվել բազմաթիվ նոր քաղաքներ: Այս բոլորի հետևանքով հատկապես 1950–ական թվականներից հետո հանրապետության քաղաքային բնակչությունը զգալիորեն աճել է նաև գյուղական բնակչության հաշվին: Իսկ դատեղի է ունեցել այն պատճառով, որ արտադրողական ուժերի տեղաբաշխման բնագավառում թույլ են տրվել խոշոր սխալներ: Արտադրությունը հիմնականում տեղաբաշխվել է քաղաքային բնակավայրերում, իսկ գյուղական բնակչությունը, կոլտնտեսային պայմաններում չունենալով մշտական աշխատանք և բազմաթիվ այլ պատճառներով ստիպված է եղել տեղափոխվել քաղաքներ: Դրա հետևանքը եղել է այն, որ հանրապետության հատկապես լեռնային շատ գյուղեր դատարկվել են, մեխանիկորեն ավելացել է քաղաքային բնակչությունը:

Արդեն 1959 թ. հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակում քաղաքային բնակչությունը կազմել է 50, իսկ 1989 թ.՝ 68,7 %, որը հանրապետության բոլոր ժամանակների քաղաքային բնակչության ամենաբարձր ցուցանիշն էր: Վարչատարածքային նոր բաժանման հետ միասին, վերանայվել է նաև քաղաքային բնակավայրերի կարգավիճակը: Ըստ նոր կարգավիճակի՝ հանրապետությունում կա 49 քաղաք: Հանրապետության խոշորագույն քաղաքը Երևանն է, որի բնակչության թիվը 2018 թ. տվյալներով կազմել է 1077,6 հազ.:

Հիմնականում կապված խորհրդային Հայաստանի արդյունաբերության տեսակարար կշռի մեծացման հետ, արագ են աճել նաև Գյումրիի, Վանաձորի, Արովյանի, Հրազդանի, Չարենցավանի, Ալավերդու, Արարատի, Արմա-

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

վրի բնակչությունը: Գյումրիի բնակչությունն արդեն 1988 թ. հասել էր ավելի քան 238 հազ., իսկ Վանաձորինը՝ ավելի քան՝ 171 հազ-ի: Քանի որ այդ երկու քաղաքներն էլ խիստ տուժել են 1988 թ-ի դեկտեմբրի 7-ին տեղի ունեցած ավերիչ երկրաշարժից, ապա 1989 թ-ի մարդահամարի տվյալներով՝ դրանց բնակչության թվաքանակը զգալիորեն կրճատված է:

Հատկապես XX դարի երկրորդ կեսին Հայաստանում կտրուկ բարձրացավ ուրբանացման մակարդակը: Այս գործընթացը շարունակվեց նաև ՀՀ անկախացումից հետո: Դրա հիմնական պատճառը գյուղական շրջանների և քաղաքների՝ հատկապես մայրաքաղաքի միջև աշխատանքի շուկայի, կրթական հաստատությունների, կյանքի որակի անհամաչափությունն է: Հայաստանի հետագա ուրբանացումը սպառնալիք է ներկայացնում ազգային անվտանգության համար: Դա կապված է սեյսմիկ գոտիներում բնակչության խիտ բնակեցման, գյուղական շրջաններում ժողովրդագրական իրավիճակի վատթարացման, սահմանամերձ գյուղերի ամայացման վտանգների հետ:

Բնակավայրում, հատկապես՝ քաղաքում, մարտական գործողություններին մասնակցող ստորաբաժանումների տեղագրաերկրաբաշխական ապահովման վրա էապես ազդում են բնակավայրերի տարածքի ուրվանկարը և մակերեսը, շինությունների խտությունը, ստորգետնյա կառույցների առկայությունը, տեղանքի առանձնահատկությունները²⁰⁸:

2019 թ. տվյալներով՝ հանրապետությունում կար 957 գյուղ:

Մինչև 1980-ական թվականների վերջերը զգալիորեն աճել է մինչև 5000 բնակիչ ունեցող գյուղերի թիվը: 1989թ.

²⁰⁸ Սուջյան Ս.Ա. Ռազմական աշխարհագրության դերն ու նշանակությունը զորքերի տեղագրաերկրաբաշխական ապահովման գործում, ՀԲ, թիվ 4, 2010, էջ 83-88:

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

մարդահամարի տվյալներով կար 2001–5000 բնակիչ ունեցող 159 գյուղ: 2019 թ. տվյալներով ՀՀ-ում արդեն 40 բնակավայր ունեին 5000–ից ավելի բնակիչ:

Գյուղական բնակավայրերի մեծ խտությամբ աչքի է ընկնում Արարատյան դաշտը: Այստեղ դրանք այնքան խիտ են տեղաբաշխված, որ փաստորեն մի գյուղը մյուսի շարունակությունն է կազմում: Դա պետք է բացատրել Արարատյան դաշտի հողատարածությունների օգտագործման բարձր աստիճանով, տրանսպորտային հարմար ուղիներով, խոշոր քաղաքների առկայությամբ:

Մոտավորապես նույն նախապայմանների շնորհիվ գյուղական բնակավայրերը խիտ են Շիրակի, Լոռու, Ապարանի հարթավայրային մասերում: Գյուղական տարաբնակեցումը գծային բնույթ ունի, Սևանի ավազանի մերձլճային գոտում, Աղստև, Որոտան, Ողջի, Արփա ու մյուս գետերի ցածրադիր հովտային վայրերում:

Ինչպես ղարաբաղյան, այնպես էլ վերջին երեք տասնամյակների այլ տեղային ռազմական հակամարտությունների փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս հատկապես սահմանամերձ շրջաններում տեղակայված գյուղական բնակավայրերի դերը բնագծերի պաշտպանության արդյունավետության համար: Շատ հաճախ բնագծերը նկարագրելիս տրվում է մոտակա գյուղերի անուններով՝ Կոռնիձորի, Ոսկեպարի, Պառավաքարի, Մատաղիսի, Գետաշենի և այլն:

Այս առումով հատկապես կարևոր է ՀՀ կառավարության որոշումները սահմանամերձ գյուղական բնակավայրերին հարկային արտոնություններ տրամադրելու վերաբերյալ և դա հարկավոր է դիտարկել որպես ճիշտ քայլ՝ ճիշտ ուղղությամբ: Ընդհակառակը, գյուղական համայնքների խոշորացման կառավարության ծրագիրը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ փոքր գյուղական բնակավայրերի մեծ մասը սահմանամերձ են, կարող է էականորեն բացասական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ազդեցություն թողնել սահմանային անվտանգության ձևավորված համակարգի վրա: Շատ ավելի հեշտ է պաշտպանական հենակետեր ստեղծել գյուղական բնակավայրերի մոտ՝ օգտագործելով արդեն գոյություն ունեցող հաղորդակցման համակարգը, քան այն ստեղծել դատարկ տեղում:

Ժամանակակից աշխարհում հազվադեպ են համարյա միատարր ազգային կազմ ունեցող երկրները, հիմնականում ազգային մեծամասնության հետ (տիտղոսավոր ազգ), ապրում են ազգային փոքրամասնությունները, որոնցից յուրաքանչյուրն առանձնանում է իր լեզվով, կրոնով, սովորույթներով, կենսակերպով և այլն: Պետություններում ազգային փոքրամասնությունների առկայությունը հաճախ պատճառ է դառնում ներքին ազգամիջյան և միջազգային կոնֆլիկտների: Այս հարցը հատկապես բարդանում է այն դեպքում երբ մի պետության մեջ ազգային փոքրամասնություն հանդիսացող ազգը հարևան պետությունում համարվում է տիտղոսավոր ազգ:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունը համարվում է աշխարհի ամենամիատարր բնակչություն ունեցող երկրներից մեկը:

1979 թ. մարդահամարի տվյալներով՝ Հայաստանի բնակչության 89,7 տոկոսը կազմել են հայերը, 1989 թ. մարդահամարի տվյալներով հայերի տեսակարար կշիռը դարձել է 93,3 տոկոս, իսկ 2011 թ. մարդահամարի տվյալներով ավելի քան 98,1 %:

ՀՀ-ում ընդհանուր առմամբ ապրում են 25 այլ ազգությունների ներկայացուցիչներ: Դրանցից առավել թվաքանակ ունեցողներն են՝ եզդիներն ու քրդերը, ռուսները, ասորիները, ուկրաինացիները, գերմանացիները, հրեաները, վրացիները, բելոռուսները և այլն:

1989 թ. մարդահամարի տվյալներով հանրապետությունում կար 56,1 հազ. եզդի և քուրդ (1979 թ. եղել է 50,8

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

հազար): Եզդիները և քրդերը ապրում են Արագածի, Աշտարակի, Թալինի, Էջմիածնի, Արմավիրի ու Մասիսի տարածաշրջաններում: Նրանց թիվը նույնպես կրճատվել է:

Թվաքանակով երկրորդ տեղում ռուսներն են՝ 1989թ. մարդահամարի տվյալներով ՀՀ-ում բնակվում ռուսների թվաքանակը կազմել է 51,6 հազ. մարդ: ԽՍՀՄ փլուզումից հետո 2001թ. մարդահամարի տվյալներով ՀՀ-ում ռուս բնակչությունը կազմում էր 14,7 հազար, իսկ 2011թ-ին 11,9 հազար:

Ռուսների ու եզդիների (քրդերի հետ) թվաքանակը փոքր տարբերությամբ այժմ էլ պահպանվում է: Ասորիների թիվը կազմում է 7.0 հազ., ուկրաինացիները՝ 2,0 հազ., գերմանացիները՝ 1,5 հազ., հրեաները՝ 1.0 հազ. մարդ, այլ ազգեր 8,5 հազ. և այլն:

Հանրապետությունում ապրող փոքրամասնություններն ունեն իրենց համայնքները, դրանք մշտապես գտնվում են հանրապետության իշխանությունների ուշադրության կենտրոնում: ՀՀ 7-րդ գումարման Ազգային ժողովում ունենք ազգային փոքրամասնությունների չորս պատգամավոր: Այս համայնքների հետ գրագետ աշխատելու դեպքում, նրանք կարող են նաև հուսալի կամուրջ հանդիսանալ ՀՀ և նրանց հայրենի երկրների միջև:

Երկրի կարևորագույն ժողովրդագրական ցուցանիշներից մեկն էլ համարվում է բնակչության սեռային կազմը, որը ժամանակի ընթացքում կարող է ենթարկվել փոփոխման: Այդ ցուցանիշի վրա զգալի ազդեցություն են թողնում պատերազմները:

ՀՀ վիճակագրական տարեգրքի 2018 թ. տվյալներով հանրապետության բնակչության ընդհանուր քանակում տղամարդկանց տեսակարար կշիռը կազմել է 47,4 %, իսկ կանանցը՝ 52,6 % (Աղյուսակ 9):

Ռազմական տեսանկյունից հետաքրքրություն է ներկայացնում բնակչության սեռային կազմի ցուցանիշները

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

տարիքային կտրվածքով՝ հատկապես զինապարտ տարիքային կազմի սահմաններում:

Ինչպես ցույց են տալիս փաստերը, հանրապետության մինչև 20 տարեկան հասակի բնակչության ընդհանուր թվաքանակում գերակշռում են տղամարդիկ: Ավելի բարձր տարիք ունեցող բնակչության թվաքանակում նկատելիորեն բարձրանում է կանանց տեսակարար կշիռը:

2010 թ. ՀՀ բնակչության բնական աճը հազար մարդու հաշվով կազմել է 5,2, իսկ 2017 թ. 3,5 մարդ: Եթե աշխարհի խոշոր ազգերի համար բնակչության բնական աճի անկումը ճակատագրական խոշոր նշանակություն չունի, ապա մեզ համար դա խիստ բացասական ժողովրդագրական երևույթ է: Եթե մեր ժողովուրդը դարեր շարունակ այդպիսի ցածր աճ ունենար, ապա հայությունը վերացման վտանգի տակ կլիներ: Հետևաբար՝ բնակչության բնական աճն ամենուրեք մեր պետության և ժողովրդի կողմից պետք է խրախուսվի:

Բնակչության աճի տեմպերի վերաբերյալ կանխատեսումները, զորակոչային տարիքի առողջ տղամարդկանց քանակի հաշվարկման գործնական աշխատանքների մեթոդների մշակումը, կարող է մեծ ծառայություն մատուցել երկրի զինուժի պահեստազորի թվաքանակի գնահատման տեսակետից:

Աշխատանքային ռեսուրսների, դրանց նպատակային օգտագործման հարցերի համակարգում կարևոր նշանակություն ունեն բնակչության կրթական մակարդակին վերաբերող ցուցանիշները: Այս առումով, Հայաստանի Հանրապետությունն աշխարհի երկրների շարքում առաջնակարգ տեղերից մեկն է զբաղեցրել:

ՀՀ մշտական բնակչության բաշխումն ըստ սեռատարիքային խմբերի 2018 հունվարի 1-ի դրությամբ (հազ. մարդ) ²⁰⁹

Տարիքը, տարեկան	2018		
	Ընդամենը	Տղամարդիկ	Կանայք
Ամբողջ բնակչությունը	2972.7	1408.2	1564.5
Մինչև 1	37.5	19.6	17.9
1-4	165.9	87.9	78.0
5-9	209.9	111.8	98.1
10-14	186.3	99.7	86.6
15-19	165.2	87.6	77.6
20-24	195.9	97.8	98.1
25-29	264.6	126.1	138.5
30-34	262.7	124.7	138,0
35-39	222.4	105.6	116.8
40-44	181.3	84,1	97.2
45-49	165.3	74.9	90.4
50-54	182.0	80.9	101.1
55-59	217.3	96.7	120.6
60-64	171.7	74.8	96.9
65-69	122.1	51.1	71.0
70-74	61.8	24.6	37.2
75-79	77.5	29.6	47.9
80 և բարձր	83.3	30.7	52.6

²⁰⁹ Հայաստանի Հանրապետության վիճակագրական տարեգիրք, ՀՀ ազգային վիճակագրական տարեգիրք, Եր.: 2018. Էջ 25 :

1989 թ. մարդահամարի տվյալներով նախկին ԽՍՀՄ-ում 15 և ավելի տարիք ունեցող 1000 մարդուց միջնակարգ և բարձրագույն կրթություն ունեին 812-ը, իսկ Հայաստանում՝ 901-ը, և այդ ցուցանիշն Խորհրդային Միության կազմում եղած 15 հանրապետություններից ամենաբարձրն էր:

Հայաստանում ռազմաարդյունաբերության զարգացման հիմնասյունը բարձրորակ աշխատուժն է, ասել է, թե այն երկրները, որոնք չեն կարող ապահովել կադրային համապատասխան ներուժ (ինժեներատեխնիկական մասնագիտացմամբ բարձրորակ կադրեր, գիտաշխատողներ), չեն էլ կարող հավակնել տեղական ռազմաարդյունաբերություն ունենալու որևէ հնարավորության: Հայաստանի բարձրորակ մարդկային կապիտալի մասին բազմիցս է խոսվել: Այն մշտապես հատկանշվել է գիտատեխնիկական առաջընթացի նվաճումներն արագ յուրացնելու և բարձր տեխնոլոգիական արտադրություններ նախաձեռնելու իր ունակությամբ: Սակայն նկատենք, որ Հայաստանում մարդկային բարձրորակ կապիտալի առկայությունը չի նպաստել նորարարական այնպիսի տնտեսության ձևավորմանը, որտեղ գերակշռում են գիտատար ու տեխնոլոգիատար արտադրական ոլորտները: Ինչը կասկածանք է հարուցում առ այն, թե արդյո՞ք բարձրորակ մարդկային կապիտալը, որը Խորհրդային Հայաստանի կարևորագույն համեմատական առավելությունն էր, շարունակվում է պահպանվել նաև այսօր:²¹⁰

Ըստ երկրների մարդկային ներուժի գնահատման ամենահեղինակավոր վարկանիշային գնահատականի՝ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի կողմից մշակված Մարդկային զարգացման ինդեքսի, 1990 թվականից մինչ օրս Հայաստանում այդ ցուցանիշի էական աճ է արձանագրվել՝

²¹⁰ Հարությունյան Գ.Է. Ռազմաարդյունաբերություն.

գերակայություններ, հնարավորություններ, հեռանկարներ: -Եր.: Լիմուշ հրատ., 2018, էջ 131-133:

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

0,634-ից 0,734, ինչը հնարավորություն է տվել դուրս գալ մարդկային զարգացման միջին ցուցանիշ ունեցող երկրների խմբից և հայտնվել մարդկային զարգացման բարձր ցուցանիշ ունեցողների խմբում: Ներկայում (2016 թվականի զեկույցի տվյալներով) Հայաստանը 188 երկրների շարքում զբաղեցնում է 84-րդ տեղը, մինչդեռ անմիջական հարևաններն այդ ցուցանիշով ավելի շահեկան վիճակում են (Իրան՝ 69-րդ, Վրաստան՝ 70-րդ, Թուրքիա՝ 71-րդ, Ադրբեջան՝ 78-րդ)²¹¹: Համաթվի (ինդեքսի) մեջ ներառվող կրթության մակարդակի ցուցանիշով (0.730՝ 60-րդ տեղում) Հայաստանը գերազանցում է Ադրբեջանին (64-րդ տեղում), Իրանին (77-րդ) և Թուրքիային (92-րդ), բայց զգալիորեն զիջում է Վրաստանին (43-րդ)²¹², իսկ համաթվի (ինդեքսի) մեկ այլ բաղադրիչի՝ բնակչության մեկ շնչին բաժին ընկնող ազգային եկամուտի գծով Հայաստանը նշված երկրների շարքում ամենավերջին տեղում է:

Համեմատության համար ներկայացվում է նաև Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից հաշվարկված Մարդկային կապիտալի ինդեքսի տվյալները: Այն իր մեջ ներառում է հայտանիշների չորս խումբ՝ կարողություններ (որոնք ձեռք են բերվել նախկինում կրթության վրա կատարված ներդրումների արդյունքում՝ capacity), որակավորում (չափահաս բնակչության հմտությունների կիրառումը և կուտակումը աշխատանքային գործունեության ընթացքում՝ deployment), զարգացում (ապագա սերնդի աշխատուժի կրթության մակարդակը, ինչպես նաև՝ ընթացիկ աշխատուժի վերաորակավորման և որակավորման բարձրացման հնարավորությունները՝ development), նոու-հաու (աշխատանքային գործընթացում օգտագործվող հատուկ ունակությունների և հմտությունների կիրառման ընդգրկումները): Ինչպես տեսնում ենք, այս

²¹¹ <http://hdr.undp.org/en/composite/trends>

²¹² Նույն տեղում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ինդեքսում ներառված չէ բնակչության մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ կամ ազգային եկամուտի ցուցանիշը, ինչով էլ պայմանավորված Հայաստանը մարդկային կապիտալի զարգացման ինդեքսով 130 երկրների շարքում զբաղեցնում է 49-րդ տեղը²¹³ : Նշված հայտանիշների գծով Հայաստանի տվյալները բերված են 10-րդ աղյուսակում: Դրանց վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ մարդկային կապիտալի զարգացման Հայաստանի բարձր ցուցանիշը պայմանավորված է հիմնականում նախկինում (խորհրդային տարիներին) կրթության վրա կատարված ներդրումներով ու ունեցած ձեռքբերումներով (3-րդ տեղում), այն դեպքում, երբ բարձրորակ աշխատուժի պահպանման համար ներկայում ձեռնարկվող քայլերի տեսանկյունից Հայաստանի դիրքերը հուսադրող չեն (114-րդ տեղում) :

Միաժամանակ, հարկ է նկատել, որ ռազմարդյունաբերության ոլորտի զարգացումը կարող է Հայաստանում բարձրորակ աշխատուժի վերարտադրության լրացուցիչ խթան դառնալ, պայմանավորված նման աշխատուժի նկատմամբ պահանջարկ ձևավորելու մեծ ներուժով, ուստի, այդ ուղղությամբ արմատական քայլերի հապաղումը անշրջելի բացասական հետևանքներ կունենա ոչ միայն ոլորտի զարգացման հնարավորությունների կորուստի, այլ նաև մարդկային կապիտալի դեգրադացման տեսանկյունից²¹⁴:

²¹³ The Global Human Capital Report 2017, World Economic Forum, ISBN 978-1-944835-10-1, p.61.

²¹⁴ Հարությունյան Գ.Է., Ռազմարդյունաբերություն.

գերակայություններ, հնարավորություններ, հեռանկարներ, -Եր.: Լիմուշ հրատ., 2018, էջ 131-133:

Հայաստանի ցուցանիշները Մարդկային կապիտալի զարգացման ինդեքսում ²¹⁵

Հայտանիշը	Ցուցանիշը	Դիրքը 130 երկրների շարքում
Կարողություններ (capacity)	83.3	3
Որակավորում (deployment)	54.1	114
Զարգացում (development)	65.4	61
Նոու-հաու (know-how)	55.0	47
Մարդկային կապիտալի ինդեքս Human Capital Index	64.46	49

Կրթական այսպիսի բարձր մակարդակը հայ ժողովրդի ազգային հարստության գլխավոր աղբյուրներից մեկն է, որի նպատակային օգտագործումը Հայաստանի Հանրապետության անկախ տնտեսության հետագա զարգացման կարևորագույն նախապայմանն է: Արդի ռազմական գործում ժամանակակից սպառազինության համակարգերի յուրացման տեսակետից կարևորվում են բարձր կրթական մակարդակ ունեցող զինապարտները: Զորքերի ըստ զորատեսակների համալրման ժամանակ հատկապես կարևորվում են ռադիոտեխնիկական, քիմիական, մաթեմատիկական,

²¹⁵http://www3.weforum.org/docs/WEF_Global_Human_Capital_Report_2017.pdf, p.8,

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

տնտեսագիտական, աշխարհագրական և այլ մասնագետների առկայությունը:

Ժամանակակից ռազմավարության մեջ առավելություն են ունենում հատկապես այն բանակները որոնք կարողանում են արագ գործել բանակային պահեստազորի ներգրավելու ու զորահավաք իրականացնելու գործընթացներում:

Սահմանակից պետություններում էթնիկ հակամարտությունները, ներքին բախումները և ընդհանրապես ցանկացած ռազմական գործողություններ, ՀՀ համար կարող են ստեղծել տարաբնույթ սպառնալիքներ՝ տարանցիկ ենթակառուցվածքների դեմ դիվերսիոն գործողություններից մինչև հարևան պետություններում ռազմական գործողությունների անդրսահմանային ներազդեցությունները:

2008 թ. վրաց-ռուսական հնգօրյա պատերազմում ռազմական փորձագետների կողմից վրացական զինված ուժերի թույլ տված թերությունների մեջ նշվում էր նաև զորահավաքի իրականացման ժամանակ տեղ գտած թերությունները, հատկապես երբ ամբողջ պահեստազորը հավաքվել էր մեկ վայրում՝ Վազիանիի ռազմահենակայանում և հայտնվել ՌԴ ավիացիայի հնարավոր հարվածի տակ: Ընդհակառակը, հայկական զինված ուժերի կողմից հմուտ զորահավաքի իրականացումը 2016թ. ապրիլին հնարավորություն տվեց ստեղծել մեծ խորության և խտության օպերատիվ շարվածք, կանգնեցնել հակառակորդի հարձակումը և անցնել հակահարձակման²¹⁶:

²¹⁶ Հովհաննիսյան Ա.Կ., Ապրիլյան պատերազմի ռազմավարական վերլուծություն, Որոշ նկատառումներ «Ազգ-Բանակ» համակարգում ՀՀ պաշտպանության կատարելագործման լույսով, ՀԲ, Եր.: 2017, թիվ 1-2, էջ 34-47:

5.2 Տնտեսության բնութագիրը

Ռազմական գործողությունների մարտաբեմերի նկարագրության, կամ այսպես կոչված ռազմական երկրագրության մեջ բացի զուտ ֆիզիկաաշխարհագրական երևույթների ռազմական տեսանկյունից նկարագրության, շատ կարևոր տեղ են հատկացվում տնտեսաաշխարհագրական երևույթների տարածական տեղաբաշխման օրինաչափությունների ռազմական նշանակությանը:

Ռազմական գործողությունների մարտաբեմերի աշխարհագրությունը, և՛ հարձակողական և՛ պաշտպանողական գործողությունների ճիշտ կազմակերպման համար պետք է պատշաճ կերպով լուսաբանի տարբեր երկրներում բնակավայրերի շինությունների, տների, փողոցների, բնակչության տարածքային և ազգային տեղաբաշխման բնույթը, ինչպես նաև տեղական բնակչության լեզուները, կրոնական պատկանելությունը, սովորույթները, կենցաղը և այլն: Այս ամենից բացի, ռազմական աշխարհագրության առջև դրված է նաև մեկ այլ ոչ պակաս կարևոր խնդիր՝ ռազմավարական հումքի տարածական և քանակական տեղաբաշխման օրինաչափությունները, որպես օգտակար հանածոների աշխարհագրության բաղկացուցիչ մաս:

Պատերազմական իրավիճակներում գտնվող երկրների ռազմաարդյունաբերական համալիրի տարբեր ճյուղերի գործունեության ապահովման համար պահանջվում են մեծ քանակի ռազմավարական հումք՝ երկաթաքար, գունավոր և հազվագյուտ մետաղական և ոչ մետաղական հանքանյութեր, նավթ, քարածուխ, փայտանյութ, բամբակ, բուրդ, հացահատիկ, մսամթերք և այլն: Այս բոլորն անհրաժեշտ է զինված ուժերի կարիքների համար, սպառազինության և հանդերձանքի արտադրության, բանակին սննդամթերքով ապահովման, երկրի մասնակի կամ ամբողջապես

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

տրանսպորտային շրջափակման դեպքում բնակչության առաջնահերթ կարիքները բավարարելու համար:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին այս բոլոր խնդիրների լուծման նպատակով ԽՍՀՄ-ում առանձնացվել էր ռազմավարական հումքի մոտ հարյուր տեսակ: Շահագործման էին հանձնվել նոր հանքավայրեր, ստեղծվել էին հարյուրավոր նոր ձեռնարկություններ որպեսզի արտադրվի անհրաժեշտ քանակի հումքանյութ: Դրա հետ մեկտեղ աշխարհագետների կողմից լուծվել էին մի շարք կիրառական հիմնախնդիրներ՝ կապված պատերազմով թելադրված իրավիճակի պայմաններում ձեռնարկությունների տարածքային արդյունավետ տեղակայման հետ: Պատերազմական բարդ իրավիճակներում հումքի աշխարհագրական տեղաբաշխման հարցերը դարձան անհապաղ լուծման կարիք ունեցող առաջին կարևորության խնդիրներ: Ժամանակի սղությունը, տրանսպորտի և այլ անհրաժեշտ միջոցների պակասն անհնար էր դարձնում մեծ տարածքների վրա հումքի տեղափոխումը և խիստ անհրաժեշտ էր դարձնում տեղում անհրաժեշտ հումքատեսակների հայտնաբերումը:

Ռազմավարական հումքի աշխարհագրությունը խորը գիտելիքներ էր պահանջում երկրի մակերևութի վրա մետաղական և ոչ մետաղական հանքավայրերի տեղաբաշխման վերաբերյալ: Նման իմացությունները թույլ կտան լուծելու սեփական ռազմարդյունաբերական համալիրի անհրաժեշտ հումքանյութերով ապահովելու հիմնախնդիրները: Հակառակորդի տնտեսության վերաբերյալ նմանատիպ գիտելիքները հնարավորություն կտան ճիշտ ռազմավարություն մշակել հակառակորդի տնտեսությունը ռազմավարական հումքով ապահովումը խափանելու համար:

Հայաստանի Հանրապետության նյութական արտադրության համակարգում **թողարկվող արտադրանքի ծավալի ու նշանակության տեսակետից առաջին տեղը պատկանում է արդյունաբերությանը:** Նրա տեսակարար կշիռը հանրապե-

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

տության տնտեսության բոլոր ճյուղերում թողարկվող արտադրանքի ընդհանուր ծավալում 1970–1990 թթ. կազմել է 56–68 %:

Դա ցույց է տալիս, որ Հայաստանի Հանրապետությունը դարձել է զարգացած արդյունաբերական երկիր: Շնորհիվ արդյունաբերության զարգացման բարձր տեմպի, 1930-1980-ական թվականների ընթացքում արմատապես փոխվել է հանրապետության սոցիալ-տնտեսական ամբողջ դեմքը:

1988 թ. տվյալներով՝ հանրապետության ժողովրդական տնտեսության մեջ աշխատողների թիվը կազմել է 1430,5 հազ. մարդ, այդ թվում արդյունաբերության մեջ աշխատողների թվաքանակը կազմել է 459,9 հազ. մարդ (1970 թ. եղել է 272,8 հազ. մարդ):

1988 թ. տվյալներով՝ Հայաստանի Հանրապետությունում գործում էր արդյունաբերական 713 խոշոր ձեռնարկություն:

Արդյունաբերության ճյուղերից ձեռնարկությունների թվով և դրանցում աշխատողների անձնակազմով առաջին տեղը զբաղեցնում էր մեքենաշինությունը, այնուհետև թեթև, սննդի արդյունաբերությունը:

Հանրապետության արդյունաբերության շատ արտադրատեսակներ լայն ճանաչում էին գտել ոչ միայն նախկին ԽՍՀՄ կազմում եղած բոլոր հանրապետություններում, այլև արտասահմանյան ավելի քան 80 երկրներում: Հայկական ճշգրիտ մետաղահատ հաստոցները, էլեկտրոնային հաշվիչ մեքենաները, գորգերը, կոնյակները, պանրի, պահածոների տեսակները, ինչպես նաև շատ այլ արտադրատեսակներ միջազգային ցուցահանդեսներում և տոնավաճառներում բազմիցս արժանացել են ոսկե մեդալների ու դիպլոմների:

Յավոք, 1988 թ.–ից սկսած Հայաստանի արդյունաբերության ռիթմիկ աշխատանքը խախտվել է, իսկ 1991 թ.–ից, այսպես կոչված ազատ շուկայական տնտեսության զարգացման ուղին բռնելուց հետո այն կարելի է ասել կազմալուծվել է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Այդ գործում խոշոր բացասական դեր են խաղացել Ադրբեջանի, այնուհետև Վրաստանի տարածքով ձգվող տրանսպորտային բոլոր ուղիների շրջափակումը:

Արդյունաբերության կազմալուծման գործում մեծ դեր խաղաց նաև ձեռնարկությունների շուտափույթ, հախուռն և չմտածված սեփականաշնորհման քաղաքականությունը:

Իսախտվել է հումքի ռիթմիկ ներմուծման նախկին համակարգը, ձեռնարկությունների մեծ մասն արդեն 1992 թ. չէին գործում: Իսկ 1992 թ. վերջին էներգետիկ ճգնաժամի, գազի, մազութի բացակայության, էլեկտրաէներգիայի խիստ անբավարար լինելու պատճառով, հանրապետությունում արտադրական խոշոր ձեռնարկությունների մեծ մասը կանգնեցվել էին, բացառությամբ հացի գործարանների:

Ահա այդպիսի ծանր վիճակում էր Հայաստանի Հանրապետության արդյունաբերությունը 1991–1992 թթ.:

Արդյունաբերության անկման պրոցեսը շարունակվում էր նաև հետագա տարիներին: Իսկ 1995 թ–ից նկատվել է կայունացման որոշ միտում: Արդյունաբերության վերակենդանացման և աշխատատեղերի ստեղծման համար պահանջվում է հսկայական կապիտալ ներդրում: Այդպիսին հատկապես խիստ անհրաժեշտ է սեփական ռեսուրսների օգտագործման ու վառելիքաէներգետիկ համակարգի կարգավորման համար:

1998 թ. ՀՀ արդյունաբերական արտադրանքի ծավալը կազմել է 261167,6 մլն դրամ, իսկ 1999 թ.՝ 283484,8 մլն դրամ:

ՀՀ տնտեսության, այդ թվում հատկապես արդյունաբերության նկատելի աճ սկսվեց 2000–2003 թթ.:

Երևանին բաժին է ընկնում հանրապետությունում թողարկվող արդյունաբերական արտադրանքի ավելի քան 42,4 %-ը, իսկ մարզերից կարևոր տեղ ունեն Սյունիքի, Կոտայքի, Արարատի, Լոռու մարզերը: Երբեմնի հզոր արդյունաբերություն ունեցող Շիրակի ու Արմավիրի մարզերը դեռևս իրենց երբեմնի նշանակությունը չեն վերականգնել:

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

2011 թ. տվյալներով հանրապետությունում կար մեծ ու փոքր 2648 արդյունաբերական ձեռնարկություն, որոնց գերակշռող մասը սեփականաշնորհված է:

Հայաստանի Հանրապետության տարածքում արդյունաբերական նշանակություն ունեցող վառելիքի պաշարներ դեռևս հայտնաբերված չեն:

ՀՀ տարածքում հայտնաբերված են աննշան քանակությամբ ցածրորակ գորշ ածխի պաշարներ, որոնք սակայն արդյունաբերական կարևոր նշանակություն չեն կարող ունենալ:

Քարածխի հայտնաբերված հանքավայրերից համեմատաբար նշանակալից են՝ Ջերմանիսի (Արարատի մարզում), Ջաջուռի (Շիրակի մարզում), Դիլիջանի և Իջևանի հանքավայրերը:

2007 թ. մարտի 19-ին տեղի է ունեցել Իրան Հայաստան գազամուղի (711 մմ տրամագծով) շահագործման արարողությունը Մեղրու կիրճում, որին մասնակցում էին երկու երկրների նախագահները: Այդ գազամուղով Հայաստանի Հանրապետությունը սկզբնական շրջանում Իրանից ստանում է 350-400 մլն խմ գազ, իսկ հետագայում այն տարեկան կարող է հասցվել մինչև 2,3 մլրդ խմ-ի²¹⁷:

Հանրապետությունը ներմուծում է նաև միջուկային վառելիք, որը բացառապես օգտագործվում է էլեկտրաէներգետիկ տնտեսության մեջ: Այն ներմուծվում է Ռուսաստանից:

Ներմուծվող վառելիքատեսակների (նավթի, գազի, միջուկային վառելիքի) և սեփական ջրաէներգոռեսուրսների բազայի վրա, խորհրդային իշխանության տարիներին Հայաստանի Հանրապետությունում ստեղծվել է հզոր էլեկտրաէներգետիկ տնտեսություն: Հանրապետության էլեկտրաէներգետիկ տնտեսությունը բաղկացած է երեք

²¹⁷ «Ազգ» օրաթերթ, № 195, 27.10.2007

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ենթաճյուղերից՝ ջերմաէլեկտրաէներգետիկ, ջրաէներգետիկ և հողմաէներգետիկ:

Ջերմաէլեկտրաէներգետիկ տնտեսությունը հանրապետության էլեկտրաէներգետիկ տնտեսության վճռական դեր խաղացող ենթաճյուղն է, որը տալիս է արտադրվող ամբողջ էլեկտրաէներգիայի 42,4 տոկոսը (չնայած վերջին տարիներին որոշ չափով բարձրացել է ջրաէներգետիկ տնտեսության տեսակարար կշիռը)²¹⁸:

Ջերմաէլեկտրաէներգետիկ տնտեսության մեջ օգտագործելու արդյունավետության տեսանկյունից մեծ առավելություն ունի ներմուծվող բնական գազը: Հանրապետությունը բնական գազ սկսել է ներմուծել 1960 թ-ից Ալստաֆա-Իջևան-Սևան-Հրազդան-Երևան գազամուղով: Հետագայում այս մայր գազամուղը ճյուղավորվեց, և ամբողջ հանրապետության տարածքում ստեղծվեց գազամուղային ցանց:

Հայաստանի Հանրապետությունում կառուցված առավել խոշոր ջերմաէլեկտրակայանը Հրազդանի պետական շրջանային էլեկտրակայանն է՝ պշէկ-ը, որի հզորությունը կազմում է շուրջ 1,1 մլն կվտ: Մյուս համեմատաբար խոշոր ջերմաէլեկտրակայանը Երևանի ջերմաէլեկտրակենտրոնն է՝ ՋԷԿ -ը, որի հզորությունը կազմում է 550 հազ. կվտ: Երևանի ՋԷԿ-ի նոր բլոկի կառուցմամբ (որի համար Ճապոնիան տրամադրել է 250 մլն. դոլար վարկ) նրա ընդհանուր հզորությունը մեծացել է: Միայն նոր կառուցված բլոկի հզորությունը 271 հազ. կիլովատ է, այն շահագործման է հանձնվել 2010 թ. ապրիլին: Ջերմաէլեկտրակենտրոն՝ ՋԷԿ է կառուցվել նաև Վանաձորում, որի նախագծային հզորությունը կազմում է 100 հազ. կվտ:

Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկ տնտեսության վերելքի բնագավառում խոշոր դեր խաղաց

²¹⁸ <https://energyagency.am/>

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

Հայկական ատոմային էլեկտրակայանի կառուցումը, որի հզորությունը կազմում է 824 հազ. կվտ: Ատոմային էլեկտրակայանի կառուցումը Հայաստանում հիմնավորված է այն առումով, որ այստեղ վառելիքաէներգետիկ հանքային ռեսուրսներ չկան, իսկ ջրաէներգապաշարները չէին կարող ապահովել հանրապետության բուռն թափով աճող պահանջները էլեկտրաէներգիայի բնագավառում: Չնայած այն հանգամանքին, որ Մեծամորի ատոմային էլեկտրակայանի ծառայության ժամկետը լրացել է, սակայն նրա երկրորդ էներգաբլոկը պարբերաբար արդիականացվում է և ծրագրվում է շահագործել մինչև 2026թ-ը: Առաջին էներգաբլոկի աշխատանքները դադարեցվել էին դեռևս 1988թ-ին :

Մինչև 1960-ական թվականները ջրաէներգետիկ տնտեսությունը հանդիսանում էր հանրապետության էլեկտրաէներգիա արտադրող միակ բնագավառը:

Մինչև 1920-ական թվականների սկզբները Հայաստանում գործում էին մի քանի փոքր ջրաէլեկտրակայաններ: Խորհրդային կարգեր հաստատվելուց հետո կառուցված առաջին ջրաէլեկտրակայանը այժմյան մանկական երկաթուղու ձորում, Հրազդան գետի վրա կառուցված Երևանի ջրաէլեկտրակայանն էր (Երևանի ՋրէԿ-1), այն շահագործման է հանձնվել 1926 թ.: 1932 թ. շահագործման է հանձնվել Դեբեդ գետի վտակ Ձորագետի վրա կառուցված ջրաէլեկտրակայանը՝ Ձորահէկը:

Սակայն հանրապետության համար առավել խոշոր նշանակություն ունեցան Սևան-Հրազդան ու Որոտանի ջրաէլեկտրակայանների համակարգերի (կասկադների) կառուցումը:

Մասնավորապես, Հրազդան գետի վրա կառուցվեց 6 ջրաէլեկտրակայաններից բաղկացած կասկադ: Այդ ջրաէլեկտրակայանների կասկադի առաջին աստիճանը Սևանի լճային կայանն է: Այն կառուցված է Հրազդան գետը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սևանից սկիզբ առնելու մասում, նրա 7-կիլոմետրանոց թունելային ուղու սկզբում, որտեղ Սևանի մակարդակը իջեցնելու պատճառով գետի համար փորվել է արհեստական՝ ստորերկրյա հուն: Ահա թե ինչու այդ ՋրէԿ-ը երբեմն անվանում են նաև լճային ՋրէԿ, դրա հզորությունը ավելի քան 34 հազ. կվտ է: Հրազդան գետի վրա կառուցված մյուս ջրաէլեկտրակայաններն են հերթականությամբ՝ Հրազդանի՝ 82 հազ. կվտ, Արգելի՝ 224 հազ. կվտ, Արզնու՝ 70 հազ. կվտ, Քանաքեռի՝ 102 հազ. կվտ ու Երևանի՝ 44 հազ. կվտ, վերջինս կառուցվել է Երևանի ՋրէԿ – 1-ի մոտ, իսկ Երևանի ՋրէԿ –1-ը այժմ չի գործում:

Սևան–Հրազդան կասկադի 6 ջրաէլեկտրակայանների ընդհանուր հզորությունը կազմում է 555 հազ. Կվտ²¹⁹:

Հայաստանի Հանրապետությունում կառուցված ջրաէլեկտրակայանների մյուս յուրատիպ համակարգը Որոտանի կասկադն է: Այն ընդգրկում է Տաթևի՝ 157 հազ. կվտ, Շամբի՝ 151 հազ. կվտ ու Սպանդարյանի՝ 76 հազ. կվտ ՋրէԿ – ները²²⁰:

Ինչպես վերը նշվել է 1988 թ. հանրապետությունում արտադրված 15,3 մլրդ. կվտ/ժ փոխարեն հետագա տարիներին այդ հույժ կարևոր արտադրանքի չափը տատանվել է 5,5–7, 75 մլրդ. կվտ/ժ սահմաններում:

Հանրապետությունը զգալի քանակությամբ էլեկտրաէներգիա է վաճառում Վրաստանին:

Այժմ հայկական էներգացանցը Մեղրու կիրճով միացած է Իրանի ցանցին և երկու երկրների միջև կնքված պայմանագրով անհրաժեշտ քանակությամբ էլեկտրաէներգիա է փոխանցվում այդ գծով:

²¹⁹ Մելքումյան Ս.Ա. ՀՀ տնտեսական աշխարհագրություն, Եր.: 2004. -223 էջ:

²²⁰ Նույն տղում

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

2017 թ. տվյալներով հանրապետության բոլոր էլեկտրակայանների գործող ընդհանուր հզորությունը կազմել է 7,763 մլրդ. Կվտ/ժ, այդ թվում ջերմաէլեկտրակայանների մասնաբաժինը 2,872 մլրդ. կվտ ժ, ատոմայինը՝ 2,619 մլրդ. Կվտ/ժ, ջրաէլեկտրակայանները՝ 2,269 մլրդ. Կվտ/ժ, այլ աղբյուրները (հողմաէներգետիկա և այլն)՝ 2,5 մլն. Կվտ/ժ (Աղյուսակ 11):

Աղյուսակ 11.

Էլեկտրաէներգիայի արտադրությունը ՀՀ-ում 1995–2014 թթ.²²¹

	Տարիները							
	1995	1996	1997	1998	1999	2001	2002	2014
Էլ. էներգիայի արտադր. մլն կվտ/ժ	5575,9	6229,0	6029,8	6191,0	5717,0	5745,0	5519,0	7750,0

Հայաստանի հանրապետությունն ունենալով սահմանափակ բնական պաշարներ էներգետիկ կախվածության մեջ է գտնվում այլ երկրներից՝ հիմնականում ՌԴ-ից:

Մետաղների հանույթը և ձուլումը Հայկական լեռնաշխարհում հազարամյակների պատմություն ունի: Դրա ապացույցները լեռնաշխարհի տարբեր վայրերում պահպանվող հանքահորերը, մետաղների արդյունահանման հանքավայրերի, մետաղաձուլական «կոմբինատների», ձուլարանների, մետաղաձուլական խարամի ու այլ հետքերի առկայությունն է: Այդ տեսակետից շատ մեծ հետաքրքրություն են ներկայացնում Մեծամորի հազարամյակների պատմություն ունեցող մետաղաձուլական «կոմբինատի» մնացորդները:

²²¹ Հայաստանի Հանրապետության վիճակագրական տարեգիրք, ՀՀ ազգային վիճակագրական տարեգիրք, -Եր.: 2018. էջ 293:

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո (1828 թ.) այստեղի գունավոր մետաղների, հատկապես պղնձի պաշարները մեծ հետաքրքրություն են առաջացրել ռուսական, ֆրանսիական և արտասահմանյան այլ արդյունաբերողների համար:

Արդեն XIX դարի վերջերին ու XX դարի սկզբներին Զանգեզուրի ու հյուսիսային Հայաստանի պղնձածուխությունը այն աստիճանի է զարգացել, որ Հայաստանը ԽՍՀՄ-ում ծուլվող պղնձի ծավալներով գրավում էր երրորդ տեղը: Լեռնահանքային արդյունաբերությունն ու գունավոր մետաղածուխությունը Հայաստանում որակական, քանակական և կառուցվածքային բարձր զարգացում ունեցավ հատկապես խորհրդային իշխանության տարիներին²²²:

Ներկայումս Ալավերդու պղնձածուխության համար հումքային բազա է դարձել նաև ԼՂՀ Մարտակերտի շրջանի Դրմբոնի հանքավայրը: Այստեղ արդեն շահագործման է հանձնվել հարստացուցիչ ֆաբրիկան, որի հարստացված խտանյութը ավտոմեքենաներով ուղարկվում է Ալավերդի՝ ծուլման համար: 2014 թ. պղնձի խտանյութի արտադրությունը կազմել է 428529 տ., իսկ կոնվերտորային (մաքուր) պղնձի արտադրությունը՝ 12051 տ²²³:

Հանրապետության տարածքում առկա պղնձամոլիբդենի հանքավայրերից ներկայումս երկուսն ունեն արդյունաբերական նշանակություն: Դրանցից առավել խոշորը Քաջարանի հանքավայրն է, որի բազայի վրա 1950–ական թվականների սկզբներից գործում է հանրապետության լեռնահանքային արդյունաբերության ամենահզոր ձեռնարկությունը՝ Զանգեզուրի (Քաջարանի) պղնձամոլիբդենային կոմբինատը:

²²² Мелконян В.А., Металлургия меди в Армении, -М.: Металлургиздат, 1955, -71с.

²²³ Հայաստանի Հանրապետության վիճակագրական տարեգիրք, ՀՀ ազգային վիճակագրական տարեգիրք, Եր.: 2018. էջ 290:

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

1990–ական թվականների սկզբներից ստեղծված տնտեսական շրջափակման հետևանքով այդ կոմբինատի աշխատանքները խիստ սահմանափակվել են, թողարկող արտադրանքն էլ (հարստացված հումքը) տեղափոխվում էր Իրան և վաճառվում: Իսկ այժմ մոլիբդենի հարստացված հումքը արդեն մշակվում, դրանից ֆերոմոլիբդեն է արտադրվում տեղում (Քաջարանում) և Երևանի փոշեմետալուրգիական գործարանում: Այսինքն՝ մոլիբդենի արտադրության ամբողջ ցիկլը իրականացվում է տեղում:

Լեռնահանքային նմանատիպ մեկ այլ կոմբինատ էլ 1963 թ. շահագործման է հանձնվել Ագարակի պղնձամոլիբդենային հանքավայրի բազայի վրա: Այստեղ արդյունահանվող պղնձի հումքը նույնպես հարստացվելուց հետո մատակարարվում էր Ալավերդու կոմբինատին, իսկ մոլիբդենի խտանյութը այժմ մշակվում է ՀՀ նշված ձեռնարկություններում:

Այսպիսով, նշված ձեռնարկություններում մոլիբդենի խտանյութի արտադրությունը 2007 թ. կազմել է 8,4, իսկ 2017 թ.՝ 11,542 հազ. տոննա: Այդ նույն տարիներին ֆերոմոլիբդենի (մաքուր մոլիբդենի) արտադրությունը համապատասխանաբար կազմել է 5,970 հազ. տ. և 6,588 հազ. տ²²⁴:

Հանրապետության տարածքում առայժմ արդյունաբերական նշանակություն ունեցող բազմամետաղների (ցինկի, կապարի և այլն) հանքավայրը Ախթալայի (Թումանյանի տարածաշրջանում) հանքավայրն է: Այս հանքավայրի բազայի վրա տեղում կազմակերպվել է հարստացուցիչ ֆաբրիկա, որտեղ արդյունահանվող հումքից կորզվում է հիմնականում ցինկ, կապար, պղինձ:

Վերջին տարիներին ցինկի արտադրությունը մի քանի անգամ ավելացել է: Եթե 2001 թ. այս գունավոր մետաղի

²²⁴ Հայաստանի Հանրապետության վիճակագրական տարեգիրք, ՀՀ ազգային վիճակագրական տարեգիրք, -Եր.: 2018. Էջ 290:

խտանյութի արտադրությունը կազմել է 745 տ, ապա 2017 թ. թ.¹ հասել է 9640 տոննայի²²⁵:

Հայաստանում ոսկու արդյունահանումը գալիս է դեռևս Ք.ա. 2–3 հազարամյակներից: Մինչև մեր օրերն են հասել այն հորատանցքերը, որ բացվել էին այդ ժամանակներում, ոսկու արդյունագործության նպատակով:

ՀՀ-ում հայտնաբերված են ոսկու 21 հանքավայր ու երևակում: Դրանցից այժմ արդյունաբերական նշանակություն ունեն երկու հանքավայր, որոնցից առաջինը, որտեղ խորհրդային իշխանության ժամանակաշրջանում (1960–ական թվականներից) առաջինը սկսվեցին արդյունահանման աշխատանքները, Զոդի (Սոթքի) հանքավայրն է: Մյուսը Մեղրաձորի հանքավայրն է, որը գտնվում է համանուն գյուղի մոտ, Հրազդան–Հանքավան ճանապարհի վրա: Ներկայումս ՀՀ-ում տարեկան արտադրվում է 5–6 տոննա ծուլածո ոսկի, սակայն առկա են արտադրության ընդլայնման հնարավորություններ²²⁶:

Այումինի արտադրությունը հանրապետությունում հիմնադրվել է 1950–ական թվականների սկզբներին, երբ Քանաքեռի ՋրէԿ-ում արտադրվող էլեկտրաէներգիայի հիման վրա Լենինգրադի մարզից և Ուրալից ներմուծվող հումքով շահագործման հանձնվեց Քանաքեռի այլումինի գործարանը²²⁷:

Այդ գործարանի կառուցումը տնտեսաէկոլոգիական տեսանկյունով հիմնավորված չէր և 1980–ական թվականների վերջերին Քանաքեռի այլումինի գործարանում մետաղային այլումինի արտադրությունը դադարեցվեց:

²²⁵ Հայաստանի Հանրապետության վիճակագրական տարեգիրք, ՀՀ ազգային վիճակագրական տարեգիրք, -Եր.: 2018. էջ 290

²²⁶: Նույն տեղում

²²⁷ Մելքումյան Ս.Ա., ՀՀ տնտեսական աշխարհագրություն, -Եր.: 2004. -223 էջ:

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

Այժմ նշված գործարանը ներմուծում է պատրաստի մետաղային այլումին և դրանից արտադրում գլանվաճք՝ փայլաթիթեղ, այլումինի թերթեր և այլ արտադրանք, որն էկոլոգիական առումով անվտանգ է:

Երևանի այլումինի գործարանը՝ Արմենալ (հայ-ռուսական ընկերություն), սերտորեն համագործակցում է ռուսական համանման գործարանի հետ, որոնցից ստանում է պատրաստի այլումին և արտադրում գլանվաճք ու փայլաթիթեղ:

2017 թ. տվյալներով այլումինի փայլաթիթեղի արտադրությունը կազմել է 33,181 հազ տոննա, իսկ այլումինի գլանվաճքի արտադրությունը՝ 543 տոննա:

Հայաստանի Հանրապետությունում քիմիական արդյունաբերությունը հիմնականում սկսվել է ձևավորվել 1930–ական թվականների սկզբներից, այն ավելի հզորացել ու բազմաճյուղ է դարձել 1950–ական թվականներից:

Հայկական սինթետիկ կաուչուկը մեծ պահանջարկ ունի միջազգային շուկայում: Այն օգտագործվում է անվադողերի, ռետինատեխնիկական իրերի, կոշիկի արտադրության և այլ բնագավառներում:

1995–1998 թթ. այդ ձեռնարկությունում արտադրվել է 1.5–3.8 հազ. տոննա սինթետիկ կաուչուկ: Իսկ 2001–2005 թթ. տարեկան թողարկվել է 4,0–7,7 հազ. տոննա այդպիսի արտադրանք: Իսկ 2007–2010 թթ. «Նաիրիտ» միավորումում սինթետիկ կաուչուկի արտադրությունը կազմել է 8,0–10,0 հազ. տոննա:

Սինթետիկ կաուչուկի արտադրության հարևանությամբ կառուցված պոլիվինիլացետատ գործարանը արտադրում էր բազմատեսակ պոլիմերներ, թաղանթներ, պոլիվինիլային սպիրտ, սոսինձ, տարբեր խեժեր, վինիլացետատ, ացետատ ցելուլոզ: Վաղարշապատի պլաստմասաների և Երևանի պոլիպլաստ գործարանները արտադրում էին տարբեր տեսակի և գույնի պլաստմասաներ, որոնք կիրառվում էին

ճշգրիտ մեքենաշինության և էներգետիկ տնտեսության մեջ, ինչպես նաև կենցաղային նպատակների համար: 2014թ. արտադրվել են 17,5 հազ. տ պլաստմասայե իրեր²²⁸:

ՀՀ Քիմիական արդյունաբերությունը ռազմապաշտպանական պատվերի մեծ ծավալներ իրականացնում էր դեռ երկրորդ աշխարհամարտի սկզբից, թողարկելով ռազմավարական նշանակություն ունեցող հումք՝ սինթետիկ կաուչուկ, հակատանկային հեղուկ վառելիք, կաուստիկ սոդա, կալցիումի ցիանամիդ, կալցիումի կարբիդ, կարբինոլ, մոնոքրոմատ, ռազմարդյունաբերության տարբեր ոլորտների համար անհրաժեշտ այլ նյութեր: Հայ քիմիկոսների ջանքերով ստեղծվեց երկու տիպի դյուրավառ հեղուկների խառնուրդ, որոնք շալցնելով կարելի էր այրել թշնամու տանկերը, Երևանի և Կիրովականի (ներկայում՝ Վանաձոր) քիմկոմբինատներում արտադրվող ֆերոսիլիցիումն օգտագործվեց մետաղագործության մեջ՝ ձուլարաններում գերամուր զրահանյութ արտադրելու համար, որի նշանակությունը ռազմարդյունաբերության կարիքների համար անգնահատելի էր:

Վանաձորի ազոտային հանքանյութերի գործարանին կից 1946 թվականին կառուցված էլեկտրոլիզի գործարանում 1950-ական թվականներին սկսվեց սինթետիկ կորունդի, մելամինի և ռազմապաշտպանական կարիքների համար այլ քիմիական նյութերի արտադրություն: Այստեղ էր արտադրվում ատոմային և ջրածնային ռումբերի պատրաստման համար անհրաժեշտ «ծանր ջուրը», առանց որի հնարավոր չէր արձակել նշված ռումբերը: Վանաձորի «Ռուբին» գործարանում էին արտադրվում էլեկտրոնիկայի ինտեգրալ միկրոսխեմաների ստեղծման համար անհրաժեշտ միաբյուրեղներ, նոնաքարային լազերային միաբյուրեղներ և այլն, որոնք

²²⁸ Մանասյան Մ.Գ., Սայադյան Հ.Յ. Հայաստանի աշխարհագրություն, -Եր.: 2016, -388 էջ:

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

օգտագործվում էին ռադիոտեղորոշումային կայաններում և պաշտպանական տեխնիկայի լազերային սարքերում՝ նշանառու համակարգերում լազերային ճառագայթը կառավարելու համար: Կենսաբանական, բժշկագիտական և դեղագործական ուսումնասիրությունների շնորհիվ ստեղծվեցին և արտադրվեցին բժշկական մի շարք պատրաստուկներ, դեղամիջոցներ, քիմիական տարբեր ռեակտիվներ, որոնք անհրաժեշտ էին մարտական թունավոր նյութեր հայտնաբերելու և դրանցից պաշտպանվելու համար²²⁹:

Մինչև 1990 թ. սկիզբը Հայաստանի Հանրապետությունը դարձել էր բարձր զարգացած, բազմաճյուղ մեքենաշինություն ունեցող հանրապետություն: Այս ճյուղի հարյուրավոր կարևորագույն արտադրատեսակներ արտահանվում էին ոչ միայն ԽՍՀՄ բոլոր տնտեսական շրջաններ, այլ արտասահմանյան ավելի քան 80 երկիր:

Հայաստանի Հանրապետությունը առավելապես բնութագրվում էր զարգացած ճշգրիտ մեքենաշինությամբ:

Ամբողջ նախկին ԽՍՀՄ-ի և արտասահմանյան ավելի քան 60 երկրներում լայն ճանաչում էին ստացել Վանաձորի ու Չարենցավանի հաստոցները, որոնք միջազգային ցուցահանդեսներում ու տոնավաճառներում բազմիցս արժանացել են ոսկե մեդալների ու դիպլոմների: Ներկայումս ՀՀ-ում հաստոցաշինության ճյուղը ներկայացված է միայն Գյումրու քարհատ (ներտաշ) հաստոցների գործարանով:

1990-ական թվականներին իրականացված մասնավորեցման հետ կապված՝ մեքենաշինության այս շատ կարևոր բնագավառը դեռևս իր երբեմնի կարողությունները չի վերականգնել:

²²⁹ Հարությունյան Գ.Է., Ռազմարդյունաբերություն.

գերակայություններ, հնարավորություններ, հեռանկարներ, -Եր.: Լիմուշ հրատ., 2018, էջ 101-102:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Շատ կարևոր է նշել, որ էլեկտրատեխնիկական արդյունաբերության արտադրանքի ծավալով Հայաստանը նախկին ԽՍՀՄ-ում զբաղեցնում էր 3-րդ տեղը՝ զիջելով միայն Ռուսաստանին և Ուկրաինային: Այդ ենթաճյուղի ձեռնարկություններից հատկապես լայն ճանաչում են ստացել Երևանի էլեկտրամեքենաշինական (Հայէլեկտրամեքենա ԱՄ) խոշոր գործարանը, էլեկտրալամպերի («Լույս» արտադրական միավորում), կաբելի, էլեկտրատեխնիկական, Գյումրիի էլեկտրատեխնիկական, Վանաձորի «Ավտոմատիկա», Գորիսի էլեկտրատեխնիկական ու այլ գործարաններ:

Խորհրդային Հայաստանում ռազմարդյունաբերության զարգացումը կարևոր խթան հանդիսացավ հանրապետության տնտեսության և արդյունաբերության զարգացման, սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման, բնակչության աճի և զբաղվածության ապահովման համար: Հանրապետության արտադրական բոլոր հզորությունների շուրջ 40 %-ն այս կամ այն չափով սպասարկում էր խորհրդային ռազմական արդյունաբերությանը²³⁰:

Սակայն Հայաստանի տարածքում գտնվող ոչ մի արտադրական ձեռնարկություն չէր թողարկում զենքի ու զինամթերքի, ռազմական տեխնիկայի և սպառազինության վերջնական արտադրանք²³¹:

²³⁰ Խաչատրյան Կ.Հ., Հայաստանը ԽՍՀՄ ռազմարդյունաբերական համալիրի համակարգում (1922-1991թթ), Պատմության ինստիտուտ, Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, -Եր.: 2015. էջ 42:

²³¹ Խաչատրյան Կ.Հ., Հայաստանը ԽՍՀՄ ռազմարդյունաբերական համալիրի համակարգում (1922-1991թթ), Պատմության ինստիտուտ, Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, -Եր.: 2015. էջ 42:

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

Հայաստանի Հանրապետության ռազմարդյունաբերության կայացումը դժվարին գործընթաց էր, որը պայմանավորված էր բարդ տնտեսական և ռազմաքաղաքական իրավիճակով:

Հանրապետության ինժեներատեխնիկական անձնակազմի և բարձր նեղ մասնագիտական մակարդակ ունեցող մասնագետների միջոցով հիմնականում իրականացվել է սպառազինության և ռազմական տեխնիկայի վերականգնման, վերանորոգման և պահպանման խնդիրներ: Անհատներ և որոշ ընկերություններ տարերայնորեն իրականացրել են զենքի և զինամթերքի ստեղծման և արտադրության աշխատանքներ:

«Ռազմարդյունաբերական համալիրի» մասին օրենքում, ռազմարդյունաբերական գործունեություն է համարվում ռազմական պետական պատվերների հիման վրա սպառազինության, ռազմական տեխնիկայի, ռազմամթերքի, ռազմատեխնիկական միջոցների մշակման, արդիականացման, արտադրության, վերականգման, նորոգման, ծառայությունների մատուցման և սպասարկման աշխատանքների տնտեսական գործունեության ձևերի համակցությունը²³²:

«Հ-ում ռազմարդյունաբերական ոլորտի ձեռնարկությունները հիմնականում հիմնվել են նախկին խորհրդային համանման գործարանների արտադրական հենքի վրա: Եթե սկզբնական շրջանում այդ գործարաններում հիմնականում իրականացվում էր սպառազինության և տեխնիկայի վերանորոգման աշխատանքներ, ապա հետագայում սկսեցին արդիականացվել խորհրդային արտադրության ռադիոտեխնիկական և հրթիռային սպառազինությունը: Հիմնվեց սպառազինության որոշ տեսակների, օպտիկա-էլեկտրոնային սարքերի, անօդաչու թռչող սարքերի սեփական արտադրություն, որոնք տարեց տարի բարելավում են թողարկվող

²³² <http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=97154>

արտադրանքի մարտավարատեխնիկական ցուցանիշները²³³: 2019–ին ձևավորված նոր կառավարությունում ռազմարդյունաբերության ոլորտը ներառվեց ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կազմում: Այս քաղաքական որոշումը հույս է ներշնչում ոլորտի հաստատուն զարգացման համար:

ՀՀ-ում ռազմարդյունաբերական համալիրի զարգացումը հույժ կարևոր է ազգային անվտանգության մեծ թվով խնդիրների լուծման համար: Դրա շնորհիվ առաջին հերթին հնարավոր կլինի մեղմացնել սպառազինության և ռազմական տեխնիկայի ձեռքբերման գործում կախվածությունը արտերկրից, հատկապես՝ ռազմական գործողությունների ժամանակ շրջափակման կամ ոչ բարենպաստ ռազմաքաղաքական վերադասավորումների պարագայում²³⁴:

ՀՀ Կառավարության որոշմամբ 2020թ–ին Հայաստանի ռազմական արդյունաբերության հատկացումները կրկնապատկվել են: Հատկացված միջոցները հիմնականում ուղղվելու են բարձր տեխնոլոգիական արդյունաբերության զարգացման, թվայնացման և ռազմաարդյունաբերական համալիրի զարգացմանը²³⁵:

Հայաստանի Հանրապետությունը թեթև արդյունաբերության թողարկվող արտադրանքի ծավալով զիջում էր միայն մեքենաշինությանը:

Թեթև արդյունաբերության տեսակարար կշիռը ամբողջ արդյունաբերության համախառն արտադրանքի ծավալում

²³³ <http://mil.am>, <https://razm.info/>

²³⁴ Թովմասյան Ա.Ռ., ՀՀ ռազմարդյունաբերական համալիրի զարգացման համար խոչընդոտների և դրանց հաղթահարման ուղիների որոշման հարցի շուրջ. Ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների վերլուծություն, ՀԲ, 2017, թիվ 1-2, էջ 48-56:

²³⁵ <https://armeniasputnik.am/society/20191218/21456264/Hayastany-krknapatkel-e-razmakan-ardyunaberuyan-byujen.html>

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

մինչև 1990–ական թվականների սկիզբը կազմել է 23–24,5%²³⁶: Թեթև արդյունաբերության ճյուղային կառուցվածքում գլխավորը տեքստիլ արդյունաբերությունն էր: Այն թողարկում էր բամբակե (Գյումրի), ինչպես նաև բրդե ու մետաքսե գործվածքեղեն (Երևան):

Տեքստիլ արդյունաբերության գլխավոր ենթաճյուղերից արտադրանքի ծավալով առաջնակարգ տեղ է զբաղեցրել բամբակե, բրդյա գործվածքների արտադրությունը: Այս ենթաճյուղի տեսակարար կշիռը տարբեր տարիներին (մինչև 1990–ական թվականները) կազմել է մինչև 29 %, բամբակյա գործվածքներինը՝ շուրջ 25, իսկ մետաքսյա գործվածքներինը՝ 10–12 %:

Տեքստիլ արդյունաբերության կառուցվածքում մեծ տեղ է գրավում գորգագործությունը, որը, ինչպես հայտնի է, Հայաստանի համար ավանդական ճյուղ է համարվում: Հայկական գորգերը հռչակված են եղել դեռևս հին և հատկապես միջին դարերում²³⁷:

Կաշվի-կոշիկի արդյունաբերությունը հանրապետության թեթև արդյունաբերության գլխավոր ենթաճյուղերից մեկն է: 1980–ական թվականներին Հայաստանում ձևավորվել էին «Մասիս», «Նաիրի» և «Լյուքս» միավորումներն իրենց ձեռնարկություններով: Ոլորտի ժամանակակից ձեռքբերումներից կարելի է համարել այն իրողությունը, որ ՀՀ զինուժին մատակարարվող կիսաճտքավոր կոշիկներն իրենց որակով չեն զիջում աշխարհի առաջատար ընկերությունների արտադրանքին:

ՀՀ սննդի արդյունաբերությունը ժամանակակից արդյունաբերական եղանակով վերակառուցվեց 1920–ական թթ. ու բուռն թափով, հատկապես 1940–ական թթ. հետո: Այն

²³⁶ Մելքումյան Ս.Ա., ՀՀ տնտեսական աշխարհագրություն, -Եր.: 2004. 223 էջ:

²³⁷ Մանասյան Մ.Գ., Սայադյան Հ.Յ., Հայաստանի աշխարհագրություն, -Եր.: 2016, -388 էջ

համարվում է հանրապետության տնտեսության առաջատար ճյուղերից մեկը, որը միավորում է հարյուրավոր խոշոր, միջին և փոքր ձեռնարկություններ՝ որոնց բաժինն արդյունաբերության համախառն արտադրանքում կազմում է 40 %: Ճյուղի արտադրանքի 2/3-ը բաժին է ընկնում սննդամթերքի, իսկ մնացած մասը՝ խմիչքների և ծխախոտի արտադրությանը:

Գինու, կոնյակի, օղու և սպիրիտի արտադրությունը հանրապետության սննդի արդյունաբերության հին ու կարևորագույն ենթաճյուղերից է: Հայտնի է, որ Հայաստանում գարեջուր արտադրվել է նաև շատ հին ժամանակներում: Խորհրդային իշխանության տարիներին գարեջրի խոշոր գործարաններ են կառուցվել Երևանում, Գյումրիում, Վանաձորում, Գորիսում, Աբովյանում, Վարդենիսում:

Հայաստանի Հանրապետությունը լայն ճանաչում ունի նաև հանքային ջրերի արտադրությամբ: Այստեղ շրջվող բարձրորակ, բուժիչ հանքային առավել հայտնի ջրերից են «Ջերմուկ», «Արզնի», «Բջնի», «Հանքավան», «Արարատ», «Դիլիջան», «Սևան», «Լիճք» և այլ տեսակների հանքային ջրերը: Հանքային ջրի լցման առավել խոշոր գործարանները այժմ գտնվում են Ջերմուկում և Արզնի ավանում:

Հանրապետության պահածոների արտադրության տեղաբաշխման մեջ հիմնական դերը պատկանում է հումքի մոտիկությանը: Իսկ քանի որ պտուղների ու բանջարեղենի արտադրությունը հիմնականում բաժին է ընկնում Արարատյան դաշտին, ապա պահածոներ արտադրող խոշոր ձեռնարկություններն էլ տեղաբաշխված են այստեղ:

Մսի արտադրությունը սննդի արդյունաբերության կարևոր ենթաճյուղերից մեկն է: Երևան և Գյումրի քաղաքներում կառուցվել են մսի խոշոր կոմբինատներ, որոնք թարմ մսից

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

բացի թողարկում էին տարբեր տեսակների երշիկեղեն, բաստուրմա, սուջուխ և ապխտած այլ սննդամթերք²³⁸:

Կաթի վերամշակման, կաթնամթերքների, պանրի, կենդանական յուղի արտադրությունը նույնպես առավել բարձր զարգացում է ապրել խորհրդային իշխանության տարիներին: Կաթնամթերքների, հատկապես մածնի, պանրի տարբեր տեսակների, կաթնաշոռի արտադրությունը տնայնագործական եղանակով Հայաստանում զարգացած էր անհիշելի ժամանակներից:

Ծխախոտի արդյունաբերությունը թողարկվող արտադրանքի արժեքային արտահայտությամբ զգալի տեղ է զբաղեցնում սննդի արդյունաբերության համակարգում: Ներկայումս Երևանում և Մասիսում են գտնվում ծխախոտի արտադրության «Գրանդ տոբակո», «Մասիս տոբակո» և «Սիգարոն» հայտնի ձեռնարկությունները, որոնց արտադրանքը մեծ ճանաչում է ստացել նաև հանրապետությունից դուրս: 2017թ-ին Հայաստանում արտադրվել է 28,477 մլրդ հատ սիգարետ²³⁹:

Ներկայումս ՀՀ թեթև և սննդի արդյունաբերության բազմաթիվ ընկերություններ մասնակցելով ՀՀ ՊՆ մատակարարումների իրականացման համար կազմակերպվող մրցույթներին, հաղթելով դրանցում իրականացնում են զորքերի հանդերձանքով և սնունդով մատակարարումները:

ՀԽՍՀ ռազմական և տնտեսության ռազմավարական պլանավորման հիմքում դրված էր, հիմնական հակառակորդի ՆԱՏՕ-ի անդամ՝ Թուրքիայի արևմուտքում գտնվելու հանգամանքը:


²³⁸ Մանասյան Մ.Գ., Սայադյան Հ.Յ., Հայաստանի աշխարհագրություն, Եր.: 2016. -388 էջ:

²³⁹ ՀՀ վիճակագրական տարեգիրք, 2018. էջ 287:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԶԿՆԱԲՈՒԾԱԿԱՆ ՏՆՏԵՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԱԲԵՈՒՄԸ ԱՐՄԱՎԻՐԻ ԵՎ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԵՐՈՒՄ

Մասշտաբ 1: 400 000



Քարտեզ 10. Զկնարուծական տնտեսությունների բաշխումը Հայաստանի Հանրապետության Արարատի և Արմավիրի մարզերում

Որպես մերձսահմանային տնտեսական օբյեկտների պաշտպանական նպատակներով օգտագործման օրինակ կարելի է ներկայացնել Թուրքիային սահմանամերձ ՀՀ տարածքներում (Արարատի և Արմավիրի մարզերի տարածք) ձկնարուծական տնտեսությունների ստեղծումը, որն ուներ ոչ միայն Հայաստանում ձկնարդյունաբերության զարգացման խնդիր, այլ նաև այդ ջրային տարածքները և ջրանցքները դառնում էին հակատանկային պաշտպանության բնագծեր: Ընտրված տարածքներում առկա է և գրունտային ջրերի մեծ պաշարներ և դրանք մոտ են գտնվում Թուրքիայի հետ պետական սահմանին (Քարտեզ 10, նկար 17, 18):

Գյուղատնտեսությունը արտադրական ոլորտի երկրորդ կարևորագույն ճյուղն է արդյունաբերությունից հետո: Գյուղատնտեսության համար հողը հանդիսանում է թե՛ գլխավոր արտադրամիջոց, և թե՛ աշխատանքի առարկա:

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

Մյուս կարևոր առանձնահատկությունը, դա բնակլիմայական պայմանների ավելի մեծ ազդեցությունն է:


Մինչխորհրդային տարիներին Հայաստանը տիպիկ ագրարային երկիր էր, որտեղ գյուղատնտեսությամբ էր զբաղվում բնակչության 85 %-ը:

Խորհրդայնացումից հետո Հայաստանի գյուղատնտեսությունը տնտեսական մյուս ճյուղերի պես զարգանում էր սոցիալիստական ուղիով, և արդեն 1990թ. Հանրապետությունում կար սոցիալիստական տիպի 850 ձեռնարկություն՝ խորհրդային տնտեսություններ, կոլտնտեսություններ և միջտնտեսային ձեռնարկություններ:



Նկար 17. Արարատի մարզի Արմաշի ձկնային տնտեսության տարածքը (google map)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ



Նկար 18. Արարատի մարզի Մասիսի ձկնային տնտեսության տարածքը (google map)

1991թ. ՀՀ անկախացումից հետո գյուղատնտեսության մեջ սոցիալ-տնտեսական նոր և արմատական փոփոխություններ տեղի ունեցան (Աղյուսակ 12): Խորհրդային տնտեսություններին և կոլտնտեսություններին փոխարինման եկան գյուղացիական մասնավոր տնտեսությունները: Դրանց թիվն այժմ շուրջ 338 հազ. է, իսկ գյուղատնտեսության մեջ զբաղվածների թիվը կազմում է տնտեսության մեջ ընդհանուր զբաղվածների 40 %-ը:

Սեփակաշնորհաձ ամբողջ հողը կազմում է 397 հազ. հա, որը յուրաքանչյուր մասնավոր տնտեսության համար կազմում է մոտ 1,27 հա սեփականաշնորհված հողատարածք:

2004թ. գյուղատնտեսության համախառն արտադրանքը կազմում էր ՀՀ ամբողջ ՀՆԱ-ի 22,6%-ը, իսկ 2014թ.՝ շուրջ 19 %-ը (ներառյալ որսորդությունը, անտառային տնտեսությունը և ձկնաբուծությունը): Գյուղատնտեսական արտադրանքի

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

ծավալներով առաջատար են՝ Գեղարքունիքի, Արմավիրի և Արարատի մարզերը:

Աղյուսակ 12.

Գյուղատնտեսական հողահանդակների տարածությունը և կառուցվածքն ՀՀ-ում²⁴⁰

Հողահանդակներ	Տարածությունը	
	հազ.հա	%
Վարելահողեր	494,0	35,50
Բազմամյա տնկարկներ	64,0	4,60
Խոտհարքներ	139,0	10,00
Արոտներ	694,0	49,87
Խոպան	0,4	0,03
Ընդամենը	1391,4	100,00

ՀՀ գյուղատնտեսության մեջ արտահանման նշանակության ճյուղերն են՝ խաղողագործությունը, բանջարաբուծությունը և ծխախոտագործությունը: Տեղական նշանակության ճյուղերից կարելի է նշել՝ հացահատիկի, կերաբույսերի և կարտոֆիլի մշակությունն, ինչպես նաև անասնապահությունը:

5.3 Ենթակառուցվածքային համալիր

Տրանսպորտի և հաղորդակցման ուղիների աշխարհագրությունը, տարբեր տարածքների անցանելիության քարտեզագրումը, իր առջև դրված հիմնախնդիրների լուծման համար պահանջում է խորը և համապարփակ գիտելիքներ, որի բնույթն է ցույց տալ ոչ միայն թե ինչ տեսք ունի օբյեկտը, այլ ինչից է այն կազմված և ինչպես են փոփոխվում նրա բնութագրիչները տարբեր եղանակային

²⁴⁰ ՀՀ Ազգային ատլաս, Լ.Հ.Վալեսյանի խմբ. հատոր Ա, -Եր.: 2007, 232 էջ:

պայմաններում, ինչպիսի բնույթ ունի տեղանքը, որտեղով նրանք անցնում են, ինչպիսին է նրա թողունակությունը տարբեր զորատեսակների զինվորական շարասյուների անցման ժամանակ:

Բոլոր ժամանակներում էլ ենթակառուցվածքները հանդիսացել են մարտաբեմերի օպերատիվ սարքավորման ամենակարևոր տարրերից մեկը, որի հիմնական դերը հանդիսանում է ուժերի, միջոցների և տեղեկատվության արագ տեղափոխումները՝ ինչպես ռազմաճակատի երկայնքով, այնպես էլ ճակատից դեպի թիկունք և հակառակ ուղղությամբ²⁴¹: Փորձառու հրամանատարները լավագույնս հասկանում են, որ հաճախ մի քանի բոպեն էլ կարող են պատճառ դառնալ պլանավորված գործողությունների և օպերացիաների ձախողմանը: Հետևաբար նրանք անում են հնարավորին ամեն ինչ, որպեսզի առավելագույնս օգտագործեն ցամաքային, օդային և ջրային հաղորդակցության ուղիները: Դրանցից կարևորագույններն իրար են կապում ռեսուրսային բազաները արտադրական համալիրների հետ, ռազմական գործողությունների մարտաբեմերի տարբեր օպերատիվ ուղղություններ, հնարավորություն են տալիս զորքերին մատակարարել անհրաժեշտ թիկունքային պարագաներով, ապահովում են հանձնարարված շրջանում զորքերի արդյունավետ տեղափոխումը և զորաշարժերի իրականացումը: Դեպի ժամանակակից հաղորդակցության ուղիներ երաշխավորված մուտքը ծայրահեղ անհրաժեշտ է, ոչ միայն պետությունների արտաքին և ներքին տնտեսական կապերի ապահովման և ինտեգրման համար, այլ նաև խաղաղ և պատերազմական

²⁴¹Саядян А.Я., Геоинформационные системы при техническом прикрытии искусственных сооружений в системе транспортной безопасности государства, материалы V Междунар. науч.-практ. конф. (Гомель, БелГУТ, 21–22 апреля 2016 г.), В 2 ч. Ч. 1; под общ. ред. А. А. Поддубного, Гомель, БелГУТ, 2016, с. 173–175.

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

Ժամանակաշրջանում՝ հատկապես խոշոր զորամիավորումների, զորաշարժերի և տարբեր տեսակի ապահովումների իրականացման համար: Նշված ռազմական խնդիրների լուծման նպատակով, պլանավորող տարբեր մակարդակի շտաբներին անհրաժեշտ են մանրակրկիտ տեղեկատվություն հաղորդակցության տարբեր ուղիների և դրանց ենթակառուցվածքների ընթացիկ վիճակի վերաբերյալ: Հատկապես կարևոր բնութագրիչներից են ճանապարհների թողունակությունը, կամուրջների հաշվարկված ծանրության առավելագույն քաշը, ճանապարհների անվտանգությունը հակառակորդի հնարավոր ռմբակոծություններից: Նման տեղեկատվության հայթայթումն ու վերլուծումը հանդիսանում է տրանսպորտի աշխարհագրության մշտական հետազոտական աշխատանքների արդյունք:

Տրանսպորտային համակարգի հիմնախնդիրները համարվում են արդի ժամանակաշրջանի մակրոտնտեսական հիմնահարցեր: Այդ իսկ պատճառով էլ տրանսպորտային ճյուղը ներառված է ազգային անվտանգության ապահովման ոլորտին և այն լուծում է ոչ միայն տնտեսական այլ նաև երկրի միասնականության խնդիրներ: ՌԴ մինչև 2020 թ. Տրանսպորտի զարգացման ծրագրում նշվում է, որ տրանսպորտը հանդիսանում է խոշորագույն տնտեսական և քաղաքական հարցերի լուծման, ինչպես նաև երկրի պաշտպանունակության ապահովման գլխավոր գործոններից մեկը²⁴²:

Տրանսպորտային համակարգի ուսումնասիրման ժամանակ ռազմական աշխարհագրության մասնագետների համար հատկապես կարևոր են դրանց խոցելի հատվածների (կամուրջներ, թունելներ, լաստանավեր, գետնանցումներ և այլն) մանրակրկիտ ուսումնասիրումը: Դա ունի երկու պատճառ՝ առաջինը, եթե դա քո ենթակայության տակ է, ապա

²⁴² Тербнев Л.В. Транспортная безопасность государств содружества: теоретико-методологические аспекты. Транспорт Российской Федерации. Журнал о науке, практике, экономике. №10, стр. 60-64, 2007

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

պետք է դրանց պահպանության համար առանձնացնել համապատասխան ուժեր և միջոցներ, իսկ եթե այն հակառակորդի թիկունքում է, ապա պետք է գնահատել ամենակարևորները և միջոցներ ձեռնարկել դրանց ոչնչացման համար:

Քանի որ Հայաստանի Հանրապետությունը տիպիկ լեռնային երկիր է՝ խիստ կտրտված մակերևույթով, ապա տրանսպորտային ուղիների կառուցումը այստեղ կապված է դժվարությունների ու համեմատաբար մեծ ծախսերի հետ: Չնայած այդ դժվարություններին, դեռևս շատ հնուց պատմական Հայաստանի տարածքով հյուսիսից դեպի հարավ և արևմուտքից դեպի արևելք կառուցվել էին առևտրական մի շարք բանուկ ճանապարհներ, որոնցով Հայաստանը առևտրատնտեսական կապեր էր պահպանում բազմաթիվ երկրների հետ:

Հանրապետության ներկայիս տարածքում ժամանակակից տրանսպորտային ուղիների կառուցումը սկսվել է XIX դարի վերջերից՝ կապված երկաթուղիների կառուցման հետ: Իսկ 1920–ական թվականներից սկսած ոչ միայն վերակառուցվում և զարգանում է հանրապետության երկաթուղային ցանցը, այլև ստեղծվում է ժամանակակից ավտոմայրուղիների ցանց:

Երկաթուղային տրանսպորտը հանրապետության տրանսպորտի առաջատար ենթաճյուղն է:

XIX դարի վերջերից Ռուսաստանը երկաթուղիներ էր կառուցում ոչ միայն կենտրոնից դեպի վառելիքային ու մետաղային ռեսուրսներով հարուստ վայրերը, այլև դեպի իր կայսրության սահմանային շրջաններ՝ ռազմավարական նպատակներով: Ահա այս երկու նպատակներով էլ երկաթուղիներ էին կառուցվում նաև դեպի Անդրկովկաս, այդ թվում նաև Հայաստան:

Մինչև 1899 թ. արդեն ավարտվել էր Թիֆլիս–Սանահին (այժմ՝ Ալավերդի), 1900 թ. Ալեքսանդրապոլ (այժմ Գյումրի)–

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

Կարս, 1902 թ. Երևան, 1906 թ. Ջուլֆա, 1908 թ. Թավրիզ երկաթուղիների կառուցումը: Այս ուղիների կառուցումը Ռուսաստանի համար կարևոր նշանակություն ուներ այն առումով, որ մի կողմից շահագրգռված էր Ալավերդու պղնձի պաշարների ու Արարատյան դաշտում աճեցվող բամբակի օգտագործմամբ, մյուս կողմից նաև՝ Թուրքիայի և Իրանի հետ ունեցած սահմանագծի ամրապնդման հետաքրքրությամբ:

Այս երկաթուղիները շատ կարևոր դեր խաղացին նաև Հայաստանի տնտեսական զարգացման համար: Այն հնարավորություն տվեց մեծ չափով ընդլայնել Հայաստանի առևտրատնտեսական կապերը Ռուսաստանի կենտրոնական շրջանների հետ: Մինչև Առաջին համաշխարհային պատերազմը (1913 թ.) Հայաստանի տարածքում գործում էր 362 կմ երկաթուղի: Առաջին համաշխարհային ու քաղաքացիական պատերազմի տարիներին դրանց մեծ մասը կազմալուծվել, քայքայվել էր:

ՀՀ-ում խորհրդային կարգերի հաստատումից հետո այդ ուղիների վերակառուցումից բացի, հանրապետությունում սկսվում են երկաթուղաշինական նոր աշխատանքներ:

Մասնավորապես, առաջին հերթին կառուցվեց Գյումրի-Արթիկ-Պեմզաշեն-Մարալիկ երկաթգիծը, որը ուղղված էր Արթիկում և Պեմզաշենում տուֆաքարի լայն մասշտաբով արդյունահանման ու այդտեղից պատրաստի շինաքարը դեպի հանրապետության մյուս շրջաններ տեղափոխելուն: Մյուս կարևոր երկաթուղին Միջնավան-Կապան 39 կմ-անոց գիծն է, որը շահագործման հանձնվեց 1932 թ., և որը խոշոր դեր խաղաց ոչ միայն առհասարակ հանրապետության այդ կարևոր տնտեսական շրջանի ամբողջ արդյունաբերության, այլև գյուղատնտեսության զարգացման գործում: Այդ գծով Մյունիքը կապվեց ոչ միայն Երևանի, Արարատյան դաշտի, այլև ԽՍՀՄ մյուս տարածաշրջանների հետ:

Հանրապետության երկաթուղու ցանցը զգալիորեն ընդլայնվեց և կատարելագործվեց հատկապես 1940-ական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

թվականների վերջերից սկսած: Հանրապետության տնտեսական կյանքում շատ կարևոր դեր խաղաց Երևան-Հրազդան-Սևան-Սոթք երկաթուղու կառուցումը: Այս գծի կառուցումը խոշոր դեր խաղաց Սոթքի ոսկու հանքանյութի տեղափոխման, Սևանի ավազանի, Կոտայքի, Հրազդանի, Իջևանի տարածաշրջանների տնտեսական զարգացման գործում:

Հետագայում Հրազդանից երկաթուղին շարունակվեց մինչև Դիլիջան-Իջևան-Աղստաֆա (վերջինս գտնվում է Ադրբեջանի տարածքում):

Արդեն 1988 թ. հանրապետության շահագործվող երկաթուղու երկարությունը կազմեց 854 կմ: Հանրապետության երկաթուղային տրանսպորտի աշխատանքների կատարելագործման բնագավառում շատ կարևոր դեր խաղաց նրա էլեկտրիֆիկացումը: Երկաթուղու տեսակարար կշիռը հանրապետության տրանսպորտային ամբողջ բեռնաշրջանառության մեջ մինչև 1980-ական թվականները կազմել է ավելի քան 53 %:

2017 թ. տվյալներով՝ հանրապետության երկաթուղու բեռնաշրջանառությունը կազմել է 689,5 մլն տոննա/կիլոմետր, ուղևորաշրջանառությունը կազմել է 55,4 մլն ուղևոր/կիլոմետր²⁴³:

1990-ական թվականների վերջերից երկաթուղու գործունեությունը նորից սկսել է աշխուժանալ, սակայն այն դեռևս հեռու է 1980-ական թվականների մակարդակից, քանի որ հանրապետությունն Ադրբեջանի կողմից դեռ մնում է շրջափակված:

²⁴³ Հայաստանի Հանրապետության վիճակագրական տարեգիրք, ՀՀ ազգային վիճակագրական տարեգիրք, Եր.: 2018. - էջ 338:

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

2017 թ. տվյալներով ՀՀ երկաթուղային գծերի ընդհանուր երկարությունը 796,6 կմ է, որից ընդհանուր օգտագործման գծերը 703,2 կմ, որը լրիվ էլեկտրիֆիկացված է²⁴⁴:

Հարկ են համարում նշել որ վերջին շրջանում ՀՀ Պաշտպանության նախարարության կողմից տարբեր ուղղություններով բեռների փոխադրման նպատակով (հատկապես զրահատեխնիկայի) ակտիվորեն օգտվում են երկաթուղային տրանսպորտի ծառայություններից:

Այստեղ կարևոր է նշել, որ Ֆիլլետովո-Վանաձոր և Սևան-Գավառ-Մարտունի-Ջերմուկ-Սիսիան-Կապան-Մեղրի նոր երկաթուղագծերի կառուցման անհրաժեշտությունը, որը կունենար մեծ ռազմավարական նշանակություն, կնպաստեր ՀՀ տնտեսության մեջ տրանսպորտի այս տեսակի դերի բարձրացմանը, ինչպես նաև կբարելավեր հանրապետության տրանսպորտային անվտանգության իրավիճակը: Մասնավորապես Ֆիլլետովո-Վանաձոր նոր երկաթգիծը անհրաժեշտ ժամանակ կարող է փոխարինել Գյումրի-Երևան երկաթգծին, որը կառուցված է Թուրքիայի հետ սահմանին շատ մոտ և պատերազմական իրավիճակներում հակառակորդի կողմից անմիջապես հարվածի տակ կպահվի:

Ավտոմոբիլային տրանսպորտը Հայաստանի Հանրապետության տնտեսության համար առանձնահատուկ կարևոր դեր խաղացող ճյուղն է: Քանի որ Ադրբեջանի տարածքով անցնող երկաթուղին մեզ համար շարունակում է մնալ փակ, իսկ Վրաստանի տարածքով դեպի Ռուսաստան անցնողն էլ լիարժեք չի օգտագործվում (Աբխազիայում փակ լինելու հետ կապված օգտագործվում է լաստանավային կապ), ապա ավտոտրանսպորտը ՀՀ-ի համար շարունակում է մնալ վճռական դեր խաղացող տրանսպորտի տեսակը: Դրա կարևորությունն արտահայտվում է նաև այն տեսանկյունից, որ

²⁴⁴ Հայաստանի Հանրապետության վիճակագրական տարեգիրք, ՀՀ ազգային վիճակագրական տարեգիրք, -Եր.: 2018. էջ 347:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

հանրապետության տարածքի մեծ մասն ընդգրկված չէ երկաթուղու սպասարկման ոլորտում կամ զգալիորեն կտրված է դրանից: Այն առավել մանևրունակ, մարդկանց և բեռները դռնից-դուռ տեղափոխող տրանսպորտ է: Հանրապետությունում ավտոտրանսպորտի զարգացումը հիմնականում սկսվել է 1920–ական թվականներից հետո: Իսկ մինչ այդ հանրապետության ներկայիս տարածքում կային շուրջ 2000 կմ երկարությամբ գրունտային ճանապարհներ, որոնք ձգվում էին Երևանից դեպի Սևան–Դիլիջան–Իջևան, Երևանից դեպի Գյումրի, Երևանից դեպի Արտաշատ–Նախիջևան և դեպի հանրապետության այլ ուղղություններ ²⁴⁵ : Այդ ճանապարհներով էլ այն ժամանակ Երևանը կապերի մեջ էր ինչպես հանրապետության տարածաշրջանների ու բնակավայրերի, այնպես էլ հարևան պետությունների հետ:

Խորհրդային իշխանության տարիներին ավտոտրանսպորտի զարգացման հետ կապված, նշանավոր բոլոր ուղղություններով ճանապարհները վերակառուցվեցին, կառուցվեցին բոլորովին նոր բարեկարգ ավտոմայրուղիներ, որոնք հանրապետության մայրաքաղաքը կապում են բոլոր տարածաշրջանների, քաղաքների և հարևան երկրների հետ:

2017 թ. տվյալներով ընդհանուր օգտագործվող ավտոճանապարհների երկարությունը 7,575 հազ. կմ է, որից 4,717 հազարը ամուր ծածկով: Հանրապետության տրանսպորտային բեռնաշրջանառության ընդհանուր ծավալում ավտոտրանսպորտային բեռնափոխադրումների տեսակարար կշիռը կազմում էր ավելի քան 84,2 % (Աղյուսակ 13) ²⁴⁶ : Ավտոտրանսպորտի դերը վճռական է հանրապետության բոլոր այն տարածաշրջանների համար, որտեղով դեռևս

²⁴⁵ Մելքումյան Ս.Ա., «Հ տնտեսական աշխարհագրություն», -Եր.: 2004, -223 էջ:

²⁴⁶ Հայաստանի Հանրապետության վիճակագրական տարեգիրք, ՀՀ ազգային վիճակագրական տարեգիրք, Երևան, 2018. էջ 339 և 347

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

երկաթուղի չի անցնում և հեռու են երկաթուղու սպասարկման ոլորտից (Վայոց ձորի մարզ, Սյունիքի ու Գեղարքունիքի մարզերի մեծ մասը և այլն):

1990–ական թթ. սկզբներից ավտոտրանսպորտի բեռնաշրջանառությունը նույնպես խիստ կրճատվել է, կապված Ադրբեջանի կողմից հանրապետության շրջափակման հետ: Հետագա տարիներին ավտոտրանսպորտի դերը բարձրացել է, քանի որ արտաքին բեռնափոխադրումների մեծ մասը շարունակվում է իրականացվել այս ձևով (երկաթուղու շրջափակման հետ կապված):

Այժմ հանրապետության առավել կարևորագույն ավտոմայրուղիներն են Երևան–Սևան – Դիլիջան – Իջևան – Նոյեմբերյան – Վրաստան սահման, Երևան – Արտաշատ–Արարատ–Վայք–Ջերմուկ–Սիսիան–Գորիս–Կապան–Մեղրի–Իրան սահման:

Գորիսից ավտոմայրուղին Բերձորով հասնում է Շուշի և Ստեփանակերտ: Արցախի համար կենսական նշանակություն ունեցող այս մայրուղին կառուցվել է «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցներով: 2017 թ-ին նույն հիմնադրամի միջոցներով կառուցվեց Արցախը Հայաստանին կապող երկրորդ մայրուղին՝ Վարդենիս–Նոր Շահումյան–Մարտակերտ: Ներկայումս նախագծվում է Արցախը Հայաստանին կապող երրորդ ճանապարհը՝ Կապան–Հադրութ, ինչն անշուշտ էլ ավելի կամրապնդի Արցախի տրանսպորտային անվտանգության համակարգը:

Հանրապետության համար շատ կարևոր մայրուղիներ են Երևան–Աշտարակ–Թալին–Գյումրի, որտեղից այն շարունակվում է դեպի Վրաստանի Հանրապետության Ախալքալաք, Ախալցխա հայաբնակ քաղաքները և հասնում Բաթում նավահանգիստը, Երևան–Աշտարակ–Ապարան–Սպիտակ–Վանաձոր–Ստեփանավան–Տաշիր (որտեղից այն շարունակվում է դեպի Վրաստան): Շահագործման է հանձնվել

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Եղեգնաձոր–Սելիմի լեռնանցք–Մարտունի բարձրակարգ ավտոճանապարհը:

Խողովակաշարային տրանսպորտը հանրապետությունում սկսել է զարգանալ 1960–ական թվականների սկզբներից, երբ կառուցվեց Ղազախ – Երևան գազամուղը: 1990–ական թթ. սկզբներին Վրաստանի տարածքից ուղիղ գծով դեպի Հայաստան անցկացվեց գազամուղի նոր ճյուղ՝ բացառելով Ադրբեջանի տարածքը: Հենց այդ գազամուղով հանրապետությունը գազ էր ներմուծում Թուրքմենստանից՝ Հյուսիսային Կովկասով: Այժմ Հայաստանի Հանրապետությունն այդ գազամուղով գազ է ներմուծում Ռուսաստանից:

Իրանի հետ կնքված պայմանագրով 2007 թ. մարտի 19–ին շահագործման հանձնվեց Իրան–Հայաստան գազամուղը, որով Իրանից ստացվում է 350–400 մլն. մ³ գազ:

Հանրապետության բեռնափոխադրումների ընդհանուր ծավալում խողովակաշարային տրանսպորտի տեսակարար կշիռը 2017 թ. կազմել է 6,3 %: Մայրուղային խողովակաշարերի (գազամուղների) ընդհանուր երկարությունը կազմում է 1586,5 կմ:

Օդային տրանսպորտը, Հայաստանի Հանրապետության աշխարհագրական բարդ դիրքի հետ կապված, ունի առանձնահատուկ կարևոր նշանակություն: Որպես տրանսպորտի կարևոր ճյուղ այն ձևավորվել է 1932–1937թթ–ին և առաջին կանոնավոր չվերթներն իրականացվել են 1937 թ–ին՝ Մոսկվա, Թբիլիսի և Բաքու: Չնայած օդային տրանսպորտի տեսակարար կշիռը տրանսպորտային բեռնաշրջանառության ընդհանուր ծավալում փոքր է, սակայն նրա նշանակությունը մեծ է: Այս ճյուղը հատկապես վճռական դեր է խաղում ոչ միայն ուղևորների տեղափոխությունն արագ իրականացնելու այլև շուտ փչացող, թանկարժեք, ոչ մեծ ծավալի բեռները արագ տեղ հասցնելու, հեռավոր շրջանների բնակչությանը շտապ բուժօգնություն կազմակերպելու և շատ այլ բնագավառներում:

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

Օդային տրանսպորտը վճռական դեր խաղաց Արցախի ազգային ազատագրական պայքարի տարիներին, երբ Ադրբեջանի կողմից մեր հանրապետությունը տրանսպորտային շրջափակման էր ենթարկել, և Արցախի հետ կապող միակ, և առհասարակ արտաքին աշխարհի հետ հիմնական կապի միջոցը օդային ուղին էր:

Հանրապետության խոշոր օդանավակայանը Երևան քաղաքի Զվարթնոց միջազգային օդանավակայանն է, որտեղից օդային ուղիներ են ձգվում դեպի Մոսկվա ու Նախկին ԽՍՀՄ մի շարք հանրապետություններ, ինչպես նաև աշխարհի տասնյակ այլ երկրներ: Երևանն ունի նաև մեկ այլ՝ Էրեբունի օդանավակայան, որտեղից նույնպես միջազգային թռիչքներ են իրականացվում: Ներկայումս Էրեբունի օդանավակայանում է տեղակայված Ռուսաստանի 102-րդ ռազմահենակայանի ռազմաօդային ուժերի զորամասը: Միջազգային դասի օդանավակայան է գործում նաև Գյումրիում, որտեղ ներկայումս վերազինման աշխատանքներ են իրականացվում: Այստեղ է տեղակայված ՀՀ ՌՕՈւ-ի զորամասը: Հիմնականում ռազմամարզական նպատակներով օգտագործվում է Արզնիի օդանավակայանը: Ակտիվ վերակառուցման աշխատանքներ են ընդհանում նաև Կապանի օդանավակայանում և 2020 թ-ին այն շահագործման կհանձնվի ներպետական թռիչքների իրականացման համար: Ներհանրապետական նշանակության օդանավակայաններ նախկինում գործել են Ջերմուկում, Վարդենիսում, Սիսիանում, Գորիսում և հեռավոր այլ քաղաքներում, որոնք օդային գծերով կապված էին Երևանի հետ:

Հանրապետության տրանսպորտային ուղիների
բեռնափոխադրումները (հազ. տոննա)²⁴⁷

Տրանսպորտի տեսակը	Տարիները				
	2013	2014	2015	2016	2017
Երկաթուղային	3275,2	3057,6	2531,7	2610,9	2640,0
Ավտոմոբիլային	7319,6	5384,0	6864,9	16248,8	23683,9
Օդային	10,4	10,4	10,2	18,3	22,4
Խողովակաշարային	1710,3	1705,6	1645,8	1605,8	1786,8
Ընդամենը	12315,5	10157,6	11052,6	20483,8	28133,1

Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտում 2011 թ. շահագործման հանձնվեց օդանավակայանի նոր մասնաշենքը: Նորացվել և լայնացվել է նախկին թռիչքուղին, ինչպես նաև հարթեցվել են թռիչքուղուն հարկից մի քանի բլուրների գագաթները՝ ժամանակակից մեծ ինքնաթիռներ ընդունելու համար: Օդանավակայանի վերաբացումը նախատեսված էր կատարել 2011 թ. մայիսին 9-ին, սակայն քաղաքական պատճառներով օդանավակայանի բացումը անորոշ ժամանակով հետաձգվում է:

Օդանավակայանի թռիչքուղու երկարությունը կազմում է 2 կմ, 300 մետր, լայնությունը՝ 20 մետր: Սկզբնական շրջանում թռիչքներ են նախատեսվում Երևան-Ստեփանակերտ և հակառակ ուղղություններով:

Տնտեսության այս կարևորագույն ճյուղի հեռանկարային խնդիրներից մեկը ոչ միայն նրա աշխատանքի լրիվ

²⁴⁷ Հայաստանի Հանրապետության վիճակագրական տարեգիրք, ՀՀ ազգային վիճակագրական տարեգիրք, -Եր.: 2018. էջ 337:

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

վերականգնումն ու տրանսպորտային բոլոր ուղիների վերանորոգումն է, այլև հանրապետության բոլոր տարածաշրջաններն իրար հետ հուսալիորեն կապող բանուկ նոր ճանապարհների կառուցումը:

5.4 Հետևություններ

ՀՀ-ում մինչև 1000 մ բացարձակ բարձրություն ունեցող գոտում, որն զբաղեցնում է հանրապետության տարածքի 10 %-ը, կենտրոնացված է բնակչության 55 %-ը: Բնակչության խտությունն այս գոտում գրեթե 5 անգամ գերազանցում է հանրապետության միջին ցուցանիշը, մինչդեռ մյուս գոտիներում այդ թիվն զգալիորեն նվազ է: Աղյուսակ 14-ում բերված թվային տվյալներից երևում է, որ երկրորդ գոտին ավելի թույլ է բնակեցված, քան երրորդը: Սա բացատրվում է երկրորդ գոտում տիրապետող թեք լեռնալանջերի առկայությամբ, որոնք յուրացման համար ավելի անբարենպաստ են, քան երրորդ գոտու ընդարձակ լեռնային հարթությունները (Շիրակ, Սևանի ավազան և այլն):

Մարդու առողջական վիճակը նույնպես կախված է տեղանքի լանդշաֆտային առանձնահատկություններից: Օրինակ, ՀՀ-ում վայրի բացարձակ բարձրության ավելացմանը զուգընթաց, որոշ հիվանդությունների գծով հիվանդների (սրտամկանի, հիպերտոնիկ և այլն) թվաքանակն ավելանում է²⁴⁸ : Դրա հետ կապված կարելի է ենթադրել, որ մարդու առողջության և վայրի ռելիեֆի միջև կարող են լինել միջնորդավորված կապեր:

²⁴⁸ Айриян А.П., Медико-экологический атлас Армении, -М.: 1998, -163 с.

Աղյուսակ 14.

Բնակչության և բնակավայրերի բաշխումը ըստ բարձրության գոտիների

Բարձրության գոտիները (ծ.մ.-ից մ)	Տարածքը %-ով	Ամբողջ բնակչությունը		Բնակավայրերի ընդհանուր թիվը
		%	Խտությունը, քվմ/մարդ	
375-1000	10.3	55	530	256
1000-1500	19.1	17	100	235
1500-2000	28.0	24	90	381
2000-2500	25.7	4	15	129
2500-4090	16.9	-	-	-
Ընդամենը	100	100	121	1001*

* Բնակավայրերի թիվն ըստ ՀՀ վարչապարածքային բաժանման տեղեկատու ատլասի տվյալների,-Երևան, 2004, 128 էջ:

Նոր սերնդի պատերազմներում երկրի տնտեսության տարածքային կառուցվածքի ազդեցությունը պարզաբանելու նպատակով բերվում է Ռուսաստանի նկատմամբ ԱՄՆ նոր մշակված ռազմավարության օրինակը:

XX դարի 60-ականներից սկսած, երբ աշխարհի երկու հզոր գերտերությունների սպառազինությունների մեջ մտան մեծ հեռահարության հրթիռները և ռազմավարական ավիացիան, այլևս ցանկացած խոշոր պատերազմի ժամանակ պետությունների ողջ տարածքը վերածվում էր պատերազմի մարտաբեմի:

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

Նոր սերնդի պատերազմներում փոփոխվում են շատ սովորական պատկերացումներ ոչ միայն ռազմավարության այլ օպերատիվ արվեստի և մարտավարության ոլորտներում: Հստակ չի առանձնացվում գլխավոր հարվածի ուղղությունը, քանի որ այն հասցվելու է միաժամանակ, բոլոր ուղղություններով և ռազմական թատերաբեմի ամբողջ տարածքում:

Նախկին բոլոր պատերազմներում հաղթանակի հասնելու համար պահանջվում էր ոչնչացնել հակառակորդի զինված ուժերը, ավերել նրա տնտեսական ներուժը և փոխել քաղաքական կարգերը՝ ռեժիմը: Դրան հնարավոր չէր հասնել առանց հակառակորդի տարածքի օկուպացման:

Վեցերորդ սերնդի պատերազմում հնարավոր է հասնել հաղթանակի գլխավորապես հակառակորդի տնտեսական ներուժի ոչնչացմամբ: Դեռ ավելին, եթե հակառակորդը պատրաստ չէրավ ապագայի պատերազմին և ամբողջովին հենվեց իր ցամաքային զորքերի վրա, ապա ինչպես էլ զարմանալի չինչի, անհրաժեշտություն չկա ջախջախել նրանց: Դրանք բացի պատասխան հարվածի միջոց լինելուց, իրենցից ոչ մի վտանգ չեն ներկայացնում հարձակվող կողմի համար, և ոչնչացված տնտեսության պայմաններում դատապարտված են մարտունակության կորուստով և լրիվ քայքայմամբ: Այսպիսով հաղթանակի կարելի է հասնել առանց օկուպացման, միայն իրականացնելով ռազմավարական օդատիեզերական հարձակողական օպերացիա²⁴⁹:

Հրթիռներով Իրաքի և Հարավսլավիայի ռազմատնտեսական, տնտեսական օբյեկտներին և պետական կառավարման համակարգին մասսայական հարվածները այդ երկրները հասցրեցին տնտեսական աղետի եզրին: Առանց Սերբիայի տարածքում ցամաքային օպերացիաների անցկացման ՆԱՏՕ-ի երկրներին գործնականում հաջողվեց

²⁴⁹ Мартынов В.Л., Военная география мира в начале XXI века, -СПб.: 2009, с. 3.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

պարտության մատնել Հարավսլավիայի զորքերի խմբավորմանը և երկիրը ընդունեց իրեն պարտադրված պայմանները:

Այս մարտավարությունը բնականաբար կիրառելի չէր Աֆղանստանի պայմաններում քանի որ այս երկիրը չուներ ոչ զարգացած տնտեսություն, ոչ էլ զարգացած ենթակառուցվածքներ հետևաբար նաև այդ ոլորտների ռազմավարական օբյեկտներ:

Այսպիսով ռազմական գործում հերթական՝ վեցերորդ հեղափոխությունը ցույց տվեց նոր սերնդի պատերազմների մեխանիզմը, այժմ հակառակորդի նկատմամբ հաղթանակի հասնելու համար բավական է միայն խարխուլել նրա տնտեսությունը, ինչը չէր հաջողվում անել անցած պատերազմներում: Այսօր այդ խնդիրը լուծվում է հիմնականում, ծովային և օդային տեղակայման, գերճշգրիտ զենքի հարվածներով, զուգահեռ կիրառելով նաև ռադիոէլեկտրոնային պայքարի միջոցներ:

Հաշվարկները ցույց են տալիս, որ օրինակ՝ ինքնիշխան երկրի տնտեսության երեք հարյուր հատուկ կարևորության օբյեկտների ոչնչացման համար, պահանջվող գերճշգրիտ թևավոր հրթիռների քանակը կազմում է մոտավորապես 9000 միավոր: Ռազմական արդյունաբերության 500-600 առանցքային օբյեկտների խոցման համար կպահանջվի 15000-18000 նույնպիսի հրթիռներ, վառելիքաէներգետիկ համակարգի, ինքնավար էլեկտրասնուցման, ինչպես նաև պատասխան հարվածի միջոցների տեղակայման վայրերի կազմալուծման համար կպահանջվի լրացուցիչ 4000-8000 թևավոր հրթիռներ: Դա նշանակում է, որ օպերացիայում այսպիսի մասսայական հարվածը, հանդիսանում է լրիվ իրատեսական, չնայած բացի թվարկածներից պահանջվում է խոցել բազմաթիվ այլ թիրախներ և օբյեկտներ, ինչի համար

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

կպահանջվի լրացուցիչ ցամաքային, ծովային և տիեզերական տեղակայման հարվածային միջոցներ²⁵⁰:

Այս հաշվարկները իհարկե կատարված են մեծ տարածքով և հզոր տնտեսությամբ երկրների համար, որն անհամեմատելի է Հարավային Կովկասի մասշտաբներին:

Կարևոր եզրակացություն կարելի է կատարել վերոհիշատակված պարբերությունը ուսումնասիրելով, այն է եթե տվյալ երկրում կարևորագույն օբյեկտները ավելի շատ են, քան հակառակորդի գերճշգրիտ հրթիռներն են, ապա այդ երկիրն ունի հնարավորություն պահպանելու տնտեսական ներուժի մի մասը: Հակառակ դեպքում իրավիճակն ուղղելու համար տնտեսության տարածքային պլանավորողները պետք է խուսափեն խոշոր կենտրոններով տնտեսության գաղափարից և տնտեսական ենթակառուցվածքը համաչափ տեղաբաշխվի ամբողջ երկրի տարածքի վրա, ստեղծելով բազմակենտրոն տնտեսություն՝ հաշվի առնելով պաշտպանական հիմնախնդիրները²⁵¹:

2009 թ. ապրիլին ամերիկյան գիտնականների ֆեդերացիան (ազդեցիկ կազմակերպություն, որը ստեղծվել է 1945 թ-ին միջուկագետներից, ովքեր և ստեղծեցին աշխարհում առաջին ատոմային ռումբը, այդ ժամանակվանից այն մշտապես խորհրդատվություն է ներկայացնում սպիտակ տանը և պենտագոնին, նրա մեջ մտնում են 68 նոբելյան մրցանակի դափնեկիրներ) ԱՄՆ նոր միջուկային դոկտրինայի նախագծի մեջ առաջակություն է ներկայացրել ԱՄՆ

²⁵⁰ Слипченко В. И., Войны шестого поколения; “Независимое военное обозрение” (НВО), Номер 04(31) от 1 февраля 1997г.

²⁵¹ Սայադյան Համ. Յ. Հարավային Կովկասի ռազմաաշխարհագրական իրավիճակի գնահատումը, ՀՊՄՀ, «Աշխարհագրական պրագմատիկ հետազոտությունների ներկա վիճակը ՀՀ-ում և դրանց զարգացման հիմնական միտումները մոտ ապագայում» հանրապետական գիտագործնական նստաշրջանի նյութեր, -Եր.: 2014. էջ 48-60:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

նախագահին, որով առաջարկում են կրճատել միջուկային մարտազլխիկների քանակը, ինչպես նաև վերաուղղել հրթիռների թիրախները՝ խիտ բնակեցված քաղաքներից դեպի ռուսական տնտեսության 12 առանցքային օբյեկտները, այդ թվում «Գազպրոմ», «Ռոսնեֆտ», «Ռուսալ» և նույնիսկ ՌԴ տարածքում գործունեություն ծավալած գերմանական EON և իտալական Enel ընկերությունների ձեռնարկությունները:

Այս օբյեկտները ընտրված են ոչ միայն որպես Ռուսաստանի կարևորագույն ձեռնարկություններ, այլ որպես թիրախներ, որոնց ոչնչացումը կարող է հանգեցնել նվազագույն թվով մարդկային կորուստների: Սակայն, հեղինակների հաշվարկով, այս օբյեկտների ոչնչացման դեպքում Ռուսաստանը ոչ միայն չի կարող պատերազմ վարել, քանի որ նրա տնտեսությունը կկաթվածահարվի, այլ դրանից բացի, անխուսափելիորեն կմահանան միլիոնավոր ռուսաստանցիներ: «Այս հաշվարկները սթափեցնող են», նկատում են հեղինակները:

Ռազմական տերմինաբանության մեջ կա կարևոր հասկացություն՝ պատերազմում անընդունելի վնասը, որը ընդհանուր առմամբ ցույց է տալիս կորուստների այն աստիճանը որը անհամատեղելի է ղեկավարվող տնտեսության հետ: Այս եզրույթը սկզբնական շրջանում կիրառվում էր միջուկային պատերազմական իրավիճակների համար:

Պատերազմում անընդունելի վնասը դա զինված ուժերի, ռազմարդյունաբերական օբյեկտների, պետական և ռազմական ղեկավարման համակարգերի խոցման մակարդակն է, որի դեպքում պետությունը կորցնում է պատերազմը շարունակելու կարողությունը, կամ էլ զրկվում է դրա հետագա վարման քաղաքական և տնտեսական շարժառիթներից: Դրան հասնում են հակառակորդին այնպիսի կորուստներ հասցնելով, որի փոխլրացումը և վերականգնումը հնարավոր է միայն հեռու հեռանկարում:

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

Նույնպես հասնում են հակառակորդի ամբողջ տնտեսական ներուժի ոչնչացմամբ, ինչի հետ կապված նրա կողմից պայքարի հետագա վարումը կհանգեցնի իրավիճակի անդարձելի վատթարացման, վերջնական հաշվով կապիտուլյացիայի²⁵²:

Պատմական փորձը ցույց է տալիս, որ ցանկացած ագրեսիայի զսպման սկզբունք է հանդիսանում անդառնալի և անընդունելի վրեժի վտանգն այն պետությունից, որը ենթարկվել է հարձակման: Նախահարձակ կողմը միշտ գնահատում է պատերազմի սպասվելիք արդյունքները և համադրում է դրանք հնարավոր պատասխան վնասի հետ: Անընդունելի վնասը պոտենցիալ ագրեսորի համար ծառայում է կանխագուշակելի կողմնորոշիչ, որը նրան պահում է հարձակումից նույնիսկ այն գործոնների ազդեցության դեպքում, որոնք կապահովեն ռազմական հաջողությունը: Որպես կանխագուշակում անընդունելի վնասը գրկում է ագրեսորին պատերազմ հրահրելու շարժառիթներից: Միայն ոչ ճիշտ կանխագուշակումը և անհամաչափ վերաբերմունքն անընդունելի վնասին, կարող են հանգեցնել ռազմական արկածախնդրության, ագրեսորի համար աղետալի հետևանքներով:

Ցանկացած տնտեսապես զարգացած պետություն ագրեսիայի զսպման (կանխարգելման) համար պարտավոր է ինքնուրույն (կամ էլ բարեկամական երկրների կոալիցիայի կազմում) ունենալ ագրեսորին անընդունելի վնաս հասցնելու ցուցադրական հնարավորություն: Այս դեպքում զսպման ներուժը ուշադրությամբ կընդունվի ցանկացած պոտենցիալ ագրեսորի կողմից:

²⁵² Սայադյան Համ. Յ., Աջամոլլյան Ա.Գ. ՀՀ տնտեսության տարածքային պլանավորման սկզբունքները ռազմական անվտանգության համատեքստում, Կրթությունը և գիտությունը Արցախում; ԱՀ, -Ստեփանակերտ, 2016. էջ 72-78

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Խաղաղ ժամանակ անընդունելի վնասի գործոնը պոտենցիալ ագրեսորից պահանջում են գնահատել սեփական անխուսափելի աղետալի կորուստները նախապատրաստվող պատերազմում: Պատերազմի ընթացքում այդ գործոնը կազդի հակառակորդի վրա ակտիվ պաշտպանության շրջանակներում:

Փաստորեն տեղի է ունենում համակարգի կայունության կոշտ թռիչքածն կորուստ, որը զրկվում է համակարգակազմավորող հատկություններից և նշաններից: Այս վիճակում անհնար է ինչ-որ աշխարհաքաղաքական մրցակցություն նույնիսկ լրկալ մակարդակում: Պետությունը բավականին երկար ժամանակով (տասնյակ տարիներ) կորցնում է իր ինքնուրույնությունը և դիրքերը միջազգային ասպարեզում և առավել հավանական է, որ կկորցնի իր գոյությունը որպես միջազգային իրավունքի սուբյեկտ, կվերանա աշխարհի քաղաքական քարտեզից, ինչպես դա տեղի ունեցավ Ռուսական կայսրության և Ավստրո-Հունգարիայի հետ Առաջին համաշխարհային պատերազմից հետո, իսկ Գերմանիայի հետ՝ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո:

Անընդունելի վնասը տեսականորեն կարող է իրականացվել երեք առավել հավանական ռազմավարական սցենարներով կամ էլ դրանց միջանկյալ տարբերակներով.

- Առավել ողբերգականը (մարտնչող կողմերի խաղաղ բնակչության համար հետևանքների տեսակետից), բաղկացած է ագրեսիայի հետ մղմամբ՝ ներխուժած ուժերի հարվածային խմբավորումների ոչնչացմամբ և դրանց մնացորդներին սեփական տարածքից դուրս մղմամբ: Արդյունքում ագրեսորը կորցնում է կրկնակի ներխուժման և պատերազմի շարունակման ֆիզիկական հնարավորությունը: Այս սցենարը կարող է իրականացվել խաղաղասեր պետության կողմից, որն ագրեսորի նկատմամբ ունի

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

ակնհայտ գերազանցություն, կամ էլ ծայրահեղ դեպքում նրան մոտավորապես հավասար մարտական ներուժ:

- Իրատեսական, բաղկացած է ագրեսիայի լարվածության զսպմամբ ի հաշիվ դրա նախաձեռնողի մարտական և ռազմաարդյունաբերական ներուժի հետևողական ոչնչացմամբ: Այս սցենարի դեպքում ագրեսորը կորցնում է պատերազմը շարունակելու քաղաքական իմաստը, չնայած պահպանելու է այն շարունակելու ֆիզիկական հնարավորությունը:

- Առավել ավերիչը, սակայն միակ հնարավոր ռազմական տեսակետից ավելի թույլ պետության համար, կայանում է գերճշգրիտ զենքով նախապես ընտրված տնտեսական թիրախներին արդյունավետ հարվածներ հասցնելու կարողությամբ (ագրեսորի ներխուժման դեպքում), որոնք իրենցից ներկայացնում են առանցքային համազգային օբյեկտներ՝ հիդրոհանգույցներ, ամբարտակներ, էներգետիկական օբյեկտներ, քիմիական գործարաններ և այլն:

Իրանի Իսլամական Հանրապետության կրոնական և քաղաքական ղեկավարությունը՝ ԱՄՆ-ի և Իսրայելի ԻԻՀ-ի դեմ պատերազմ սկսելուն ի պատասխան խոստանում է ասիմետրիկ միջոցառման իրականացում՝ այն է Հորմուզի նեղուցի փակումը, որտեղով տեղափոխվում է նավթի համաշխարհային առևտրի մոտ 20 %-ը: Բնականաբար արևմուտքի արձագանքը եղավ շատ խիստ և նույնիսկ կարճ ժամանակահատվածում անցկացվեց զորավարժություններ Պարսից ծոցում, երեք ավիակիրների մասնակցությամբ:

Ուշագրավ է, որ տնտեսական օբյեկտների դեմ հարձակումների մարտավարությունը լայնորեն կիրառել են ապստամբ ուժերը 2011-2012 թթ-ին այսպես կոչված «Արաբական գարնան» հեղափոխությունների ժամանակ: Առաջին հերթին հարձակումներ գործելով նավթարդյունաբերության օբյեկտների՝

դրանով զրկելով իշխող խավին կայուն ֆինանսական միջոցներից, այնուհետև տրանսպորտային ենթակառուցվածքները²⁵³:

2013 թ-ի հունվարին նույն մարտավարությամբ Ալժիրի ահաբեկչական խմբավորումները բազմաթիվ պատանդների պահում էին նավթա- և գազա- վերամշակման գործարաններում:

Սահմանափակ ռազմական հնարավորությունների դեպքում անհրաժեշտ է ընտրել հակառակորդի տնտեսության առավել խոցելի մի քանի հանգուցային օբյեկտներ: Ցանկացած երկրի ընդհանուր տնտեսական ենթակառուցվածքի հանգուցային օբյեկտների բացահայտմանը մեզ կօգնի տնտեսական աշխարհագրությունը, իսկ տնտեսության առանձին ճյուղերի համար՝ տնտեսական աշխարհագրության ենթաճյուղերը՝ արդյունաբերության աշխարհագրությունը, տրանսպորտի աշխարհագրությունը և այլն:

Հաջորդ կարևոր հանգամանքը, դա տնտեսության տվյալ ճյուղի կոնկրետ այն օբյեկտների հայտնաբերումն է որը տվյալ ճյուղի համար ունի հանգուցային նշանակություն, անհրաժեշտ հումք է տրամադրում տնտեսության այլ ճյուղերի արտադրական ձեռնարկությունների համար և որի խափանումը կամ ոչնչացումը կարող է կաթվածահար անել տնտեսության մի քանի ճյուղերի գործունեությունը: Այս խնդրի լուծման համար կարծում եմ կարևոր հանգամանք է տնտեսության տարբեր ճյուղերի կառուցվածքի և տեխնոլոգիական համալրվածության ուսումնասիրումը, որն էլ հենց հնարավորություն կընձեռի բացահայտել հանգուցային օբյեկտները՝ որպես կարևոր թիրախներ:

²⁵³ Սայադյան Համ. Յ. Հարավային Կովկասի ռազմաաշխարհագրական իրավիճակի գնահատումը, ՀՊՄՀ, «Աշխարհագրական պրագմատիկ հետազոտությունների ներկա վիճակը ՀՀ-ում և դրանց զարգացման հիմնական միտումները մոտ ապագայում» հանրապետական գիտագործնական նստաշրջանի նյութեր, -Եր.: 2014. էջ 48-60:

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

Երկրի տնտեսության կարևորագույն ճյուղերի մասին կարելի է դատել այդ երկրի բյուջեի մուտքային մասն ուսումնասիրելով: Եթե երկրի բյուջեի մուտքային մասի 50%-ից ավելին կապված է տնտեսության մի ճյուղից, ապա այդ երկիրը և տնտեսական և ռազմական տեսակետից դառնում է առավել խոցելի:

Օրինակ՝ 2012 թ-ին Ադրբեջանի պետբյուջեի (ընդհանուր մուտքերը 16,4 միլիարդ մանաթ) հիմքը կազմել է Պետնավթային պահուստների գծով ուղիղ մուտքերը, որը կազմել է 9,9 միլիարդ մանաթ՝ ԱՀ պետբյուջեի ընդհանուր մուտքերի 60,3%-ը, բացի դրանից պետեկամուտների գծով ընդհանուր բյուջետային մուտքերի 40%-ը (որը կազմում է ընդհանուր բյուջեի մուտքերի 15%-ը) նորից նավթային սեկտորից է: Այսպիսով, ընդհանուր հաշվով ԱՀ պետբյուջեի մուտքերի մոտ 75%-ը ստացվում է նավթագազային ոլորտից: Ինչը ԱՀ տնտեսությունը դարձնում է շատ խոցելի, դրանով իսկ խոցելի է դարձնում ռազմական ներուժը:

Ի տարբերություն Ադրբեջանի, ՀՀ պետբյուջեի մուտքային մասի 80%-ն ստացվում է 300 խոշոր հարկատուներից:

Ադրբեջանի քաղաքական ղեկավարությունը դեռևս 1990-ականների կեսերին ՀՀ դեմ տնտեսական պայքարի կուրս վերցրեց: ՀՀ-ն դուրս մղվեց տրանսկովկասյան խողովակաշարերի անցկացման ծրագրերին մասնակցելուց, սկսեցին կառուցվել ՀՀ-ն շրջանցող Ադրբեջանը, Վրաստանը և Թուրքիան կապող հաղորդակցության ուղիները, այդ թվում Բաքու-Թբիլիսի-Ախալքալաք-Կարս երկաթուղին, դրանով իսկ արժեզրկելով Գյումրի-Կարս արդեն 100 տարի գոյություն ունեցող և 1993 թ-ից անգործության մատնված երկաթուղին:

Ուսումնասիրելով աշխարհի բոլոր ժամանակների լավագույն զորահրամանատարներից՝ Նապոլեոն Բոնապարտի ռազմական հաջողությունների հասնելու կարևոր գործոններից մեկի զորքերի արագ տեղաշարժերի կարողությանը, մենք հանգում ենք աշխարհագրական մեկ ուրիշ գործոնի զարգացած ճանապարհային ցանցի կարևորությանը: «1796 թվականի

մարտի 26-ին Նապոլեոնը ստանձնում է իտալական բանակի հրամանատարությունը: Թեև բանակում հաշվվում էր հարյուր վեց հազար մարդ, սակայն իրականում զենքի տակ երեսունվեց հազար էր և երեսուն թնդանոթ: Հակառակորդն Իտալիայում ուներ ութսուն հազար մարդ և երկու հարյուր թնդանոթ: Նապոլեոնի պլանի ռազմավարությունը կայանում էր նրանում, որ հակառակորդի ուժերի զգալի գերակշռությունը կարելի էր վերացնել միայն արագության ու մանևրայնության մեջ գերակշռության հասնելով»²⁵⁴:

Արագությունն ու մանևրայնությունը կարող են ապահովվել միայն ռազմաճակատի երկայնքով և ճակատից դեպի թիկունք ուղղություններով լավ զարգացած ճանապարհային ցանցով:

Բնակչության տարածքային տեղաբաշխման ժամանակ ռազմավարական գործոնների կարևորության հաշվի առնելու օրինակ կարելի է բերել XIX դարի 30-ական թվականներին ցարական Ռուսաստանի իշխանությունների կողմից, Արևելյան Հայաստանի տարածքում աղանդավորների համար բնակավայրերի տեղի ընտրությունն է: ՀՀ ֆիզիկական քարտեզն ուշադիր զննելով կտեսնենք, որ դրանք մեծամասամբ տեղակայված են ռազմավարական լեռնանցքների մոտ, վերահսկելով այդ ժամանակաշրջանի ռազմավարական նշանակության ճանապարհները՝ Պրիվոլնոյե, Պուշկինո (Պուշկինի լեռնանցք), Լերմոնտովո, Ֆիոլետովո, Սեմյոնովկա (Սևանի լեռնանցք), Ելենովկա (ներկայիս քաղաք Սևան):

Կարելի է հերթով քննարկել տնտեսաաշխարհագրական բոլոր բաղադրիչների տեղաբաշխման հնարավոր դրական կամ բացասական ազդեցությունը երկրի ենթակառուցվածքների խոցելիության տեսակետից: Սակայն դրանցից յուրաքանչյուրը կարելի է առանձին ուսումնասիրության թեմա համարել:

Նման հետազոտությունների կարևոր արդյունք կարող են հանդիսանալ երկրի տնտեսության և տրանսպորտի

²⁵⁴ Մանֆրեդ Ա.Ջ., Նապոլեոն Բոնապարտ, -Եր.: 1975, էջ 140:

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

տարածքային տեղաբաշխման եզրակացություններն ու առաջարկությունները, որոնք հնարավորություն կընձեռեն պլանավորել հնարավորինս սակավ խոցելի տնտեսություն²⁵⁵:

Այսօր խելամտորեն օգտագործելով Արցախի ամենաջրառատ գետը՝ Թարթառի ջրային պաշարները հնարավոր է Մարտակերտից մինչև Աղղամ տանկավտանգ ուղղության վրա, ստեղծել հակատանկային օբյեկտներ: Օրինակ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ կարելի է կառուցել ձկնային տնտեսությունների ջրավազաններ, դրանք, ինչպես նաև Թարթառի աջափնյա վերականգնված ջրանցքը բավականին լուրջ հակատանկային արգելք կարող էին հանդիսանալ: Նշված միջոցառումը, բացի ԼՂՀ տնտեսության զարգացման նոր խթան հանդիսանալուց այն հնարավորություն կտար էականորեն նվազեցնել Ադրբեյջանի զինված ուժերի տեխնիկայի քանակական առավելությունները: Վերջին ժամանակներս Արցախի իշխանությունների կողմից հայտարարվել է Թարթառի ջրերի կառավարման վրա հարյուր միլիոն ԱՄՆ դոլարի ներդրումներ իրականացնելու մասին: Հուսով ենք այդ ծրագրի իրականացումը կնպաստի նաև երկրի պաշտպանունակության բարձրացմանը:

ԻՍՀՄ փլուզումից հետո անկախ Հայաստանը կանգնեց անվտանգային համակարգի նոր իրողություն առջև՝ այն է գլխավոր հակառակորդ՝ Ադրբեյջանի հետ, արևելյան սահմանի պաշտպանական և սոցիալ-տնտեսական նոր ենթակառուցվածքների ստեղծումը: Այժմ կարծում ենք գիտական շրջանակներում ՀՀ հեռանկարային զարգացման փաստաթղթերը քննարկելիս, հիմնախնդիրներին լուծում տալիս դրանք պետք է դիտարկել նաև երկրի Ազգային անվտանգության շահերից ելնելով:

²⁵⁵ Սայադյան Համ. Յ., Աջամօղլյան Ա.Գ., ՀՀ տնտեսության տարածքային պլանավորման սկզբունքները ռազմական անվտանգության համատեքստում, Կրթությունը և գիտությունը Արցախում, ԱՀ, -Ստեփանակերտ, 2016. էջ 72-78:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հաշվի առնելով առկա աշխարհաքաղաքական իրողություններն ու Հայաստանի Հանրապետության աշխարհագրական դիրքը, գտնում ենք տեղում զինամթերքի գործարանների և դրանց արտադրության մեջ կիրառվող նյութերի ռազմավարական պաշարների ստեղծման խիստ անհրաժեշտությունը: Խոսքը հիմնականում գնում է ՀՀ ՋՈւ-ում կիրառվող հրաձգային և հրետանային սպառազինության հիմնական զինամթերքների արտադրության մասին: Դրա համար առաջին հերթին անհրաժեշտ է ուսումնասիրել հայկական հումքի հիման վրա արտադրությունների հիմնման հնարավորությունները: Օրինակ պղնձի արտադրության ժամանակ որպես կողմնային նյութ առաջացող ծծումբը կարելի է օգտագործել վառողի և պայթուցիկ նյութերի արտադրության մեջ:

**ԳԼՈՒԽ 6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՌԱԶՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ
ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ**

6.1 Հարավկովկասյան տարածաշրջանի ռազմատնտեսական բնութագիրը

«Հարավային Կովկաս» եզրույթը համեմատաբար նոր է: Մինչև XIX դարի սկիզբը տարածաշրջանը գտնվում էր Պարսկական, մասամբ էլ Օսմանյան կայսրությունների կազմի մեջ, ինչպես նաև այս կայսրությունների մեջ գտնվող կիսանկախ իշխանությունների և թագավորությունների ազդեցության տակ: Ոչ մի համակովկասյան գաղափարախոսություն չկար, որն իր շուրջը համախմբեր տարածաշրջանի բնակչությանը: Մարդիկ ունեին տարբեր կրոնական, լեզվային և էթնոմշակութային հիմքեր²⁵⁶:

Կովկասը հարակից շրջանների հետ մեկտեղ մրցակցության ու ռազմական ընդհարումների թատերաբեմ է եղել Եվրասիա մայրցամաքի զարգացման տարբեր մակարդակների վրա գտնվող ու տարբեր քաղաքակրթությունների պատկանող բազմաքանակ քոչվոր ցեղերի, ժողովուրդների, աշխարհակալ տերությունների միջև: Այն եղել է «ժողովուրդների մեծ գաղթի» ճանապարհներից մեկը, այստեղ բախվել են հռոմեական կայսրությունն ու Պարսկաստանը, Բյուզանդիան ու Պարսկաստանը, Արաբական Խալիֆայությունն ու Բյուզանդիան, Արաբական Խալիֆայությունն ու Պարսկաստանը, Ոսկե Հորդան ու Պարսկաստանը, Օսմանյան կայսրությունն ու Պարսկաստանը, Օսմանյան կայսրությունն ու Ռուսական կայսրությունը, Պարսկաստանն ու Ռուսական կայսրությունը: Նման

²⁵⁶ Искандарян А. Южный Кавказ между изоляцией и интеграцией, Генезис и перспективы, Кавказское соседство, Турция и Южный Кавказ, -Ер.: Институт Кавказа, 2008, с.7-14.

լայնածավալ ռազմաքաղաքական, սոցիալ տնտեսական, կրոնաքաղաքակրթական իրադարձությունները չէին կարող տարածաշրջանի և տեղաբնիկ ժողովուրդների համար ճակատագրական նշանակություն չունենալ: Մասնատվել են միասնական պետական կազմավորումները, փոխվել է ազգաբնակչության էթնիկ ու կրոնական կազմը, վիթխարի չափերի են հասել բնակչության միգրացիոն տեղաշարժերը, տեղաբնիկների արտագաղթը և օտարների ներգաղթը²⁵⁷:

XIX դարի սկզբին տարածաշրջանը մի քանի ռուսթուրքական և ռուս-պարսկական պատերազմներից հետո միացվեց Ռուսական կայսրությանը: Վարչական նկատառումներից ելնելով կարիք առաջացավ այդ տարածքն ինչ որ կերպ անվանել: «Անդրկովկաս» անվան ի հայտ գալը՝ ցույց է տալիս կայսրության այն մասն որն ընկած է Կովկասյան լեռնաշղթայի հետևում: Տարածաշրջանի հյուսիսային սահմանը համարվեց Կովկասյան լեռնաշղթայի ջրբաժանը, իսկ հարավային սահմանը ի սկզբանե բացակայում էր:

Խորհրդային Միության փլուզումից հետո արևմտյան՝ հատկապես ամերիկյան քաղաքագիտական դպրոցը հասկանալի նկատառումներով նախաձեռնել է արդեն իսկ կառուցվածքապես խոցելի, «Անդրկովկաս» եզրույթի իմաստաբանական նոր ձևախեղումը՝ շրջանառության մեջ ներդնելով, «Հարավային Կովկաս» աշխարհագրական եզրույթը²⁵⁸: Թեև երկրորդն ավելի հիմնավոր է, քան առաջինը:

Անհրաժեշտ են համարում նշել, որ պատմաաշխարհագրական առումով ՀՀ-ն իր ներկա տարածքով եղել է

²⁵⁷ Հակոբյան Թ.Խ. Աշխարհագրության համառոտ պատմություն (Հնագույն ժամանակներից մինչև 1917թ., Լոյս հրատ., -Եր.: 1976.

Էջ 5:

²⁵⁸ Искандарян А. Южный Кавказ между изоляцией и интеграцией, Генезис и перспективы, Кавказское соседство, Турция и Южный Кавказ, -Ер.: Институт Кавказа, 2008, с.7-14.

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

Մեծ Հայքի տարածքի մի մասը՝ Հայաստան ֆիզիկաաշխարհագրական տարածքի սահմաններում:

Հարավային Կովկասը շատ բարդ տարածաշրջան է, ինչպես սոցիալ-քաղաքական, այնպես էլ ֆիզիկաաշխարհագրական տեսակետից: Սոցիալ-քաղաքական տեսակետից այստեղ կան մի քանի չկարգավորված հակամարտություններ, այստեղ բխվում են խոշոր տերությունների շահերը, իրականացվում են խոշոր տնտեսական ծրագրեր (որոնք հաճախ ունենում են զուտ քաղաքական ենթատեքստ) և այլն²⁵⁹:

Ֆիզիկաաշխարհագրական տեսակետից այն ունի շատ բարդ ռելիեֆ, բարձրությունների մեծ տատանումներով (-28 մ. Կասպից ծովի ափ մինչև 5033մ Կազբեկ), խիստ բազմազան կլիմա, սկսած խոնավ մերձարևադարձայինից մինչև բարձրլեռնային ձնային²⁶⁰: Եվ ցանկացած քաղաքական, տնտեսական, ռազմական խնդիրների լուծման ժամանակ այս ամենը հաշվի չառնել պարզապես չի կարելի:

Հարավային Կովկասը հյուսիսից եզրավորվում է ռազմական տեսակետից անհաղթահարելի Կովկասյան լեռներով, բացառությամբ մի քանի լեռնանցքների, որոնց նկատմամբ վերահսկողությունը ստանում է մեծ կարևորություն: Հարավային սահմանը առավել պայմանական է բացառությամբ Արաքս և Ախուրյան գետերով անցնող դժվարանցելի հատվածների:

²⁵⁹ Սայադյան Համ. Յ. Հարավային Կովկասի ռազմաաշխարհագրական իրավիճակի գնահատումը, ՀՊՄՀ, «Աշխարհագրական պրագմատիկ հետազոտությունների ներկա վիճակը ՀՀ-ում և դրանց զարգացման հիմնական միտումները մոտ ապագայում» հանրապետական գիտագործնական նստաշրջանի նյութեր, -Եր.: 2014. էջ 48-60:

²⁶⁰ Габриелян Г.К., Муσειбов М.А., Джакели Х.Г., Назарян Х.Е. Физическая география Закавказья, -Ер.: изд-во ЕГУ, 1986, -309 с.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ներկայումս տարածաշրջանն իր մեջ ներառում է Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանը, ինչպես նաև Աբխազիան, Հարավային Օսեթիան և Արցախի Հանրապետությունը: Հարավային Կովկասը շատ բարդ տարածաշրջան է ինչպես սոցիալ-քաղաքական այնպես էլ ֆիզիկաաշխարհագրական տեսակետից: Սոցիալ-քաղաքական տեսակետից այստեղ կան մի քանի չկարգավորված հակամարտություններ, այստեղ բախվում են խոշոր տերությունների շահերը, իրականացվում են խոշոր տնտեսական ծրագրեր, որոնք հաճախ ունենում են զուտ քաղաքական ենթատեքստ և այլն:

Հարավային Կովկասի ֆիզիկաաշխարհագրական վերլուծությունը և տարածաշրջանում վերջին 2500 տարվա պատերազմների պատմությունը վկայում է, որ այստեղ առկա է մի քանի կարևոր լեռնանցքներ և ուղիներ որոնք միշտ օգտագործվել է տարածաշրջան ներխուժելու համար և որոնք արդիական են համարվում նաև այսօր:

Դեռ Արտաշեսյանների օրոք Մեծ Հայքը գնահատելով Հյուսիսային Կովկասից եկող ներխուժումների ժամանակ լեռնանցքների պահպանման կարևորությունը, կովկասյան երկու միջանցքների՝ Ալանաց Դուռ լեռնանցքում (Դարյալի կիրճը, որով անցնում է Ռազմավիրական ճանապարհ) և Ճորա Պահակի (Աղվանից դուռ, Դերբենտի մոտ), որտեղ ամրոցի հիմնադրումը վերագրվում է Ալեքսանդր Մակեդոնացուն դեռ Ք.ա. IV դարում, մշտական զորախմբեր էր պահում այդտեղ հյուսիսային ներխուժումներից պաշտպանվելու համար:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ կարևորելով Գրոզնիի և Բաքվի նավթահանքերի նշանակությունը, ֆաշիստական Գերմանիայի ռազմական և քաղաքական առաջնորդները վճռեցին 1942 թ-ին Մեծ ուժերով հարձակում իրականացնել Հյուսիսային Կովկասում հետագայում այն դեպի Բաքու զարգացնելու մտադրությամբ:

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պատերազմների ակնառու կամ թաքնված պատճառը միշտ եղել է կենսական տարածքների, իսկ արդեն XX դարից հումքային ռեսուրսների և հաղորդակցության ուղիների վերահսկումը, ուստի մենք Հարավկովկասյան տարածաշրջանի ռազմաաշխարհագրական գնահատումը կկատարենք հենց այդ տեսանկյունից:

Տնտեսության տարածքային զարգացման առանձնահատկությունները և հաղորդակցության ուղիների ցանցի ներկա վիճակը մի շարք բնակավայրերի կարևորությունը դարձնում է առավել նշանակալի, քան մյուսները: Տվյալ դեպքում դա պայմանավորվում է նրանց գերիշխող դիրքով և տնտեսական տեսակետից վճռորոշ նշանակությամբ:



Քարտեզ 11. Հարավային Կովկասի վրա ազդեցություն ունեցող գերտերությունները, երկրների ռազմաքաղաքական միությունները և տարածաշրջանային պետությունները

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Որպես Սևծովյան-Կասպյան էներգետիկ տարածաշրջանի բաղադրիչ և Կենտրոնական Ասիայի հետ կապող բնական միջանցք, Հարավային Կովկասը ձեռք է բերել ռազմավարական նշանակություն համաշխարհային և տարածաշրջանային գերտերությունների համար (Քարտեզ 11):

Այս հանգամանքը, բնականաբար, մեծացնում է ԵՄ-ի ուշադրությունը տարածաշրջանային այնպիսի խնդիրների նկատմամբ, ինչպիսիք են հակամարտությունների կարգավորումը, տնտեսական զարգացումն ու քաղաքական համակարգերի արդիականացումը, տարածաշրջանային և միջտարածաշրջանային համագործակցության ծրագրերի խթանումը և այլն:

Աղյուսակ 15.

Հարավկովկասյան երկրների սահմանների երկարությունները և սահմանակից պետությունները*

Պետություններ	Սահմ. ընդհ. երկ. կմ	Ադրբեջան	Հայաստան	Վրաստան	ՌԴ	Թուրքիա	Իրան
Ադրբեջան	2013	-	787	322	286	9	609
Հայաստան	1262	787	-	165		268	42
Վրաստան	1461	322	165	-	722	252	-

* Աղյուսակը կազմված է Military Balance 2016 տեղեկագրքի տվյալներով²⁶¹:

Հարավային Կովկասը կռվախնձոր է եղել դեռ հին դարերից: Ներկայումս այստեղ աշխարհաքաղաքական ազդեցություն հաստատելու առումով բախվում են ինչպես՝

²⁶¹ <https://www.iiss.org/publications/the-military-balance/the-military-balance-2016>

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

առաջին, համաշխարհային մասշտաբի գերտերությունների՝ ԱՄՆ-ի, Ռուսաստանի, ԵՄ-ի, այնպես էլ տարածաշրջանային գերտերությունների՝ Թուրքիայի և Իրանի շահերը (Աղյուսակ 15):

Ամերիկայի Միացյալ Նահանգներ: Դեռևս անցյալ դարի 90-ական թվականների երկրորդ կեսին Հարավային Կովկասի տարածաշրջանը պաշտոնական Վաշինգտոնի կողմից հայտարարվեց «ԱՄՆ կենսական հետաքրքրությունների գոտի»:

ԱՄՆ նպատակն էր՝ Կրաստանի և Ադրբեջանի միջոցով ներթափանցել և ամրանալ Հարավային Կովկասում՝ ապահովելով օպերատիվ ելքի հնարավորություն դեպի Կասպից ծով, այնտեղից էլ՝ նախկին ԽՍՀՄ կազմում ընդգրկված Կենտրոնական Ասիայի հանրապետություններ:

Անդրազգային կորպորացիաների, ինչպես նաև «փափուկ ուժի» (“soft power”) քաղաքականության կիրառման միջոցներով ապահովել տարածաշրջանը ՌԴ-ից ապահի-տեգրող խոշորածավալ տնտեսական և ռազմաքաղաքական նախագծերի կենսագործումը, ստանձնելով Արևմուտք էներգահումքային ռեսուրսների հիմնական մատակարարի մենաշնորհը:

Տիրանալով ռազմավարական ուղղություններին՝ մարտավարական և խորքային թիրախավորման հնարավորություն ձեռք բերել ՌԴ-ի և նրա սակավ բնակեցված հարավարևելյան, Չինաստանի և նրա հիմնականում մահմեդականներով բնակեցված Սինցյան-Ույղուրյան ինքնավար շրջանի, ինչպես նաև Իրանի և նրա ադրբեջանաբնակ Հյուսիսային Ատրպատականի նկատմամբ:

Թուրքիային, թույլատրելիից ավելին, այսինքն՝ համաթուրանական նկրտումների հավանական ընդարձակման դեպքում արգելապատնեղել նրան:

Ռուսաստանի Դաշնություն: Հարկ է ընդգծել, որ նորոյա Ռուսաստանի հիմնական ռազմավարությունը գլխավորապես

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

կառուցվում է վերոգրյալ դրույթների իրագործման հակադրման, ԱՄՆ-ի և նրա գլխավորած արևմտյան բլոկի ռազմավարական ընդլայնումը հնարավորինս սահմանափակելու, ինչպես նաև նախկին ԽՍՀՄ երկրներում ՌԴ միակողմանի գերակայությունը հիմնավորապես ամրապնդելու տրամաբանությամբ:

Այսպիսով, արգելակել ՌԴ էթնո-ազգային հավանական կազմալուծումը: Պաշտոնական Մոսկվայի ձեռքերում պահել նախկին ԽՍՀՄ տիրույթում առկա և հնարավոր ստեղծվելիք միջէթնիկ տարածայնությունների ու լոկալ պատերազմների հանագուցալուծման բանալին:

Իրագործել ագրեսիվ տնտեսական ներթափանցման, ինչպես նաև էներգահումքային կախվածության ընդարձակման մարտավարություն, այդ թվում նախկին ԽՍՀՄ, Եվրոպայի ու Արևելքի մի շարք երկրների հանդեպ:

Իրագործել ռազմաքաղաքական նախաձեռնությունների, ինչպես նաև սպառազինությունների մատակարարումների միջոցով ՌԴ-ից կախվածության ընդլայնման մարտավարություն:

Ընդարձակել սեփական, Եվրասիական նշանակության էներգամատակարարման ցանցերը:

Կառավարվող բախումների և հատկապես հայադրբեջանական առաջին հայացքից միջէթնիկ հակամարտության նկատմաբ վերահսկողության ապահովմամբ՝ իրագործել Արևմուտքին էներգակիրներներով մատակարարումները անհրաժեշտության դեպքում խաթարելու մարտավարություն:

Արգելակել Թուրքիայի, ինչպես նաև վերջինիս միջոցով շահագրգիռ պետությունների կազմաքանդիչ ներթափանցումը Հարավային և հատկապես՝ Հյուսիսային Կովկասի իսլամադավ ու միաէթնիկ բնակեցված ինքնավար հանրապետություններ, մասնավորապես՝ Չեչնյա և Դաղստան:

Հնարավորինն աջակցել Իրանի Իսլամական Հանրապետությունում հակամերիկյան թշնամական տրամադրությունների պահպանմանն ու Թուրք - Իրանական տարածաշրջանային մրցակցության խորացմանը:

Թուրքիայի Հանրապետություն: Հայաստանի նկատմամբ ներկայիս Թուրքիայի վարած ռազմավարական կուրսը մշակված է դեռևս 1920-ականներից Թուրքիայի Հանրապետության հիմնադիր Մուստաֆա Քեմալ Աթաթուրքի կողմից: Այստեղ տեղին է մեջբերել նրա խոսքերը «Մի անգամ Ռուսաստանը կորցնելու է վերահսկողությունը ժողովուրդների վրա, որոնց այժմ ամուր պահում է ձեռքերում: Աշխարհը դուրս կգա մի նոր մակարդակի վրա: Ահա հենց այդ ժամանակ Թուրքիան պետք է իմանա թե ինչ անի: Հարկավոր է պատրաստվել: Մեր ընդհանուր լեզուն՝ մեր կամուրջն է: Մեր ընդհանուր հավատքը մեր կամուրջն է. Մեր ընդհանուր պատմությունը մեր կամուրջն է: Մենք պետք է հիշենք մեր արմատները և միացնենք մեր պատմությունը, որը բախտի կամոք մեզ բաժանել է մեր եղբայրներից: Մի հրաշալի օր Ռուսաստանը կընկնի: Այդ նույն օրը Թուրքիան մեր եղբայրների համար կդառնա մի երկիր որից նրանք օրինակ կվերցնեն... Թուրքիայի ցավը Ադրբեջանի ցավն է, Ադրբեջանի ցավը Թուրքիայի ցավն է»²⁶²:

Անհրաժեշտ է նշել, որ Թուրքիան տարածաշրջանում շարունակում է մնալ ազգային և ազգայնական քաղաքականության իրագործման հետևողական և ագրեսիվ պետություններից մեկը, որը Կովկաս-կասպյան տարածաշրջանում հետամուտ է իր առաջնահերթ խնդիրների իրագործմանը:

Մասնավորապես՝ տնտեսական և ռազմաքաղաքական առումներով, հաստատվել Վրաստանում և ապագայում վերաինտեգրել Աջարիան:

²⁶² Казинян А.В. Полигон Азарбайджан, -Ер.: 2011, -615с.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ամրաանդել Անկարայի ազդեցությունը հատկապես Վրաստանի հարավի և հարավ-արևելքի թյուրքալեզու և իսլամադավ բնակչություն ունեցող շրջաններում՝ Մառնեուլում, Դմանիսում, Գարդաբանում, Բոլնիսում և այլն:

Ապահովել Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթատարի, Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազատարի և Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղու անխափան գործունեությունն ու անվտանգությունը:

Խրախուսել ՌԴ-ի Հյուսիսային Կովկասում և Ղրիմի թերակղզում բնակվող և անջատողական տրամադրություններ ունեցող մահմեդականներին, ինչպես նաև թուլացնել ՌԴ-ԱՊՀ միջպետական կապերը:

Աջակցել Իրանի Հյուսիսային Ատրպատականի անջատողականներին:

Հեռավոր ապագայում հասնել ԹՀ լիակատար ազդեցության ներքո Վրաստանի հարավային շրջաններ - Ադրբեջան - Կենտրոնական Ասիա - Ալթայ - Սինցյան Ուլդուրական ինքնավար շրջան շղթայի ստեղծմանն ու համաթուրանական գերտերության գաղափարի առարկայացմանը: Իր ներազդեցության ընդլայնման համար, Թուրքիան ստեղծվել է թուրքալեզու երկրների կազմակերպությունը, որի անդամներ են Թուրքիան, Ադրբեջանը, Ղազախստանը, Ղրղըզստանը և Ուզբեկստանը: Այս կազմակերպության նախագահության ներքո գործում է նաև անդամ երկրների հետախուզական կառույցների ղեկավարների կոմիտեն:

Ինչպես հարյուր տարի առաջ, ներկայումս նույնպես, թուրքական իշխանությունները անհրաժեշտության պայմաններում որոշակի մերձեցում են ցուցաբերում դեպի Ռուսաստան, սակայն մշտապես պահպանում են կարևոր ռազմավարական հարաբերությունները ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի հետ:

Թյուրքական աշխարհի ստեղծելու համար, առաջին հերթին, Թուրքիային չի բավականացնում ընդհանուր

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

սահմանը թյուրքալեզու պետությունների հետ: Դրան խոչընդոտում են քրիստոնյա Վրաստանն ու Հայաստանը²⁶³: Վրաստանի հարցերը Թուրքիան և Ադրբեջանը կարելի է ասել արդեն լուծել են՝ վրացական շուկա մտնելով, բացի այդ՝ նրանք Վրաստանի կողմից ընկալվում են որպես դաշնակիցներ, ուստի Վրաստանի գործոնը՝ որպես խոչընդոտի, գրեթե զրոյացված է: Հայաստանի հետ խնդիր ունեն երկուսն էլ՝ թե՛ Թուրքիան, թե՛ Ադրբեջանը, և այդ խնդիրների լուծումը մոտ ապագայում անհնար է թվում: Համենայն դեպս՝ չկան դրան նպաստող գործոններ, ավելին՝ նույն Թուրքիան պատրաստ չէ Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը, վկա՝ հայ-թուրքական անվավեր ճանաչված արձանագրությունները:

XXI դարի սկզբներին Ադրբեջանի, Վրաստանի և Թուրքիայի հետ մի շարք եռակողմ բանակցությունների ընթացքում սկսեց ձևավորվել համատեղ տնտեսական և ռազմավարական շահերի վրա հիմնված արևելք-արևմուտք առանցքը, որի հիմքը հետագայում կազմեցին երեք երկրները միացնող բարելավված ավտոճանապարհները, Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղը և Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղը, ինչպես նաև Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղին: Այս նախագծերը իհարկե առաջին հերթին քաղաքական նախագծեր են և ուղղված էին Հայաստանին մեկուսացնելուն:

Իրանի Իսլամական Հանրապետություն: Ուշագրավ է, որ Իրանի Կովկաս-կասպյան տարածաշրջանում իրականացվող քաղաքականությունը հիմնականում թելադրված է տնտեսական պատժամիջոցների հետևանքները

²⁶³ Սայադյան Համ. Յ. Հարավային Կովկասի ռազմաաշխարհագրական իրավիճակի գնահատումը, ՀՊՄՀ, «Աշխարհագրական պրագմատիկ հետազոտությունների ներկա վիճակը ՀՀ-ում և դրանց զարգացման հիմնական միտումները մոտ ապագայում» հանրապետական գիտագործնական նստաշրջանի նյութեր, -Եր.: 2014. էջ 48-60:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

մեղմելու ու տարածքային ամբողջականությունը պահպանելու հրամայականով: Այսուհանդերձ տարածաշրջանում ԻԻՀ հիմնական խնդիրներից են՝ ընդլայնել պաշտոնական Թեհրանի ազդեցությունը տարածաշրջանում և հիմնավորապես ամրանալ Կենտրոնական Ասիայի կրոնակից պետություններում:

Ապահովել սեփական էներգահումքային պաշարների իրար փոխլրացնող արտահանման ուղիների կառուցումը:

Հակազդել և հակակշեռել Թուրքիայի աճող ազդեցությունը տարածաշրջանում, այդ թվում՝ չեզոքացնել Ադրբեջանի ցանկացած տիպի ունձգության փորձերն Իրանի և նրա Հյուսիսային Ատրպատականի տարածքի հանդեպ:

Իրանի քաղաքական դեկավարությունը ժամանակ առ ժամանակ, որպես Ադրբեջան-Թուրքիա ռազմավարական դաշինքի զսպման միջոց՝ Արցախի հարցի վերաբերյալ իր աջակցությունն է ցուցաբերում Հայաստանին:

Որպես բեռնափոխադրումների այլընտրանքային ծրագիր՝ Իրանում պատրաստ են իրագործել հյուսիսային տարանցիկ միջանցքի՝ Պարսից ծոց-Իրան-Հայաստան-Վրաստան-Սև ծովի ավազան ավտոմայրուղու վերջնական կառուցումն ու անխափան գործարկումը:

Հնարավորինս արգելակել դեպի տարածաշրջան արևմտյան ռազմաքաղաքական դաշինքների ներթափանցումն ու հաստատումը:

Իրանը Հարավային Կովկասի տարածաշրջանը դիտարկում է որպես իր կենսական հետաքրքրությունների և շահերի տարածք, որտեղ տեղի ունեցող ցանկացած զարգացում և առկա ուժերի հաշվեկշռի փոփոխություն շատ զգայուն է ընդունվում Թեհրանի կողմից: Դիտարկելով Հարավային Կովկասի երեք երկրների հետ Իրանի փոխհարաբերությունները պետք է նշել, որ այդ երկրներից Ադրբեջանը բավականին լարված հարաբերություններ ունի Իրանի հետ՝ պայմանավորված բազմաթիվ գործոններով:

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

Այսպես, ադրբեջանա-իրանական լարված հարաբերությունների անկյունաքարային հարցերից է Ադրբեջանի՝ Իրանի Իսլամական Հանրապետության տարածքային ամբողջականությունը կասկածի տակ դնող քաղաքականությունը: Այն պայմանավորված է Բաքվի՝ Իրանի հյուսիսային շրջանների նկատմամբ ունեցած անհիմն հավակնությունների հետ: Իրանի համար շատ զգայուն հարց է նաև Իսլամական Հանրապետության տարածաշրջանային թիվ մեկ հակառակորդ՝ Իսրայելի հետ Ադրբեջանի կողմից ռազմավարական հարաբերությունների կառուցումը:

Եվրամիություն. Ուշագրավ է, որքան էլ որ Եվրամիությունը հանդես գա միասնական աշխարհաքաղաքական դիմագծով՝ միևնույն է նա շարունակում է մնալ ազգապետություններից միավորված կազմավորում, որում յուրաքանչյուր երկիր ունի իր նեղ ազգային շահերը, որոնք հաճախ լուրջ հակասությունների պատճառ են դառնում միասնական դիրքորոշում ունենալու հարցում: Այդուհանդերձ, Եվրամիության գլխավոր առաջնահերթություններից մի քանիսը տարածաշրջանում հետևյալն են՝ բազմապիսի մեխանիզմների և մեթոդների գործադրմամբ զսպել նորոյա Ռուսաստանի ծավալապաշտական հավանական վտանգները հատկապես արևելաեվրոպական ուղղությունում:


Իրագործել ՌԴ-ից էներգետիկ կախվածությունը մեղմելու, ինչպես նաև նախկին ԽՍՀՄ կազմում գտնվող երկրների ՌԴ-ից ապահինտեգրող ծրագրեր:

Որպես ՌԴ-ից կախվածության թուլացման կարևոր միջոց ապահովել Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթատարի, Բաքու-Թբիլիսի-Էրզրում և Տրանսանատոլիական գազատարի, ինչպես նաև Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղու անխափան գործունեությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱԿԱՆ ԵՎ ՕՊԵՐԱՏԻՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՈՒՆՋԵՆԵՐ

Մասշտաբ 1: 3 250 000



Քարտեզ 12. Հարավային Կովկասի ռազմավարական և օպերատիվ նշանակության առանցքները

Տարածաշրջանի երկրաբանությունը և մեգառելիեֆի տարրերի տեղակայումը պայմանավորել է ռազմավարական նշանակության առանցքների ժամանակակից պատկերը, որի հիմքը կազմում է Սև և Կասպից ծովերը միացնող կոմունիկացիաները (Քարտեզ 12, Քարտեզ 13):

Տարածաշրջանում ռազմավարական հիմնախնդիրների լուծումը մեծապես կապված է նաև տարածաշրջանային ռազմաքաղաքական և տնտեսական կազմակերպություններից, ինչպիսիք են ՀԱՊԿ-ն, ՎՈւԱՄ-ն, Սևծովյան տնտեսական համագործակցությունը և ԵԱՏՄ-ն՝ Եվրասիական տնտեսական միությունը:


ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

Տարածաշրջանային ռազմաքաղաքական և տնտեսական կազմակերպությունները

ՀԱՊԿ-ն Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունը հիմնադրվել է 1992թ. մայիսի 15-ին, անդամ պետություններն են՝ Հայաստանը, Ռուսաստանը, Ղազախստանը, Ղրղզստանը, Տաջիկստանը և Բելառուսը:

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՈՎՁՄԱԿԱՐԱԿԱԿԱՆ ԵՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԿԵՏԵՐԸ

Մասշտաբ 1: 3 250 000



Քարտեզ 13. Հարավային կովկասի ռազմավարական նշանակության կետերը

ՀԱՊԿ խնդիրներն են՝ պաշտպանել անդամ երկրների տարածքային տնտեսական տարածությունը բանակների եւ օժանդակ ստորաբաժանումների համատեղ ջանքերով ցանկացած արտաքին ռազմաքաղաքական ագրեսորներից,

միջազգային ահաբեկիչներից, ինչպես նաև խոշոր չափերի բնական աղետներից²⁶⁴:

ՌԴ-ն որպես ՀԱՊԿ-ի առանցքային անդամ վերջին տասնհինգ տարվա ընթացքում հզորացնելով իր ռազմատնտեսական ներուժն ավելի վստահ է տարածաշրջանում իր ազդեցության անփոխարինելիության հարցում: Այս կազմակերպության շրջանակներում ստեղծված է նաև համատեղ հակաօդային պաշտպանության միավորված համակարգ:

ՎՈւԱՄ-ը ստեղծվել է 1997 թ-ի հոկտեմբերի 10-ին՝ Ստրասբուրգում, Եվրոպայի Խորհրդի նիստի շրջանակներում: Կազմակերպությանը անդամակցում են Վրաստանը, Ուկրաինան, Ադրբեջանը և Մոլդովան: Կազմակերպության քարտուղարության մշտական նստավայրը գտնվում է Ուկրաինայի մայրաքաղաք Կիևում²⁶⁵:

ՎՈւԱՄ-ի կանոնադրության համաձայն, կազմակերպության գլխավոր նպատակը անդամ-երկրների միջև տնտեսական, էներգետիկ, տրանսպորտային, հումանիտար հարաբերությունների ամրապնդումն է: Այս կազմակերպությունը կարելի է դիտարկել որպես ՀԱՊԿ-ին զուգահեռ գործող կառույց, որի անդամ-երկրներն այս կամ այն չափով փորձում են ձերբազատվել կամ նվազեցնել ռուսական ազդեցությունն իրենց երկրներում: ՎՈւԱՄ-ի անդամ երկրներում հակառուսական տրամադրությունների ամրապնդումը և նրանց եվրոատլանտյան ցանկությունները աջակցություն են գտնում Արևմուտքում՝ ԵՄ-ի և ԱՄՆ-ի կողմից:

ՎՈւԱՄ բոլոր երկրներն ունեն չլուծված հակամարտություններ՝ ղարաբաղյան, արխազական և հարավ-օսական, մերձդնեստրյան, Ղրիմի, որոնց կարգավորման գործընթացում այս կամ այն ձևաչափով մասնակցում է նաև Ռուսաստանը:

²⁶⁴ <https://odkb-csto.org/>

²⁶⁵ <https://guam-organization.org/>

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

Արևմտյան երկրները նպատակ ունենալով սահմանափակել ռուսական ազդեցության տարածումը հետխորհրդային տարածքում՝ նրա սահմանների երկայնքով հակառուսական դիրքորոշմամբ երկրների առաջացումը դիտարկում են որպես ԽՍՀՄ-2-ի վերականգնմանը խոչընդոտող գործոն, ինչին նպաստում է ՎՈւԱՄ անդամ-երկրների աշխարհագրական դիրքը:

Սևծովյան տնտեսական համագործակցության երկրների կազմակերպությունը ստեղծվել է 1992թ. հունիսի 25-ին Ստամբուլում (Թուրքիա), Սևծովյան տարածաշրջանի 11 երկրների (Ալբանիա, Հայաստան, Ադրբեջան, Բուլղարիա, Վրաստան, Հունաստան, Մոլդովա, Ռումինիա, Ռուսաստան, Թուրքիա, Ուկրաինա) ղեկավարները (պետությունների կամ կառավարությունների մակարդակով) հռչակագիր են ստորագրել Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության (ՍԾՏՀ) հիմնադրման մասին: Սերբիան, որպես անդամ, կազմակերպությանը միացել է 2004թ.²⁶⁶:

ԵԱՏՄ՝ Եվրասիական տնտեսական միությունը տարածաշրջանային տնտեսական ինտեգրման միջազգային կազմակերպություն է, որը հիմնադրվել է Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրով, որը ստորագրվել է 2014թ. մայիսի 29-ին Աստանայում²⁶⁷ (այժմ Նուրսուլտան):

ԵԱՏՄ-ն ստեղծվել է Բելառուսի, Ղազախստանի ու Ռուսաստանի Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի հիմքի վրա:

2013 թ. սեպտեմբերի 3-ին Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը հայտարարել է Մաքսային միություն մտնելու, այդ նպատակներով անհրաժեշտ գործնական քայլեր ձեռնարկելու, իսկ այնուհետև՝ Եվրասիական տնտեսական միության կազմավորմանը

²⁶⁶ <http://www.bsec-organization.org/>

²⁶⁷ <http://www.eaunion.org/>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

մասնակցելու Հայաստանի Հանրապետության որոշման մասին:

2014թ. մայիսի 29-ին Եվրասիական տնտեսական խորհրդի բարձրագույն նիստում Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի անդամ երկրների նախագահները ստորագրել են Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) մասին պայմանագիրը, որն ուժի մեջ է մտել 2015թ. հունվարի 1-ից: Հայաստանի Հանրապետության՝ ԵԱՏՄ մասին պայմանագրին միանալու պայմանագիրը ստորագրվել է 2014 թ. հոկտեմբերի 10-ին և ուժի մեջ մտել 2015թ. հունվարի 2-ին:

2014թ. դեկտեմբերի 23-ին Մոսկվայում պայմանագիր է ստորագրվել՝ ԵԱՏՄ մասին պայմանագրին Ղրղըզական Հանրապետության միանալու մասին (Ղրղըզստանը ԵԱՏՄ անդամ է հանդիսանում 2015 թ. օգոստոսի 12-ից):

ԵԱՏՄ-ն ստեղծվել է ազգային տնտեսությունների բազմակողմանի արդիականացման, համագործակցության, մրցունակության բարձրացման և անդամ պետությունների բնակչության կենսամակարդակի բարձրացմանն ուղղված կայուն զարգացման համար պայմաններ ստեղծելու նպատակով: ԵԱՏՄ-ում ապահովում է ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի ազատ տեղաշարժը, ինչպես նաև՝ համակարգված, համաձայնեցված կամ միասնական քաղաքականության վարումը տնտեսության ոլորտներում՝ ԵԱՏՄ պայմանագրի դրույթներին համապատասխան:

Հարավկովկասյան երկրների ռազմաաշխարհագրական տեսակետից ուժեղ և թույլ կողմերը, ռազմավարական կետերը (Աղյուսակ 15)

Ադրբեջանի թույլ կողմերը՝ ունի բազմաթիվ ազգային փոքրամասնություններ իրենց հիմնախնդիրներով, ադրբեջանցիները կազմում են բնակչության 90,6 %-ը իսկ լեզգիները, թալիշներն, ավարները, ռուսները, հրեաները,

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

թաթերը և այլ ազգային փոքրամասնությունները միասին կազմում են 9,5 %-ը (իրականում թիվն անհամեմատ ավելի մեծ է), սառեցված հակամարտության գոյությունը, Նախիջևանի Ինքնավար Հանրապետության էքսկլավային վիճակը, ոչ միանշանակ հարաբերություններն Իրանի Իսլամական Հանրապետության հետ, պետական բյուջեի ձևավորման մոտ 85 %-ը բաժին է ընկնում նավթագազային ոլորտին, ինչը խոցելի է դարձնում ամբողջ տնտեսությունը:

Ուժեղ կողմերը՝ վառելիքաէներգետիկ ռեսուրսներով հարուստ լինելը, Թուրքիայի Հանրապետության հետ ռազմավարական հարաբերությունները, զորահավաքային ռեսուրսներով ապահովված լինելը, զարգացած ավտոտրանսպորտային և երկաթուղային ցանցը, արդյունաբերության մեծ ներուժը:

Ռազմավարական հանգուցային կետերը՝ Բաքու, Սանգաչալա, Եվլախ, Ալի-Բայրամլի (ներկայումս Շիրվան), Ղազի-Մուհամեդ (ներկայումս Հաջի Կարու), Ալյաթ, Գյանջա:

Վրաստանի թույլ կողմերը՝ ունի բազմաթիվ ազգային փոքրամասնություններ իրենց հիմնախնդիրներով, վրացիները ներկայումս կազմում են բնակչության 83,8 %-ը, ադրբեջանցիները 6,5 %, հայերը 5,7 % և ռուսները 1,5 %, սառեցված հակամարտությունների գոյությունը, լարված հարաբերություններ ՌԴ հետ:

Ուժեղ կողմերը՝ ելք դեպի Սև ծով, տարանցիկ բեռնափոխադրումների մեծ հնարավորություններ, զարգացած տրանսպորտային ցանց, ռազմավարական հարաբերություններ ԱՄՆ և ՆԱՏՕ-ի հետ և այլն:

Ռազմավարական հանգուցային կետերը՝ Թբիլիսի, Սենակի, Գորի, Փոթի, Զուգդիդ, Սամտրեդիա, Բաթում: 2008 թ. Հնգօրյա ռուս-վրացական պատերազմը ևս հաստատեց Սենակի, Գորի, Փոթի ռազմավարական կետերի կարևորությունը, որոնց վրա ՌԴ զինուժի կողմից վերահսկողություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

սահմանելուց հետո վրացական կողմի տրանսպորտային ուղիները կաթվածահար եղան:

**Հարավային Կովկասի
նազմաաշխարհագրական համեմատությունը**

**Աղյուսակ 16.
երկրների**

Երկիրը	Տարածքը (հազ. քկմ)	Բնակչ. (մլն. մարդ)	Զին. ուժերը (մարդ)	Պահես- տազորը (մարդ)	Ռազմ. բյուջեն (մլն\$)	Տան- կերի քան. (հատ)	Մարտա- կան ինքնա- թիռների քանակը (հատ)
Ադր. Հանր.	73,8	9,5	81940	500000	3700	450	41
Հայ. Հանր.*	29,743	3,1	48834	210000	450	110	16
Վր. Հանր.	57,7	4,3	37800	250000	470	165	24

*Արցախի զինուժը չի ներառված²⁶⁸ (կազմված է Military Balance 2016 տեղեկագրքի տվյալներով)

6.2 ՀՀ նազմաաշխարհագրական և նազմաաշխարհագրական դիրքը

«Այս փոքիկ Հայաստանի բոլոր նազմավարական կարևորության դիրքերը նշված են, այն շրջապատված է մեր հավերժ թշնամիով: Այդ շրջապատումը իրականացվել է այն հաշվարկով, որն ակնառու կերպով միտք է հետապնդում՝ հարմար առիթի դեպքում ամենակարճ ժամկետներում

²⁶⁸ <https://www.iiss.org/publications/the-military-balance/the-military-balance-2016>

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

ամենաքիչ կորուստներով ոչնչացնել հայությանը»²⁶⁹ : Մոտ հարյուր տարի առաջ Հայաստանի առաջին հանրապետության ակնառու զորավարներից մեկի՝ Գարեգին Նժդեհի խոսքերն արդիական են նաև այժմ:

Հայաստանի Հանրապետության պետական սահմանի ընդհանուր երկարությունը կազմում է 1262 կմ, որից Թուրքիայի հետ՝ մոտ 268 կմ, Իրանի հետ 42 կմ (պահպանում են ՌԴ ԴԱԾ սահմանապահ ծառայության ստորաբաժանումները, գործում է մեկ սահմանային հսկիչ անցագրային կետ՝ Մեղրի), Վրաստանի հետ՝ 165 կմ (4 հսկիչ անցագրային կետեր՝ Բագրատաշեն, Այրում, Գոգավան և Բավրա) (Աղյուսակ 16): Արցախի Իրանի հետ մոտ 98 կմ երկարությամբ սահմանը պահպանում են ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերը: Ադրբեջանի հետ սահմանը պահպանում են ՀՀ Պաշտպանության նախարարության, որոշ հատվածներ ՀՀ Ոստիկանության, ստորաբաժանումները:

Համեմատած հարևան երկրների, ՀՀ-ը գրավում է ավելի բարձր դիրք, ինչն էլ պայմանավորում է տարածաշրջանի մի շարք ջրառատ գետերի այստեղից սկզբնավորվելը:

Հակառակորդի տեխնիկական առավելությունների դեմ հաճախ ավելի արդյունավետ է դառնում ասիմետրիկ միջոցառումների իրականացումը կամ ասիմետրիկ պայքարը, որի էությունը տվյալ դեպքում այդ տեխնիկական միջոցների կիրառման համար ոչ նպաստավոր պայմանների ստեղծումն է:

Կատարելով Արցախի արևելյան սահմանամերձ շրջանների հետազոտություն՝ քարտեզներով և մասնագիտական գրականությամբ, ինչպես նաև ծանոթ լինելով տեղանքին եկանք եզրահանգման, որ հնարավոր է Թարթառ գետի ջրերի օգտագործումն արդյունավետ դարձնել՝ ինչպես տնտեսական, այնպես էլ պաշտպանական նպատակներով կիրառման ժամանակ:

²⁶⁹ Նժդեհ Գ., Երկեր, հ. 1, -Եր.: 2002, էջ 40:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թարթառի աջափնյա ջրանցքի ջրերը կարող են նաև յուրօրինակ արգելափակոցի դեր կատարել Արցախի արևելյան առավել տանկավտանգ ուղղություններից մեկում:

Այս նպատակի իրականացման համար առաջարկում ենք Ադրբեջանի վերահսկողության տակ գտնվող ջրանցքի հատվածի փոխարեն կառուցել նոր հատված կամ մեծ տրամագծի խողովակաշար մոտ 11 կմ երկարությամբ, Մատաղիսի ջրամբարի աջափնյա հատվածից ջրառ կատարելով, նախկին ձախափնյա հատվածի փոխարեն: Զրաբերդ գյուղի մոտ նոր կառուցվելիք ջրանցքը միացնել հին ջրանցքին: Հին ջրանցքը որոշ վերանորոգման և մաքրման աշխատանքներից հետո պատրաստ կլինի շահագործման:

Աշխատանքները կարող են հիմնավորվել գյուղատնտեսական անհրաժեշտությամբ: Իրականում բացի գյուղատնտեսական նպատակներից ջրով լցված մոտ 40 կմ երկարությամբ ջրանցքը կարող է անհաղթահարելի խոչնդոտ հանդիսանալ հակառակորդի ավտոտեխնիկայի և զրահատեխնիկայի համար: Զրանցքի լայնությունը Լևոնարխ գյուղի մոտ կազմում է 20 մ, Մարտակերտ քաղաքից արևելք 15մ իսկ Ակն քաղաքի մոտ 6մ է, խորությունը ամբողջ երկայնքով կազմում է 2մ: Պաշտպանության երկրորդ բնագծում կարելի է ստեղծել 50-100 մ լայնությամբ և տարբեր երկարությամբ հողային շերտեր, կատարել խորը հերկ, ակոսները զցելով պաշտպանական բնագծին զուգահեռ: Այնուհետև այդ հողաշերտերը ոռոգել ոչ մեծ քանակի ջրով, որպեսզի ջուրը լավ ներծծվի: Հաշվի առնելով այդ տարածքում հողերի ֆիզիկական հատկանիշները, որոշ ժամանակ հետո այս տարածքներն անանցանելի կդառնան ոչ միայն անվավոր և թրթուրավոր տեխնիկաների, այլև դժվարանցելի կլինի նաև մարդկանց համար: Այս տարածքներում խրված և անշարժացած տեխնիկան դյուրին թիրախ կդառնա հակատանկային ստորաբաժանումների համար: Մյուս կարևոր հանգամանքն այն է որ, փափկած հողի վրա ընկած

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

արկերը և ականները կարող են չպայթել, կամ պայթել ավելի մեծ խորության վրա, ինչը կնվազեցնի բեկորների խոցման հնարավորությունները:

Առաջարկած մեթոդի իրականացման համար նպաստավոր պայմաններ են հանդիսանում թույլ թեքվածությունը (20° - 30°) դեպի արևելք, լճագետային նստվածքները, մուգ և բաց շագանակագույն կավային և ավազակավային հողերը և կիսաանապատային բուսականությունը:

Որպես մերձսահմանային ջրային օբյեկտների պաշտպանական նպատակներով օգտագործման օրինակ կարելի է ներկայացնել Թուրքիային սահմանամերձ ՀՀ տարածքներում (Արարատի և Արմավիրի մարզեր) ձկնաբուծական տնտեսությունների ստեղծումը, որի նպատակն էր հանրապետությունում ոչ միայն ձկնաբուծության զարգացումը, այլ նաև ջրային այդ տարածքներն ու ջրանցքները դառնում էին հակատանկային պաշտպանական բնագծեր: Ընտրված տարածքներում առկա է և գրունտային ջրերի մեծ պաշարներ և այդ տարածքներն անմիջապես հարակից էին պետական սահմանին:

Այսօր հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արցախի ամենաջրառատ գետը՝ Թարթառն ունի անհրաժեշտ ջրային ռեսուրսներ, Մարտակերտ Ակնա տանկավտանգ ուղղության վրա կիրառելով ժամանակակից տեխնոլոգիաներ, կառուցել ձկնաբուծական լճակային տնտեսություններ, օգտագործելով նաև Թարթառի աջափնյա ջրանցքի հնարավորությունները: Նշված միջոցառումը բացի Արցախի տնտեսության զարգացման նոր խթան հանդիսանալուց, հնարավորություն կտա բավականաչափ չեզոքացնել Ադրբեջանի տեխնիկայի քանակական առավելությունները:


ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

նիշերում ամբարված ջրային պաշարները բացի տնտեսականից նաև պաշտպանական նպատակներով կիրառման համար:

Իհարկե այս ուղղությամբ առաջին քայլը պետք է դառնա ՀՀ-ում պաշտոնապես արգելել փոքր ՋրէԿ-երի կառուցումը, եթե անհրաժեշտ թերության ստանալու համար չի կառուցվում ամբարտակ և վարարման ժամանակաշրջանում չի ամբարվում ջուրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՉՍԱԿԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԿԵՏԵՐԸ

Մասշտաբ 1: 1 700 000



Քարտեզ 15. ՀՀ Ռազմավարական հանգուցային կետերը

Հայաստանի թույլ կողմերը՝ արտաքին բեռնափոխադրումների սահմանափակ հնարավորությունները, վառելիքային ռեսուրսների բացակայությունը, ոչ բավարար ավտոտրանսպորտային և երկաթուղային ցանցը:

Ուժեղ կողմերը՝ Հայաստանի ՀԱՊԿ շրջանակներում և ՌԴ հետ երկկողմ ռազմավարական հարաբերությունները, հզոր սիյուռքի առկայությունը, խմելու ջրի զգալի պաշարները:

ՀՀ Ռազմավարական հանգույցային կետերը՝ Երևան, Գյումրի, Վանաձոր, Իջևան, Սևան, Եղեգնաձոր, Գորիս, Մարտունի (Քարտեզ 15):

6.3 Հետևություններ

Հարավկովկասյան տարածաշրջանում ռազմաաշխարհագրական համալիր ուսումնասիրման անհրաժեշտությունը պայանավորված է այն հանգամանքով, որ ԽՍՀՄ փլուզումից հետո տարածաշրջանում ձևավորվեց նոր իրողություն: Խորհրդային տնտեսության տարածքային պլանավորման ժամանակ մեծապես հաշվի էր առնվում նաև գլխավոր հակառակորդի, ի դեմս ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիայի արևմուտքում գտնվելը, իսկ արդեն 1990-ականների սկզբներից յուրաքանչյուր պետության համար փոխվեցին հակառակորդները, որն էլ իր հերթին բերեց հաղորդակցության ուղիների և տնտեսական կապերի կաթվածահար վիճակի: Անհրաժեշտություն առաջացավ նոր իրականության պայմաններում տնտեսության և հաղորդակցության ուղիների նոր ռազմավարական պլանի մշակման համար՝ որը հենց հանդիսանում է տարածաշրջանի ռազմաաշխարհագրական հետազոտությունների ռազմավարական մակարդակի ուսումնասիրման հիմնախնդիրներից մեկը:

Ամփոփելով նշենք, որ նոր սերնդի պատերազմներում որոշիչ նշանակություն են ստանում բնական ռեսուրսների՝ առաջին հերթին վառելիքաէներգետիկ ռեսուրսների, կոմունիկացիաների, տնտեսության ռազմավարական ճյուղերի տարածքային կազմակերպումը: Ուստի և ժամանակակից համալիր ռազմաաշխարհագրական հետազոտություններն ուղղակի դառնում են պահանջված ռազմավարական

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

որոշումներ կայացնելիս, իսկ Հարավային Կովկասի դեպքում դրանք վճռորոշ են:

Հաշվի առնելով աշխարհաքաղաքական «գործող անձերի» ուժերի և շահերի հիմնական դասավորվածությունն ու հավանական զարգացումների սցենարներն ու հանգամանքները կարելի է եզրակացնել, որ հայ-ադրբեջանական լայնամասշտաբ պատերազմի վերսկսման որոշումը պաշտոնական Բաքուն միակողմանի կայացնել չի կարող:

Ուկրաինայում ԵՄ-ի և ԱՄՆ կրած ռազմաքաղաքական պարտությունը, կիրառվող տնտեսական պատժամիջոցները, Սիրիայում ՌԴ ռազմական գործողությունները սրել են Արևմուտք-ՌԴ, Թուրքիա-ՌԴ փոխհարաբերությունները, որոնք սպառնում են ունենալ ոչ միայն նորօրյա «սառը պատերազմի», այլ հենց «տաք պատերազմի» լիակատար դրսևորումներ:

Օգտվելով այս հանգամանքից, չի բացառվում, որ ՌԴ-ն շահագրգռված է Հարավային Կովկասում հայ-ադրբեջանական կառավարվող լարվածության ավելացմամբ, սակայն ոչ պատերազմով:

Պաշտոնական Մոսկվայում քաջ գիտակցում են, որ արևմուտքում լուրջ մտավախություններ ունեն Հարավային Կովկասում լայնամասշտաբ պատերազմի վերսկսումից, քանի որ դրա արդյունքում ՀՀ ՁՈւ կողմից և հավանաբար նաև ՌԴ աջակցմամբ կոչնչացվեն Եվրամիության, Թուրքիայի, ԱՄՆ-ի և Վրաստանի համար բացառիկ նշանակություն ունեցող՝ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթատարը, Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազատարը և Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղին:

Այս պարագայում Հարավային Կովկասը «կանջատվի» ինտեգրացիոն տնտեսական նախագծերից և կհայտնվի ՌԴ-ի վերջնական և լիակատար ազդեցության ներքո, ինչն արևմուտքում համարում են անթույլատրելի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կարելի է պնդել, որ այս զարգացումները, ուժերի ներկայիս դասավորվածության պայմաններում շահեկան է ՌԴ համար, սակայն դրա իրագործման համար նա միանշանակ չի տիրապետում բոլոր լծակներին:

Կարճաժամկետ կտրվածքում ՌԴ-ն առավելապես հակված կլինի Արցախի հիմնախնդրի ներկա իրավիճակի պահպանմանը, քան վերջնական կարգավորման տարբերակին:

Պաշտոնական Մոսկվայի կողմից Ադրբեջանին հարձակողական նշանակության ծանր սպառազինություն, ինչպես նաև դեպի Մաքսային միություն և Եվրասիական Տնտեսական Համագործակցություն ներգրավելու սիրախաղը ոգևորել և «պատմական պահը» բաց չթողնելու հույսեր է ներշնչել Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարությանը:

Կարելի է ենթադրել, որ պաշտոնական Բաքվում գոյություն չունի լիակատար վստահություն հավանական զարգացումների վերաբերյալ, որոնք կարող են հանգեցնել ինչպես տարածքային նորանոր կորուստների, այնպես էլ ներքին ազգային ազատագրական շարժումների գլուխ բարձրացմանն ու ալիևների կլանի գահազրկմանը:

2018 թ մայիսից սկսած շփման գծի հարաբերականորեն անդորրը հիմնականում պայմանավորված է նաև ՀՀ նոր իշխանությունների վարքագիծը Ադրբեջանի իշխանությունների համար անկանխատեսելի լինելու հանգամանքով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Արդիական համազորային մարտը շատ է հեռացել դեռևս անցած դարում կիրառվող դասական մարտից, հետևապես նախկինում կիրառված շատ տեսություններ և ռազմավարություններ այսօր արդեն կիրառելի չեն: Նոր սերնդի պատերազմներում մեծ դեր է տրվում արժանահավատ տեղեկատվությանը՝ այդ թվում նաև աշխարհագրական:
- Աշխարհագրական գիտությունների համակարգում առանձնացվում են բնական (ֆիզիկաաշխարհագրական) և հասարակական աշխարհագրական գիտություններ, ինչպես նաև կիրառական բնույթի համալիր դիսցիպլիններ՝ բժշկական աշխարհագրություն, ռազմական աշխարհագրություն, ռեկրեացիոն աշխարհագրություն և այլն:
- Սովորական զինված հակամարտություններում լայնորեն կիրառվող փամփուշտների, հրթիռների, ռումբերի և մյուս ավանդական զինանոցը ներկայումս տազնապահարույց արագությամբ սկսել է լրացվել կարևոր ենթակառուցվածքների վրա կիրեռհարձակումներով, մտավոր սեփականության յուրացմամբ, տնտեսական արգելանքների կիրառմամբ, բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում պահվող ակտիվների հափշտակմամբ և այլն:
- Այսօր էլ անհնար կլինի ՀՀ ռազմավարական պաշտպանությունը պլանավորելիս չհենվել աշխարհագրական տվյալների և աշխարհագրական մեթոդների վրա: Եթե երկիրը մեծ տարածք և ռեսուրսներ ունի, ապա պաշտպանություն կազմակերպելը համեմատաբար դյուրին է, իսկ եթե տարածքը փոքր է, ապա անհրաժեշտ է այն լիովին օգտագործել և տնտեսության տարածքային կառուցվածքը նմանեցնել մեղվի փեթակի բջիջներին՝ որտեղ, անհրաժեշտության դեպքում, յուրաքանչյուր բջիջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

պետք է օժտված լինի առանձին գործելու կարողությամբ: Տնտեսությունը բազմակենտրոն դարձնելով հակառակորդին զրկում ես մի քանի ճշգրիտ հրթիռային հարվածներով այն կաթվածահար անելու հնարավորությունից:

- Արցախի և ՀՀ սահմանամերձ բնակավայրերի տնտեսությունների կազմակերպչական կառուցվածքին անհրաժեշտ է առանձնահատուկ մոտեցում ցուցաբերել: Մասնավորապես տնտեսական դժվարություններին առավել արդյունավետ կարող են հաղթահարել կոլեկտիվ տնտեսությունները, սահմանամերձ հողը բնավ չպետք է պատկանի խոշոր մենատնտեսի, նույնիսկ եթե նա ինչ ինչ «արդար» պայմաններում է այն ձեռք բերել: Պետության կողմից այդ տնտեսությունները պետք է նախնական աջակցություն ստանան մեքենա-տրակտորային պարկերի, վառելիքի և պարարտանյութերի ձևով: Այնուհետև ճիշտ կազմակերպման դեպքում այն ինքնաբավ կլինի: Ինչքան շատ մենատնտեսը կապված եղավ հողին, այնքան ամուր կլինի սահմանը: Ցավոք ներկայումս Արցախում պատկերը լրիվ հակառակն է, և գյուղատնտեսական նշանակության հողերի մեծամասնությունը պատկանում է մի քանի խոշոր հողատերերի:
- ՀՀ ռազմարդյունաբերական համալիրի աշխատանքների պլանավորման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել, որ և գլխավոր հակառակորդի և հիմնական հակառակորդի գործողություններին պատասխանը կարող է լինել ասիմետրիկ, նոր զինատեսակների նախագծումը և արտադրությունը պետք է հենված լինի մեր երկրի գիտական ներուժի վրա: Արդյունավետ կլինի նորագույն սպառազինության գործունեության հիմքում լինեն քիմիայի և ֆիզիկայի այլ սկզբունքներ, արդիական տեղեկատվական տեխնոլոգիաներ:
- Անհրաժեշտ է իրականացնել երկրի Ռազմավարական պահուստների ապակենտրոնացումը՝ պահուստների

ՀԱՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

ստեղծում հյուսիսային և հարավային մարզերում, ինչը կապահովի դրանց կենսունակությունը: Այդ պահեստարանների արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ կլինի ստեղծել հիմնական և պահեստային հաղորդակցության համակարգեր:

- Երկրատեղեկատվական համակարգերի հիման վրա կազմված քարտեզներում մուտքագրելով զինտեխնիկայի մարտավարատեխնիկական բնութագրիչները կարող ենք ստանալ այդ տեխնիկայի հնարավոր կիրառման շրջանները՝ օրինակ տանկաանցանելի ուղղությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբրահամ Երևանցի «Պատմություն պատերազմացն 1721-1736 թթ.», -Եր.: Արմֆանի հրատ., 1938, էջ 16-17:

2. Աբրահամյան Մ. Ա. Լեռնային պայմաններում տեղային պատերազմների վարման եղանակները (աֆղանական և չեչենական պատերազմների օրինակով), ՀԲ, 1999. թիվ 4 (22), էջ 10-18:

3. Ադոնց Նիկողայոս Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, -Եր.: Հայաստան հրատ., 1987. էջ 11:

4. Ագաթանգեղոս, «Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց», Քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանցի, - Եր.: 1983, -484 էջ:

5. «Ազգ» օրաթերթ, № 195, 27.10.2007

6. Աթոյան Վ. Կ. Նժդեհի՝ մարտի վարման տեսության արդիականությունը, ՀԲ, թիվ 2, 2010, էջ 115-125:

7. Ավագյան Գ.Ե. Հայկական ՍՍՀ բնակչությունը: -Եր.: ԵՊՀ հրատ., 1975, -156 էջ:

8. Ավագյան Ա.Ռ. Հայաստանի Հանրապետության ընդերքի ռեսուրսների աշխարհագրական գնահատականը, Եր.: 2000, -176 էջ:

9. Բայյան Ս. Պ., Վանյան Ռ.Ա. «Հայկական լեռնաշխարհի քարանձավների ծագումը, ձևաբանությունը և նրանց համալիր ուսումնասիրության ու օգտագործման հեռանկարները», անձավագիտական ուսումնասիրությունների գիտական ղեկավարի զեկույցը Հայկական աշխարհագրական ընկերությունում, 1982:

10. Բայյան Ս. Պ. Հայկական ՍՍՀ գեոմորֆոլոգիան, -Եր.: 1986. -239 էջ:

11. Բաղդասարյան, Ա.Բ. Հայկական ՍՍՀ ֆիզիկական աշխարհագրություն, -Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1971, -471 էջ:

12. Գաբրիելյան Հ.Կ. Լանդշաֆտների գեոքիմիա, -Եր.: ԵՊՀ, Միտք հրատ., 1968, -188 էջ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

13. Գաբրիելյան Հ.Կ., Միրիմանյան Խ. Պ. Հողի էրոզիան և պայքարը նրա դեմ, -Եր.: 1974. -79 էջ:

14. Գաբրիելյան Հ.Կ. Հայկական լեռնաշխարհ, ուսումնական ձեռնարկ, -Եր.: ԵՊՀ հրատ., 2000, -376 էջ:

15. Գաբրիելյան Վ., Ստեփանյան Վ., Անգրյան Է. Լանջային պրոցեսների դրսևորման վտանգի աստիճանը Հայաստանի Հանրապետության տարածքում փլվածքաթափվածքային երևույթների ու քարվեժների օրինակի վրա, ՀԲ, 2007, թիվ 1:

16. Դավթյան Վ.Ս. ՀՀ վարչատարածքային բաժանման տեղեկատու ատլաս, -Եր.: 2004,- 128 էջ:

17. Եղիշե վարդապետ Վասն Վարդանայ և հայոց պատերազմին, -Վենետիկ, 1842. -221 էջ:

18. Եփրեմյան Մ.Վ., Մելքոնյան Հ.Ա. Ցածր ամպամածության կանխատեսումը եղանակագիտական-վիճակագրական մեթոդով («Էրեբունի» օդանավակայանի օրինակով), ՀԲ, 2014. թիվ 3-4, էջ 203-209:

19. Եփրեմյան Մ.Վ. Լեռնային ռելիեֆի և օդերևութաբանական պայմանների ազդեցության գնահատումը ցածր բարձրություններում իրականացվող թռիչքների վրա (ՀՀ օրինակով), ԵՊՀ ՈւԳԸ գիտական հոդվածների ժողովածու, 2015թ. տարեկան գիտական նստաշրջանի նյութեր, 1.1(11), -Եր.: ԵՊՀ հրատ., 2016թ. էջ 76-80:

20. Թովմասյան Ա.Ռ. ՀՀ ռազմարդյունաբերական համալիրի զարգացման համար խոչընդոտների և դրանց հաղթահարման ուղիների որոշման հարցի շուրջ. Ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների վերլուծություն, ՀԲ, 2017, թիվ 1-2, էջ 48-56:

21. Թուրչյան Հ.Գ., Սարդարապատի հերոսամարտը, -Եր.: Հայաստան հրատ., 1969, էջ 149-151:

22. Լեռ Հայոց Պատմություն, հ.1, -Թիֆլիս, Գասպար Հ. Տեր-Մարգարյան հրատ., 1917, -730 էջ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

23. Լեո, Երկերի ժողովածու, հ 3, -Եր.: Հայաստան հրատ., 1973. էջ 153:

24. Խաչատրյան Կ.Հ. Հայաստանը ԽՍՀՄ ռազմարդյունաբերական համալիրի համակարգում (1922-1991թթ), Պատմության ինստիտուտ, է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, -Եր.: 2015. -42 էջ:

25. Խորենացի Մ. Պատմություն Հայոց, -Եր.: ԵՊՀ հրատ., 1981. -428 էջ:

26. Խոյեցյան Ա.Վ., Մկրտչյան Ռ.Ս. Անապատացման պատճառահետևանքային կապերը և տարածաժամանակային գնահատման սկզբունքները Հայաստանի Հանրապետությունում, -Եր.: ԵՊՀ հրատ., 2006, -250էջ:

27. Խուրշուռյան Պ.Ա. Հայաստանի անտառապատվածությունը պատմական անցյալում, ներկա վիճակը և անտառային համակեցությունների խոցելիությունը կլիմային փոփոխման դեպքում, Հայաստան. կլիմայի փոփոխության հիմնահարցերը /հոդվածների ժողովածու, խմբագիր՝ Ա.Հ. Գաբրիելյան, -Եր.: 1999, -373 էջ:

28. Կյուրեղյան Ե. Իմ հուշերի ճանապարհով, «Արարատ» ռազմավարագիտական կենտրոն, -Եր.: 2009. էջ 214-215:

29. Հակոբյան Թ.Խ. Հայաստանի պատմական աշխարհագրություն, -Եր.: 1968. էջ 79:

30. Հակոբյան Թ.Խ. Աշխարհագրության համառոտ պատմություն (Հնագույն ժամանակներից մինչև 1917թ.), -Եր.: «Լոյս» հրատ., 1976. - 520 էջ:

31. Հայկազյան Վ. Հայաստանի պարենային անվտանգության հիմնախնդիրները, «21-րդ ԴԱԲ», թիվ 4 (18), -Եր.: 2007. էջ 60-83:

32. Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 12, -Եր.: 1986. էջ 153-154:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

33. Հայկական սովետական հանրագիտարան, Սովետական Հայաստան, -Եր.: 1987. էջ 59–63:

34. ՀՀ Ազգային ատլաս, Լ.Հ.Վալեսյանի խմբ. հատոր Ա, -Եր.: Տիգան Մեծ, 2007. -232 էջ:

35. ՀՀ Ազգային ատլաս, Բ.Հ.Հարությունյանի խմբ. հատոր Բ, -Եր.: Տիգրան Մեծ, 2008. -263 էջ:

36. ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարություն, ՀԲ հատուկ թողարկում, -Եր.: 2007. էջ 21:

37. ՀՀ ռազմական դոկտրին, ՀԲ հատուկ թողարկում, -Եր.: 2007. էջ 30:

38. Հայաստան-կլիմայի փոփոխության հիմնահարցերը/ հողվածների ժողովածու, ՀՀ Բնապահպանության նախարարություն, II թողարկում, -Եր.: 2003. -353 էջ:

39. Հայաստանի Բնաշխարհ, Հանրագիտարան, Խմբագր. հանձնաժողով Հ.Մ. Այվազյանի (գլխ. խմբագիր) և ուրիշ., -Եր.: 2006. -692 էջ:

40. Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգիրքը, <http://www.parliament.am>, -Եր.: 2005:

41. Հայաստանի Հանրապետության վիճակագրական տարեգիրք, ՀՀ ազգային վիճակագրական տարեգիրք, -Եր.: 2018. -581 էջ:

42. Հայրապետյան Է.Մ. Հողի էրոզիան և լեռնային հողագործությունը, -Եր.: Հայաստան հրատ., 1976, -220 էջ:

43. Հարությունյան Բ.Հ., Մեծ Հայքի Արշակունյաց թագավորության բանակն ըստ «Զօրանամակի», «Վեմ» համահայկական հանդես, դ (Ժ) տարի, 2012 թ. թիվ 1 (37), հունվար-մարտ, էջ 23-43;

44. Հարությունյան Բ.Հ. Մեծ Հայքի վարչաքաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, Մաս Ա (Արևմտյան և հարավային աշխարհներ), -Եր.: 2001, -445 էջ:

45. Հարությունյանի Բ.Հ. «Հայաստանի պատմության ատլաս», -Եր.: 2004, -104 էջ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

46. Հարությունյան Գ.Է. Ռազմաարդյունաբերություն. գերակայություններ, հնարավորություններ, հեռանկարներ: - Եր.: Լիմուշ հրատ., 2018. - 234 էջ:

47. Հարությունյան Հ. Ավարայրի ճակատամարտը, -Եր.: Հայպետուսմանկհրատ,1962. էջ 21:

48. Հովհաննիսյան Ա.Կ. Ապրիլյան պատերազմի ռազմավարական վերլուծություն, Որոշ նկատառումներ «Ազգ-Բանակ» համակարգում ՀՀ պաշտպանության կատարելագործման լույսով, ՀԲ, -Եր.: 2017, թիվ 1-2, էջ 34-47:

49. Ղազար Փարպեցի «Ղազարայ Փարպեցույ Պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան», աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Մալխասեան, - Տփղիս, 1904. էջ 133:

50. Ղեվոնդ Երեց Պատմություն Ղեոնդեայ Մեծի վարդապետի Հայոց, -Ս. Պետերբուրգ, 1867. էջ 17:

51. Մանանդյան Հ. Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Եր.: 1945. էջ 48:

52. Մանասյան Մ.Գ. ՀՀ տարաբնակեցման համակարգը, -Եր.: ԵՊՀ հրատ., 2005. -400 էջ:

53. Մանասյան Մ.Գ., Սայադյան Հ.Յ. Հայաստանի աշխարհագրություն, -Եր.: Տիգրան Մեծ հրատ., 2016. -388 էջ:

54. Մանֆրեդ Ա.Ջ. Նապոլեոն Բոնապարտ, -Եր.: 1975, էջ 140:

55. Մելքումյան Ս.Ա. ՀՀ տնտեսական աշխարհագրություն, Եր.: 2004. -223 էջ:

56. Մելքումյան Ս.Ա. Հայաստանի հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսական և սոցալական աշխարհագրություն, Եր.: Զանգակ-97 հրատ., 2014. -250 էջ:

57. Միրիմանյան Խ.Պ., Հողագիտության հիմունքներ, - Եր.: 1971. -322 էջ:

58. Մնացականյան Բ.Պ. Հայաստանի ջրային հաշվեկշիռը, -Եր.: 2005. -184 էջ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

59. Մովսես Խորենացի Հայոց Պատմություն: Թարգմանություն, ներածություն և ծանոթագրություններ ակադեմիկոս Ստ. Մալխասյանի, -Եր.: 1961. -408 էջ:

60. Նազարյան Խ.Ե. Լեռնային ռելիեֆը որպես ֆիզիկաաշխարհագրական առաջնակարգ գործոն (ՀՀ տարածքի օրինակով): -Եր.: Զանգակ-97 հրատ., 2006,-96 էջ:

61. Նժդեհ Գ. Խուստուփյան կանչեր, Զորաշարքային կանոնադրություն, -Եր.: 1992. -11 էջ:

62. Նժդեհ Գ. Երկեր, հ. 1, -Եր.: 2002. -708 էջ:

63. Նիկոլո Մաքիավելի Տիրակալը, -Եր.: 2010. -200 էջ:

64. Չիլինգարյան Լ.Ա., Մնացականյան Բ.Պ., Աղաբաբյան Կ.Ա., Թոքմաջյան Հ.Վ. Հայաստանի գետերի ու լճերի ջրագրությունը, -Եր.: 2001, -92 էջ:

65. Պոտոսյան Ա.Հ. ՀՀ գյուղական տարաբնակեցում (ձևավորումը, շարժընթացը, վիճակը), -Եր.: 2001, -233 էջ:

66. Պողոսյան Դ.Ա. և Խոյեցյան Ա.Վ., Հայկական լեռնաշխարհի (ու հարակից տարածքների) լանդշաֆտները և ֆիզիկաաշխարհագրական շրջանները, -Եր.: ԵՊՀ հրատ., 2008. -232 էջ:

67. Ռուֆուս Բ.Կ., «Ալեկսանդր Մակեդոնացու պատմությունը», -Եր.: Հայաստան հրատ., 1987. էջ 417-418:

68. Ռուբեն «Հայ յեղափոխականի մը յիշատակները», Է հատոր, -Թեհրան 1982, էջ 249:

69. Սայադյան Հ.Յ. Հայաստանի Հանրապետության անտառային գեոհամակարգերի տարածաժամանակային փոփոխությունները և կառավարման հիմնախնդիրները, -Եր.: ԵՊՀ հրատ., 2010. -261 էջ:

70. Սայադյան Հ.Յ, Սայադյան Համ.Յ. Լանդշաֆտային պլանավորման մեթոդական ուղեցույց Հարավային Կովկասի երկրների օրինակով, Անդրսահմանային միացյալ քարտուղարություն, -Երևան-Թբիլիսի, Ունիվերսալ հրատ., 2009. էջ 150:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

71. Սայադյան Հ.Յ., Սայադյան Համ.Յ. Հայաստանի Հանրապետության անտառային զանգվածների պահպանումը և ընդարձակումը՝ որպես ազգային անվտանգության ապահովման կարևոր գործոն, ՀԲ, Երևան, 2015, թիվ 4, էջ 95-105:

72. Սայադյան Հ.Յ. ՀՀ անտառածածկի փոփոխությունը պատմական անցյալում և XX դարում՝ Աշխարհագրական Տեղեկատվական Համակարգերի (ԱՏՀ) կիրառման լույսի ներքո, Ագրոգիտություն ամսագիր, -Եր.: թիվ 9-10, 2009. էջ 470-474:

73. Սայադյան Հ.Յ. Անտառային քարտեզագրում և օդատիեզերական տեղեկատվական համակարգեր, Դասագիրք բուհերի ուսանողների համար, -Եր.: Զանգակ-97 հրատ., 2009, -216 էջ:

74. Սայադյան Համ. Յ. Հայկական հրաբխային բարձրավանդակի բարձրադիր սարավանդների ջրարբիացման հիմնահարցը հողի սեփականաշնորհման պայմաններում, Ագրոգիտություն ամսագիր, թիվ 3, -Եր.: 1999. էջ 295-301:

75. Սայադյան Համ. Յ. Վարդենիսի հրաբխային բարձրավանդակի բարձրադիր սարահարթերի ջրարբիացման հիմնահարցը, ԵՊՀ Գիտական տեղեկագրեր ամսագիր, 2-1999, -Եր. ԵՊՀ հրատ. 1999. էջ 115-119:

76. Սայադյան Համ. Յ. Գեղամա և Վարդենիսի հրաբխային լեռնավահաններում ընթացող կոնդենսացիոն պրոցեսները, ջրաքանակների հաշվարկը և օգտագործման հնարավորությունները, Ագրոգիտություն ամսագիր, թիվ 7, -Եր.: Ագրոպրես 1999. էջ 681-688:

77. Սայադյան Համ. Յ., Խաչատրյան Հ.Ս. Գեղամա և Վարդենիսի հրաբխային լեռնավահանների բարձրադիր սարավանդների ջրարբիացման ժամանակակից հիմնահարցերը, ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, թիվ 4, 2000, -Գավառ, ԵՊՀ հրատ., էջ 139-141:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

78. Սայադյան Համ. Յ. Ռազմական աշխարհագրության կառուցողական հնարավորությունները, ծագման ու զարգացման հարցերը, ԵՊՀ, «Աշխարհագրության գիտակառուցողական ներուժը և գործնական կիրառումը» կոնֆերանսի նյութեր, -Եր.: ԵՊՀ հրատ., 2011. էջ 223-230:

79. Սայադյան Համ. Յ. Լեռնային տեղանքում մարտական գործողությունների վրա ազդող գործոնների հաշվառումը, որպես մարտական վարպետության ապահովման միջոց, ՀԲ, -Եր.:2009, թիվ 1-2, էջ 150-158:

80. Սայադյան Համ. Յ. Ջրի ավանդական աղբյուրների՝ քահրեզների կառուցումը և կաթիլային ոռոգումը որպես սողանքների կանխարգելման միջոց, Ագրոգիտություն ամսագիր, հմ 9-10. 2011, -Եր.: Ագրոպրես, էջ 474-478:

81. Սայադյան Համ. Յ., Աշխարհագրական գործոնի դերը հայ ռազմարվեստի պատմության մեջ, -Եր.: ՀԲ, 2011, թիվ 3, էջ 87-97:

82. Սայադյան Համ. Յ. Ռազմական աշխարհագրությունը և այդ ոլորտի հայ գործիչները, -Եր.: ՀԲ, 2013, թիվ 3-4, էջ 87-97:

83. Սայադյան Համ. Յ., Սարդարյան Ա.Ս. Երկրակեղևի ժամանակակից շարժումների պատճառները և նրանց հաշվառման կարևորությունը, Երևանի Պետական Համալսարանի Երկրաբանության, աշխարհագրության և էկոլոգիայի արդի հիմնախնդիրները, դոցենտ Է.Խ.Խարազյանի ծննդյան 70-ամյակին նվիրված գիտաժողովի հոդվածների ժողովածու, -Եր.: Տիգրան Մեծ հրատ., 2014. էջ 241-245:

84. Սայադյան Համ. Յ. ՀՀ ջրային օբյեկտների պաշտպանական նպատակներով կիրառման հնարավորությունների գնահատումը, ԵՊՀ, «Ջրաբանության, օդերևութաբանության և կլիմայագիտության արդի հիմնախնդիրները Հայաստանում՝ նվիրված Ջրի և

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Օդերևութաբանի համաշխարհային օրվան» գիտական սեմինարի նյութեր, -Եր.: ԵՊՀ հրատ., 2014. էջ 32-35:

85. Սայադյան Համ. Յ. Հարավային Կովկասի ռազմաաշխարհագրական իրավիճակի գնահատումը, ՀՊՄՀ, «Աշխարհագրական պրագմատիկ հետազոտությունների ներկա վիճակը ՀՀ-ում և դրանց զարգացման հիմնական միտումները մոտ ապագայում» հանրապետական գիտագործնական նստաշրջանի նյութեր, Եր.: 2014. էջ 48-60:

86. Սայադյան Համ. Յ. Հայկական Լեռնաշխարհի ֆիզիկաաշխարհագրական պայմանների ռազմաաշխարհագրական գնահատումը, ՀՊՄՀ, «Հայկական լեռնաշխարհ» գիտաժողովի նյութեր՝ նվիրված Հայոց Մեծ Եղեռնի 100-ամյակին; Եր.: 2015. էջ 75-86:

87. Սայադյան Համ. Յ., Սարգսյան Ա.Ս. Ռադիոակտիվությունը Կենսոլորտում և նրա ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, ՀԲ, 2014. թիվ 3-4, էջ 178-183:

88. Սայադյան Համ. Յ., Աջամոլյան Ա.Գ. ՀՀ տնտեսության տարածքային պլանավորման սկզբունքները ռազմական անվտանգության համատեքստում, Կրթությունը և գիտությունը Արցախում, ԱՀ, -Ստեփանակերտ, 2016. էջ 72-78:

89. Սարգսյան Ա., Հայ ռազմական արվեստի պատմություն, Եր.: 1969. էջ 19:

90. Սուն Յզի Ստրատեգիայի արվեստը, Եր.: Բյուրոկրատ հրատ., 2011. -173 էջ:

91. Սուլջան Ա.Ա. Ռազմական աշխարհագրության դերն ու նշանակությունը զորքերի տեղագրաերկրաբաշխական ապահովման գործում, ՀԲ, 2010, թիվ 4, էջ 83-88;

92. Վալեսյան Լ.Հ. Աշխարհագրական կանխատեսում, Մեթոդաբանական հիմունքները, կիրառական և կառուցողական նշանակությունը, -Եր.: ԵՊՀ հրատ., 2008. - 264 էջ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

93. Վալեսյան Լ.Հ. Աշխարհագրական գիտությունների մեթոդաբանական և տեսական հիմունքներ, -Եր.: ԵՊՀ հրատ. 2004. -264 էջ:

94. Վալեսյան Լ.Հ. Հայկական ՍՍՀ տնտեսական և սոցիալական աշխարհագրություն, -Եր.: Լույս հրատ., 1988. - 455 էջ:

95. Վալեսյան Լ.Հ. Հասարակական աշխարհագրության ներածություն, -Եր.: Լույս հրատ., 1999. -227 էջ:

96. Վալեսյան Ա.Լ., Վալեսյան Լ.Հ., Քաղաքական աշխարհագրություն, -Եր.: ԵՊՀ հրատ., 2005. էջ 35:

97. Վալեսյան Լ. Հ., Նազարյան Խ. Ե., Մարտիրոսյան Գ. «Աղացած միս» գործողությունը, «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, -Եր.: 5.03.2005.:

98. Տայեան Գ. (Գրիգորյան), «Մի հերոսի հեքիաթային ճակատագրի պատմություն», -Բուենոս Այրես, 2007. -317 էջ:

99. Քոթանջյան Հ.Ս. Պետության տարածքային պաշտպանության կազմակերպման հարցի շուրջ՝ Իսրայելի օրինակով, ՀԲ, թիվ 3, 2009. էջ 17:

100. Քսենոֆոն Անաբազիս (Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության), -Եր.: 1944, էջ 382-383:

101. Օրբեյան Ստ. Սյունիքի պատմություն. Ներածությունը և ծանոթագրությունները Ա.Ա.Արրահամյանի, -Եր.: 1986. -615 էջ:

102. Агаларян Э.М., Караханян А.С., Степанян В.Э. Аэрокосмический метод-составляющая прогнозной оценки опасности влияния разломной тектоники при контроле состояния сооружений в сейсмических районах // Сб. науч. трудов Академии гражданской защиты, -Новогорск, изд-во МЧС России, 2000, вып. 12, 170-176 с.

103. Агроклиматический справочник по климату СССР, Агроклиматический справочник по Армянской ССР, -Ленинград, Гидрометеиздат, 1961. - 266с.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

104. Анисин В., Тащлыков Б. Военно-политическая обстановка в странах Черноморско-Каспийской зоны, Зарубежное военное обозрение. 2008, № 5; с. 3-15, № 6 с. 3-10.

105. Антипов А.Н., Кравченко В.В., Семенов Ю.М. Ландшафтное планирование, Инструменты и опыт применения (Редактор-составитель А.Н.Антипов), -Бонн-Иркутск, ин-т Географии СО РАН, 2005, -165 с.

106. Айриян А.П. Медико-экологический атлас Армении, -М.: 1998. -163 с.

107. Анучин В.А. Основы природопользования, Теоретические аспекты, -М.: 1978. -294 с.

108. Аракелян В.Н., Гарни, т. 1, -Ер.: 1951. с. 3;

109. Арзуманян В., Агаларян Э., Степанян В., Дургарян К. Комплексные исследования проблемы защиты территорий Республики Армения от опасных геологических процессов в связи с активизацией геодинамической обстановки // Сб. науч. труд. конф., посвящ. 90-летию академика А.Г. Назарова. - Гюмри, изд-во НАН РА, 1998, с. 211-215.

110. Арманд Д.Л. Географическая среда и рациональное использование природных ресурсов, -М.: изд-во Наука, 1983. с.232-237.

111. Аристотель, Политика Кн. Вторая, соч в 4-х томах. Т. 4, -М.: 1984. с. 434-435.

112. Арустамов Э.А., Природопользование, -М.: 2001, 276 с.

113. Атлас Армянской ССР, -Ер.: изд-во АН Арм.ССР, 1961. - 111с.

114. Атлас сельского хозяйства Армянской ССР, -Москва-Ереван, 1984, -189с.

115. Атлас офицера, Военно-топографическое управление Генерального штаба, -М.: 1984. -396 с.

116. Бабурин В.Л., Мазуров Ю.Л. Географические основы управления, Учебное пособие для вузов, -М.: изд-во Дело, 2000, - 288с.

117. Багдасарян А.Б. Карта вертикальных климатических зон Армянской ССР//ДАН АрмССР, -Ер.: 1956, с. 165-169.

118. Багдасарян А.Б. Климат Армянской ССР, -Ер.: 1958, - 140с.

119. Бальян С.П. Структурная геоморфология Армянского нагорья и окаймляющий областей, -Ер.: 1969. -389 с.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

120. Баранец Виктор, Генштаб без тайн, т 1, -М.: 1999, с. 247;
121. Бутков П.Г. Материалы по новой истории Кавказа, ч. 3, -СПб, 1869, с. 152.
122. Боготкин О.Г. Информационно-справочная книга авиационного метеоролога. Книга 1, -СПб, 2010, с. 110;
123. Большая советская энциклопедия: -М.: Третье издание, т.5, 1975. с.541.
124. Большая советская энциклопедия: -М.: Третье издание, т.6, 1975. с. 275.
125. Большая советская энциклопедия: -М.: Третье издание, т.27, 1978. с.33.
126. Бойнагрян В.Р. Экзогенные процессы рельефообразования в Армении // Матер. XXVIII Пленума Геоморфол. Комиссии РАН. -Новосибирск, 2004, с.43-44.
127. Бойнагрян В.Р. Склоны и склоновые процессы Армянского нагорья, -Ер.: изд-во ЕГУ, 2007. -279 с.
128. Бойнагрян В.Р., Степанян В.Э., Хачатрян Д.А. и др. Оползни Армении, -Ер.: изд-во Асохик, 2009. -308 с.
129. Букштынов А.Д., Грошев Б.И., Крылов Г.В. Леса, -М.: Мысль, 1981. -316 с.
130. Бутков П.Г. Материалы по новой истории Кавказа, ч. 3, -СПб, 1869. с. 152.
131. Вильсон Х., Линейные корабли в бою 1914-1918 гг, -М.: Воениздат, 1938. с.362.
132. Военная география и военная статистика: история и современность, сост. канд. ист. наук Бринюк Н.Ю., Коршунов Э.Л., д-р ист. наук Михайлов А.А., -СПб, Дмитрий Буланин, 2018,-320 с.
133. Военный Энциклопедический словарь, -М.: Военное изд-во., 1986. -864 с.
134. Военный Энциклопедический словарь, -М.: изд-во. Оникс 21век, 2002. -1432 с.
135. Военное искусство в локальных войнах и вооруженных конфликтах, -М.: Военное изд-во, 2008. с. 18-19.
136. Воскресенский С.С. “Динамическая геоморфология формирования склонов”, -М.: МГУ, 1971. с. 293.
137. Воробьев И.Н. О тактике, «Военная мысль, 2003, № 5, № 8, с.33-36.
138. Воробьев И.Н., Кисилев В.А. Военная наука на современном этапе, Военная Мысль. 2008, № 7, с. 26;

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

139. Воронин Е., Кашин В., Яблонский Л.,
Геоинформационное обеспечение ВС США // Зарубежное
военное обозрение, № 10, 2005. с. 15;
140. Воскресенский С.С. Динамическая геоморфология.
Формирование склонов. – М.: изд-во МГУ, 1971. -228 с.
141. Габриелян Г.К., Мусеибов М.А., Джакели Х.Г. и др.
Физическая география Закавказья, -Ер.: изд-во ЕГУ, 1986. -309 с.
142. Гаврилов С.В., Журавлев В.В., Колесник М.И. Военная
география. Военно-географическое деление геостратегического
пространства, Учебное пособие, -СПб.: ВАТТ, 2004. -289 с.
143. Гаврилов С.В., Журавлев В. В., Колесник М.И., Мальцев
В.А. История войн и военного искусства, Учебно методическая
пособие, -СПб, ВАТТ, 2005. -335 с.
144. Гвоздецкий Н.А., Голубчиков Ю.Н. Горы, -М.: изд-во.
Мысль, 1987. -400 с.
145. Геворкян Ф.С. Современные экзогенные
рельефообразующие процессы АрмССР // Сводный отчет, -Ер.:
Фонды ИГНАН РА, 1985. -482 с.
146. Геоинформатика, Толковый словарь основных терминов,
-М.: 1999, -204 с.
147. Генеральная схема защиты сельских населенных пунктов,
предприятий, зданий, сооружений, обвалов, снежных лавин и
селевых потоков на территории Армянской ССР до 2000 года, -Ер.:
1986. -359 с.
148. Географический энциклопедический словарь, -М.:
Советская энциклопедия, 1988. -432 с.
149. Геология Армянской ССР, т.1.Геоморфология, -Ер.: изд-
во АН Армянской ССР, 1962. -586 с.
150. Герасимов И. П. Конструктивная география, цели,
методы, результаты // Изв. ВГО. 1966. Т. 98. Вып. 5, с. 389—403
151. Говорухин А.М., Куприн А.М., Гамезо М.В. Справочник
по военной топографии, -М.: МО СССР, 1973. -264 с.
152. Голубчик М.М. Политическая география мира, Учебное
пособие, -Смоленск, изд-во СГУ, 1998. -312 с.
153. Гредасов Ф.И., Тактическая разведка, -М.: Академия им.
Фрунзе, 1987. -368 с.
154. Григорян Г.Б. Региональная ландшафтная
дифференциация территорий Арм.ССР (районирование)//Известия
АН АрмССР, Науки о Земле, 1987, № 1, с. 48-55.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

155. Гросс Отто. Учение о морской войне в свете опыта мировой войны, -М.: 1930. с. 133.
156. Губарев В.К., География мира: Справочник школьника и студента, -Ростов н/Д, Феникс, 2007. -608 с.
157. Гумилев Л.Н. Этногенез и биосфера Земли, - Ленинград,1990. -495с.
158. Гуссейнов Т.Б. Природные ресурсы Нагорного Карабаха, -Баку, Знание, 1980, -48 с.
159. Дегтерева Е.А., Редкоземельные металлы в производственных цыпочках военнопромышленного комплекса США. Вооружение и экономика, 2012, №3 (19), с. 85-91.
160. Ефремов Ю.В. Переднеазиатские нагорья (Малоазиатское, Армянское, Иранское) // Арманд Д.Л. и др., «Зарубежная Азия», физическая география, уч. пособие для вузов. – М.: Учпедгиз, 1956, -608 с.
161. Ефремов Ю.В., Антошкина Е.В. Экологическая геоморфология, Учебное пособие, -Краснодар, 2006. -148 с.
162. Зворыкин К.В. Географическая концепция природопользования // Вестник МГУ, сер.5, География, 1993, № 3, с. 3-16.
163. Зограбян Л.Н. Орография Армянского нагорья, -Ер.: 1979. -119 с.
164. Золотницкая Р.Д. Кавказ в исследованиях Л.С.Берга, Новые материалы к биографии ученого //Известия АН СССР, серия географическая, 1985, № 1, с.125-135.
165. Захаренко И. А., Военная география: прошлое и настоящее, Военная мысль, № 3 2002. с. 29-33.
166. Ивановков П. А., Захаров Г. В. Местность и ее влияние на боевые действия войск. -М.: Библиогр., 1969. с. 203—205.
167. Игнатев А. Танки в общевойсковом бою, -М.: Воениздат, 1939. с. 64-72.
168. Исаков И.С. Избранные труды, Океонология, география и военная история, -М.: Наука, 1984. -584 с.
169. Исаченко А.Г. Ландшафтоведение и физико-географическое районирование, -М.: Высш.школа,1991. -366 с.
170. Исаченко А.Г. Введение в экологическую географию, - СПб, 2003. -192 с.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

171. Исаченко А.Г. Теория и методология географической науки, Учеб. для студ. вузов. -М.: Изд. центр “Академия”, 2004. - 400с.
172. Искандарян А. Южный Кавказ между изоляцией и интеграцией, Генезис и перспективы, Кавказское соседство, Турция и Южный Кавказ, -Ер.: Институт Кавказа 2008. с.7-14.
173. История военного искусства, -М.: Воениздат, 2006. с. 389-390;
174. Казинян А.В. Полигон Азарбайджан, -Ер.: 2011. -615с.
175. Клаузевиц К. О войне, -М.: Эксмо, 2007. -532 с.
176. Колинз Дж. М. Военная география для профессионалов и не профессионалов, -М.: Научная книга, 2005. -568 с.
177. Кохенгаузен Ф. Вождение войск, Тактический справочник для командира общевойсковой соединения и его помощников, -М.: Воениздат, 1937. -368 с.
178. Коротаев М.В., Правикова Н.В., “Применение Геоинформационных систем в геологии”, -М.: КДУ, 2010. с. 6.
179. Краткая географическая энциклопедия, Том 1/Гл.ред. Григорьев А.А. -М.: Советская энциклопедия, 1960. -564 с.
180. Линч Х.Ф.Б. Армения: Путевые очерки и этюды, в 2-х томах, -Тифлисъ, издание торгового дома “И.Е. Питоевъ и К⁰”, Типография М.Мартиросянца, 1910, т.1, -597 с. т.2, -675 с.
181. Лю Чжинчунь, Трактат Сунь-Цзы о военном искусстве. - Пекин 2009. -254 с.
182. Людендорф Э. Мои воспоминания о войне, Первая мировая война в записках германского полковника 1914-1918, -М.: из-во Центрполиграф 2007. -379 с.
183. Макиавелли Н. Государь, -М.: Планета, 1990. -45 с.
184. Макиенко К.В. В ожидании бури: Южный Кавказ, -М.: 2018. -200 с.
185. Максаковский В.П. Географическая картина мира, -М.: Дрофа, 2008. с. 22-30.
186. Марков К.К. Военная география, Известия Всесоюзного Географического Общества, том LXXV, вып. 3, -М.: 1943. с. 13-26.
187. Марков К.К., Первые русские военные географы, изд-во Наука и жизнь, №6, -М.: 1944. с. 14-45.
188. Мартынов В.Л. Военная география мира в начале 21-ого века, -СПб, 2009. с. 3.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

189. Мартиросян А.А. Культура Южного Закавказья в 7-6 вв. до н.э. по арх. данным//Автореф, дисс. канд. ист. наук. -Ер.: 1951. 28 с.
190. Мелконян В.А. Металлургия меди в Армении, -М.: Metallurgizdat, 1955. -71с.
191. Милютин Д.А. Критическое исследование значения военной географии и военной статистики, -СПб, 1846. -47 с.
192. Мкртчян Р.С. и др. Климатическое обоснование сроков ношения типов сезонной одежды по высотным поясам Респудлики Армения. Основные проблемы географии Южного Кавказа и прелегающих регионов. Материалы конференции, посвященной 70-летию географического факультета, изд-во ЕГУ, -Ер.: 2005. с. 139-141.
193. Николас Дж. Спайкмен "География и Внешняя Политика I ", American Political Science Review, Vol. XXXII, № 1 (февраль 1938), с. 29.
194. Оганесян Л.А. История медицины Армении, т. I, -Ер.: 1948. с. 47.
195. Окунев И.Ю. Политическая география, -М.: изд-во. Аспект Пресс, 2019.- с. 355.
196. Парский Н.Д. Метеорологическое обеспечение военных действий и климатология, Гидрометкомитет СССР, -Ленинград, 1932. с. 18-19.
197. Пиотровский Б.Б., Гюзальян А.Т. Крепости Армении доурартского и урартского времени, вып.3-4, Пимк, 1933, 53 с.
198. Пиотровский Б.Б. История и культура Урарту, Публикации АН Армянской ССР. -Ер.: 1944. -364 с.
199. Палиенко З.Т. Поисковая и инженерная геоморфология, -Киев, 1978. -196 с.
200. Погосян Д.А. Сельскохозяйственная оценка природных ресурсов территории Армянской ССР, -Ер.: изд-во АН Арм. ССР, 1986. -230 с.
201. Снесарев А.Е. Введение в военную географию, -М.: Центриздат 2006. -512 с.
202. Саядян А.Я. Военно-географический фактор в многообразных военных действиях в горной местности, материалы науч. Симпозиума, ВАНО НОАК, -Пекин 2010, -21с.

203. Саядян А.Я. Геоморфологические процессы, влияющие на военное планирование в горной местности Южного Кавказа, - М.: VI Щукинские чтения, МГУ, 2010. с. 212-213.

204. Саядян А.Я. Геоинформационные системы при техническом прикрытии искусственных сооружений в системе транспортной безопасности государства, материалы V Междунар. науч.-практ. конф. (Гомель, БелГУТ, 21–22 апреля 2016 г.), В 2 ч. Ч. 1; под общ. ред. А. А. Поддубного, -Гомель, БелГУТ, 2016. с. 173–175.

205. Слипченко В. И. Войны шестого покаяния; “Независимое военное обозрение” (НВО), № 04 (31) 1997.

206. Супуренко Ю.П. Эти удивительные горы, -М.: Просвещение, 1987. -160 с.;

207. Тебин П., Ермаков А. “Самый главный корабль, суперавианосцы в современной военно-морской стратегии США”, журнал “Национальная оборона”, -М.: N 1 (82) 2013. с. 88-95.

208. Терещев Л.В. Транспортная безопасность государств содружества: теоретико-методологические аспекты. Транспорт российской федерации. Журнал о науке, практике, экономике. № 10, 2007, с. 60-64.

209. Тихонравов Ю.В. Геополитика, -М.: 1998. -60 с.

210. Реймерс Н.Ф. Природопользование, Словарь-справочник, -М.: Мысль, 1990. -640 с.

211. Рельеф среды жизни человека (экологическая геоморфология), т. 1-2, -М.: 2002. -640 с.

212. Рингел Ю. Тотальная война., Военный зарубежник, 1938, № 4.

213. Руководство по авиационной метеорологии, Международная организация гражданской авиации-ИКАО, изд. 11, 2010. -174 с.

214. Родзевич Н.Н. Геоэкология и природопользование, -М.: 2003. -322 с.

215. Халатов В.Ю. Ландшафты Армянского нагорья (структура, классификация, картографирование), -М.: Едиториал УРСС, 2003. -160 с.

216. Хозин Г. Необъявленная война природе, Вокруг света, № 10 (2625), 1977. -32 с.

217. Чернов А.М. Военная география и эпидемии, Эпидемия ВИЧ/СПИД в Украине, 2006, № 3, с.88-112.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

218. Шашко Д.И. Агроклиматические ресурсы СССР. - Ленинград, Гидрометеоздат, 1985. -245 с.
219. Щукин И.С. Общая геоморфология, т. 2, -М.: изд-во МГУ, 1964. с.149.
220. Хейгль Ф. “Танки”, ч. 1- 2,-М.: 1937. с.72.
221. Экологическая геоморфология, Словарь-справочник -М.: 2004. -239 с.
222. Энгельс Ф. Диалектика природы, -М.: Госполитиздат, 1952. -141с.
223. Ферсман А.Е. География на службе войны, “Наука и жизнь”, № 11-12, 1942. с.36-38.
224. Французкая наставления по боевым действиям в горах, - М.: Воениздат, 1940. с.202.
225. Фронтин С. Ю. Военные хитрости (Стратегемы), -СПб.: «Алетейя», «Античная библиотека», 1996. с.11.
226. Языков П., Опыт теории военной географии, -СПб, 1838. -107с.
227. Antoine-Henry Jomini, The Art of War, -SP.: 1838. 411 p.
228. Anthony H. Cordesman, Alexander Wilner; The Military balance in 2012. -London 2012, p.92.
229. Cornish Janghan, A geography of Imperial Defence, -London, 1922, -154 p.
230. Correspondance de Napoleon, lettre du 10 novembre 1804, adressee au Roi de Prusse (edition in-4, X, p.59, №8170).
231. ole D.H. Imperial Military Geography, -London 1934, 394 p.
232. Douglas R. Caldwell, Judy Ehlen and Russell S. Harmon, Studies in Military Geography and Geology, Kluwer academic publishers, Dordrecht/Boston/-London, 2007. -348 p.
233. Environmental and dynamic geomorphology. -Budapest, 1985. -220 p.
234. Eugene j. Palka, Frensis A. Galgano, The scope of Militari Geography across the spektorom pis to war, Mc. Graw- Hill primis. costum publishing, 2005. -482 p.
235. FM-5-33, Terrain Analysis, Department of the Army, 1990. p.1-1 to 1-16.
236. FM 5-545. Geology, Washington, DC, 30 July 1971. Department of the Army, -30p.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

237. Harold A. Winters, “Battling the elements weather and terrain in the conduct of war”, D. Johns. Hopkins Universiti press: 2001. -336 p.
238. John M. Colins *Militari Geography for Professionals and the Public-Washington*,1998. -568 p.
239. *Mountain Operations*, FM 90-6. Department of the Army, Washington, DC, 30 June 1980. p.3-1 to 3-37.
240. Paul Buckholts *Political Geography*, -New York, Ronald Press, 1966. -93 p.
241. Sayadyan H. *Landscape diversity, planning and optimal forest cover in Armenia*. *Annals of agrarian science*. -Tbilisi. Vol. 3, №2. 2005. p.38-42.
242. *Selected Works of Mao Tse-Tunga*, (London: Lawrence and Wishart, 1954-1956); Ralph L. Powell, “Maoist military Doctrine”, *Asian Survey* (April 1968), p. 240-243.
243. Simonyan H., “New Discoveries at Verin Naver, Armenia”; *Backdirt*, Annual review of the Cotsen Institute of Archeology at UCLA, 2012, p 110-113.
244. *Terrain Analysis*, FM 30-10, Washington DC, 30 March 27, 1972, Department of the Army, p.85.
245. W Salt A.E. *Military Geography of the British Commonwealth*, -London, 1935. -385p.
246. Wilkinson Paul “Epidemiology, Understanding Public Health”, Open University Press, Printed by Ashford Colour Press ltd., Hants, -Great Britain, 2006. p. 74.

Ինտերնետային կայքէջեր

1. www.cadastre.am

Հայաստանի Հանրապետության Անշարժ գույքի պետական կադաստրի կոմիտեի նյութեր

2. www.armstat.am

Հայաստանի Հանրապետության Վիճակագրական ազգային ծառայության նյութեր

3. www.emergency.am

Հայաստանի Հանրապետության Արտակարգ իրավիճակների փրկարար ծառայության նյութեր:

4. <https://www.facebook.com/258831087575599/photos/a.258944524230922.1073741827.258831087575599/281570198635021/?type=1&fref=nf>.

5. <https://cont.ws/@bmpd/82941>

6. <http://operativ.am/?p=107091/>

7. <https://mgm.gov.tr/eng/marine-acronyms.aspx>

8. <http://en.dsi.gov.tr/>

9. <http://www.panarmenian.net/arm/details/205598/>

10. <https://www.iiss.org/publications/the-military-balance/the-military-balance-2016>

11. http://www3.weforum.org/docs/WEF_Global_Human_Capital_Report_2017.pdf

12. <https://rusal.ru/about/9/>

13. <http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=97154>

14. <https://armeniasputnik.am/society/20191218/21456264/Hayastany-krknapatkel-e-razmakan-ardyunaberuyan-byujen.html>

15. <http://www.irtek.am/views/act.aspx?aid=150170>

16. <https://odkb-csto.org/>

17. <https://guam-organization.org/>

18. <http://www.bsec-organization.org/>

19. <http://www.eaeunion.org/>

20. <https://cont.ws/@bmpd/82941>

ՀԱՄԻԿ ՅԱԽՇԻԲԵԿՎԻՇ ՍԱՅԱԴՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

АМИК ЯХШИБЕКОВИЧ СЯДЯН

**ВОЕННАЯ ГЕОГРАФИЯ
АРМЕНИИ**

ՀԱՄԻԿ ԿԱԽՏԻԲԵԿ ՏԱԿԱԴՅԱՆ
**MILITARY GEOGRAPHY
OF ARMENIA**

Տեխնիկական խմբագիր՝ Աշոտ Գևորգյան
Քարտեզները և կազմը՝ Ռուզաննա Սարգսյան

Ծավալը՝ 20 տպ. մամուլ
Տպաքանակ՝ 300 օրինակ



Տպագրվել է «Մագաղաթ պլյուս» հրատարակչությունում

Հասցե՝ ք. Երևան, Մանանդյան 33

Հեռ.՝ 091 460 972, 093 207 186

Էլ. փոստ՝ maghatprint@gmail.com



**Սայաթյան Համիկ Յակոբբեկի
աշխարհագրական գիտությունների թեկնածու,
Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գնդապետ**

Ծնվել է 1968 թ. Վայոց Ձորի մարզի Ելփին գյուղում: 1993թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի աշխարհագրական ֆակուլտետը, 1997թ. ԵՊՀ ասպիրանտուրան: 2001թ. պաշտպանել է թեկնածուական թեզ և ստացել աշխարհագրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1991-1993 թթ. աշխարհագրություն է դասավանդել Երևանի Նիկոլ Աղբալյան դպրոցում:

1987-1989 թթ. ծառայել է ԽՍՀՄ զինված ուժերում, 1993 թ. զինվորական ծառայության է անցել Հայաստանի Հանրապետության պաշտպանության մախարարությունում: 1995-2008 թթ. ծառայել է Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ծառայությունում, 2005 թ. շնորհվել է գնդապետի զինվորական կոչում:

2001թ. մասնակցել է Եգիպտոսի. «Գամալ Աբդել Նասերի անվան ակադեմիայի», 2010 թ. ՉԺՀ Ազգային ազատագրական բանակի ԳՇ ակադեմիայի, 2012թ. ԳԳՀ «Ձորջուկ կենտրոնի» դասընթացներին: 2014 - 2019 թթ. նշանակվել է ՉԺՀ-ում Հայաստանի Հանրապետության ռազմական կցորդ: 1992-1994թթ. մասնակցել է Արցախի ազատագրման համար մղված մարտերին: Պարգևատրվել է Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության պետական պարգևներով:

Հեղինակ է 25 գիտական աշխատությունների, որոնք հիմնականում վերաբերվում են ռազմական աշխարհագրության կիրառական ոլորտի հիմնահարցերին:

ISBN 978-9939-0-3305-1



9 789939 033051